Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՑԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեփանակերտ
«Դիզակ պլյուս» հրատարակչություն
2010

ՀՏԴ 891.981-1 Խանյան
ԳՄԴ 84 Հ-5
Խ 256

Կազմեց՝ Սոկրատ Խանյանը
Խմբագրեց՝ Հովիկ Մուսայելյանը

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի կապակցությամբ տասհատորյակը տպագրվում է ԼՂՀ Գրողների միության վարչության եւ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

ԽԱՆՅԱՆ Ս.
Խ 256 Ընտիր երկեր: Հատոր IV: Բանաստեղծ. / Սոկրատ Խանյան.- Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2010, 480 էջ:

Հատորում տեղ են գտել Սոկրատ Խանյանի տպագրված գրքերից դուրս մնացած բանաստեղծությունները (1960-2010թթ.):

ՀՏԴ 891.981-1 Խանյան
ԳՄԴ 84 Հ-5

ISBN 978-9939-800-96-7

© Ս. Խանյան, 2010թ.

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ-80

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունվարի 22-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ գրական, գրականագիտական ու մանկավարժական մտքի զարգացման գործում ունեցած ծառայությունների համար եւ ծննդյան 80-ամյա հոբելյանի կապակցությամբ բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լեռնային Ղարաբաղի հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ ԽԱՆՅԱՆԸ պարգեւատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

ԼՂՀ նախագահի աշխատակազմի
տեղեկատվության գլխավոր վարչություն
«Ազատ Արցախ», 28 հունվարի 2010թ.

«Մեսրոպ Մաշտոց» շքանշանի վկայականը

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 118

Շնորհվում է ՀԳՄ նախագահության որոշումով

Պարգևատրվում է՝ Սոկրատ Խան Ղայան Ղր

Գրական բեղմնավոր գործունեությունը և վաստակի համար

ՀԳՄ Նախագահ՝ Ս. Սարգսյան

Համահայկական գրական հիմնադրամի գործ. տնօրեն՝ Է. Միլիտոնյան

«___» _____ 200__թ.

ՀԳՄ Ոսկե մեդալի վկայականը


ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սոկրատ Աղալարի Խանյանին

ծննդյան 80-ամյակի կապակցությամբ շնորհվում է

ԱՐՊՀ «ՈՍԿԵ ՄԵԴԱԼ»

ԱՐՊՀ գիտխորհրդի 12.01. 2010թ. թիվ 44 նիստի որոշում (թիվ թիվ 14. 22. 01. 2010թ.)

Ռեկտոր՝ Ս.Վ. Դաղայան

ԱՐՊՀ Ոսկե մեդալը եւ վկայականը


ԼՈՒՍԱՍԻՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԻՆԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐ

Հարգելի Սոկրատ Աղալարի,

Շնորհավորում ենք Ձեզ Ձեր ծննդյան 80-ամյակի առթիվ:
Դուք դարձել եք գրական արվեստի նուրբագույն գլուխգործոց մեկը, բարձրարժեք ստեղծագործի կատարում, հարգարժան էջ նոր գրականության, գրականագիտության մեջ: Ձեզ տարբերվելն կյանքում որպես ինչ գրական ստեղծագործություն ուրախություն է նոր գրողների համար:
Ինչպես Ձեր լուսի ու անսպառ տաղանդի պտուղներ նոր գրողների բյուրաստղերին: Ձեզ նոր երկերով ու նոր մատուցումներով:

Նախարար Ն. Ավդալյան

ք. Կիրովական «___» _____ 2010թ.

ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության շնորհավորագիրը


ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ՍՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Հանրահռչակ է

ՍՈԿՐԱՏ ԱՂԱԼԱՐԻ
ԽԱՆՅԱՆԻՆ

թատրոնի գեղարվեստական ներկայացումներ ստեղծելու ընդամենը եւ ծնունդյան 80-ամյակի կապակցությամբ:

Թատրոնի տնօրեն Կ. Դանիելյան

ք. Ստեփանակերտ
30 հոկտեմբերի 2011թ.

Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետ. դրամ. թատրոնի շնորհակալագիր

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Սիրելի Սոկրատ Աղալարի

Հայաստանի գրողների միությունը, ԼՂՀ գրողների միության վարչությունը սրտանց ողջունում են Ձեզ Ձեր ծննդյան 80-ամյակի եւ գրական, գիտամանկավարժական գործունեության 60-րդ տարելիցի առթիվ, մաղթում քաջառողջություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Դուք հայտնի եք որպես բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ:

Դուք բեղմնավոր ու պատվաբեր ուղի եք անցել: Այդ են վկայում Ձեր երկու տասնյակի հասնող բանաստեղծական ժողովածուները, այդքան էլ գրականագիտական ուսումնասիրություններն ու մամուլի էջերում տպագրված հարյուրավոր գրախոսություններն ու հոդվածները հայ եւ համաշխարհային գրականության կարեւոր հիմնախնդիրների մասին:

1953-ին, բուհն ավարտելուց հետո Դուք աշխատել եք Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթում՝ որպես գրական աշխատող: 1962-1965թթ. ուսումը շարունակել եք Ձեր ավարտած բուհի ասպիրանտուրայում, 1965-ին՝ ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել եք թեզ «Նաիրի Զարյանի դրամատուրգիան» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, աշխատանքը շարունակել նույն բուհում, արժանացել դոցենտի կոչման: 1969թ. Ադրբեջանի ղեկավար շրջանների հայահալած քաղաքականության հետեւանքով Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը փակվելուց հետո Դուք տեղափոխվել եք Ստեփանակերտ, շարունակել դոցենտի Ձեր պաշտոնը Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում:

2002թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» թեմայով պաշտպանել եք ատենախոսություն, ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1984-2007թթ. ղեկավարել եք Արցախի պետական համալ-

սարանի նախ հայոց լեզվի եւ գրականության, ապա՝ գրականության եւ լրագրության ամբիոնը: Այժմ աշխատում եք որպես պրոֆեսոր:

Ձեր բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Կարկաչ» խորագրով հրատարակվել է 1959թ., արժանացել ականավոր գրող Ն. Զարյանի ուշադրությանը: Նա Ձեր ստեղծագործությունները համարել է «անկեղծ հիացմունքի զեղումներ» եւ ողջունել Ձեր մուտքը գրական ասպարեզ: Իսկ հայ արձակի դասական Մ. Արմենը, գրախոսելով Ձեր երրորդ՝ «Սիրտս ձեզ հետ է» գիրքը, ընդգծել է. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլեւ բնության կողմերն ու երեւույթները, պայծառ են բառերը: Հաճելի է կարդալ Սոկրատին, որի մեջ այնքան արեւ կա եւ լավատեսություն»: Ընթերցողների եւ գրականագետների բարձր գնահատականին են արժանացել Ձեր «Արեւսար», «Լեռների երգը», «Սպասում ենք դեռ», «Կարոտի կրակներ», «Արցախյան ղողանջներ», «Իմ ծիածանը» եւ այլ ժողովածուներ: Ձեր գրքերի մասին դրվատանքի խոսք են ասել Մ. Կորյունը, Ս. Սողոմոնյանը, Ս. Արզումանյանը, Դ. Գասպարյանը, Հ. Սերոբյանը, Ս. Դանիելյանը, Ն. Ադալյանը, Ժ. Անդրյանը, Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Դ. Միքայելյանը, Լ. Գրիգորյանը, Ա. Աթայանը եւ ուրիշներ:

Որպես գրականագետ՝ ուշադրության կենտրոնում եք պահել ոչ միայն հայ դասական գրականությունը, այլեւ տասնյակ ուսումնասիրություններ եք նվիրել Արցախում ստեղծվող հայ պոեզիային եւ արձակին: «Գրական թերթը» դրական վերաբերմունք է ցուցաբերել Ձեր «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում» ծավալուն ուսումնասիրությանը (2005թ.)՝ տպագրելով գրականագետ Ս. Դանիելյանի գրախոսությունը թերթում: Հաճելի է նշել, որ շուտով կհրատարակվի Ձեր «Հայ արձակի զարգացման միտումներն Արցախում» նոր աշխատությունը:

Ձեր «Արցախի արծիվը» պատմական պոեմը՝ նվիրված Արցախ աշխարհի 9-րդ դարի իշխան Եսայի ապու Մուսեի սխրանքին արաբ ոստիկան, ծագումով թուրք Բուղայի բազմահազարանոց զորքերի դեմ հայ ժողովրդի պայքարին, արժանացել է ԼՂՀ կառավարության՝ 5-րդ դարի պատմիչ Եղիշեի անվան մրցանակի, իսկ «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» ուսումնասիրությունը շահել է ԼՂՀ գրողների միության Մուրացանի անվան մրցանակը:

ՍՈՍՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Դուք որպես 1958 թվականից՝ ԽՍՀՄ գրողների միության, 1994-ից՝ ԼՂՀ գրողների միության, 2002-ից՝ Հայաստանի գրողների միության անդամ՝ միշտ դրսեւորել եք բանաստեղծ-գրականագետի քաղաքացիական Ձեր ակտիվ դիրքորոշումն ու անմնացորդ նվիրվածությունը հայ մշակույթի զարգացմանն ու հարստացմանը, Արցախի ազգային-ազատագրական պայքարին:

Բարձր է գնահատվել Ձեր վաստակը:

Ստեղծագործական եւ գիտամանկավարժական բեղուն աշխատանքի շնորհիվ Դուք պարգեւատրվել եք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի պետական կոմիտեի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կրծքանշանով: Արցախյան ազգային-ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու համար արժանացել եք ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ», ինչպես նաեւ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով: 2005թ. արժանացել եք ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Պարգեւատրվել եք նաեւ մի շարք պատվոգրերով ու դիպլոմներով:

Մեր ողջույններն ենք հղում բազմավաստակ բանաստեղծիդ ու գիտնական-մանկավարժիդ, մաղթում քաջառողջություն, ստեղծագործական նոր հաջողություններ՝ ի փառս հայ պոեզիայի ու գրականագիտության զարգացման ու հարստացման:

ՀԳՄ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԼՂՀ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
22.01.2010թ.

***

Սիրելի Սոկրատ,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեր ծննդյան 80-ամյակը: Հիրավի, մեծ է Ձեր ավանդը մեր պոեզիայի ու գրականագիտության ասպարեզում:

Մեծ են նաև ընթերցողների ակնկալիքները Ձեր ստեղծագործական հարուստ փորձի ու կարողությունների հանդեպ, և վստահ ենք, որ դեռ շատ եք ուրախացնելու Ձեր նորանոր երկերով:

Եղբայրական ամենաբարի մաղթանքներով՝

ՀԳՄ նախագահ՝ Լևոն ԱՆԱՆՅԱՆ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՏ, ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բնությունը շռայլ է գտնվել բանաստեղծ, մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի հանդեպ՝ նրան շնորհելով ստեղծագործելու բազմաշերտ շնորհք ու նախանձելի աշխատասիրություն:

Ս. Խանյանը 80 տարեկան է: Գրական, գիտամանկավարժական գործունեության ընթացքում նա մշտապես ունկնդրել է ժամանակի ձայնը՝ բացահայտելով թե՛ իր բանաստեղծական նախասիրությունները, թե՛ գրականագիտական հասուն մտահանգումները, որոնք նվիրվել են հայրենի պոեզիայի եւ գրականագիտության զարգացմանն ու հարստացմանը:

Առանց Ս.Խանյանի ստեղծագործական հունձքի դժվար է պատկերացնել Արցախի գրական օջախի դիմանկարը, իսկ բանաստեղծական ժողովածուների թիվը պատկառանք է առաջացնում նրա արգասավոր շնորհքի, կյանքը բանաստեղծորեն ընկալելու եւ սեփական հնարանքներով, հարուստ ու անդավաճան երեւակայությամբ ներկայացնելու անուրանալի տաղանդի հանդեպ:

«Բանաստեղծի համար բոլոր թեմաներն էլ հրատապ եւ նախընտրելի են: Այստեղ մի խորհուրդ չպետք է մոռանալ: Դա Հ.Թումանյանի պահանջն է՝ «Ոչ թե ինչը, այլ ինչպեսը»: Ասել է թե՝ թեման պետք է մարմնավորվի գեղարվեստական թարմ ու առինքնող միջոցներով: Երգել եմ հայրենիք, սեր, աշխատանք, խիղճ, երազ, կարոտ, հերոսություն, նահատակների փառք եւ այլն: Դա է կյանքը, կյանքից դուրս պոեզիա չկա»,- գրում է Ս. Խանյանը:

Հիրավի, Խանյանի գեղարվեստական նախասիրությունների համակարգում բազմազան թեմաներն ու դրանց խորքային լուծումներն ապահովում են նրա արգասավոր անհատականությունը:

Ստեղծագործական երկարամյա ճանապարհին նա երբեք չի դադարել որոնելուց՝ ընթերցողի սեղանին դնելով 20 բանաստեղծական, նույնքան էլ գրականագիտական ժողովածուներ, գրականության, արվեստի արդի խնդիրները քննարկող հարյուրավոր հոդվածներ:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ս.Խանյանի բանաստեղծական ու գրականագիտական յուրաքանչյուր գիրք արժանացել է անվանի գրողների եւ գրականագետների ուշադրությանը: Նրա մասին իրենց հեղինակավոր խոսքն են ասել Ն. Զարյանը, Մ.Արմենը, Մ.Դավթյանը, Մ.Կորյունը, Ս. Արզումանյանը, Ժան Անդրյանը, Ս.Դանիելյանը, Վահե Օշականը, Ս.Ավագյանը, Մ.Սանթոյանը, Վ.Հակոբյանը, Գ.Գաբրիելյանը եւ ուրիշներ:

Ս. Խանյան բանաստեղծն ու գրականագետը միշտ էլ նոր ավյունով, պատասխանատվության բարձր զգացումով ու պահանջկոտությամբ է մոտեցել պոեզիայի, արձակի, գրականագիտության խնդիրներին: Բեղուն ու վաստակաշատ նրա գրիչը միշտ էլ ընթերցողների լայն շրջանակ է ընդգրկել, քանի որ մարդն իր ապրած տարիներով է գեղեցիկ, իր արածով ու լուսավոր վաստակով: Իսկ բանաստեղծ գրականագետի վաստակը մեծ է, անցած ճանապարհը՝ մնայուն եւ ուսանելի:

Ս. Խանյանը ծնվել է 1930թ. հունվարի 22-ին, ԼՂ Հադրութի շրջանի Աղբուլաղ (այժմ Ակնաղբյուր) գյուղում: 1937-1944թթ. սովորել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, ապա միջնակարգը գերազանց գնահատականներով ավարտել հարեւան Էդիլլու գյուղում: Երկու տարի աշխատել է հայրենի գյուղում՝ որպես կոմերիտմիության քարտուղար եւ մշակույթի տան վարիչ: 1949-53թթ. սովորել է Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում՝ որպես լրագրող: Ավարտելով ասպիրանտուրան՝ 1965թ. Հայաստանի ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել է թեզ՝ «Ն. Զարյանի դրամատուրգիան» թեմայով, արժանացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, իսկ 1968թ. ստացել է դոցենտի կոչում: 1965-69թթ. աշխատել է Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում՝ որպես դոցենտ: 1969թ. տեղափոխվել է Ստեփանակերտ եւ շարունակել իր աշխատանքը նորաբաց մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում: 1974-75թթ. զբաղեցրել է ինստիտուտի դաստիարակության գծով պրոռեկտորի պաշտոնը, իսկ 1978-81թթ. ղեկավարել է բանասիրական ֆակուլտետը՝ որպես դեկան: 1984-2007թթ.

եղել է նաեւ հայոց լեզվի եւ գրականության, ապա՝ գրականության եւ լրագրության ամբիոնի վարիչը:

1991թ. Ս. Խանյանը Կիրովականի մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդում մրցույթով ընտրվել է պրոֆեսորի պաշտոնում: 2002թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում նա պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-90-ական թթ.)» թեմայով՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ակտիվ հասարակական գործիչը 3 տարի ղեկավարել է ԼՂ մարզային «Գիտելիք» ընկերությունը, եղել է Խաղաղության պաշտպանության ԼՂ խորհրդի նախագահ, 2 անգամ ընտրվել է արհմիությունների մարզային կոմիտեի անդամ: 1978թ. պարգեւատրվել է «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, իսկ 1990թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի եւ արհմիության ՀԿ նախագահության «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կրծքանշանով: 1988թ. Ս. Խանյանը գտնվել է Արցախի ազատագրական պայքարի առաջին շարքերում: 1992թ. դարձել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակի դափնեկիր՝ «Արցախի արծիվը» պոեմի համար 1998թ. արժանացել է ԼՂՀ գրողների միության Մուրացանի անվան ամենամյա մրցանակի՝ «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության համար:

Արցախյան պայքարին ակտիվ մասնակցելու համար 2002թ. պարգեւատրվել է ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ», ինչպես նաեւ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով:

Ս. Խանյանն ունի աշխատանքային չմարող ավյուն, սեփական յուրօրինակ ստեղծագործական ոճ, աշխարհընկալման յուրահատուկ կենսահայեցողություն:

Մեծ է Ս.Խանյանի վաստակը Արցախի գոյամարտը գեղարվեստորեն պատկերելու առումով: Այդ են վկայում նրա «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո», «Միեր», «Արցախուհին» եւ այլ պոեմները:

Օրերի հետ քայլող մտավորական է Ս.Խանյանը: Ապրել է բարդ, բազմաբովանդակ ու ներդաշնակ կյանք: Ժողովրդի ճակատագրի հետ կապված մտահոգիչ հարցերին նա միշտ պատասխանել է ե՛ւ

որպես բանաստեղծ ու լրագրող, եւ որպես գրականագետ ու հասարակական գործիչ:

Մոտ վեց տասնամյակի հեռվից է չափվում Ս. Խանյանի գիտամանկավարժական գործունեությունը: Նրա անունն անխզելիորեն կապված է Արցախի պետական համալսարանի հետ, ուր դասախոսական երկարամյա աշխատանքին զուգահեռ զբաղվել ու զբաղվում է գրականագիտությամբ:

Գեղարվեստական մտքի զարգացման պատմությունն ապացուցում է, որ եթե ստեղծագործողը աշխարհ է եկել արյան կանչով ու հոգու կոչով, ապա նա կարողանում է հավասարապես ծառայել եւ պոեզիային, եւ գրականագիտությանը: Այդպիսին է Ս. Խանյանը: Միշտ նրա ուշադրության կենտրոնում են գրականության եւ գրականագիտության զարգացման ընթացքը, գրականագիտական նոր մտքի ոճական առանձնահատկությունները:

Նորօրյա բանասիրական մոտեցումներով Ս.Խանյանն իր գրականագիտական աշխատություններով ժխտում է գեղարվեստական երկի մակերեսային վերլուծությունը՝ գնալով դեպի խորքային հոգեբանական շերտերը: Ս.Խանյանի «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան», «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.)» աշխատությունները, ԼՂՀ գրական ընտանիքի համարյա բոլոր անդամների գրական երկերի առանձին վերլուծություններն ու ուսումնասիրությունները ասվածի ապացույցն են: Սկզբունք ընդունելով գեղարվեստական գրականության անքակտելի կապը պատմության հետ, իր գրականագիտական երկերում Ս.Խանյանը քննում է 20-րդ դարի 2-րդ կեսի գրական-պատմական պրոցեսները եւ այդ համապատկերում լուսաբանում արվեստի եւ գրականության փոխհարաբերության կարեւոր հիմնախնդիրները:

Հետաքրքիր եւ ուսանելի ձեռնարկ է Ս. Խանյանի «Հայ գրականության ուսուցումը բուհում» գիրքը՝ մեթոդական ցուցումների, հայ գրականության ծրագրի, մատենագրության ընդգրկմամբ: Նրանում հեղինակը խոսում է գրականության առանձին բաժինների ուսուցման օրինաչափությունների մասին՝ հենվելով դասական մեթոդական առաջավոր ավանդույթների, ինչպես նաեւ իր փորձի վրա՝ հաշվի առնելով ժամանակակից դասին ներկայացվող պահանջները:

Այսօր բոլոր բուհերի բանասիրական ֆակուլտետների մա-

գիտրատուրաների ուսումնական պլաններում մտցված է «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» առարկան: Ս.Խանյանի դասագիրքն արժանացել է ԲՈՀի՝ գրականագիտության գծով հանձնաժողովի բարձր գնահատականին:

Տպագրության է հանձնված Ս. Խանյանի «Հայ հին եւ միջնադարյան գրականություն» գիրքը, որը համապատասխանում է բուհական նոր՝ կրեդիտային համակարգի պահանջներին:

Ս. Խանյան բանաստեղծը, գրականագետ-մանկավարժը միշտ հետեւում է ինքնաբացահայտման ու ինքնահաստատման անհրաժեշտ սկզբունքներին: Ինչ արել է, համարում է քիչ՝ ցուցաբերելով նախանձելի, արտասովոր աշխատասիրություն ու պահանջկոտություն: Այդ է վկայում տպագրության համար պատրաստած նրա բանաստեղծական ու գրականագիտական երկերի 10-հատորյակը, որի 3 հատորն արդեն տպագրված է: Եթե այս ամենին գումարենք Ս. Խանյանի ակտիվ մասնակցությունը Արցախի պետական համալսարանի գործունեթյանը որպես գիտական խորհրդի, ԼՂՀ գրողների միության վարչության, Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, ինչպես նաեւ ընդգծենք նրա ծանրակշիռ եւ օրինակելի հրապարակային ելույթներն ու զեկուցումները հանրապետությունում, ֆակուլտետում ունեցած նրա կշիռը, վաստակը, բազմաթիվ ասպիրանտների ու հայցորդների ղեկավարությունը, գիտական ու մեթոդական օգնությունը սկսնակ դասախոսներին, բարի խորհուրդները, նրա սերմանած լավագույն ավանդույթները, մեր առջեւ կհառնի 80-ամյա մի գործիչ՝ միշտ լի երիտասարդական ավյունով ու եռանդով, միշտ բարի ու բանիմաց խորհուրդներով:

Այսօր էլ Ս. Խանյանը, որպես բուհի նահապետներից մեկը, իր աշխատասիրությամբ, կարգապահությամբ, բանիմացությամբ օրինակ է բոլորի համար, քանզի նպատակն է լինել կոչմանը հավատարիմ, կրթել մեր ազգային դիմագծին արժանի սերունդ:

Իր քառյակներից մեկում Ս. Խանյանը գրում է.

Հազար տարվա մուսան եկել ու թառել է իմ հոգուն,
Սրտիս անմար կրակներով նա վառվել է իմ հոգում,
Ինչքան էլ որ ճիգ եմ թափում, չի հեռանում ինձանից,
Իմ առաջին սիրո նման նա փարվել է իմ հոգուն...

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, բանասիրական ֆակուլտետի դասախոսների եւ ուսանողների անունից շնորհավորում ենք մեր հարգարժան հոբելյարին՝ մաղթելով նրան պողպատե առողջություն, արարելու անսպառ եռանդ, միշտ արգասավոր ու կենսունակ գործունեություն:

Թող հազար տարվա մուսան միշտ թառած մնա 80-ամյա հոբելյարի հոգուն, միշտ մնա երիտասարդ, կյանքի եւ մարդու հանդեպ անափ սիրով ու հույզերով լեցուն:

Անահիտ ԱԹԱՅԱՆ
ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

***

«Ազատ Արցախ» թերթի խմբագրակազմը միանում է բարեմաղթանքներին եւ հոբելյարին ցանկանում երկար տարիների ստեղծագործական բեղմնավոր կյանք:

«Ազատ Արցախ» *թերթ, 19 հունվար, 2010թ*

Глубокоуважаемому Сократу Агаларовичу! Примите мои поздравления с 80-летием и стихи-как знак того, что и после 76-лет, и после 80-лет "чувства не подвластен временем".

МОСКВА

80-ЛЕТИЕ

Вот и восемь десятков встретил я
В удивительном исчислении,
Захватив целых два столетия
И даже другой миллениум.

А что годы летят-не грустите вы,
Обижаться на них не в праве я,
Раз меня поздравляют с дожитием
При остатках ума и здравия.

БОРИС ШОРР
Апрель 2006

МОЙ ГОДЫ
(стихи С. А. ХАНЯНА)
Перевод с армянскогс

К вершинам гор,
Мои годы,
И в звездный мир
Вознеслись.
Там, в вышине
Небесной
С солнцем самим
Обнялись.
А ныне, во тьму
Ущелий
Тянет их
Жизни груз
Молю я вас,
Мои годы,
Пусть медненней
Будет спуск.

Декабрь 2004
Перевод Б. Шорра

ԿՅԱՆՔ՝ ՀԱՄԱԿՎԱԾ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Լրացավ բանաստեղծ, գրականագետ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի ծննդյան 80-ամյակը: Այդ առթիվ՝ «Լուսարարի» հարցազրույցը:

- Պարոն Խանյան, նախ՝ թույլ տվեք շնորհավորել Ձեր 80-ամյա հոբելյանի առթիվ եւ հղել «Լուսարարի» անկեղծ բարեմաղթանքները: Ի՞նչ են հուշում ապրված տարիները, եթե փիլիսոփայորեն նայենք անցած տասնամյակներին:

- Անչափ հաճելի է ընդունել մի այնպիսի թերթի շնորհավորանքը, ինչպիսին «Լուսարարն» է, որի ընթերցողների թիվը հասնում է մի քանի հազարի: Դեռ ավելին՝ «Լուսարարի» էջերում հանդես են գալիս մտավորականներ, որոնց մեծ մասն ուսուցիչներ են, հիմնականում՝ երբեմնի իմ սաներն ու սանուհիները, որոնք համարվում են արդեն իմ գործընկերները, ու կատարում ենք նույն դժվարին պատվաբեր գործը կրթության ու նոր սերնդի դաստիարակության բնագավառում:

Ինչ վերաբերում է իմ անցած տարիներին, ապա շտապեմ նշել, որ դրանք հնչում են իմ հոգում որպես երազի ու կարոտի, որոնումի ու գտնումի, կորուստների ու ձեռքբերումների, ցավի ու սփոփանքի, դժվարությունների ու խիզախումների համանվագ: Դա կյանքի գրված ու չգրված օրենքների հրամայականն է, որ վերջին հաշվով ծիածանվում է ու հոլովվում ժողովրդական կենսափիլիսոփայության երանգներով: Մարդ երջանկության ու գոհունակության զգացումներով է համակվում, երբ ոչ թե ծնկի է գալիս ժամանակի առջեւ, այլ իր արած-դրածով ինչ-որ չափով իմաստավորում է ժամանակը՝ դրանով իսկ ծառայելով իր երկրին, իր ժողովրդին:

- Բանաստեղծ, գրականագետ, մանկավարժ, հասարակական գործիչ, թարգմանիչ: Դժվա՞ր չէ այս ամենը համատեղելը:

- Եթե բանաստեղծ ես, իրավունք չունես չընմբոշխնել ազգային ու համաշխարհային մշակութային լավագույն արժեքները: Բանաստեղծելու դժվարին ջանքը բացում է արվեստի ստեղծման գաղտնիքները ու գումարվում յուրացրած գիտելիքների պաշարին, հնարավորություն ընձեռում կատարել տեսական վերլուծու-

թյուններ եւ ընդհանրացումներ: Ասել է թե՝ գրական հայացքները նպաստում են բանաստեղծության ծննդին: Լինել գրականագետ ու հաճույք չզգալ մանկավարժությունից՝ նշանակում է չունենալ երազանք, որովհետեւ չկա ավելի հաճելի գործ, քան գիտելիքների պաշարով հարստացնել նրանց, ովքեր հյուսելու են վաղվա լուսավորության գոբելենը: Իր գործին նվիրված մտավորականը պետք է իրեն դրսեւորի նաեւ որպես հասարակական գործիչ:

- Թերեւս, ոչ ոք Արցախի գրական ներուժն այնքան խորը չի ուսումնասիրել, որքան՝ Դուք: Կարո՞ղ եք համառոտ ներկայացնել խորհրդային եւ հետխորհրդային ժամանակաշրջանում Արցախում ստեղծված գրականությունն իր առանձնահատկություններով:

- Գրականագետ-բանաստեղծի իմ կարողությունը մշտապես հուշել է ինձ՝ ուշի ուշով հետեւել մեր գրական ընտանիքի ներկայացուցիչների չափածո եւ արձակ գործերին: Ուստի, խորհել եմ ստեղծել Արցախում արարվող գրական արժեքների պատմությունը: Ես դա համարել եմ արժեքավոր նվեր ապագային: Այսօրվա գրականությունը գալիքի համար հանդիսանալու է հրաշալի մի կտակարան, որի ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական արժեքը կարեւորելու են: Ուստի, մենք պարտավոր ենք կամրջել ներկան ապագային:

Խորհրդային տարիներին ստեղծված գրական երկերի մի մասը հագեցված էր լենինյան գաղափարների մերկապարանոց ճառայնությամբ, կոմունիստական ընդգծված միտումնայնությամբ: Ծանոթանալով անկախության շրջանի գրական երկերին՝ զգում ես մեր գրողների համարձակ ձգտումը՝ ստեղծել ժամանակակցի կերպարը իր ներաշխարհի հարստությամբ ու գեղեցկությամբ: Ինչու չէ, նաեւ այն հակասություններով, որ թելադրում է հասարակական կացութաձեւի անցումային շրջանը:

- Ի՞նչ վիճակում է այսօր հայ գրաքննությունը: Այն տեսակետը կա, որ գրական քննադատությունը նվազ ռիթմի մեջ է հայտնվել: Կիսո՞ւմ եք այս տեսակետը եւ եթե այո, կարո՞ղ եք նշել պատճառները:

- Ճիշտ է նկատված: Այսօրվա գրական քննադատությունը անցյալ դարի 60-70-ական թվականների ռիթմը չունի: Ըստ իս, երկու պատճառ գոյություն ունի: Առաջինը թայֆայաբազու-

թյունն է... Ընկերը մեծարում է ընկերոջ, բարեկամը՝ բարեկամի ստեղծագործությունը: Նման դեպքում ազգային գրականության շահը երկրորդական պլան է մղվում: Երկրորդ պատճառը գրական երիտասարդ քննադատների պակասն է: Երիտասարդները գրականագիտությամբ չեն կարողանում ապահովել իրենց ընտանիքի նյութական հոգսերը:

- Դուք հայտնի եք որպես բեղուն ստեղծագործող: Այս պահին ինչի՞ վրա եք աշխատում:

- Այս պահին ի մի եմ բերում տարիների ստեղծած բանաստեղծական եւ գրականագիտական իմ երկերը: ԼՂՀ գրողների միության վարչության եւ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ տպագրության եմ պատրաստում իմ ընտիր երկերի 10-հատորյակը: Արդեն հրապարակի վրա են երեք հատորները: Բացի դրանից, հանդես եմ գալիս հոդվածներով ու շարունակում եմ հարազատ մնալ բանաստեղծական իմ աշխարհին:

- Ունեք երկարամյա գիտամանկավարժական աշխատանքի փորձ: Ձեր կարծիքը Արցախի գիտակրթական համակարգի ներկա վիճակի մասին:

- Ինչպես հայտնի է, փորձ է արվում Արցախի գիտակրթական համակարգն ավելի բարձրացնել ու կատարելագործել: Բուհերում երկրորդ տարին է, ինչ գործում է կրեդիտային համակարգը: Նշեմ, որ չնայած հարուցած դժվարություններին, համակարգն արդարացնում է իրեն:

- Տարիքը կենսափորձ է, իմաստնություն: Ի՞նչ խորհուրդներ կտայիք կրտսեր սերնդին:

- Ճշմարիտ է... Տարիքը կենսափորձ է: Եվ եթե այդ տարիները կենսաթրթիռ ու արդյունավետ են անցնում, վերածվում են իմաստնության: Երիտասարդներին խորհուրդ կտայի լինել աշխատասեր, նվիրվել ընտրած մասնագիտությանը, մտահոգվել սեփական օջախի ու հարազատ ժողովրդի ճակատագրով՝ չմոռանալով, որ մեր պապերից մեզ ավանդված Արցախ աշխարհը պետք է դարձնել ավելի բարգավաճ ու հանձնել մեր սերունդներին:

«Լուսարար», 2010, թիվ 2

«ԵՍ ԻՆՁ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ...»

Հունվարի 26-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատի դահլիճում տեղի ունեցավ բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի ծննդյան 80, գրական, գիտամանկավարժական գործունեության 60-ամյակին նվիրված հոբելյանական երեկո, որին մասնակցում էին հասարակայնության գրեթե բոլոր խավերից ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպել էին ԼՂՀ գրողների միությունը եւ Արցախի պետական համալսարանը:

Հանդիսությունը սկսվեց մեկ րոպե լռությամբ՝ որպես հարգանքի տուրք Արցախի գրական օջախի նահապետներից մեկի՝ Հրաչյա Բեգլարյանի հիշատակին, որ կյանքից հեռացավ այս նույն բեմից ելույթ ունենալուց հետո:

Հոբելյանական երեկոն ողջույնի խոսքով բացեց ԼՂՀ ԳՄ նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Նա ասաց, որ Արցախում ապրող մտավորականը, գրող լինելուց բացի, պարտավոր է լինել իր երկրի զինվորը, նվիրյալը: Այդպիսին են եղել Արցախի գրական օջախի մի շարք երախտավորներ Գրիգոր Ներսիսյանը, Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը: Այսօր էլ արցախցի գրողը պետք է լինի նախ քաղաքացի եւ ապա՝ պոետ: Սոկրատ Խանյանն իր մեջ ամբարել է ղարաբաղցու լավագույն հատկանիշները, ստեղծել իր կերպարը: Տասնամյակներ առաջ Բագրատ Ուլուբաբյանը դրական կարծիք է հայտնել բանաստեղծի մասին՝ ասելով, որ դժվար է Բաքվում, ազերիների մեջ հայ մնալ, իսկ Սոկրատ Խանյանը հայ է մնացել:

ԼՂՀ ԳՄ նախագահը ներկայացրեց ՀՀ ԳՄ ուղերձը, որում մասնավորապես նշված է. «Դուք բեղմնավոր եւ պատվաբեր ուղի եք անցել: Որպես գրականագետ ոչ միայն ուշադրության կենտրոնում եք պահել հայ դասական գրականությունը, այլեւ տասնյակ ուսումնասիրություններ եք նվիրել Արցախում ստեղծվող հայ պոեզիային ու արձակին»: Գիտնական-մանկավարժը գրականագիտության զարգացման եւ հարստացման գործի, պոեզիայի անդաստանում ունեցած վաստակի համար արժանացավ ՀՀ ԳՄ Ոսկե մեդալին:

Սոկրատ Խանյանի գրական եւ գրականագիտական վաստակը միշտ բարձր գնահատականի է արժանացել. «Աշխատանքային գերազանցության համար» մեդալ, «Արցախի արծիվը» պոեմի համար՝ Եղիշեի անվան ամենամյա պետական մրցանակ, «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության համար՝ ԼՂՀ ԳՄ Մուրացանի անվան մրցանակ, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ, պատվոգրեր, եւ այս շարքը լրացրեց «Մեսրոպ Մաշտոց» շքանշանը: Այդ առթիվ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագիրը ներկայացրեց ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը:

Երեկոն վարող Նաիրա Աղաջանյանը ներկայացրեց հոբելյարի անցած երկարամյա ճանապարհի հիմնական հանգրվանները. Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթում լրագրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ, ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ գիտական թեզի պաշտպանում եւ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, 1991-ից՝ պրոֆեսոր, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում լեզվագրական ֆակուլտետի դեկան, ԱրՊՀ-ում՝ հայոց լեզվի եւ գրականության, ապա՝ գրականության եւ լրագրության ամբիոնի վարիչ: 2002-ին «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում» թեմայի պաշտպանությամբ արժանացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

Ս. Խանյանի առաջին ժողովածուն լույս է տեսել 1959 թվականին եւ արժանացել Նաիրի Զարյանի գնահատականին: Նրա գրական վաստակը բարձր են գնահատել նաեւ Մկրտիչ Արմենը, Մկրտիչ Կորյունը, Սեւակ Արզումանյանը, Լեւոն Անանյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Վարդան Հակոբյանը: Ս. Խանյանն ունի տասնյակ բանաստեղծական ժողովածուներ, նույնքան էլ գրականագիտական մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված հայ պոեզիային ու արձակին: Նրա տեքստով է գրվել ԱրՊՀ օրհներգը:

ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը հինգհազարանոց ուսանողական կոլեկտիվի եւ դասախոսական կազմի անունից ողջունեց հոբելյարին, նշեց նրա վաստակը երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում, ընդգծեց նրա եռանդը եւ ավյունը, ապա ԱրՊՀ գիտխորհրդի Ոսկե մեդալը հանձնեց բազմավաստակ պրոֆեսորին:

«Սա այն դեպքն է, երբ տարիքը սոսկ տարիների գումար չէ եւ՝ առնչություն չունի հոգեկան ավյունի ու աշխատանքային եռանդի հետ,- ողջույնի խոսքում ասաց ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը:- Նա այն երջանիկ գրողներից է, որ ապրեց եւ ստեղծագործեց հայ ժողովրդի համար դարակազմիկ իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանում՝ ծոնելով ու շոշափելի դարձնելով Արցախյան գոյամարտի հաղթանակը»: Այնուհետեւ նախարարը շնորհակալագիր հանձնեց հոբելյարին:

Արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանն արտահայտեց իր հիացմունքը գրչընկերոջ երիտասարդական անսպառ եռանդի, վաստակի հանդեպ: Տատիկի սնդուկի մասին նրա բանաստեղծությունը մի ցնցող պատկեր է, որով կարող է հպարտանալ ամեն մի բանաստեղծ:

ԱրՊՀ դասախոս, հումանիտար ֆակուլտետի դեկան, Արցախի ազգային-ազատագրական շարժման ակտիվիստ Արզիկ Մխիթարյանն ընդգծեց գործընկերոջ ծառայությունը երկրին ու ժողովրդին, նախանձախնդրությունը հայոց լեզվին ու հայ գրականությանը, պոեզիան ու գրականագիտությունը զուգակցելուն, նրան ցանկացավ ներշնչանքի հարատեւություն:

ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Աթայանը ներկայացրեց Սոկրատ Խանյանի պոետական եւ գրականագիտական դիմագիծը, նշեց նրա կապը հայ դասական պոեզիայի լավագույն ավանդույթների հետ, առանձնացրեց Արցախյան ազգային-ազատագրական պայքարին նվիրված նրա պոեմները, ստեղծագործություններ, որոնք մեծ նշանակություն ունեն երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում:

Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, արձակագիր Կոմիտաս Դանիելյանը ողջույնի խոսքում շեշտեց հոբելյարի դերը թատերական գործի զարգացման գործում:

Հոբելյանական երեկոյին ներկայացել էին Խանյանի գերդաստանի ծյուղերը՝ որդիներ, թոռներ, որոնցից ամեն մեկը նշանավորում է մի ոլորտ, եւ որոնցով հպարտանալ կարելի է: Որդին՝ Համլետ Խանյանը, ապրում է Մոսկվայում, աշխատում է Ռուսաստանի Դաշնության ավիացիոն շարժիչների կենտրոնական ինստի-

տուտում, վերջերս ընտրվել է գիտատեխնիկական տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերության անդամ՝ իր գիտական հայտնագործությունների շնորհիվ: Մյուս որդին՝ Կարեն Խանյանը, բանասիրական գիտությունների թեկնածու է, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դոցենտ, բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, մեծ վաստակ ունի հայ-ռուսական գրական կապերի հարստացման գործում:

«Հպարտ եմ, որ արցախյան արյուն է հոսում իմ երակներով: «Հայր իմ սիրելի, Թող քո ծերությունը անցնի բերկրանքով»,- հոր բանաստեղծական տողը վերադարձրեց որդին՝ Համլետը, ապա կարդաց նրա «Տարիներս» բանաստեղծությունը ավիացիոն ինստիտուտի գիտնական Բորիս Շորի ռուսերեն թարգմանությամբ եւ նրա ողջույնի խոսքը:

Սոկրատ Խանյանի թոռ՝ միջազգային մրցույթների դափնեկիր Հայկ Մելիքյանը, որ աշխարհի շատ երկրներում ու քաղաքներում ներկայացնում է հայ ժողովրդի երաժշտական բարձր արվեստը, դաշնամուրի վրա կատարեց պապի սիրած ստեղծագործություններից՝ Արամ Խաչատրյան, Առնո Բաբաջանյան՝ հիացմունք պատճառելով ներկաներին:

Երաժշտագետ, երգահան Նունե Սիմոնյանը երգեց ու դաշնամուրի վրա կատարեց իր ստեղծագործությունը՝ գրված հոբելյարի «Մայր իմ անուշ» բանաստեղծության տեսքով: Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասաններ Քաջիկ Հարությունյանը եւ Սամվել Եվրիյանը, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության տան սաները կարդացին բանաստեղծի ստեղծագործություններից: Իսկ Մարգո Ահարոնյանը բնութագրեց ամուսնուն, ընդգծելով նրա աշխատասիրությունը, գործի եւ ընտանիքի նկատմամբ պատասխանատվության զգացումը:

«Հուզված եմ,- իր ելույթում ասաց հոբելյարը,- հետ եմ նայում եւ հիշում իմ սերնդի անցած դժվարին ճանապարհը՝ պատերազմ, կորուստներ, որբություն: Ավագ եղբայրս, որ բանաստեղծ էր, ռազմաճակատ է մեկնել ու չի վերադարձել: Դեռ պատանի՝ նրան նվիրել եմ «Կիսատ երգը» բանաստեղծությունը, հետո գրել եմ «Հայրը», կարդացել Մարտիրոս Սարյանի մոտ, եւ անվանի նկարիչն ասել է, որ իմ տողերում դարաբաղցու կորով կա:

Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում՝ իմ ընտանիքով, իմ ժո-

ղովրդով: Ունենք պետություն, ազատ Արցախ, որտեղ զարգանում է ազգային մշակույթը: Ես կարողացել եմ արդարացնել իմ կոչումը, իմ քաղաքացիական կեցվածքը:

Չլքենք այն հողը, որտեղ մեր նախնիների աճյուններն են թաղված, նրանց գերեզմանաքարերը ապագային ուղղված պատգամներ են: Պետությունը իր ժողովրդի կարիքն է զգում. մեր գործերով նպաստենք հայոց պետականության ամրապնդմանը, ցավենք մեր երկրի ու գործի համար»:

«Աղաչում եմ, տարիներս, Մի քիչ դանդաղ իջեք ցած» տողերը հոբելյարի կողմից հնչեցին ոչ թե տխրության ու հրաժեշտի երանգով, այլ դեռ երկար ճանապարհ անցնելիք մարդու հպարտությամբ ու որոշումով:

Նվարդ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

«Ազատ Արցախ» *թերթ, 28 հունվարի, 2010թ.*

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՐԻՆ

Կյանքի 80-ամյա բարձունքին հասավ ժամանակի լավագույն մտավորականներից մեկը՝ Սոկրատ Խանյանը: Նրա տված գիտելիքներով հարստացվում է երիտասարդ սերնդի իմացության գանձարանը: Լինելով նաեւ բանաստեղծ՝ նա շարունակում է գերել ընթերցասեր հասարակայնությանը եւ վայելել նրա սերն ու համակրանքը: Տարիքի մեծությունը չի խանգարում եռանդուն մտավորականին. այսօր նա շարունակում է աշխատել ու ստեղծագործել՝ իր մտքի փայլատակումները հանձնելով թղթին ու պատգամել մեզ՝ երիտասարդներիս:

Մենք, լինելով նրա նախկին ուսանողները, միանում ենք այն բազմաթիվ շնորհավորանքներին, որոնք կհնչեն նրա հասցեին այս օրերին, մաղթենք մեծահամբավ մտավորականին առողջություն, ուժ, մտքի տոկունություն, անսպառ եռանդ:

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ հոբելյար:

Տումի գյուղի ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի
անվան միջն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության
ուսուցիչներ՝ Լաուրա Աբրահամյան, Քնքուշ Սահակյան,
Նարինե Ծատրյան

ՆԵՐԿԱՆ՝ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ

Հարց.- *Հարգելի Սոկրատ Աղալարի, ինչպե՞ս եք պատկերացնում տարիների խտացումները ժամանակի համապատկերում:*

Պատ.- Ժամանակը փիլիսոփայական հասկացություն է, ինչ-որ չափով՝ վերացարկված: Սակայն ժողովուրդների կենսափորձը հուշում է իր փիլիսոփայությունը:

Մարդու բացակայությամբ ժամանակը կարելի է համարել տոհիչելյան դատարկություն, որովհետև մարդն է իր գործով իմաստ հաղորդում ժամանակին, և ճշմարտությունը պահանջում է ասել, որ ոչ թե ժամանակն է հղկում մարդուն, այլ մարդն է հարթում, լուսավորում, իմաստավորում ժամանակը: Այս առումով երբ ես խորհում եմ ապրած տարիների մասին, ինչ-որ չափով, թող անհամեստություն չթվա, չեմ ափսոսում իմ ապրած ժամանակի համար: Իսկ իմ ժամանակը խտացվել ու երանգավորվել է Արցախ աշխարհում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների գույներով: 1930-ական թվականներ. քաղաքական կասկածանքի, կոլտնտեսային կյանքի վայրիվերո ընթացք, կիսաքաղց ժողովուրդ, սակայն լուսավոր մի հավատ և՛ կյանքի, և՛ ապագայի հանդեպ: 30-ականներին հաջորդեց Հայրենական մեծ պատերազմը: Իմ սերունդը շատ արագ քայլեց պատմության ճամփաներով՝ առանց զգալու մանկության տարիների գեղեցկությունն ու հմայքը: 1945-ի մայիսն իմ սերնդի համար հաղթանակի տոնակատարություն է՝ շաղախված հեռուներից տուն չվերադարձածների հարազատների արցունքով և տուն վերադարձածների զգույշ ուրախությամբ: Տարիների խտացումները հետպատերազմյան շրջանում ընթացան այլ հունով՝ քայքայված տնտեսությունների վերականգնման ու փայլուն հավատի շողարձակումների գումարով: Ինչ վերաբերում է իմ տարիների հանրագումարին, կարող եմ ասել, որ ժամանակի համապատկերին կարողացել եմ Աստծո տված շնորհքը վերադարձնել իմ ժողովրդին: Լավն այն էր, որ ինչի նպատակադրվում էիր, կարող էիր հասնել: Միջնակարգ կրթություն, ապա՝ բարձրագույն, այնուհետև՝ աշխատանք, գրքերի հրատարակում, ընտանիք, ժողովուրդ, մտավորականի պատասխանատվություն: Այս ամենը տարիների խտացում կարող ենք համարել: Ես անչափ ուրախ եմ, որ

իմ ծննդյան 80-ամյակը և գրական, գիտամանկավարժական գործունեության 60-րդ տարեդարձը դիմավորում եմ մեզ սնող ու թևավորող հայրենի Արցախի ազատ ու անկախ ընթացքի մեջ: Ես մեր պետության գոյությունը համարում եմ ոչ միայն Արցախի, այլև ամբողջ հայության հերոսականության և արժանապատվության վերականգնում: Դա մեր բոլոր մեծերի երազանքն էր՝ Խորենացուց մինչև Անդրանիկ, Նժդեհից մինչև Ավո ու Բեկոր: Յուրաքանչյուր մարդու անցած տարիները նմանվում են ուլունքաշարի, որի մեջ կարելի է տեսնել ծիածանի բոլոր գույները՝ մերթ արցունքի ցողով, մերթ էլ բերկրանքի ցայտով՝ կամարված անցյալից ներկա, ներկայից գալիք:

Տարիների խտացումներն ինձ՝ որպես բանաստեղծի, գրականագետի, մանկավարժի, հուշում են ավելի սերտ կապվել իմ ժողովրդի կյանքին ու նորանոր ստեղծագործություններով նպաստել նրա առաջընթացին, Արցախ աշխարհի վերջնահաղթանակին:

Հարցազրույցը վարեց բանաստեղծուհի
Քանաքարա Քոչարյանը
«Եղիցի լույս» թերթ, թիվ 1, 2010



ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՅՐԻԿ ԵՎ ՊԱՊԻԿ

Շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր փառապանծ 80-ամյա հոբելյանի առթիվ: Մաղթում ենք Ձեզ երջանկություն եւ հաջողություններ կյանքում, ստեղծագործական նոր նվաճումներ, քաջառողջություն եւ արցախյան երկարակեցություն:

Ձեր որդիներ՝ Համլետ, Օլյա,
Թոռներ՝ Ալեքսանդր, Ելենա Խանյաններ
22 հունվարի 2010թ.
Ք. Մոսկվա

ՁԱՀԵԼ ՏՐՈՓՅՈՒՆ, ՆԵՐՀՈՒՆ ՄԻՏՔ

«Սոկրատ Խանյանը՝ բանաստեղծ, Սոկրատ Խանյանը՝ գրականագետ, Սոկրատ Խանյանը՝ դասախոս և մանկավարժ և, ի վերջո՝ Սոկրատ Խանյանը իր մարդկային նկարագրով ուրույն տեղ ունի մեր ժողովրդի արցախյան հատվածում ստեղծվող մշակույթի անդաստանում: Նրա բանաստեղծությունները ներշնչանքի գեղեցիկ դրսևորումներ են, վերջին տարիներին գրած գրականագիտական աշխատանքներն աչքի են ընկնում վերլուծական քննական խորությամբ՝ ի տարբերություն դեկորատիվ այն հոդվածների հեղեղի, որ այսօր հաճախ կարելի է հանդիպել մամուլում: Չնայած պատկառելի տարիքին, նա շարունակում է բեղմնավոր աշխատել՝ բանաստեղծության մեջ դրսևորելով ջահել տրոփյուն, գիտական աշխատանքում՝ ներհուն միտք»,- սերնդակից գրչնկերոջ՝ բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանին համառոտ այսպես է բնութագրում ժամանակակից հայ արձակի լավագույն դեմքերից մեկը՝ Մաքսիմ Հովհաննիսյանը:

Արցախի գրական ընտանիքի ավագ սերնդի ներկայացուցիչներից է Սոկրատ Խանյանը, որի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 60-ամյակը օրերս հանդիսավորությամբ նշվեց Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում: Լեփ-լեցուն ընդհարձակ դահլիճում, ուր հավաքվել էին պետական այրեր, գրողի գործընկերները, Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը,(որտեղ երկար տարիներ նա աշխատում է)և ուսանողությունը, բազմաթիվ ընթերցողներ, ջերմ ու անկաշկանդ մթնոլորտ էր տիրում:Նահապետը, մեծարվում, դրվատվում էր իր ծանրակշիռ ավանդի համար:Եվ այդ պատկառանքը վաստակաշատ գրողի ու գիտնականի նկատմամբ արտահայտվում էր շիտակ ու անկեղծ խոստովանությամբ, խոր հարգանքով:

Առատ է Ս.Խանյանի ստեղծագործական հունձքը: Բանաստեղծական 20 ժողովածուների և գրեթե նույնքան էլ գրականագիտական աշխատությունների (գրքերի) հեղինակ է, որոնք գրական մամուլում արժանացել են բարձր գնահատանքի և, անշուշտ, վկայում

են հեղինակի բեղուն գրչի ու գրական ճաշակի մասին: «Սոկրատ Խանյանի գրիչը տարեցտարի դարձել է հզորագույն, իսկ երգը՝ հազարաթև, բանաստեղծի պոեզիայի մասին իր բնորոշումն է տալիս գրականագետ Ս. Դանիելյանը:- Նրա բանաստեղծություններում ենթահողը Արցախ աշխարհն է ու մարդկային հիշողությունը, որ խոր ու նորոգ ծալքերում ցավ ու կորուստներ է պահում, ականատեսի մորմոք ու երազի արթմնի ճանապարհը»… Ու պատահական չէ, որ փոթորկալի կյանքի 80-րդ հանգրվանին հասած գրողի մեծագույն արժեքը համարվում է նրա բանաստեղծական արյան վազքը: Այդ են հաստատում Ս. Խանյանի «Արցախուհին», «Նահատակ Լուսո», «Մեր», «Արցախի արծիվը» պատմական պոեմները, (վերջին ստեղծագործությունը արժանացել է Եղիշեի անվան պետական մրցանակին), «Արցախյան ղողանջներ», «Կարոտի Կրակներ», «Արևսար», «Սպասում» և մյուս ժողովածուները, որոնցում խտացված են նրա գեղարվեստական նախասիրությունները՝ քնարական, հայրենասիրական շեշտադրումներով…

Սոկրատ Խանյանի գրականագիտական ընդհանրացումներում ծավալային ու թեմատիկ ընդգրկումներով առանձնանում են «Հայրենիքի ճակատագիրը Հայ պոեզիայում», «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում», «Արցախյան պատերազմը և հայ պոեզիան» աշխատությունները, որոնցում վերլուծվում են գրական-պատմական պրոցեսները, արվեստի և գրականության փոխհարաբերություններին առնչվող հիմնախնդիրները՝ գիտական եզրահանգումներով և համոզիչ, ուշագրավ հիմնավորումներով: Գիտնականն արդեն տպագրության է պատրաստել նաև «Հայ արձակի զարգացման միտումներն Արցախում» ծավալուն ուսումնասիրությունը: Ու, եթե այս ամենին գումարելու լինենք, որ հրապարակի վրա է գտնվում բանաստեղծի ստեղծագործությունների 4-րդ հատորը և հերթական 6 հատորներն ամփոփելու են նրա զուտ գրականագիտական աշխատությունները, ապա դժվար չէ կռահել, թե Ս. Խանյանը ստեղծագործական ինչպիսի բեղմնավոր ու նախանձախնդիր գործունեություն է իրականացնում Արցախի գրական միջավայրում:

Երկար տարիներ Ս.Խանյանը, որպես դեկան գլխավորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (ապա՝պետհամալսարանի) բանասիրական ֆակուլտետը, պաշտոնավորել իբրև

պրոռեկտոր, հանդիսացել հայոց լեզվի և գրականության, այնուհետև՝ գրականության և լրագրության ամբիոնի վարիչը(այժմ նույն ամբիոնի պրոֆեսոր է): Ուշագրավ է, որ գիտամանկավարժական բնագավառում, ձեռք բերելով հարուստ փորձ, նա չէր կարող «պարապ մնալ», ելնելով ժամանակի պահանջներից, հրատարակեց «Հայ գրականության ուսուցումը բուհում» ուսանելի ձեռնարկը՝ մեթոդական ցուցումների, հայ գրականության ծրագրի և մատենագրության ընդգրկմամբ: Որպես ղեկավար, անուրանալի է կրթօջախում գիտնականի ավանդը նաև ասպիրանտների ու հայցորդների, երիտասարդ դասախոսների հերթափոխի պատրաստման գործում, ուր դրսևորվել են նրա մարդկային լավագույն հատկանիշները:

Հոբելյարի անցած ուղու մասին, հանդիսավոր երեկոյի ժամանակ խոսեցին և նրա վաստակը բարձր գնահատեցին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը (նա հրապարակեց ԼՂՀ նախագահի հրամանագիրը՝ Ս. Խանյանին «Մեսրոպ Մաշտոց»շքանշանով պարգևատրելու մասին հրամանագիրը և գրող-գիտնականին հանձնեց պետական բարձր պարգևը), ԼՂՀ ԳՄ նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանը, որն իր հերթին, հոբելյանի առիթով նրան փոխանցեց Հայաստանի գրողների միության ուղերձն ու գրական վաստակի համար «Ոսկե մեդալ»: Երկարամյա գիտամանկավարժական գործունեության համար Ս. Խանյանին «Ոսկե մեդալի» արժանացրեց նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր Ստ. Դադայանը:

Այդ օրը, բնականաբար բարեմաղթանքի և շնորհավորանքի խոսքեր հնչեցրեցին շատերը (երեկոն ընդմիջվում էր երաժշտական համարներով և գրողի ստեղծագործությունների ընթերցմամբ): Սակայն 80-ամյա բանաստեղծի համար հատկապես ոգեշնչանքի աղբյուր հանդիսացավ թոռան՝ տաղանդավոր դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Հայկ Մելիքյանի՝ «Հատուկ պապիկի հոբելյանի առիթով» նախատեսված բարձրարվեստ ելույթը, որը ամենասրտահաճ նվերն էր հոբելյարին…

Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Գրական թերթ», *2010, թիվ 4*

ՄԵԾԱՐՄԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ

Փետրվարի 25-ին Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տան դահլիճում տեղի ունեցավ բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, թարգմանիչ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ: Այն կազմակերպել էր Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանը, որին իրենց գեղեցիկ կատարումներով մասնակցում էին Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի աշակերտներն ու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները: Միջոցառմանը ներկա էին փոխքաղաքապետ Արմեն Հակոբյանը, բանաստեղծներ, լրագրողներ, հոբելյարի գրչի երկրպագուները, այլոք:

Հոբելյարը ծնվել է 1930թ. ԼՂՀ Հադրութի շրջանի Աղբուլաղ /այժմ՝ Ակնաղբյուր/ գյուղում: Միջնակարգն ավարտել է 1947 թվականին: Բարձրագույն կրթությունը ստացել է՝ սովորելով Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության բաժնում: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1965-ին, իսկ դոկտորականը՝ 2002-ին: Դասախոսում է ԱրՊՀ-ում: ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1958-ից:

Ցերեկույթն ընթանում էր ամենատարբեր հիշողությունների վերարտադրմամբ: Իր սրտի խոսքն ասաց ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոնի դոցենտ Սիրուն Բաղդասարյանը: Հոբելյարի կյանքից հուշեր պատմեց Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի գրական մասի վարիչ Կարինե Ալավերդյանը: Ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանն արտասանեց բանաստեղծի «Նահատակ լուսո» (Ավոյի մասին) պոեմից մի հատված: Ասմունքով հանդես եկավ նաեւ նշյալ գրադարանի ավագ գրադարանավար Անահիտ Գարաքյանը: Միջոցառման կազմակերպիչը՝ Ստեփանակերտի Մուրացանի անվան գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանը, շնորհավորելով հոբելյարին, նրա տիկնոջը պարտավորեցրեց ավելի ուշադիր եւ հոգատար լինել ամուսնու հանդեպ, որպեսզի միասին նշեն նրա 100 ամյակը: Երգի գեղեցիկ կա-

տարմամբ հանդես եկավ նաեւ փոքրիկ երգիչ Կարեն Խաչատրյանը: Իրենց երգերով ներկաներին բավականություն պատճառեցին ԼՂՀ ժողովրդական արտիստուհի Նաիրուհի Ալավերդյանը, մշակույթի տան գուսանական-ժողովրդական երգի ստուդիայի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Ղահրամանյանը: Դահլիճում ներկա ընթերցողներից մի քանիսն արտասանեցին Ս. Խանյանի բանաստեղծություններից: Ահա դրանցից մեկը.

Չեմ տրտնջացել իմ բախտի համար,
Ինչ տրվել է ինձ՝
Գոհ եմ մնացել,
Լսել եմ հոգուս ձայնը առնական,
Ծաղիկ ցանելով՝
Ճամփաս գնացել:
Իմ ուղեցույցը միշտ լույսն է եղել,
Եղել եմ երգի, հերկի սիրահար,
Ավելորդ խոսքով վերքեր չեմ պեղել,
Թեւեր եմ տվել
Հույսերով իմ վառ:
Ու երբ դատարկված սրտեր եմ տեսել,
Վառել եմ նրանց հոգուս կրակով,
Իսկ եթե հանկարծ թափուր չմնամ,
Հոգիս սնել եմ
Երկրիս երակով:
Կշռադատել եմ ինքս ինձ անվերջ,
Անցյալիս նայել,
Ստուգել ներկաս,
Եվ իմ երազած գալիքին ասել.
-Գիտեմ, ցանկալի՛ս,
Անպայման կգաս:

ՀՀ եւ ԼՂՀ գրողների միության անդամ Սոկրատ Խանյանի մասին այսպես է գրել Գուրգեն Գաբրիելյանը.

-«Սոկրատ Խանյանի երգերը հողաբույր են, քաղաքացիական պարտքի քնարական արտահայտություններ, հայրենասիրության ընդգծված թրթիռներ, բարության եւ լույսի քնքշանքներ, անձնուրաց սիրո նվագներ»:

Տիկին Մարգոն՝ հոբելյարի կինը, բնութագրում է ամուս-

նուն որպես ջերմեռանդ, աշխատասեր մարդու, ով ստեղծում է ու շարունակաբար արարում:

ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի գրչին են պատկանում «Կարկաչ», «Բարեկամություն», «Սիրտս ձեզ հետ է», «Արեւսար», «Լեռների երգը», «Իմ նվերը», «Սպասում ենք դեռ», «Քո անունից», «Կանաչ ծփանք», «Կարոտի կրակներ», «Արցախյան ղողանջներ», «Արցախի արծիվը», «Մեր», «Իմ ծիածանը», «Նահատակ լուսո», «Թեւավոր իմ կյանք», «Սիրո ճամփա» պոետական ժողովածուները, «Պոեզիայի ուժն ու հմայքը» /Եղիշե Չարենցի մասին/, «Թաթուլ Հուրյանի սխրանքը», «Ցավի եւ սիրո պոեզիա» եւ այլ գրականագիտական գրքեր:

-Ս. Խանյանը Ղարաբաղի գրական օջախի խաչազարդ սյուներից մեկն է: Նա բանաստեղծ է, գրականագետ, մանկավարժ ու նաեւ լավ ղարաբաղցի: Խանյանի երգերը հյուսված են արցախյան բնության խայտաբղետ նախշերով, շնչավորված են լեռնաշխարհի ծաղիկների բույրերով,- գրել է Հրաչա Բեգլարյանը:

Վաստակավոր գործիչն արժանացել է ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալի, ԼՂՀ նախարարների խորհրդի եւ գրողների միության Եղիշեի եւ Մուրացանի անվան գրական մրցանակների: Իր ծննդյան 80-ամյա հոբելյանի կապակցությամբ վերջերս ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով պարգեւատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ «գրական վաստակի համար» արժանացել է ՀՀ ԳՄ Ոսկե, ինչպես նաեւ ԱրՊՀ Ոսկե մեդալների:

Ցերեկույթի ամփոփիչ խոսքը հոբելյարինն էր.

-Ես անչափ ուրախ եմ,- նշեց նա,- որ իմ ծննդյան 80-ամյակը եւ գրական, գիտամանկավարժական գործունեության 60-րդ տարեդարձը դիմավորում եմ մեզ սնող ու թեւավորող հայրենի Արցախի ազատ ու անկախ ընթացքի մեջ: Ես մեր պետության գոյությունը համարում եմ ոչ միայն Արցախի, այլեւ ամբողջ հայության հերոսականության եւ արժանապատվության վերականգնում: Դա մեր բոլոր մեծերի երազանքն էր՝ Խորենացուց մինչեւ Անդրանիկ, Նժդեհից մինչեւ Ավո ու Բեկոր: Յուրաքանչյուր մարդու անցած տարիները

նմանվում են ուլունքաշարի, որի մեջ կարելի է տեսնել ծիածանի բոլոր գույները՝ մերթ արցունքի ցողով, մերթ էլ բերկրանքի ցայտով՝ կամարված անցյալից՝ ներկա, ներկայից՝ գալիք: Տարիների խտացումներն ինձ՝ որպես բանաստեղծի, գրականագետի, մանկավարժի, հուշում են ավելի սերտ կապվել իմ ժողովրդի կյանքին ու նորանոր ստեղծագործություններով նպաստել նրա առաջընթացին, Արցախ աշխարհի վերջնահաղթանակին: Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում իմ ընտանիքով, իմ ժողովրդով: Ունենք պետություն, ազատ Արցախ, որտեղ զարգանում է ազգային մշակույթը: Ես կարողացել եմ արդարացնել իմ կոչումը, իմ քաղաքացիական կեցվածքը: Վերջում Ս. Խանյանը կարդաց իր բանաստեղծություններից...

Կյանքը գետ է, հոսում է հար,
Նա չի կանգնում, հոսում է հար,
Լավ անունից ու լավ գործից
Ժողովուրդը խոսում է հար:

Այնուհետեւ իր գրքերից Սոկրատ Խանյանը նվիրեց Ստեփանակերտի Մուրացանի անվան գրադարանին:

Անուշ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Ստեփանակերտ» *թերթ, մարտ 2010*

Նկարում՝ ձախից Ս. Խանյանը, կինը՝ Մարգոն, սփյուռքահայ գրող Վահե Օշականը Ստեփանակերտում

ԻՄ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸ

*(Ելույթ Ստեփանակերտի մշակույթի տանը **Ս. Խանյանի** հոբելյանական ցերեկույթի ժամանակ)*

Սոկրատ Խանյանը 80 տարեկան է. անհավատալի է, բայց... փաստ է: Նայում ես այդ առույգ, գեղեցիկ, երիտասարդական ավյունով լեցուն մարդուն եւ անհավանական է թվում, որ նա 80 տարեկան է: Անհավանական է, բայց... փաստ է.

Կարծես երեկ էր, ես սովորում էի Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի 8-րդ դասարանում: Մտավ ուսմասվարը եւ հայտնեց, որ դասերից հետո հանդիպում է լինելու Բաքվից ժամանած բանաստեղծի հետ՝ Սոկրատ Խանյան է նրա անունը:

Մենք շտապեցինք գրադարան եւ գտանք նրա բանաստեղծությունների երկու փոքրիկ ժողովածուները: Յուրաքանչյուրս մեկական ոտանավոր ընտրեցինք: Ես հավանել էի՝ «Սիրտը նուրբ է, բարեկամներ, զգույշ սրտեր չկոտրեք» ստեղծագործությունը: Դասերից հետո եկավ սպասված բանաստեղծը՝ գեղեցիկ, սեւաթույր մազերով, փոքրիկ բեղերով: Ժպտերես բարեւեց բոլորին, զրույցի բռնվեց, բանաստեղծություններ արտասանեց: Մենք եւս կարդացինք մեր ընտրած գործերը: Նա շատ հավանեց իմ ելույթը, վեր կացավ եւ համբուրեց իմ ճակատը՝ դա նրա ինձ տված առաջին համբույրն էր: Հետագայում ես հասկացա, որ ընդհանրապես համբուրելը նրա ամենամեծ եւ ամենագեղեցիկ թուլությունն է:

Դպրոցն ավարտելուց՝ ընդունվեցի Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, եւ չորս տարի լսում էի նրա դասախոսությունները հայ գրականությունից եւ ռուսական գրականության պատմությունից: Ինքնին հետաքրքիր առարկաներ են, սակայն հանրահայտ է, որ դասընթացն ավելի սիրելի է դառնում, երբ հաճելի է նաեւ դասախոսդ: Նրա դասաժամերը անցնում էին թեթեւ, առանց լարվածության, որոնց ժամանակ հոգեկան մեծ բավականություն էինք ստանում, լիցքաթափվում, հատկապես, երբ խոսքը գնում էր այս կամ այն բանաստեղծի սիրո լիրիկայի մասին: Խանյանը՝ լինելով սիրառատ մարդ, թեմային գումարում էր իր դրական լիցքերն ու հետաքրքիր ընթերցումները եւ դասաժամը վերածվում էր գրական ցերեկույթի:

Ավարտեցի ինստիտուտը, բայց քանի որ հարեւանությամբ էինք

ապրում, դարձյալ հաճախ հանդիպում էինք աշխատանքի գնալիս: Նրա ոչ մի «բարեւ» սովորական «անհամ» բարեւ չէր՝ մի գեղեցիկ խոսքով, հաճոյախոսությամբ, զվարճախոսությամբ, կամ էլ պարզապես բարեհամբույր ժպիտով գեղեցկացնում էր իր բարեւն ու դրական լիցքեր հաղորդում քեզ եւ օրը դառնում էր ավելի պայծառ:

Այդ նրանից է, որ նա գիտե ապրել եւ ապրեցնել իրեն շրջապատող մարդկանց, գիտե գինը Աստծո տված յուրաքանչյուր օրվա եւ ոչ մի ժամ ու օր իզուր չի վատնում:

Մեր համագործակցությունը սերտացավ, հատկապես երբ ես աշխատանքի անցա Ստեփանակերտի պետդրամ թատրոնում: Դա 1999 թվականն էր: Նա երկար տարիներ եղել է այդ թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամը եւ յուրաքանչյուր նիստի ժամանակ մենք ուշի-ուշով լսել ենք նրա հեղինակավոր խոսքը, հաշվի առել արված դիտողությունները: Նա մեզ հետ միասին ուրախացել է մեր հաջողություններով, տխրել, ցավել թերացումների համար: Իսկ եթե գտել է, որ բեմադրությունը արժանիքներ ունի, անպայման գրիչ է վերցրել, թատերախոսություն է գրել եւ պատմությանն ու սերունդներին հանձնել բեմադրությունը:

Սոկրատ Խանյանը նաեւ պիես է հեղինակել մեր թատրոնի համար: 2005 թվականին, երբ նշվում էր գրերի գյուտի 1600-ամյակը, նա գրեց «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» չափածո պիեսը եւ այն բեմադրվեց մեզ մոտ, որը խաղացվեց հունիսի 4-ին, բացօթյա, հենց Ամարասի պարիսպների մոտ կառուցված բեմահարթակի վրա: Հազարավոր արցախցիներ էին ներկա ծիսակատարությանը, որը դարձավ մշակութային երեւույթ էր մեր հանրապետության կյանքում:

Ես ուզում եմ ընդգծել նաեւ այն սերտ համագործակցությունը, որ ստեղծվել է իմ՝ որպես հեղինակի եւ նրա՝ որպես խմբագրի միջեւ:

Հավատացնում եմ, որ յուրաքանչյուր հեղինակի համար անչափ կարեւոր է կողքին ունենալ խելոք, կյանքով իմաստացած անձնավորություն, որին հավատում եւ վստահում ես:

Ինձ համար միշտ այդպիսին եղել է իմ հայրը՝ Իսահակ Ալավերդյանը, որն անառարկելի հեղինակություն է եղել ինձ համար: Բայց երբ 1992թ. նա այլեւս չկար, ես իմ կողքին մեծ դատարկություն զգացի: Այդժամ օգնության եկավ ընկ. Խանյանը եւ դարձավ իմ խորհրդատուն եւ իմ հեղինակած գրքերի խմբագիրն ու գրախոսը:

Նրան կարելի է դիմել օրվա ցանկացած ժամի, եւ ինչքան էլ

զբաղված լինի, անպայման կլսի քեզ, ուղղություն կտա:

Մենք նաեւ վեճեր ենք ունենում՝ ստեղծագործական վեճեր, որոնցից ծնվում է ճշմարտությունը, եւ նա այդ տարիքում անգամ, կարողանում է լսել դիմացինին, ընդունել նորն ու առաջավորը: Իսկ քանի դեռ մարդ ընդունում է նորը, ուրեմն նա դեռ երիտասարդ է:

Ասում են՝ ծերը նա չէ, ով անցել է 80-ի սահմանը, այլ նա, ով «թթվել է» արդեն 30 տարեկանում: Այս առումով ընկ. Խանյանը դեռ երկար տարիներ կարող է երիտասարդների համար օրինակ լինել:

Ս. Խանյանը գիտե ոչ միայն լսել դիմացինին, այլեւ գնահատել, ճիշտ ժամանակին ասված մի բարի խոսքով ոգեւորել: Կոնկրետ իմ դեպքը՝ լինեն ռադիոհաղորդումներ, թե հեռուստատեսային հաղորդումներ, լսելուց՝ չի զլանում, վերցնում է խոսափողը, զանգում է իր մի հատիկ բառով ուրախացնում քեզ:

Ընդհանրապես, արվեստագետը՝ բանաստեղծները, դերասանները, նկարիչները, շատ ժլատ են գովեստի մեջ, երբ դա վերաբերում է իրենց գործընկերներին՝ ոչ մեկը մյուսին չի հավանում:

Ընկ. Խանյանը ինքը լինելով բանաստեղծ, չի զլանում նաեւ խոսք ասել իր գրչընկերների մասին՝ դիմացինի մեջ տեսնելով նախ եւ առաջ լավը, առաջավորը: Եվ դա կատարում է նրա կենդանության օրոք: Այո, այո, կենդանության:

Երբ այս կամ այն արվեստագետը հեռանում է կյանքից, կարծես բոլորի լեզուն բացվում է, սկսում են դիֆերամբներ երգել, իսկ Խանյանը այդ ամենը ասում է նրանց կենդանության օրոք: Դա խոսում է նրա մեծահոգության մասին:

Այս ամենով հանդերձ, ընկ. Խանյանը գիտե աջակից լինել մարդուն ոչ միայն լավ, ուրախ առիթներով, այլեւ դժվար օրերին: Դժվար կացության մեջ հեշտ է հիշել, որ ճնշում ունես, շաքար ունես եւ էլի ինչ-որ հիվանդություններ եւ արդարացնել քո անտարբերությունը: Սոկրատ Խանյանը այդպիսի դեպքերում մոռանում է իր բոլոր հիվանդությունները, գալիս կանգնում է կողքիդ, սփոփում քեզ եւ դրանից ինքը հոգեպես շատ լավ է զգում իրեն:

Սոկրատ Խանյանը ծնվել է գյուղում եւ մինչեւ այսօր էլ իր սրտում պահում է հողի կանչն ու կարոտը: Նա այդ կարոտն առնում է իր փոքրիկ բանջարանոցից, որտեղ կանաչեղեն է ցանում: Պետք է տեսնել միայն, թե ինչ սիրով է նա աշխատում այնտեղ եւ ինչպես է

ուրախանում իր ստեղծածով, եւ ինչքան կոկիկ ու գեղեցիկ է նրա հոդակտորը, որն անչափ նման է իր գրած բանաստեղծություններին:

Ասում են մարդ երջանիկ է, երբ ներդաշնակ ու հաշտ է նախ իր հետ: Խանյանը ոչ միայն իր հետ է ներդաշնակ, այլեւ բնության, մարդկանց եւ ողջ հասարակության ու կյանքի...

Եվ ահա այսօր բեմում նստած է այդ երջանիկ մարդը: Նա կյանքում ամեն ինչի հասել է, արժանացել է մեր կառավարության բոլոր պարգեւներին, կոչումներին, մրցանակներին, մեդալներին, շքանշաններին: Ոչ մի նոր բանով նրան այլեւս չես կարող զարմացնել:

Միակ բանը, որ կարելի է ցանկանալ նրան, այս պարագայում՝ քաջառողջությունն է, որ նա երկար ապրի, ինչքան հնարավոր է երկար լինի մեր կողքին՝ իրենով գեղեցկացնելով մեր քաղաքը, հասարակությունը, համ ու հոտ տա մեր միջոցառումներին, որ մենք լավ զգանք մեզ: Շնորհակալություն, ընկ. Խանյան, որ Դուք կաք, որ այդպիսին եք:

Կարինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան
պետ. դրամ. թատրոնի գական մասի վարիչ

Գրող-հրապարակախոս, Արցախի հերոս
Զորի Բալայանի հետ

ՍՈԿՐԱՏ ԱՂԱԼԱՐԻ ԽԱՆՅԱՆԻՆ

Պապդ Խանի անունով,
Հայրդ անվամբ Աղայի,
Դու էլ մեծ պապ ես դարձել
Թոռան, ծոռան, տղայի:
Այդպես էլ վեհ ու հպարտ,
Անցիր, պոետ, քո ուղին,
Սոկրատի պես իմաստուն,
Սոկրատի պես միշտ ուղիղ:

Վլադիմիր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Վարդենիս, 22.01.2010

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻՆ

80-ամյա հոբելյանի առթիվ

Դո՛ւք, ութսունամյա իմաստուն այրդ,
Արցախատունկդ՝ Սոկրատ Աղալարի,
Կանգնել եք ահա... դարասահմանին,
Ելել եք ահա... դարազննումի...
Տարիները համառ, զոր ու զորընդեղ,
Ձեր սրտից, հոգուց չեն իջել իսպառ,
Չքնաղ մի խորհուրդ՝ սերը հրեղեն,
Որ բաժանել եք սիրելի մարդկանց.
Անդարձ հեռացած Ձեր նախնիներին,
Սուրբ հոգիներին՝ անուն առ անուն,
Հայրենակարոտ, հայրենաբազուկ
նահատակներին:
Դուք պաշտում եք մեր ուսանողությանը,
Մարդկանց, աշխարհին ու քերթությանը...

Տարիներն, իրա՛վ, Ձեր խորհուրդն են,
բիլազուկն են Ձեր,
Ձեր եռքն անբավ, Ձեր իմաստությունը,
Ձեր գիտությունն ու քերթությունը, որ Արցախեղեն են,
Որ թելիկ-թեւիկ, անմար սխրանքով
Ձեր սանիկներին՝ ուսանողությանն եք
բաժանել-կրթել,
Ու... իմաստնացրել հոգով ու մտքով,
Խիզախումներով, ոգեղեն հրով...
Դո՛ւք, ութսունամյա իմաստուն այրդ,
Արցախատունկդ՝ Սոկրատ Աղալարի...

ՁԻՆԱՒԴԱ,
Ստեփանակերտ, 22.01.2010

ԵՐԱԽՏԻՔ

Նվիրում եմ անվանի բանաստեղծ Սոկրատ ԽԱՆՅԱՆԻՆ՝ ծննդյան 80-ամյակի առթիվ

Դու մեզ երգեր ես նվիրել, պոետ,
Թող մեր այս երգն էլ քեզ լինի նվեր...
«Սիրտը նուրբ է, բարեկամներ,
Ձգույշ սրտեր չկոտրեք»-
Մեզ ես կտակում դու, մեր բանաստեղծ:
Քո սիրտն էլ է նուրբ, մեր պոետ ընկեր:
Սիրված բանաստեղծ ու քննադատ ես,
Դու հրաշալի մեր դասախոսն ես,
Մերթ սրնգահար, մերթ դուդուկահար,
Ձգերազանցված մեր բարեկամն ես,
Դու մեր սիրելի Խանյան Սոկրատն ես:
Բարին քո սրտում հորձանք է տալիս,
Քո անհագ սիրտը մարդկանց ես տալիս,

Հայոց աշխարհին երգեր ես ծոնում,
Դու խան ես երգի,
Սոկրատ ես մտքի,
Ասքեր արարող զավակն ես դարի:
Այսպես մինչեւ վերջ չենք կարող պարզել,
Տարիքդ ասա, ինչքան է դարձել:
Քայլերդ ասես թռիչք է մի նոր,
Խոսքերդ գերող, միտքդ լուսավոր,
Դու միշտ իմաստուն ու միշտ արարող,
Արցախի զավակ, երգիչ մեր Խանյան:
Դու մի աղաչիր քո տարիներին,
Նրանք երբեւէ չեն իջնելու վար,
Որ մեզ նվիրես նոր կախարդ երգեր,
Մնաս միշտ սիրված ու սիրահարված,
Ինչպես սիրված ես մեզ համար եղել,
Ժամանակն անգամ անզոր է քո դեմ,
Միշտ երիտասարդ մեր Սոկրատ Խանյան:

Բանաստիրականի երկրորդ հեռակա կուրս
22.01.2010

ԼԵՌՆԱԾԻՆ ԱՐՑԱԽՑԻՆ

Ս. Խանյանին՝ 80-ամյակի առթիվ

Կեցվածքդ հպարտ, հայացքդ պայծառ,
Միտքդ լուսածին, խոսքդ բազմիմաստ,
Քայլում ես վստահ արցախցու նման,
Քայլում Արցախում՝ ինչպես լեռնածին,
Քո ժողովրդով դու հպարտանում,
Սիրտդ ու հոգիդ երկրին նվիրում:
Գրում ես գրում, գրում անդադար,

Ազատությունն ես երգում փրկարար,
Որ ցույց տաս բոլոր, բոլոր ազգերին,
Որ Արցախ երկիրն իր ճանապարհին
Անկախ ապրելու իրավունք ունի:

Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

22.01.2010

ԽՈՍՔ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Բանաստեղծ-գրականագետ Սոկրատ ԽԱՆՅԱՆԻՆ՝ ծննդյան 80-ամյակի առթիվ

80-ամյա դափնիներիդ
Գարուններ գան, չգնան,
Քո՝ մեզ թողած մեծ վաստակին
Հալալ արա, Խանյան:

Փարված հողիդ խոր ակունքին,
Շունչ ես տալիս սիրահար,
Որդու սիրով կապված ես դու,
Մեր եզերքին, Խանյան:

Հազար հոգս ու ցավ ես տեսել,
Մեր սերը քեզ բալասան,
Մեր սրտերն ես երգով գերել,
Մեր բանաստեղծ, Խանյան:

Պապենական եզերքից ես
Մեր հող-ջրին դու մերվել,
Ծառ ու ծաղկին շունչ ես տվել,
Քո երգերով, Խանյան:

Բանաստեղծ ես ու գիտնական,
Մեծագույն Մարդ մեծատառ,
Պատմությունում հար կմնաս,
Մեր սիրելի Խանյան:

Դե էլ չասես տարիներիդ՝
Մի քիչ դանդաղ իջեք ցած,
Տարիները քո ճամփեքին
Դարձել են մի բուրաստան:

Հասակը չէ կարեւորը,
Կամքդ ու սիրտդ են ջահել,
Երազներով ջահել մնաս,
Երգի աղբյուր Խանյան:

Քեզ մեծ եռանդ, կամք կորովի,
Ու ծաղկազարդ գարուններ,
Ոնց եղել ես, այնպես մնաս,
Մեր սիրելի Խանյան:

Զոյա ՍԱՐԳՍՅԱՆ,
Վաստակաշատ մանկավարժ, 22.01.2010թ.

Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան, բանաստեղծ-գրականագետ Սոկրատ ԽԱՆՅԱՆԻՆ

Ի սրտե շնորհավորում ենք Ձեր ծննդյան 80-ամյակը, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, դարաբաղյան երկարակեցություն, երիտասարդական ավյուն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Թոշակառու մանկավարժներ՝ Խորեն Ղազարյան, Էմմա Սարդարյան, Հադրութ, գ. Ակնաղբյուր, 22.01.2010թ.

ԱՅԴ ԸՆՏՐՅԱԼ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՀՈՒՍԱԴՐՈՒՄ Է

Սոկրատ Խանյանը 80 տարեկան է, որից 60-ը նվիրել է բանաստեղծությանը, բանասիրությանը, սերունդների կրթության գործին:

Դա ընտրյալ, նվիրյալ, իր անվան հարգն ու գործի վարկն իմացող մարդու ճանապարհ է, որ դեռ շարունակվելու է: Պիտի շարունակվի, որովհետեւ իր ներկայությամբ մենք հարուստ ենք: Ինքն էլ գիտի, որ իրենով մեզ հարստացնում է, դրա համար էլ երբեք իրեն չի մսխել, ծայրահեղությունների չի տրվել, ծայրահեղություններ, որ փոփոխված իրավիճակում կարող էին մի պահի բարձունք բերել, մյուսին՝ խեղել, հաշմել թե բանաստեղծի, թե գիտնական-մանկավարժի ու հանրային գործչի կերպարը:

Սոկրատ Խանյանը, կարծում եմ, իր տաղանդին վերաբերվել եւ շարունակում է վերաբերվել ծայրահեղ խնայողությամբ, մի բան, որ միայն գործի գիտակ, վարպետ մարդն է ունենում:

Ամեն համեմատություն թերի է: Մանավանդ՝ ինչ որ պիտի ասեմ ու, այնուամենայնիվ, համարձակվում եմ մեջբերել՝ ոչ ուղղակի, այլ հուշագրությամբ փոխանցված՝ Հրաչյա Աճառյանի այն միտքը, թե «ամեն օր գրում եմ մեկ էջ եւ տարվա մեջ ունենում 365 էջ՝ պատրաստի գիրք»:

Այսպես աշխատել եւ աշխատում են իսկական նվիրյալները, ում համար օրն օր չէ, եթե չի ավարտվում գրասեղանի մոտ: Ըստ երեւույթին, սա դասական իմաստով իրենց գործը հարգող գիտնականների, գրչի մարդկանց հավատամքն է: Կարծեմ, Ռաֆֆին է նկատել, որ «տաղանդը երեք քառորդ չափով աշխատասիրություն է»: Չփորձեմ սրբագրել դասականին, բայց, թվում է, «աշխատասիրության» փոխարեն պիտի ասվեր «ինքնակազմակերպվածություն»: Այսինքն՝ պարտադիր աշխատանքի այն վարքի մշակում, որ դառնում է կենսակերպ:

Կարեւոր չէ՝ այդ աշխատանքն այսօ՞ր կիրապարակվի, թե՞ վաղը կամ կմնա գրասեղանի գզրոցներում: Կարեւորը՝ որ գրվի, լինի: Այս դեպքում նույնիսկ կարեւոր չէ՝ այդ աշխատանքը բավարարո՞ւմ է նրբացած մեկի ճաշակը, թե՞ ոչ, որովհետեւ ունիվերսալ ճշմարտություն չի եղել, չկա եւ չի լինելու, նաեւ՝ բանաստեղծություն, որ բոլորի համար էտալոնի պես ընդունելի դառնա: Այս իրողությունը Սոկրատ Խանյանը վերահաստատել է սեփական բանաս-

տեղծությամբ եւ բանասիրական ուսումնասիրություններով:

Իր ներկայությունն ու գիրը՝ լինի բանաստեղծություն, հոդված, ծավալուն ուսումնասիրություն, թե հուշի պատառիկ՝ հուսադրող են եղել միշտ: Ինքը կայունության, հանդուրժողականության, ներողամտության խորհրդանիշ է կյանքում: Եվ այդպիսին է նաեւ իր խոսքը:

Այս փոխատեղությունների, կորուստների եւ գտնումների վազքի մեջ, կարծեմ, Սոկրատ Խանյանը մեկ անգամ եւ շատ վճռականորեն տրամադրված հեղափոխական եղավ, բայց դա արդեն ժողովրդի ըմբոստացման մեջ արժանավոր բան ասելու հրամայականն էր՝ 1988-ին: Ուրիշ կերպ չէր լինելու, որովհետեւ կարիքը կար, անհրաժեշտությունը՝ նույնպես, բայց նույնիսկ այս պարագային նա մնաց նույն հավատավոր պահպանողականը. չձգտեց, որ արժանավոր իր խոսքը բերի իրեն որեւէ քաղաքական ու պաշտոնական-հիերարխիկ կարգավիճակի, այլ մնաց կենսակերպի վաղեմի ռիթմի եւ սովորույթի մեջ, ինչը մեծ արժանապատվություն եւ գործի հանդեպ բարձր հարգանք է հուշում՝ որ ունի եւ չի ուզում կորցրած լինել:

Մեզանում սոկրատ Խանյանը համարձակորեն ստերեոտիպ ջարդեց եւ ասաց, որ մենագրության նյութ կարող է լինել նաեւ արցախցի հեղինակի գործը, իր սերնդակցի ստեղծածը, հաղթահարեց գրականագիտության «աղայական» վերաբերմունքը եւ գրեց ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որ գուցե, չի փայլում ժամանակակից գիտական լեզվին յուրահատուկ ոճով եւ բառամթերքով, հղումներ չունի, ինչպես ուրիշների մոտ, փիլիսոփայական-էսսեիստական հեղինակություններին, բայց գրված է սիրով, գուրգուրանքով եւ՝ հպարտությամբ, որ այս փոքրիկ երկրում նույնպես, ինչպես Խորենացին է ասում, «հիշատակության արժանի գործեր են արվում»:

Ասացի՝ իրեն խնայում է, խնայողաբար է ծախսվում: Պիտի ավելացնեմ, որ այս խնայողությունն է, հավանաբար, նրա ընդմիշտ լիցքավորվածության գաղտնիքը: Այնքան չի դատարկվում, որպեսզի վերստին կուտակումների համար առժամանակ չերեւա ասպարեզում, դրա համար էլ միշտ ներկա է:

Երեւի թե չկա, չի եղել մի օր, որ Սոկրատ Խանյանը մեր գրական եւ հանրային կյանքում բացակա դիտվի, որպեսզի, մեկս մյուսին հանդիպելիս, հարցնենք՝ «ինչո՞ւ է լռել Սոկրատ Խանյանը»: Չի եղել, քանի որ ինքը թույլ չի տվել, որ իր լռությունից հարցնենք. եթե բա-

նաստեղծություն չի գրվում՝ գրականագիտությունը կա, մենագրության տպագրությունն է ուշանում՝ քննադատական հոդված է ծնվում, իսկ եթե ոչ այս է, ոչ այն՝ ապա որեւէ միջոցառման, բանավեճի, հոբելյանի համար Սոկրատ Խանյանն անպայման գտած խոսք ունի:

Եվ այդ խոսքը լսվում է, նույնիսկ եթե նախապես գիտես՝ ինչ է ասելու, որովհետեւ լավ է ասում. 50-60 տարվա մանկավարժ-դասախոսի իր խոսքը դարձյալ սեփական ստեղծագործություն է՝ ռիթմը, շեշտը, պաուզան: Իրենն է լսարան գրավելու տաղանդը, որ, երեւի թե, դարձյալ տարիների եւ տասնամյակների ընթացքում է հղկվել, ամբողջացել:

Այլ, ավելի լայն, ավելի համերաշխ, ավելի հանդուրժողական միջավայրում Սոկրատ Խանյան երեւույթը կլիներ «շրջանի կենտրոն»: Մենք, ցավոք, չունենք եւ դեռ երկար ժամանակ, գուցե, չենք ունենա այդ որակի ոչ միայն գիտակցված պահանջը, այլեւ՝ սոսկական զգացողությունը:

Բայց նույնիսկ այդ դեպքում Սոկրատ Խանյանը կարողացել եւ կարողանում է անաչառ սկզբունքային լինել, երբ փորձ է արվում տրորել գրական արժանապատվությունը, գրողի վաստակը: Եվ, ընդհակառակը, չափազանց տպավորվում է, երբ պաշտպանվում է գրավոր խոսքի արժեքը, գնահատվում՝ ով էլ լինի գնահատանքի տերը:

Ֆիրդուսին, ասում են, իր վաստակը պանծացրել է, թե՝ «երեսուն տարվա ջանքով ես ստեղծեցի Իրանը»: Խոսքը «Շահնամե»-ի արժեքի մասին է:

Այնքան մեծ չէր, երեւի, բանաստեղծի իր տաղանդը, որպեսզի Սոկրատ Խանյանը «երկիր ստեղծող» գործ գրեր, բայց եւ այնքան նվազ չէ, որպեսզի ասենք, թե ինքը երկրի դիմանկարին գոնե մի քանի մնայուն վրձնագիծ չի բերել: Անպայման բերել է: Եվ դա, թվում է, քնարական իր բանաստեղծությունն է:

Բայց մանավանդ երկրի՝ նոր-նոր ոտքի կանգնող Արցախի պետության գիտական-բանասիրական-գրաքննադատական կերպարի լավագույն կերտողն ինքն է ու կա: Եվ, ուրեմն, արժանի է, որ հոբելյանի առթիվ իր մասին ասվի նույն ջերմ խանդաղատանքով, ինչպես ինքն է խոսել եւ խոսում է ուրիշների, մեր բոլորի մասին: Երկրի եւ ժամանակի մասին:

Վահրամ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Բանասեր-հրապարակախոս, «Հայրենիք» թերթի խմբագիր

Բանաստեղծի կնոջ՝ Մարգոյի ծնողները.
Մարիամ եւ Աստծատուր Ահարոնյանները

Բանաստեղծը կնոջ՝ Մարգոյի հետ

ԶՐՈՒՅՑ ԳԱԼԻՔԻ ՀԵՏ

Քո անունով եմ ես միշտ գրոհել
Ու բարձունքների հասել՝ քեզ համար,
Եղել է նաեւ կրել եմ զոհեր,
Բայց միշտ տեսել եմ ժպիտդ անմար:

Դու միշտ նեցուկ ես եղել ինձ արթուն.
Քեզնով ելել եմ ու շտկել մեջքս,
Ասել եմ՝ մինչեւ չհաղթեմ մարտում,
Ես չեմ կատարի երբեք վայրէջքս:

Ու թե վայրէջք եմ կատարել ճամփիս՝
Թռիչքի նոր թափ առնելու տենչով,
Եվ պայքարներում իմաստը կյանքիս
Իմ սիրտն է մտել քո սրտի միջով:

Այսօր էլ կրկին ուղիդ եմ հարթում
Ու տեսնում լույսիդ հորձանքը վարար,
Եվ կյանքիս ամեն մի ակնթարթում
Հարազատի պես ժպտում ենք իրար:

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎ

Աշնան տերեւ, սիրուն տերեւ,
Որ հագել ես կարմիր, դեղին,
Ինչո՞ւ քամուց այդպես թեթեւ,
Օրորվում ես ծառի ճյուղին:

Չլինի՞ թե նրա համար,
Որ սարերից փչող քամին,
Շուտով իր սառ թեւին առած,
Հեռուները քեզ կտանի:

Քեզ կտանի, ո՞վ իմանա,
Ո՞ր ուղղությամբ, ո՞ր փողոցով,
Քեզ կտանի դեպի հեռուն,
Դեպի ծովը ալեկոծվող:

Օ՜, մի դողա, քեզ երանի,
Անգամ վերջին օրերիդ մեջ
Դու քո փայլով ծիածանի
Զարդարում ես դաշտերը պերճ:

***

Կյանքում ուր էլ եղել եմ ես,
Իմ քայլերը ինձ բերել են
Միշտ դեպի քեզ,
Սիրուց անվերջ ես հարբել եմ,
Երազներս առաքել եմ
Միշտ դեպի քեզ:

Կռունկների կանչերի հետ
Ծրարել եմ կարոտներս
Միշտ դեպի քեզ,
Իմ սրտի հետ ու խոհերի
Ուղարկել եմ նարոտներս
Միշտ դեպի քեզ:

Չեմ մեղանչել սիրուս առաջ,
Ուրիշ աստղեր չեմ որոնել,
Աստղերի շողք-փայլով արբած
Քայլել եմ ես միշտ դեպի քեզ,
Սպասումիդ հույս եմ բերել,
Սպասումիդ լույս եմ բերել,
Թվացել է ու թվում է,
Թե ծնվել եմ այս աշխարհում,
Որ ժրաջան մեղվի նման,
Ծաղիկների բույրերն առած,
Թեւեմ անվերջ
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ:

ԷՔՍՊՐՈՄՏ

Հովհաննես ՇԻՐԱԶԻՆ

-Շիրազի երգը նեղ է,- ասում են:
-Շիրազի երգը դեղ է,- ասում եմ:
-Շիրազի երգը արցունք է,- ասում են:
-Շիրազի երգը բարձունք է,- ասում եմ:
-Շիրազը օրվա համբավ է,- ասում են:
-Շիրազը երգի ճամփա է,- ասում եմ:
-Շիրազը կյանքում անճար է,- ասում են:
-Շիրազը երգում հանճար է,- ասում եմ:
-Շիրազը խլված սարեր են,- ասում են:
-Շիրազը փրկված դարեր են,- ասում եմ:

1964թ., Երեւան

ՍՐՏԵՐՆ ՈՒ ՀՈՂԸ

Սրտերը ծնվում են մայր հողից,
Դիմանում տապին ու ցրտին,
Սրտերը ձուլվում են մայր հողին,
Եվ հողը փոխվում է սրտի:

05.09.2003թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆ Է ԱՅՍՕՐ

Մայիսյան եռատոնի առթիվ

Եկեք, եկեք մենք ամենքս
Միասին երգենք,
Միասին ե՛ւ երգելն է հեշտ,
Ե՛վ հող հերկելը:

Եկեք, եկեք մենք ամենքս
Միասին քայլենք,
Միասին ե՛ւ քայլելն է հեշտ,
Ե՛վ չարն հերքելը:

Եկեք, եկեք մենք ամենքս
Մեր ուղին հարթենք,
Միասին ե՛ւ հարթելն է հեշտ,
Ե՛վ քար ջարդելը:

Հաղթանակի տոն է այսօր,
Բոլորիս տոնն է,
Ե՛վ արցունքը, ե՛ւ բերկրանքը
Իմն է եւ քոնն է:

Եկեք մեկտեղ հիշենք նրանց,
Ովքեր որ չկան,
Եկեք մեկտեղ պաշտենք նրանց,
Ովքեր որ եկան:

Եկեք, եկեք մենք ամենքս
Միասին քրտնենք,
Միասին ե՛ւ քրտնելն է հեշտ,
Ե՛վ միշտ հաղթելը:

ԲԱԼԼԱԴ

Ուսուցչապետ Սարգիս ՀԱԿՈԲՅԱՆԻ
հայրական պատգամը բանաստեղծ
որդուն՝ Վարդան ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝
ծննդյան 60-ամյակի առթիվ
(Պատկեր տեսլական)

Ես քեզ փնջել եմ Քիրսի լանջերից,
Սասնա ծռերի ահեղ կանչերից,
Քեզ պարգեւել եմ հայոց դարերի
կրակված ոգին,
Դու իմ խենթ որդի:

Քո խաղ-զրույցը աստղերի հետ էր,
Արեւի հետ էր Արփագետիկի,
Լուսնի շողից էր քո նուրբ ճլորթին,
Ձեռքիս ափերը խաղադաշտն էին
Քո ժիր մանկության,
Իմ աջ ձեռք որդի:

Քարեր եմ բերել սեգ Դիզափայտից,
Ջահեր եմ բերել լուսո Անհունից,
Չեմ թողել բերդիս մշուշը չոքի,
Բերդիս պահապան
Դու իմ բերդ որդի:

Պապիդ հույսով եմ մեր հողը հերկել,
Պաշտել եմ բարին, չարիքը հերքել,
Հերկս ջրել եմ ճակտիս քրտինքով,
Թող քո քրտինքի աղբյուրը հորդի,
Դու իմ հերկ որդի:

Երգը եղել է կանչը իմ արյան,
Երգել է պապդ, երգել է այան,
Երգով ենք անցել մեր դժվար ճամփան,
Քո երգով ազգիդ պարգեւիր համբավ,
Օրհներգիդ մեջ է պապերիդ հոգին.
Դու իմ երգ որդի:

Ես քեզ փնջել եմ Քիրսի լանջերից,
Սասնա ծռերի ահեղ կանչերից,
Քեզ պարգեւել եմ հայոց դարերի
Կրակված ոգին,
Դու իմ խենթ որդի:

21.05.2008, Ստեփանակերտ

ԱՉՔԱԼՈՒՍԱՆՔ

Արցախի պետական համալսարանի
40-ամյակի առթիվ

Քառասնամյա մեր օջախի սերմնացաններ,
Եկեք այսօր աչքալուսանք տանք իրարու,
Սերունդների հոգում ինչքան սերմ ենք ցանել,
Կանթեղներ են դարձել արդեն՝ լույսի, բարու:
Մեր տենչը՝ հորդ, հույսը վառ էր մեր սրտերում,
Սակայն մեր դեմ սուր էր ճոճում ՊԱԿ-ն անողոք,
Հարվածներն այդ տանում էինք ու համբերում,
Փայփայելով մեր երազը՝ հույսի շողով:
Աբովյանի, Թումանյանի ազնիվ խոսքով
Եղբայրության դրոշն էինք պարզել կյանքում,
Հարեւանը սակայն թաքուն մի սեւ հոսքով
Մեր սարերին տիրանալու ելքն էր հարթում:
Ու բորբոքվեց ազատության կրակն անմար,
Ու զինվորյալ դարձավ լույսի օջախը մեր,
Մեր սաները մարտի ելան կամքով համառ
Ու գրեցին հերոսության մատյանն անմեռ:
Մեր խոսքը կա մայր Արցախի սխրանքի մեջ,
Կա մեր երթը Եռագույնի ծփանքի մեջ,
Ու հպարտ ենք, որ մեր ազատ կյանքի ճամփին
Բաբախում է նվիրական մեր սիրտը տաք:
Մեր այս տոնը պարգեւում է մեզ նոր թեւեր,
Դեռ լուսաբեր բարձունքներ կան գրավելու...
Քառասնամյա մեր օջախի սերմնացաններ,
Եկեք այսօր աչքալուսանք տանք իրարու:

30.10.2009թ., Ստեփանակերտ

ԻՄ ԽԱՉԵՆ

Իմ երազների աննինջ սրբավայր,
Կրկին խաչենված իմ լուսե Խաչեն,
Քո խոհերի մեջ արեւներ կան վառ,
Աստղեր կան անմար ու երգող խաչեր:
Դու նվիրել ես հերոսների բույլ,
Իմաստունների աստղեր ես երկնել,
Դու աստղերի մայր, դու արեւի քույր,
Քեզ ընծա լինի իմ սիրտն էլ, երգն էլ:
Իմ Սեւակամայր, իմ կարոտի ծով,
Սարինյանական անսպառ դու գետ,
Դու Աղանց տոհմի երգասաց Մռով,
Քո որդոց լեզվով խոսում ենք քեզ հետ:
Քո Աղանց տոհմի նոր ընկուզենու
Փարթամ ճյուղերին նոր երգդ եմ կարդում,
Քո հերոսների ոտնահետքերը
Ինձ հետ խոսում են կարոտով արթուն:
Արցախ աշխարհի պատվի լուսե էջ.
Եկել եմ՝ նորից կարոտս առնեմ,
Ուր էլ որ լինեմ, ուր էլ որ գնամ,
Դարերդ իմ դեմ պետք է, որ հառնեն,
Դու մեր պատմության հրաշեկ երակ,
Մեր հպարտության անմարում կրակ:

26.03.2009թ., Ստեփանակերտ

ՄԱՅՐ ԻՄ, ՄԻ ԹԱԽԾԻՐ

Զորակոչիկի խոսքը

Մայր իմ, մի թախծիր,
Քո ամենասուրբ պատվի զինվորն եմ,
Հայր իմ՝ օջախ իմ,
Քո տոհմածառի կյանքի զինվորն եմ:
Իմ մայր Հայաստան,
Քո մեծ Սփյուռքի՝ քո երազների,
Անառիկ բերդի՝ քո քաջ Արցախի
Փառքի զինվորն եմ,
Հայկ Նահապետի թոռն եմ հայկանուն,
Քաջն Վարդանի զինվորյալն եմ ես,
Ես Անդրանիկի վրեժի հուրն եմ,
Ավոյի թուրն եմ,
Բեկորի կուռը,
Ես հայ զինվոր եմ եւ հայի պես եմ,
Իմ Հայրենիքը կպաշտեմ այնպես,
Որ ամենուրեք ասեմ՝ «ես՝ ես եմ»:

02.06.2009թ., Ստեփանակերտ

ԱՐՑԱԽՆ ԵՄ, ՊԻՏԻ ՀԱՂԹԵՄ

Երգերը իմ անարատ
Այս ինչպե՞ս դարձան տխուր,
Զոհերս այսքան առատ,
Երազս՝ կրակ ու հուր:
Մի՞թե իմ հավքը թռավ,
Ցամաքեց երգիս առուն,
Ամպերը ուղիս առան,

Մշուշվեց կյանքս գարուն:
Հալվում եմ վիշտ ու ցավից,
Խոցում են հույսն իմ անմար,
Տանջվում եմ անլուր դավից,
Վերքերից իմ անհամար:
Բայց էլի մարտնչում եմ,
Թշնամուն խորտակելով,
Իմ բազում հոգսերի մեջ
Կասկածս փարատելով:
Արցախն եմ, եղել եմ, կամ,
Կցնդվի ցավս խորին,
Վճռական եւ ինքնակամ
Կողջունեմ ես բոլորին,
Ու կգան, կգան մի օր,
Աշխարհի ամեն ծայրից,
Կկարդան երգերն իմ նոր,
Փարատված վիշտ ու ցավից:

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՄԱՐԶԻԿ ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻՆ

Նրան օրհնեց Աստծո աջը
Ու պարգեւեց ուժը կամքի,
Հայոց բախտի ծանր խաչը
Նա դարձրեց խաչ հաղթանակի...
Երգս՝ դաջված սրտիս վրա,
Թող նոր պարգեւ լինի նրան:

06.08.09թ., Ջերմուկ

ՄԵՐ ԲԱԽՏԻ ԴՈՒՌԸ

Ո՞վ անկախություն,
Հայկ նահապետի նետից թեւ առած
Մեր բախտի արծիվ,
Քաջն Արայի սիրով հույս դառած
Օջախ ու պատիվ,
Տիգրանի ավյուն,
Մաշտոցի սուրբ գիր,
Վարդանի արյուն,
Մեր ճակատագիր:
Անդրանիկի թուր,
Նժդեհի խորհուրդ,
Արցախյան Առան,
Հայոց պատվանուն:
Դու մեր պապերի դարավոր երազ,
Այն ո՞վ է այսօր կասկածում ուժիդ,
Առանց քեզ ո՞վ է մարդամեջ մտնում,
Ո՞ր ժողովուրդն է իր ուղին գտնում:
Դու ինքնության դուռ,
Բազուկներ՝ կերտող,
Երջանկության գուռ,
Հանճարեղ քերթող:
Հավասարության
Դու միակ աղբյուր,
Դու արդարության
Լուսաբեր համբույր:
Սակայն դու երբեք չես հարատեւի,
Թե քեզ չկռենք մեր ջանքով արդար,
Մեր տենչերի հետ երբեք չես թեւի,

Թե քեզ չընծայենք սրտերը մեր վառ,
Դու չես արեւի,
Չես փարվի դու մեզ,
Թե մեր ավյունը չպարգեւենք քեզ,
Թե մենք՝ բոլորս,
Բռունցքված, մեկտեղ,
Չասենք. «Իրարից այնպե՞ս ենք կախյալ,
Հանուն երազած մեր ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ»:

***

Անհուն տիեզերք,
Քո գաղտնիքների սիրահարն եմ ես,
Այնքան ծաղիկներ ունես աշխարհում,
Եվ այնպիսի եռք...
Քիչ զգույշ եղիր, որ քո արարած
Ոչ մի նուրբ ծաղիկ
Ձուր չքառամի ու չհամրանա,
Որ ամեն ծաղիկ իր զույգը գտնի,
Բուրի, մայրանա:
Տիեզերք անհուն,
Այնքան գետեր ես արարել հողում,
Այնքան ջրվեժներ՝ քո լույսով շողուն,
Աղաչում եմ քեզ,
Աչքդ մի թեքիր նրանց ընթացքից,
Նրանց սպառման վտանգը վանիր,
Եվ այնպես արա,
Որ ամեն մի գետ
Ծարավը կոտրի հայրենի հողի,
Եվ հասնի ծովին...
Տիեզերք անհուն,

Այդ դու ես հունցել հողագունդը մեր,
Ոնց գեղեցկություն ու թանկ մի նվեր,
Արեւ-հրաշքը դու ես աչք դարձրել
Հավերժության մեջ,
Այդ դու ես մարդուն տվել ձիրք ու տենչ:
Քո տված ձիրքով
Քո գիրկն է թեւում զավակդ խիզախ
Ու գաղտնիքներիդ փեշերը փնջում:
Սակայն Ադամի նորընծա որդին
Սպառնում է քեզ՝ ատոմը ձեռքին...
Անհուն տիեզերք,
Աղաչում եմ քեզ,
Քանի ուշ չէ դեռ,
Խելքի բեր նրան...

ԿՈՉ

Հայ գործարարներին

Ձեզ եմ դիմում, քաջ այրեր,
Քանի դեռ ուշ չէ,
Դուք Տիգրանի թոռներն եք՝ նրան արժանի,
Առանց արվեստ ամեն ազգ լոկ բանող ուժ է,
Հողմը նրան ուր ասես՝ կառնի-կտանի:
Արտավազդի անունը հնչեց աշխարհում,
Բայց նա ոսկով շունչ տվեց հայոց թատրոնին,
Տրդատ Արքան իր գանձի անհատնում առուն
Գրիգորի հետ լույս դարձրեց մեր Դարձի տոնին:
Վռամշապուհն իմաստուն արծաթն ու ոսկին
Մեսրոպածին գրերի թռիչքին բաշխեց,
Նա գանձերով շունչ տվեց հայկական խոսքին,

Ու դարավոր մեր մտքի տաճարը նախշեց:
Բագրատունիք հողի մեջ չթաղեցին գանձ,
Ճարտար մտքեր ունեցան, որ հառնի Անին,
Մանվել, Տրդատ, Մագիստրոս աստղերին հասան,
Հայ հանճարը ծաղկեց եւ վտանգի ժամին:
Մեր հողեղեն երթի հետ ոգու երգ է պետք,
Ձեր գանձերով դուք դարձեք արվեստին նեցուկ,
Թե մոռանանք մեր մտքի ծաղկումը հավետ,
Քամուն կտանք նաեւ մեր անունն ու լեզուն:

24.07.97թ., Ջերմուկ

***

Եվ ինձ թվում է, թե ողջ աշխարհը
Սկիզբն իր առնում է քո սեգ լեռներից,
Եվ ինձ թվում է՝ բոլոր ճամփեքը
Գալիս, փարվում են քո վեհ լեռներին:
Եվ ինձ թվում է, թե տիեզերքը
Այդ դու ես պահում ուսերին քո հաղթ,
Եվ ինձ թվում է, եթե չլինես
Կփլվի մեկեն երկինքն աստղազարդ...
Թեկուզ իմ հոգին մի տիեզերք է,
Օջախ իմ, ելի դու ես իմ երգը...

ՀԱԴՐՈՒԹ

Ի՜նչ գեղեցիկ ես, հայրենի Հադրուք,
Լեռներդ ինչքա՜ն վեհ են, երազուն,
Քեզնով եմ զգում ես ինձ կյանքի տեր,
Դու ես իմ հոգու երկինքը լազուր:
Քո Խորնաղբյուրի երգը սրտաբուխ,

Քո առուների անուշ կարկաչը,
Իմ հոգու խորքում հնչում են անվերջ,
Ինչպես մայրիկիս օրորն ու կանչը:
Վարդերիդ բույրը, ժպիտը ցողի,
Հակինթ աստղերդ ուրի՜շ են, ուրի՜շ,
Հերկերիդ շունչը, բարիքը հողիդ,
Ցնծության հեւք են ու կյանքի ավիշ:
Երբ հեռանում եմ քեզանից, իմ մայր,
Կարոտիս ծովը ծփում է անտակ,
Ձեռքով ես անում դու ինձ անդադար,
Կրծքիս տակ դարձած մի ջինջ արեգակ:
Բանաստեղծ դարձա քո սրտի կանչով,
Առանց քեզ երգս հնչում է դատարկ,
Հոգիս լիքն է քո հեւքով, կարկաչով,
Ես քո որդին եմ՝ քեզանով հպարտ:
Քո ուղին բաց է, ապագան՝ որոշ,
Հավիտյան ծփա լույսերով քո պերճ,
Իմ որդու սերը՝ քեզ բացված դրոշ,
Օջախիս հուրը՝ քո կրակն անշեջ:

10.04.1986թ., Հադրութ

ԱՆՈՒՆԴ

Նվիրում եմ Սովետական Միության հերոս, օդաչու Աշոտ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Երբ տալիս եմ անունդ,
Դեմս մղկտում է մի ծանր մանկություն,
Մի պատանեկություն է տնքում բեռան տակ,
Ու տեսնում եմ երազներով լի երկու թուխ աչքեր:
Երբ տալիս եմ անունդ,

Տեսնում եմ մի փրկված ջահելություն,
Կենսաբեր արեւով ջերմացած,
Հոգին աստղերով լեցուն:
Երբ տալիս եմ անունդ,
Կրակված մի կյանք եմ տեսնում,
Ազատարար երկու ձեռք՝
Հրդեհների միջից մանուկներ փրկող,
Հայրենի հողից ոսոխներ խրկող:
Երբ տալիս եմ անունդ,
Մեր հին կալն եմ հիշում,
Օդաչուի ուսադիրները հանած,
Արտերի ճանապարհը բռնած
Մի գյուղացի՝ իմ պապի իմաստությամբ:
Երբ տալիս եմ անունդ,
Մեր Արեւսարն է հառնում իմ դեմ,
Ծփում է մեր Ուխտաձորը,
Ուր ճչում են կյանքից հարբած մանուկներ՝
Քեզ նման, Քո անվամբ...
Երբ տալիս եմ անունդ,
Ինքս հառնում եմ իմ մեջ,
Բարձրանում ինքս ինձնից:
Ապրելն ինձ համար
Փառքի ճանապարհ է դառնում,
Երբ տալիս եմ ԱՆՈՒՆԴ...

12.04.0986թ., Ուխտաձոր

ՀՐԱՇՔ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Թե ուզում ես տեսնել դրախտ,
Արի գնանք գյուղ Թաղասեռ,
Մտնենք այգին Անդրեյ քեռու,
Ուր ե՛ւ հուշ կա, ե՛ւ կյանքի սեր:
Լեզու առած կերգի առուն,
Կշշնջա թթենին նուրբ,
Խորհուրդներով հին դարերի
Նա քեղ հեքիաթ կպատմի սուրբ:
Մի դարավոր ընկուզենի
Դու կտեսնես կանգուն, համառ,
Որի բունը հիմք է դարձել
Մի վեր ելնող շիվի համար:
Դու կտեսնես, կզարմանաս
Ու կհիշես Անդրեյ քեռուն,
Եվ հիացած հին ու նորով,
Կթեւածես դեպի հեռուն:

14.04.1986թ., Թաղասեռ

ԱՆԴՐԵՅ ՔԵՌՈՒ ԶՐՈՒՅՑԸ

Ես իմ կյանքի արշալույսին
Դաժան հողմի միջով անցա,
Ապավինած լոկ իմ հույսին,
Գետը ընկած տաշեղ դարձա:
Ճանապարհս ծգվեց հեռուն,
Քաղաքների ժխորն ընկա,
Դեմս ծփաց կյանքը եռուն,
Թեժ պայքարի գիրկը մտա:
Լենինյան լույսն ինձ ողջունեց,

ՕՐԵՐԻՍ ՀԵՏ (1960-2010)

Այն ջահ դարձրի իմ հոգու մեջ,
Համոզվեցի, որ նա է լոկ
Մեզ բերելու երազ ու տենչ:
Դրոշի պես սիրտս բացի,
Ու ցասումս եռաց անմար,
Պատրաստ էի շունչս տալու
Առաջնորդի գործի համար:
Նրա խոսքով ելանք մի օր
Խավարի դեմ հին աշխարհի,
Եվ աստղամերձ մեր լեռներում
Նորի շունչը թեւեց բարի:
Հանուն նորի հաղթանակի
Ինչեր ասես, որ չտեսանք,
Մաքառումով ու մեր ջանքով
Մեր երազած օրին հասանք:
Սակայն մի օր Բեղավորի
Հրամանով ինձ բանտ տարան,
Մեղադրեցին, որ Խանջյանին
Պաշտպանել եմ՝ խոսքով համառ,
Որ ասել եմ՝ նա անմեղ է,
Որ ասել եմ՝ ազնիվ է նա,
Եվ ասել եմ՝ ժողովուրդը
Նրան երբեք չի մոռանա:
Ու մեկ ու կես տասնյակ տարի
Աքսորեցին ինձ Ալյասկա,
Հիմա փառք տանք մարդկանց բարի,
Որ բացին դուռն արդարության,
Արդարացվեց մեր Աղասին,
Ու ես տեսա լույսը իմ տան...
Հիմա մի ծեր կաղնի եմ ես,

Բայց թեթեւ եմ սրտով, հոգով,
Ես չեմ ասում, որ անուս
Ամենուրեք հնչի փառքով:
Բայց մի երազ, մի տենչ ունեմ,
Որ սերունդը մեր նորօրյա,
Մեզնից ջերմին սիրի հողը.
Եվ անցյալը չմոռանա:
Որ կամրջի հինը նորին,
Ապագային ծուլի ներկան,
Ինչպես նաեւ մեկ-մեկ հիշի,
Որ իրենց մեջ ապրում ենք, կանք:

28.06.80թ., գ. Թաղասեռ

ՔՈ ՍԱՐԵՐԸ

Հեռվից-հեռու ինձ կանչում են քո սարերը,
Կարոտներս պիտի ծաղկեն նրանց հույսով,
Ոտքերիս տակ երակվում են քո դարերը,
Ինչ կորցրել եմ պիտի գտնեմ նրանց լույսով:

Երազներս կարկաչում են քո դաշտերում
Ու քո անվամբ հողից ելնում ծաղկապսակ,
Սիրտս ողկույզ պապենաշուրթ քո տաշտերում,
Իմ մաճառով պիտի խմեմ կենացդ թանկ:

Պիտի գտնեմ հավերժության համփան քեզնով,
Անհունները բերեմ-փռեմ ոտքերիդ տակ,
Քո հյուլեն եմ, պիտի առնեմ համբավ քեզնով,
Քո համբավին ընծայելով իմ սիրտը տաք:

19.02.1992թ., Երեւան,
Սրտաբանական հիվանդանոց

ՄԱՐԶԱՍԵՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Կոփված կամքով մեր դարերի,
Մենք նման ենք մեր սարերին.
Միշտ միասին, միշտ կողք-կողքի,
Վտանգի մեջ մի կուռ ոգի,
Մարտերի մեջ՝ ահեղ ու գոռ,
Առան պապի քաջազուն թոռ,
Արքա Վաչե ու Վաչագան,-
Երազներով անապական:
Նենգ Բուղային ջարդող Եսայ,
Առյուծասիրտ Ջալալ-Հասան,
Սելջուկներին ահ ու սարսափ,
Ոսոխներին քշող տարափ:
Սրտերի հույս՝ քաջն Բեկոր,
Աչքերի լույս՝ խիզախ Ավո,
Պապենական հողերի տեր,
Ապագայով առած թեւեր...
Մեր տենչերում ազնիվ ու հորդ,
Կունենանք եւ բարձր սպորտ:

01.11.2007թ., Ստեփանակերտ

ՃԱՄՓԱՆ

Ճամփի ակունքը հայրենի բակն է,
Որից հառնում է աստղերի ճամփան,
Նա ամենից սուրբ, ամենից թանկն է,
Չկա նրանից առավել համբավ:
Նա մոր քնքշանք է, հայրական հորդոր,
Քրոջ ժպիտ է ու եղբոր թեւեր,

Պապ ու տատիկի խորհուրդն է խոր,
Երազ է՝ ձգված բարձունքներն ի վեր:
Նա Մասիս տանող ճամփի հիմնաքար,
Նա Արագածին փարված երգի տող,
Նա մեր բախտի հույս, մեզ տրված պայքար,
Մեզ տրված տագնապ՝ չկորցնելու դող:
Նա մեր ինքնության օրհնանք ու օրհներգ,
Մեզ հեռուն տանող-տուն բերող կարոտ,
Նա մեր կրծքի տակ վառվող տիեզերք,
Մարդուն-մարդ պահող լուսածիր նարոտ:
Նա արյան հյուլե, նա եւ արյան կանչ,
Սեփական կյանքի անսասան պատիվ,
Նա այբուբենված զանգերի ղողանջ,
Առաջին սիրո թրթիռ անպատիր:
Հայրենի բակից ծիր առնող ճամփան,
Աստղերի գիրկն է հասցնում մարդուն,
Բայց նա է հնձում հարգանք ու պատիվ,
Ով իր բակ բերող ճամփան է հարթում:

28.12.2007թ., Ստեփանակերտ

ԳՆԱՔ ԲԱՐՈՎ

Մեր բանասեր շրջանավարտներին

Երե՞կ էր այն, երբ ասացինք՝
Մեր լավ սաներ, եկաք բարով,
Այսօր հպարտ, կարոտալից,
Ասում ենք ձեզ՝ գնաք բարով:
Բարով գնաք գիրկը կյանքի,
Դառնաք լույսի սերմնացաններ,
Դառնաք դրոշ բարու, ջանքի,

Այբուբենի ծիածաններ:
Որպես գրի ջահակիրներ,
Ծաղկուն պահեք մեր մայր լեզուն,
Նարեկացու եւ Չարենցի
Երգերով ձեր հոգին լեցուն:
Ձեր սրտերի կրակը տաք
Երազավառ հայոց մանկանց,
Ժողովրդի մեծ կրծքի տակ
Տեղ գրավեք սիրով անանց:
Ամեն մեկդ դառնաք արեւ
Ձեր օջախում, երկրի ճամփին,
Դառնաք սիրո ու մանկանց տեր,
Փայլեք, ինչպես գարնան արփի:
Ուր էլ լինեք, ուր էլ գնաք,
Մեր սրտի մեջ միշտ կմնաք,
Դուք մեր սիրտը, դուք մեր հոգին,
Դուք մեր սրտում, մենք ձեր կողքին:

ԳՈՐԳԵՐՆ ԱՐՑԱԽԻ

Գորգերն Արցախի երազներն են մեր,
Մեր հույսերը վառ, մեր սիրտը բարի,
Մենք այդ գորգերով առել ենք թեւեր,
Հեքիաթների մեջ հաղթելով չարին:
Գորգերն Արցախի ժպիտ են ցանում,
Ցանում են հոգու թրթիռները մեր...
Դարերի խորքից գալիք են տանում
Մեր սրտից բխած ե՛ւ օրհնանք, ե՛ւ սեր:

19.04.2005թ.

ԵՐԱԶՈՒՄ

Մի արթուն թախիծ փարվել է սրտիս,
Սիրահարվել է ու չի հեռանում,
Տապից չի քրտնում, չի մրսում ցրտից,
Սնվում է՝ ինչպես ցեցը գերանում:
Նա ժպտիս վրա մատ է թափ տալիս,
Ծիծաղս փոխում ցող արցունքների,
Թախիծն այդ աշնան ամպի պես լալիս
Ու մաղում է լուռ իմ սաթ քունքերին:

***

Նա ժպտաց, ինչպես արեւն է ժպտում,
Ու տխրեց, ինչպես ցողաբեր մի ամպ,
Նրա քնքշանքից դողաց իմ սիրտը,
Եվ հոգիս լցվեց մի երանությամբ:

***

Թող ասեմ, որ դու աստվածային ես,
Թող ասեմ, որ դու թովչանք ես գարնան,
Թող ասեմ՝ երնեկ, երնեկ այն մարդուն,
Որ կյանքն էլ կտա քո բախտի համար:

03.07.1985թ.

***

Ո՞վ է ասել՝ սիրո մուսան
Տիեզերքի մեջ որոնել,
Ո՞վ է ասել...
Սիրո մուսան-սրտով սիրած
Հրակն ինքն է՝

Կրակն ինքն է՝
Քո նազելին,
Որ մի ժպտով
Քեզ արեւներ կպարգեւի,
Մի քնքշանքով
Քեզ կհանի գիրկն արեւի,
Արեւ դարձած
Ներշնչանքիդ ճանապարհը
Հար կարեւի...

ԱԶՈԽ

Աղբյուրի շրթին տաղը թեւում է,
Լցվել է հողի ծոցը արեւով,
Վանքը քայլում է հավերժի գրկում,
Խաչքարը լուր է բերում դարերից,
Գետը խոսում է թռչող քարերից:

Ճանապարհները ուսերն են պրկել,
Ոտնաձայներ են հնչում օդի մեջ,
Լանջը բացել է փեշը դեղնածուփ,
Խուտուտ է տալիս բուրմունքը ձորի,
Ձորում ժպիտն է շիկնում խնձորի:

Քիրսը սանրում է միրուքն իր ոսկյա,
Ազոխա գետը շարականվում է,
Աստղեր են քնած քարանձավի մեջ,
Կոչեր են թռչում նրա պատերից,
Լուրեր են բերում խիզախ պապերից:

Աղոթք է կարդում Արեւսարը սեգ,
Սաղմոսն է շոյում նոր այգեկութի,
Ազոխա ծուռը աչքը չի թարթում,
Չարը ծնկել է ծայրին արտերի,
Ազոխա ծուռը ինչպե՞ս համբերի:

Գերեզմաններից սրբերն են ելնում,
Խաչի փոխարեն թրեր են բռնած,
Ծռերն Ազոխա խոնարհվում են լուռ,
Կրակն է ծփում նրանց աչքերում,
Հավատն է երգում նրանց Ասքերում:

Ազոխա հողը ծոցը լցրել է,
Կեպին ծռել է Ազոխա ծուռը,
Իշխանագետը փարվել է հունին,
Ազոխա աղբրի գուռը քարեղեն,
Ազոխա բախտի դուռը դարեղեն...

1989թ.

ԳՆԱՔ ԲԱՐՈՎ

Բանակ եք գնում դուք, մեր որդիներ,
Հպարտությունից մեր սիրտն է բացվել,
Դեռ զինվորական զգեստ չհագած,
Մեզ համար արդեն զինվոր եք դարձել:
Ձեր ձեռքն են սեղմում ընկեր, բարեկամ,
Իսկ ձեր սերերը այնպես են նազում,
Բոլորը այսօր հոգիներով ջերմ
Բարի մաղթանքի խոսքեր են ասում:

Դուք ժողովրդի զինվոր եք դառնում,
Երկիրն իր բախտը կապում է ձեզ հետ,
Թշնամին թեկուզ թունոտ է ու նենգ,
Մեկ է, ձեր ճամփան չեք շեղի երբեք:
Գնացեք բարով, կոփվեցեք անվերջ
Ու միշտ ջերմացեք նոր կյանքի հրով,
Որտեղ էլ լինեք, թող ձեր սրտերը
Բաբախեն երկրի անմարում սիրով:
Դուք հայրենիքի զինվորն եք, այո,
Դուք պաշտպաններն եք դառնում առնական,
Ձեր պապերի եւ հայրերի նման
Սիրեցեք հողը մեր ավանդական:
Ձեր կյանքում պահն այս կապրի հավիտյան,
Դուք զինվորներն եք դառնում այս օրից,
Մայրերի քունը հսկելու համար,
Դուք բաժանվում եք ձեր սիրած մորից:
Մեր զավակներն եք՝ խելոք ու բարի,
Մենք ձեզ կսպասենք կարոտով անանց,
Դուք զինվորներ եք դառնում քաջարի,
Ձեզ բարի ճամփա, բարի վերադարձ:

***

Ես սիրում եմ քեզ,
Սիրելու համար աշխարհում ե՞րբ են
Սիրածին դատել...
Թե համոզված ես՝
Պաշտելու համար ատում են մարդուն,
Կարող ես ատել:

18.02.1983թ.

ՀԱՎԱՏ

Ի՜նչ գեղեցիկ եք, հայրենի դաշտեր,
Լեռներ, ի՜նչ վեհ եք եւ ի՜նչ երազուն,
Ձեզնով եմ զգում ես ինձ կյանքի տեր,
Ձեզնով է հնչում մեր քաղցր լեզուն:
Աղբյուրի երգը ձեր սրտից բխող,
Ձեր առուների անուշ կարկաչը,
Իմ հոգու խորքում հնչում են անվերջ,
Որպես մայրիկիս օրորն ու կանչը:
Ձեր վարդի բույրը, ժպիտը ցողի,
Հակինթ աստղերը ուրի՜շ են, ուրի՜շ,
Հերկերի շունչը, բարիքը հողի
Ցնծության հեւք են ու կյանքի ավիշ:
Երբ հեռանում եմ ձեզանից մի պահ,
Կարոտիս ծովը ծփում է անտակ,
Ձեր ամեն թիզը անծայր մի աշխարհ,
Ձեր ամեն շողը մի ջերմ արեգակ:
Ձեզնով եմ ճախրում, ձեզնով եմ հզոր,
Ձեր երազով եմ ճանապարհ բացել,
Կապված եմ ձեզ հետ որդիական սիրով,
Ձեր անունով եմ իմ ուղին անցել:
Բանաստեղծ դարձա ձեր սրտի կանչով,
Առանց ձեզ երգս հնչուն է դատարկ,
Հոգիս լիքն է ձեր հեւքով, կարկաչով,
Ես ձեզանով եմ անպարտ ու հպարտ:
Իմ ուղին բաց է, ապագան՝ որոշ,
Ծփացեք հավերժ լույսերով ձեր պերճ,
Իմ որդու սերը՝ ձեզ բացված դրոշ,
Իմ սուրբ օջախը՝ ձեր կրակն անշեջ:

ԾՆՈՒՆԴ

Գարու կոշտ ալյուրից
Մայրս շփոթ եփեց,
Վրան դոշաբ լցրեց՝
Բախտի հետ հաշտ,
Հայրս հանդից եկավ,
Ախորժակով կերան,
Հետո մեկտեղ ելան,
Գնացին դաշտ:
Խոտի խրձերի մեջ
Ես ծնվեցի հանկարծ,
Հայրս կրակ ու կայծ,
Քիչ սարսափեց,
Տատս գյուղից թռավ,
Բարուր սարքեց խոտից,
Առավ հորս գոտին,
Ինձ կապկպեց:
Գարնան առավոտով,
Ծաղիկների հոտով,
Մորս քաղցր կաթով
Քիչ ամրացա,
Հետո, երբ տուն բերին,
Տատիս օրհնած բախտի,
Մեր հնամյա թախտի
Տերը դարձա:
Ոտս խեր էր, բարի,
Առատ եղավ տարին,
Բուրեց ցորեն հացը,
Մեր տաշտերին,
Գարնան գույներն առա,
Մեծացա եւ դառա
Ծաղիկների երգիչ
Ու դաշտերի:

ԶՐՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ

Իմ յոթանասունամյակի առթիվ

Յոթ տասնյակ տարի հանդիպել ենք մենք,
Յոթ տասնյակ տարի ժպտացել իրար,
Թվացել է, թե չենք փոխվում, նույնն ենք,
Նույն կրակներով, ձգտումներով վառ:
Եվ տարիների բարձունքից հիմա
Ողջունում եմ քեզ հրայրքներով լի,
Ինչքա՜ն ես փոխվել, աճել ես ինչքա՜ն,
Կուրծքդ երկինք է դարձել աստղալի:
Դու զորացել ես ու ջահելացել,
Իմ թուխ մազերը հագել են արծաթ,
Քո դեմ իմ սրտի դռներն եմ բացել,
Ուղիդ զարդարել ամեն ակնթարթ:
Տարիներ կանցնեն, տարիների հետ
Դու ջահելացած, զորացած կգաս,
Ինձ կորոնես, չես գտնի գուցե,
Իմ ջահել որդուն համբույրներ կտաս:
Դու ինձ չես գտնի, բայց քո կրծքի տակ
Կզգաս իմ հոգին, զարկերն իմ սրտի,
Կզգաս, ես քեզ եմ տվել շունչս տաք,
Որ քեզնով հզոր լինի իմ որդին:
Քեզ բարի մաղթանք, ինձ ուժ ու կորով,
Քեզ լույս ու ժպիտ, ինձ համբերություն,
Քեզ ջահելություն՝ իմ սրտի հրով,
Ես համեստ անցորդ, դու՝ հավերժություն:

22.01.2000 թ.

***

Ո՞վ է ասել, թե թոռը
Չի հիշում պապին,
Կկանաչի՞ նոր ճյուղը
Առանց արմատի...
Հիսուն գարուն եմ տեսել
Եվ հիսուն ամառ,
Անդարձ մի հուշ է դարձել
Պապս ինձ համար,
Բայց խոհերիս աշխարհում
Նա ապրում է, կա,-
Խորհուրդներով իր բարի,
Տեսքով առնական:
Նրա ձայնն իմ ականջում
Հնչում է անվերջ,
Որ պարզերես ու բացսիրտ
Լինեմ մարդամեջ,
Որ իմ ծաղիկն ունենամ,
Իմ ծառը՝ տնկած,
Երբեք թույլ ու տկարին
Չթողնեմ ընկած,
Որ իմ օջախն ունենամ,
Ձագուկները իմ,
Որ չլքեմ մայր հողը,
Սիրեմ հայրենին,
Մարդու հանդեպ մարդ մնամ՝
Ցրտին ու տապին...
Ասեք, ինչպե՞ս մոռանամ
Ես նման պապին:

22.01.1980 թ.

ԵՐԲ ՄԱՅՐՍ ՉԿԱ

Երբ մայրս չկա,
Նոր հավատում եմ ես տեսիլքներին,
Ծերացած հորս աչքերում փայլող արցունքը վկա,
Նոր հավատում եմ ես տեսիլքներին:
Իմ զոհված եղբոր ժպտուն հայացքից,
Որպես մի տեսիլք,
Մայրիկիս թախծոտ հայացքն է նայում,
Մեր հին թթենու սոսափի միջից
Մորս օրորի երգն է հմայում:
Բարձունք եմ ելնում-
Առաջինը նա՛, նա՛ է իմ դիմաց շողում ոնց արեւ,
Թե սայթաքում եմ,
Առաջինը նա՛, նա՛ է իմ դիմաց դողում ոնց տերեւ,
Երբ իմ հին ու նոր վերքերն են նվում,
Երազներիս մեջ նա է ինձ կանչում,
Թե երազիս մեջ ծարավում եմ ես,
Ջրի պես նա է ճամփիս կարկաչում:
Անտես, անշշուկ նրա տաք շունչը
Գալիս է - ծուլվում եւ իմ երգերին,
Երբ մայրս չկա,
Նոր հավատում եմ ես տեսիլքներին:

02.06.1972 թ.

ՁԵՐՄՈՒԿՈՒՄ

Լանջերը կանաչ, փեշերը կապույտ,
Կուրծքը ժայռեղեն, սիրտը հրաբորբ,
Նա անձեռակերտ մի սեգ կոթող է,
Աստղերից կախված կախարդական գորգ:

Ջուրն առողջության աղբյուր է հավերժ,
Արցունքների պես բյուրեղյա ու ջերմ,
Օդը գթասիրտ մայրական շունչ է,
Սրտեր է բուժում ու տալիս թեւեր:

Գալիս են այստեղ տարբեր ծայրերից,
Եղբայրներ դառած ժպտում են բարի,
Հպարտություն է լինել զավակը
Բարության ակունք այս լեռնաշխարհի:

ԵԹԵ ՄՈՌԱՑՎԵՄ

Եթե մոռացվեմ՝ բացվող ծիլի պես,
Մեկ է, ես կյանքին ավիշ եմ տալու,
Եթե մոռացվեմ՝ հալվող ձյունի պես,
Մեկ է, իմ հետքից գարունն է գալու:
Եթե մոռացվեմ՝ վառվող լույսի պես,
Թե հանգչեմ, վեր ու վար եմ թռչելու,
Եթե մոռացվեմ՝ քնած հույսի պես,
Պայքարի ժամին բարձր եմ հնչելու:
Եթե մոռացվեմ՝ մայր հողի նման,
Սայթաքելուն պես ինձ են կառչելու,
Եթե մոռացվեմ՝ զինվորի նման,
Վտանգի պահին ինձ են կանչելու:

***

Մեր այս դարը լոկ արեւով պիտի լցվեր,
Բայց շատ ափսոս, ողողեցին նաեւ թույնով,
Սրտերից սիրտ սիրո կամուրջ պիտի գցվեր,
Հաճախ պղտոր գետ էր հոսում սիրո հունով:

Ինչ էլ եղավ, հավատացինք մենք մեր ուժին,
Մեր ուժի մեջ նաեւ վարդի քնքշություն կար,
Դժբախտացած քանի սրտեր երջանկացրինք,
Ուր էլ եղանք միշտ նահանջեց չարն ապիկար:
Ժամանակը մեզ շշնջաց.- «Ի՞նչ բարին եք»,
Աստղերն ասին. «Տիեզերքում չկա ձեզ պես»,
Մեր սրտերի սիրով, ցավով մեր դարինն ենք,
Նա մեր հոգու կրակով է շողում այսպես...

***

Երգը ինձ համար ե՛ւ օդ է, ե՛ւ ջուր,
Իմ երազների ծիածանն է նա,
Նա մոր շոյանք է, սիրածի համբույր,
Մեր դաշտ ու հանդի ցել ու ցանն է նա:
Անցյալի հուշն է, ծուխն օջախների,
Օրերի հեւքը՝ սրտերից առած,
Մեր հոգու ձայնն է տանում դարերին՝
Հույս ու տենչերի մի կամուրջ դառած:

***

Գիշերը անքուն, ցերեկն անդադար,
Հոգսերի բեռը առած ուսերիս,
Որդեգրվել եմ քեզ, իմ ոսկե դար,
Ճամփիդ ցանում եմ փունջը լույսերիս:

Ով որ ասում է. «Ապրելը հեշտ է»,
Ուրեմն նա չի քրտնում քեզ համար,
Նա ծառ չի տնկում, չի կռում երկաթ,
Հեռու է կանգնած պայքարից համառ:

Մաքառումների միջից ես ծնվել,
Կամքդ պողպատե, բազուկդ կարող,
Ով հեշտ ապրելն է միայն երազում,
Նա քո զավակը լինել չի կարող:

***

Ես ապրում եմ երազներով,
Ձգտումներով խնդումնալից,
Երազներիս թեւեր տալով
Կյանքին եմ ես իմաստ տալիս:
Ու կյանքը միշտ ինձ թվում է
Երազների օվկիան անհուն.
Մի երազիս շունչ եմ տալիս,
Մյուսն է ինձ ձեռքով անում:

ՀՈՐՍ ԽՈՍՔԵՐԻՑ

Հին աշխարհը հանցավոր
Դանակ խփեց մեր սրտին,
Վառեց տապին ու ցրտին,
Հազար անգամ մեզ խաբեց,
Մեր հույսի դեմ կեղծ ծափեց,
Պահեց անհաց ու անքուն,
Պահեց լացով ու անտուն:

Բայց ապրեցինք մենք հույսով,
Մեր վրեժը դարձրինք ծով,
Երկրի սիրով ջերմացանք,
Մեր սարերում ամրացանք,
Թեժ մարտերը շահեցինք,
Մեր հողը սուրբ պահեցինք,

Սերմանեցինք ծաղիկ, լույս,
Տեսանք մի նոր արշալույս:
Մեր աշխարհը մեր հեւքով,
Մեր արշավով, մեր երգով,
Լայն ճանապարհն է բացել,
Ջինջ աստղերով ծովացել,
Փարվել մեր հին սարերին,
Մեր իմաստուն դարերին,
Որ դարերի հետ խոսենք,
Հավերժության հետ հոսենք:

ԻՄ ՀՈԳՈՒ ՄԵՋ

Քեզ իմ հոգու մեջ ծաղկեփունջ դարձնեմ,
Բույրդ բուրվառեմ
Աշխարհին ի տես,
Քո սիրով արբած աստղերին հասնեմ
Ու բարձր լինեմ
Քո աստղերի պես:
Քո մաքրությունով սիրտս լվանամ,
Քո կյանքին տրվեմ
Եվ անրջանքին,
Ապրեմ քեզ համար, որ արժանանամ
Քո սիրով շնչող
Մորս օրհնանքին:
Նրա շրթերով այդ դու ես խոսում,
Դու ես երազում,
Իմ արեւատես,
Թե իմ վաստակով հասնեմ քո սիրուն,
Երջանիկներից
Երջանիկն եմ ես:

***

Արեւը նորից ելավ,
Բարության ժպիտներով,
Աշխարհին թարմ շունչ բերավ,
Ցողերով, շաղիկներով:
Արեւը նորից քնեց,
Բարության շողեր դառած,
Կքնի, նորից կելնի,
Հարության ցողեր դառած:
Ա՛խ, ինչո՞ւ մայրերն արեւ
Արեւի կյանքը չունեն,
Մայրամուտ ունեն նրանք,
Այգաբաց, ավա՜ղ, չունեն...

***

Երբ օրը պարզ է
Եվ սարն էլ անամպ,
Սարն ինչքան հեռու,
Թվում է մոտիկ:
Նայում ես, նայում,
Ու ժիր թռռան պես
Նրան է փարվում
Խենթացած հոգիդ:
Այդպես է լինում,
Երբ օրը պարզ է,
Արեւը՝ պայծառ,
Բարձունքն ու մարդը
Գտնում են իրար:

20.03.1983 թ., Ստեփանակերտ

ԽՈՀԵՐԻՍ ՀԵՏ

1

Օրերը գալիս են, օրերը գնում են,
Օրերի հետեւից վազում են մարդիկ,
Սրտերից շունչ առած օրերը մնում են,
Օրերին ծուլվողը դառնում է մարտիկ:
Օրերը թեւեր են, զանգեր են հնչուն,
Օրերով թեւողի անունն է հնչում:

2

Մոր նման է առավոտը,-
Շոյում է մեղմ, շողում է սուրբ:
Շողերի մեջ առավոտի
Օրն է ժպտում մոր նման նուրբ:
Շիկանում են, թրթռում են
Մեր սրտերը առավոտով,
Առավոտվա լույս շողերին
Ողջունում ենք միշտ հավատով:

3

Ես արեւի շող եմ պայծառ,
Սեգ սարերի ու հավքերի
Բարեկամն եմ,
Ես շոյում եմ ծաղիկ ու ծառ,
Ու ննջում եմ ալ վարդերի
Թերթերի մեջ:
Իմ համբույրից արթնանում են
Ծիլ ու կոկոն,
Իմ համբույրը ցող է ցանում
Ամեն հոգում,

Եվ ինչքան էլ տխուր, հոգնած,
Ես իմ թախծի բկին չոքած,
Երջանկության հունդ եմ դառնում...
Կյանքից եմ ես լույսն իմ առնում:

4.

Միշտ ժպիտներ եք տեսնում իմ դեմքին,
Ժպիտներով եմ դիմավորում ձեզ,
Չկարծեք երբեք, թե չունեմ թախիծ,
Երբեք չկարծեք, թե անհոգ եմ ես:
Վաղուց եմ ընտրել խորհուրդն իմ կյանքի.
Վշտիս դռները ձեր դեմ չբանալ,
Թող ժպիտներս ձեզ անցնեն, մարդիկ,
Թախիծս, ցավս թողեք ինձ մնան:

***

Իմ մանկության հուշերում
Կռվի շառաչը մնաց,
Մորս հառաչը մնաց,
Իմ մանկության հուշերում:
Պապիս խորհուրդը մնաց,
Տատիս տագնապն ու շուքը,
Իմ եղբոր սեւ թուղթը մնաց,
Հոգեմաշ մեր լացն ու սուգը:
Հաղթական շքերթից ծնված,
Սիրուս համբույրը մնաց,
Հայրենի գյուղում կարկաչող
Կարոտիս աղբյուրը մնաց:

ԱՅՍ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Զոհված ազատամարտիկների
թանգարանում

Այս թանգարանը հոգու մատյան է,
Սրտի թրթիռ է, խիզախության ելք.
Հերոսամարտի աստղոտ ատյան է,
Անմահների բույլ, ապրողների երգ:
Այս թանգարանը զոհյալի լույս է,
Թախիծով օծված մայրական արցունք,
Փրկության ճամփա, ապրելու հույս է,
Հաղթանակների արեւոտ բարձունք:
Այս թանգարանը խորհրդարան է,
Դեպի մարտ կոչող բանակատեղի,
Այս թանգարանը խղճի դարան է,
Ապրելու դասն է հայոց հին ցեղի:

2000 թ., Ստեփանակերտ

ՀԱՅՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Հայր իմ, մեր մեծ թթենին
Նորից ստվերս ուսեց,
Մորս անուշ օրորի
Ցրված տողերը հյուսեց:
Արի նստենք նրա տակ,
Թերթենք գիրքը մեր կյանքի,
Ասենք՝ կյանքը երազ է,
Եվ հավատանք երազին:
Մանկությանս հետքերը
Սրտիդ վրա ես պահում,
Ոչ ոք այդ չի հասկանա,
Եթե հայր չէ աշխարհում:

Փոքրանում ես ամեն օր,
Բայց մեծանում է սիրտդ,
Հիմա թոռ ու ծոռների
Աշխարհ դառավ քո գիրկը:
Ամուր եղիր կաղնու պես,
Մեծ պապ մնա խնդալից,
Որ քո փոքրիկ ստվերում
Մի քիչ ջահել զգամ ինձ:
Հայր իմ, ինչպե՞ս գովերգեմ
Մեր թթենին առանց քեզ,
Երբ դու առանց թթենու
Քեզ զգում ես որբի պես:
Արի նստենք նրա տակ,
Ես՝ պապ, իսկ դու՝ մեծ պապի,
Քո իմաստուն խոսքերով
Նորից կյանքը հաստատիր:
Տես, ծոռնիկդ երգում է
Մեծ թթենու կատարին,
Թող նրա զիլ ձայնի մեջ
Մեր հեքիաթը երկարի:

ԳԱՆՁԱՍԱՐ

/Բալլադ/

Ասում են, թե դարեր առաջ,
Մռով սարի դեմ-դիմաց,
Հավաքվել են ամեն կողմից
Վարպետները բանիմաց,
Հավաքվել են ու կառուցել
Անզուգական մի տաճար,
Հետո կանչել մի ծերունու,

Որ գա, անուն տա հարմար:
Հիացմունքի փայլն աչքերում
Կանգնել է նա շենքի դեմ,
Շուրջը սարեր աստեղնամերձ,
Շուրջը ծաղկած մի եդեմ:
Լուռ ու երկար դիտել է նա,
Քանդակները տաճարի,
Ու ժպիտն է փայլել հանկարծ
Դեմքին կնճռոտ ու բարի:
-Ի՞նչ անուն տամ,- ասել է նա,-
Արցախցին թանկ գանձ է մի,
Որ ծնվել է, ապավինել
Այս վեհապանծ սարերին:
Էլ ո՞ւմ սիրտը չեն հմայի
Իրար գտած գանձ ու սար...
Եվ տաճարը այդ օրվանից
Անվանել են ԳԱՆՁԱՍԱՐ:

***

Ամեն ակնթարթ ձեզ հետ եմ, մարդիկ,
Ձեր սրտերի հետ, հոգսերի ծովում,
Մերթ ինչպես երգիչ, մերթ ինչպես մարտիկ,
Ձեր շարքերում եմ, պայքարի բովում:

Ձեր վաստակի մեջ, թռիչքում անթեք,
Մարդիկ, գուցե ինձ չեք մտաբերում,
Ես չեմ մոռանում ձեզ, հավատացեք,
Իմ սրտին դուք եք հույզ ու տենչ բերում:

ՁԵՐՄՈՒԿԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

1

Արեւն այստեղ հյուրի պես է,
Մերթ ժպտում է, մերթ՝ տխրում,
Այստեղ նրա սրտի կեսն է,
Ահա, ինչու է փխրուն:
Ահա, ինչու շուտ ելնում է,
Թեթեւ փայլում ու նազում,
Նա սարերի հյուրն է այստեղ,
Հյուրը միշտ է վռազում:

2

Ամռան տոթից նեղվեցինք,
Եվ կարկուտ տեղաց,
Ճամփաները շեղեցինք,
Դժգոհ, սրտնեղած:
Արեգակը ծիկրակեց
Սարի հետեւից,
Այնպես ուրախ ձգեցինք
Մենք իրար թեւից:

3

Ամպը ձորից բարձրացավ,
Երկինքը մթնեց,
Նրա ճիչ ու որոտից,
Իմ սիրտը քրտնեց:
Արձրեւ մաղեց արտերին,
Երկինքը ժպտաց,
Հույսս փարվեց հասկերին՝
Իմ սիրտը գրկած:

ՆԱԻՐԻ

Կապույտ լեռներ, կապույտ լիճ,
Կապույտ լանջեր, կապույտ գետ,
Կապույտ ճամփա, կապույտ խիղճ,
Կապույտ-կապույտ տիեզերք:

Կապույտ երազ, կապույտ տենչ,
Կապույտ-կապույտ քարաստան,
Միշտ իր բախտից խռոված,
Կապուտաչյա Հայաստան:

ԻՄ ԵՐԱԶԸ

Պարտեզի մեջ մի բարդի ծառ,
Օճորքի տակ գարնան ծիծառ,
Մանկան ժպիտ, մանկան ծիծաղ,
Դռան ճռինչ, բերկրանքի ճիչ,
Կարոտների գրկախառնում,
Բերքի ծփանք, երգի հառնում,
Ողջ աշխարհին լույս առավոտ,
Մարդը մարդուն միշտ մարդամոտ...
Ուրախ ու ժիր մի ծերություն,
Միշտ սերություն,
Վերջում անչար ու անշառ մահ,
Ապրողների սրտերի մեջ
Քեզ գիրկն առնող ոսկե մի գահ:

ՓՈԽՎԵԼ ԵՄ ԵՍ

Փոխվել եմ ես... եւ երգս
Նոր հունով է ընթանում,
Սակայն ուր էլ թեւում է,
Քո գրկով է ինձ տանում,
Իմ հուշերի աշխարհը
Ծփում է քո կրծքի տակ,
Ես կապված եմ քո երթին
Հավերժական սիրով տաք:

Քեզ իմ կրծքին եմ սեղմում.
Իմ ու քո նույն տանջանքով,
Փայփայել ես ինձ կյանքում
Դու մայրական քնքշանքով,
Քո հույզերի փնջով եմ
Լցրել ակոսն իմ հերկի,
Առաջինը այդ դու ես
Թեւեր տվել իմ երգին:

Երբ տալիս եմ անունդ,
Կյանքիս էջերն են բացվում,
Քո գրկի մեջ իմ սիրո
Ջերմին շունչն է թեւածում,
Ոտնահետքերս եմ տեսնում
Այգիներում քո լուսե,
Իմ կարոտի խոսքերը
Քո անունով եմ հյուսել:

Իմ այս երգը գրեցի՝
Փարված լույսիդ ապագա,
Սիրտս ափիդ եմ դնում,
Առանց խոսքի, ինքնակամ,
Ինչքան ապրեմ աշխարհում,
Դու կծփաս իմ հոգում,
Հերոսների օրորան,
Իմ սուրբ օջախ, իմ Արցախ:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՄԱՂԹԱՆՔ

Ոչ մի նոր տարի թող աչք չբացի
Պատերազմական որոտների տակ,
Նոր տարում ոչ ոք, ոչ ոք չլացի,
Ծովերը նետվեն ական ու գնդակ:
...Տեսել ենք, տեսել՝
Մեր տատիկների տխուր աչքերում
Արցունքով օծված,
Կարոտով բացված,
Սվինահարված,
Վիրավոր, սակայն մեզ սիրահարված
Ամանորը մեր:
Տեսել ենք, տեսել՝
Մեր գարնանաբույր մայրերի հոգում
Արբունքով բացված,
Արցունքով թացված,
Մարտերում խոցված,
Բայց ոսոխի դեմ դռներով գոցված
Ամանորը մեր:
Տեսել ենք, տեսել՝
Մեր նուրբ քույրերի սարսուռների մեջ

Եռածալ դարձած
Նամակի տեսքով,
Մեր քաջ պապերի
Քրտինքի փոխված համբերության մեջ:
Մեր լայնածավալ,
Մեծ օջախ սնող,
Սակայն դատարկված, տխուր տաշտերում:
Տեսել ենք, տեսել՝
Մեր եղբայրների կիսատ երգերում,
Մեր քեռիների ծանր վերքերում...
Թող էլ չտեսնենք...
Ոչ մի նոր տարի թող էլ չբացվի
Պատերազմական որոտների տակ,
Թող ամանորը ժպտա, թեւածի
Ուրախ երգերով ու խաղաղությամբ:

***

Անհուն տիեզերք,
Քո գաղտնիքների սիրահարն եմ ես,
Այնքան ծաղիկներ ունես աշխարհում,
Եվ այնպիսի եռք...
Քիչ զգույշ եղիր, որ քո արարած
Ոչ մի նուրբ ծաղիկ
Ձուր չթառամի ու չհամրանա,
Որ ամեն ծաղիկ իր զույգը գտնի,
Բուրի, մայրանա:
Տիեզերք անհուն,
Այնքան գետեր ես արարել հողում,
Այնքան ջրվեժներ՝ քո լույսով շողուն,
Աղաչում եմ քեզ,

Աչքդ մի թեքիր նրանց ընթացքից,
Նրանց սպառման վտանգը վանիր,
Եվ այնպես արա,
Որ ամեն մի գետ
Ծարավը կոտրի հայրենի հողի,
Եվ հասնի ծովին...
Տիեզերք անհուն...
Այդ դու ես հունցել հողագունդը մեր,
Ոնց գեղեցկություն ու թանկ մի նվեր,
Արեւ-հրաշքը դու ես աչք դարձրել
Հավերժության մեջ,
Այդ դու ես մարդուն տվել ձիրք ու տենչ:
Քո տված ձիրքով
Քո գիրկն է թեւում զավակդ խիզախ
Ու գաղտնիքներիդ փեշերը փնջում:
Սակայն Ադամի նորընծա որդին
Պատերազմների հրձիգ է դարձել,
Սպառնում է քեզ՝ ատոմը ձեռքին,
Աշխարհի մաղձը՝ սեւ հոգու վրա:
Անհուն տիեզերք,
Աղաչում եմ քեզ,
Քանի ուշ չէ դեռ,
Խելքի բեր նրան...

ՏԵՆՉ

Ոտնատակ տվի Եվրոպան ամբողջ,
Բոլոր գետերի ափերին հասա,
Որտեղ էլ եղա,
Անհայտ զինվորի արձանը տեսա:

Բուլղարիայում նա
Խոհուն հառնել է բուլղարացու պես,
Իսկ Բուդապեշտում
Հունգարացի է մի արեւատես:
Նա Բուխարեստում
Ռումինացի է հաղթաշունչ ու վեհ,
Պրագայում՝ չեխ,
Վարշավայում՝ լեհ:
Սլովակիայում
Նա սլավոնի թոռ է բարեհույս,
Լենինգրադում՝
Փրկարար ռուս:
Ես ամենուրեք ծաղիկներ դրի պատվանդաններին,
Հպարտ ու տրտում,
Եվ մի տենչ ծնվեց
Իմ կարոտ սրտում.
-Թե որդեկորույս բոլոր մայրերի
Վիշտն ու ցասումը գումարվեն իրար,
Ինչպես կյանքի գետ,
Մեր հողագունդը կփրկվի հավետ:

Հանդիպում Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի կոլեկտիվի հետ

ԵՐԳԵՐ՝ ԳՐՎԱԾ «ՌՈՒԶԱՆ» ԲԱԼԵՏԻ ՀԱՄԱՐ

1. ԵՐԳ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ*

Միասնություն, միասնություն, դու աշխարհի սնող
աղբյուր ես անարատ,
Դու մեզ ուժ ես տվել դաժան ոսոխների դեմ՝
պայքարի մեջ արդար:
-Հեյ...
Միասնություն, միասնություն,
Մեր անսասան հզորություն:
-Հեյ...
Մեր տան սյունն ես, հավերժ անխորտակ,
Կյանքի հունն ես, արեւի պես տաք:
Դու մեր հեւք,
Դու մեր երգ,
Սրբազան, սրբազան, սրբազան, սրբազան,
Քեզնով պիտի կանգուն մնան
Ձյունափառ, ծաղկավետ սարերը հպարտ:
Հեյ ջան, հեյ ջան, հեյ ջան,
Հեյ ջան, հեյ ջան, հեյ ջան,
Հեյ ջան, հեյ ջան, հեյ ջան,
Ձան միասնություն,
Մեր միասնություն:
Միասնություն, միասնություն, մեր սեգ սարերի
համաստեղություն,
Մենք քեզանով պիտի հաղթենք չար ոսոխներին,-
Բերենք խաղաղություն:

*Այս երգաշարի երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Էդ. Ղազարյանցը «Ռուզան» բալետում օգտագործելու համար: Լիբրետտոն գրել եմ ես, սակայն բալետը չի բեմադրվել:

2. ՌՈՒԶԱՆԻ ԽԵԼԱԿՈՐՈՒՅՍ ՄՈՐ ԿԱՆՉԸ

Քեզ սնեցի, փայփայեցի,
Որ երջանիկ լինես կյանքում, դու իմ Ռուզան,
Բայց արեւը քո մարեցին,
Այս ի՞նչ բախտ էր, քեզ վիճակվեց, Ռուզան:

Մեր սարերի վեհությունը սրտիդ անցավ,
Դու իմ նուրբ ծաղիկ, իմ հույս, իմ լույս Ռուզան,
Իմ կյանքը քեզնով պիտի ժպտար, իմ Ռուզան,
Ո՞ւր գնացիր, ախ, տուն արի, տուն, իմ Ռուզան:

Մեր դաշտերի, անտառների
Քնքշությունը առար դու, իմ լավ Ռուզան,
Դու իմ սրտից պոկված արեւ,
Դու ինձանից խլված իմ սիրտ, Ռուզան:

Դաժան բախտի ձեռքով ջարդված
Իմ աղջիկ, հրաշք աղջիկ, ախ, ո՞ւր ես, ո՜ւր,
Արցախ երկրի ցավով տանջված,
Իմ մինուճար, իմ վարդ աղջիկ, ախ, ո՞ւր ես, ո՜ւր:

3. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՉԵՆՔ ՏԱ ԹՇՆԱՄՈՒՆ

Անգին հայրենիք,
Որդիներն ենք քո,
Մեր հին հայրենիք,
Ոգիներն ենք քո,
Քո անունով ենք
Աշխարհը սիրում,

Քո լույս հունով ենք
Մեր բախտին տիրում:

Մեր ջանքով ծաղկում ես,
Բուրում մեր ճամփին,
Մեր կյանքով ծփում ես
Ու գրկում արփին,
Չենք տա թշնամուն մենք
Քո մի քարն անգամ,
Քո պաշտպաններն ենք մենք
Հավետ միակամ...
Դեհ, ելնենք, եղբայրներ, մենք մի սիրտ դարձած,
Թշնամին թող դողա, ծնկի գա ահից:

Մեր սիրտը ազնիվ է,
Գործը մեր՝ արդար,
Արցախցին արծիվ է,
Հոգին մի աշխարհ...
Սրերը մենք պարզենք
Ու կռվենք անդադար,
Մինչեւ որ արեւը
Ժպտա մեզ արդար:

Մեր ջանքով ծաղկում ես,
Բուրում մեր ճամփին,
Մեր կյանքով ծփում ես,
Ու գրկում արփին,
Չենք տա թշնամուն մենք
Քո մի քարն անգամ,

Քո պաշտպաններն ենք
Հավետ միակամ:
Դեհ, ելնենք, եղբայրներ, մենք մի սիրտ դարձած,
Թշնամին թող դողա, ծնկի գա ահից:

4. ԳՈՎՔ ՓԵՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐՍԻՆ

Եկեք, եկեք փառաբանենք
Մեր փեսային՝ Ներսեհին մեր,
Եկեք գովենք Ռուզանին,
Թող իրարու դառնան թեւեր,
Բարձր պահեն սարերը մեր,
Քաղցր պահեն դարերը մեր:

5. ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենի՜ք, հայրենի՜ք,
Փա՜ռք քեզ, հայրենի՜ք...
Մեր աստղամե՜րձ, բարձր սարե՜ր,
Փառավորվե՜ք դար ու դարե՜ր...
Դու մեր սերը եւ թեւերն ես,
Դու մեր որդոց հզոր տերն ես,
Քո որդին ենք քաջ ու անվախ,
Մեր սրբատուն, մեր մայր Արցախ...

***

Այս անցումի խաչմերուկում
Ամռան տոթից դեպի աշուն,
Դարձյալ գորգիս թելերը բյուր
Քո անունով դու ես նախշում:
Էլի քո բորբ կրակից են
Շողեր առնում օջախ ու տուն,
Բողբոջներս հազարերանգ
Քեզանով են արեւ ըմպում:
Տեր ու ծառա մենք չդարձանք,
Չթողեցինք սերը թախկի,
Մեր վառ սիրով հաստատեցինք
Դաշնությունը հող ու ծաղկի:
Մեր սիրակոփ երակներում
Թող չչոքի մշուշ ու մառ,
Մեծ ամռանը, սեգ սարերում,
Հաջորդում է փոքրիկ ամառ:

ԵՐԳԻՍ ԱԿՈՒՆՔԸ

Մռով սարից գույներ առա,
Շանթ ու շառաչ՝ Քիրսա սարից,
Դիզափայտից բույրեր առա
Ու բարություն՝ թթի ծառից:

Արեւսարից համբույր առա,
Ծիածաններ՝ Ուխտաձորից,
Գանձասարից ավյուն առա,
Լույս՝ Թարթառի կապույտ ծովից:

Այդ ամենը շաղախեցի,
Իմ երգերի բառ ու տողին...
Երգիս համար պարտական եմ
Երգիս ակունք իմ մայր հողին:

ԻՆՁ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ

Ինձ կանչում են անդադար
Ոտնահետքերս,
Արեւսարի փեշերին,
Թե Ուխտաձորի.
Կարոտներիս թեւերով
Թռչում են իմ երգերը՝
Որպես շունչը հուշերիս
Մանուկ օրերի:
Թռչում են իմ երգերը
Արեւսարի լանջերով,
Օծվում նրանց շաղերով
Ու բույրով ծաղկանց,
Շիկնում են իմ սրտի պես
Մորս քաղցր կանչերով,
Սիրո անմար շողերով,
Տենչերով անանց:

ԵՐԲ ԱՄՊ Է ՆՍՏՈՒՄ

Երբ ամպ է նստում մեր Արեւսարին,
Ասել է՝ պիտի լացի երկինքը...
Ու մեկ էլ տեսար ձորերից ելան
Ճերմակ ամպերը արցունքով լիքը,

Ելան, բարձրացան սարի թամբերին,
Փարվեցին սարից ծնված ամպերին,
Որ մեկտեղ խնդան, որ մեկտեղ լացեն,
Աշխարհին մեկտեղ սրտերը բացեն:

ԱՇՆԱՆ ԹԵՎԵՐԸ

Աշնան թեւերը նորից թրթռում են,
Նորից վառվում են գույները աշնան,
Ժայռերը դարձյալ ամպից քրտնում են,
Ու բարակում են գետերը վարար:
Ցուրտը եւ տաքը խաչվում են օդում,
Շողն արեգական խուտուտ է գալիս,
Մեկ-մեկ մշուշը սարերին չոքում,
Սառած շրթերով համբույր է տալիս:
Ամռան եւ աշնան գրկախառնումից
Երկինքը կապտում, հողը քնում է,
Արարման քուն է դա հզոր, անբիծ,
Զարթոնքի համար խելքը գնում է:
Գարունը կգա, կարթնանա հողը,
Ծաղկունքը պարզած. ոնց վառվող ջահեր,
Նախանձում եմ քեզ, քո հար ծփանքին,
Ով մայր բնություն՝ հավիտյան ջահել:

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ

Դառնամ, պապիս պես կորացած
Վազերդ փառաբանեմ,
Փառաբանեմ իմ հոր մատների պես
Կոշտացած մատներդ:

ՕՐԵՐԴԱ ՀԵՏ (1960-2010)

Մորս ափերի պես բացված
Տերեւներդ փառաբանեմ,
Որոնցից բարություն
Եվ արեւ է կաթում:
Փառաբանեմ սեւսաթ հատիկներդ՝
Աղջկա աչքերի պես թուխ,
Սիրահարված որդուս նման
Եռացող գինիդ փառաբանեմ:
Մայր հողի քղցրություն,
Հողի մշակի փայփայած
Լիառատ բարձրություն,
Մեզ ախպերացած մեր կյանքի լուսայգին,-
Խաղողի այգի:

***

Տենչերս քեզ տամ,
Փունջ արա, որդիս,
Տենչերս քիչ են,
Քեզ տամ եւ հոգիս:
Խիղճս քեզ դրոշ,
Ժպիտս՝ ծաղիկ,
Երազս՝ արեւ,
Կարոտս՝ տաղիկ:
Այս երազները
Իմ շրթով, ինձ պես,
Արցախը մեր սեգ
Պահ է տալիս քեզ:

ԵՐԿԻՐ ԻՄ

Անտառների ծփանքում ես քո երգը կարդացի,
Քարափներում, ժայռերում քո պատկերը տեսա ես,
Լեռների մեջ ինձ նայեց քո հասակը առնացի,
Գագաթներին ծաղկածուփ քո աչքերը տեսա ես:
Քո մեջ տեսա ինքս ինձ, իմ մեջ՝ շունչդ զգացի,
Ինչ արեցի, ինձ թվաց հաստատեցի քեզնով ինձ,
Ուր էլ եղա, կարոտած քո աչքերով ժպտացի,
Մա՞յրս քեզնից սեր առավ, թե՞ դու՝ առար իմ մորից:

***

Եթե նկարեմ՝ սարե՛րդ միայն,
Եթե հոլովեմ՝ միայն դարե՛րդ,
Թե հնչեցնեմ՝ լարե՛րդ միայն,
Թե դրոշ դարձնեմ՝ միայն բառե՛րդ,
Եթե մոմ դառնամ, քո ճամփին միայն,
Եթե մոխրանամ՝ միայն քո հողում,
Թե երկրպագեմ՝ քո արփին միայն,
Ծիածան դառնամ՝ միայն քո ցողում:

ՆՐԱՆԻՑ ԲԱՑԻ

Գարուն է, նորից կարոտի ցավով
Իմ գյուղը գնամ՝ լեռների լանջին,
Գնամ որդիական ցնորքի թեւով
Ու երազ դարձած սիրով առաջին:

Գիտեմ, ոչ հայրս կդիմավորի,
Ոչ մայրս, ոչ էլ իմ կորած սերը,
Բայց հուշերիս մեջ ապրում են նրանք,
Դեռ թարմ են նրանց ոտնահետքերը:

Կարոտն է սրտին միշտ թեւեր տալիս,
Երազի ծառն է նրանով աճում,
Հազար հուշ ունեմ քաղաքներում մեծ,
Կարոտս սակայն գյուղից է կանչում:

Օջախի ծուխն է ինձ կանչում անվերջ,
Տնատեղ դարձած մեր կալի ուսը,
Մեր տոհմի ծառը ճյուղերով է պերճ,-
Նորից գյուղ գալուս առկայծող հույսը:

Հոգուս արմատն է խրված այն հողում,
Ես նրանով եմ անհաղթ, առնացի,
Ողջ տիեզերքն է կրծքիս տակ շողում,
Բայց աստղ չունեմ նրանից բացի:

ԿԱՂՆԻՆ

ԽԱՉԱՏՈՒՐ պապիս
սուրբ հիշատակին

Կաղնին աճեց սարի լանջին,
Արմատ նետեց, հզորացավ,
Դարերի ձայնն իր ականջին,
Հունդեր ցանեց ու ծերացավ:
Փարված գալիք հույսի շողին,
Կաղնին մի օր թեքվեց անբառ,
Փշուր-փշուր ձուլվեց հողին,
Շուրջը թողած մի նոր անտառ:

ԳՈՒԳԱՐՔ

Գուգարքն աստղերի աղջիկն է կարծես,
Հեքիաթում ծնված մի ոսկեվարս է,
Ժպտում է նա գոհ արեգակի պես,
Չէ՞ որ քույրիկս Գուգարքի հարս է:

Տարին չորս բոլոր փեշերը թավիշ,
Կրծքի տակ պահած բյուր գանձեր ունի,
Քարերից անգամ քամում է ավիշ,
Նա համբավ ունի մեծ իմաստունի:

Աստղերի բույլը առած գրկի մեջ,
Փարված երազին նորօրյա կյանքի,
Աշխարհների հետ Գուգարքն է խոսում,
Թե իմ սիրտն էլ տամ, քիչ է Գուգարքին:

ՀՈՒՅՍԻ ԵՐԿԻՐ

Ամառդ շիկացել է,
Քո ամռան հեւքին մատաղ,
Լանջերդ արթնացել են,
Լանջերիդ բերքին մատաղ:
Վերքերդ դեռ չեն բուժվել,
Քո խորունկ վերքին մատաղ,
Արեւներ, աստղեր փնջող,
Արարող ձեռքիդ մատաղ:
Գալիքիդ երգը գրիր,
Լուսայգից մինչ շամանդաղ,
Իմ վառվող հույսի երկիր,
Մարտնչող իմ Ղարաբաղ:

1988 թ.

ՀԱՅԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Իմ հոգու մեջ վառած կյանքի կրակն անշեջ,
Աստծո բարությունն եմ փնջել ամեն ինչից,
Ժամանակի նման իմաստնացած անվերջ,
Գալիքին եմ փարվել տվայտանքիս միջից:
Չեմ նկատում հոսքը անցնող տարիներիս,
Միտքս պայծառության ջինջ ցողեր է ցանում,
Վարանումիս համար Տերը ինձ չի ների,
Տիրոջ հանգուն եմ ես մարդու ցավը տանում:
Տառապանքս երկրիս ցավից քամած բույր է,
Խիղճս իմ Հայկ պապի պատվից ծնված արեւ,
Բարությունս՝ խաչված Քրիստոսի շունչն է,
Որ արյանս է ծուլվել ու շիկացել դարեր:
Մի կողմում ոսոխն է չար, մյուս կողմում՝ ես եմ,
Նախանձով է լցված անվանս դեմ՝ հայի,
Հայրենիքս քիչ է, անգամ սիրտս է կիսել,
Ու ոռնում է իմ դեմ մոլուցքներով վայրի:
Ճանապարհս զոհի արյունով է ներկված,
Բախտս մաքառումի առասպել է ու երգ,
Մեկ է՝ երազանքս արեւով է հերկված
Բարի աստվածները չեն մահանում երբեք:

08.02.1993 թ.

ԵՐԱԶՆԵՐԻ ԹԵՎԵՐՈՎ

Երազների թեւերով, մաքուր երազների,
Մենք շքերթի ելանք ձմռան մի առավոտ,
Ասես փարվել էինք մեր հին մուրազներին,
Մեր ձգտումը դարձրած շոշափելի նարոտ:

Մեր մորմոքը հին էր, վերքն ու ցավը մեր՝ հին,
Բայց կեղծիքի թեւով շոյում էին անվերջ,
Սակայն պահը եկավ, եւ ճչացինք ուժգին,
Մեր հին երազներին գումարելով նոր էջ:

Կարծում էինք, թե նոր դարի խիղճն է ծփում,
Թե աշխարհն է փոխվել, եւ փոխվել են մարդիկ,
Բայց միամիտ էինք, ինչպես խաբված մանուկ,
Փողոցներն էինք չափում գիշեր ու տիվ:

Չլսեցին երբեք ճիչը մեր անարատ,
Ոչ Եվրոպան քնքուշ, ոչ աշխարհը՝ անծիր,
Ու մնացինք մենակ մեր սարերում հպարտ,
Թշնամու դեմ-դիմաց անվախ ու անձանձիր:

Մեր հավատը բոսոր մեր արյունով ներկած,
Կրակների միջից մեր երազն ենք հանում,
Պիտի ժպտա մի օր մեր արեւը երգած,
Մեր սեգ լեռների մեջ, մեր սուրբ անդաստանում:

22.02.1993 թ.

ՀՐԱՆՈԹՆԵՐԸ

Հրանոթները չեն լռում երբեք,
Հողը քրտնում է ձմռան ցրտերում,
Ձյունե վերմակով անտառները մերկ
Երազ-հեքիաթ են հյուսում սրտերում:
Անտառները եւ սրտերը մերն են,
Ձավթողի տենչը՝ գորշ գայլերինը,
Մեր թեւ-թիկունքը մեր սեգ լեռներն են,
Մեր ոտքերի տակ՝ մեր հող հայրենին:
Չի հանգստանում դաժան թշնամին,

Իր հին մոլուցքով կրկին հարբել է,
Բայց ամրակուռ ենք, ոնց մեր թթենին,
Քանի՛ թշնամու ջարդել-ճամփել ենք,
Ես հավատում եմ՝ ինչքան էլ ոռնա,
Նա այս անգամ էլ փոշի կդառնա:

20.02.1993 թ.

ՁԵԶ ՀԵՏ

Երբ գարնան ծիլն է բացվում,
Ցողերից հողն է թացվում,
Բողբոջն է խինդից լացում,
Այն ես եմ խոսում ձեզ հետ:

Երբ ոսկե արտն է ծփում,
Երբ վարդն է վրան խփում,
Սոխակն է երգում թփում,
Այն ես եմ խոսում ձեզ հետ:

Երբ բերքն է հասնում ամռան,
Լցվում է տուն ու մառան,
Աշխույժով ամեն դռան
Այն ես եմ խոսում ձեզ հետ:

Պապերի կնճիռներում,
Հայրերի վճիռներում,
Եվ մանկանց զիլ ճիչերում,
Այն ես եմ խոսում ձեզ հետ,
Այն ես եմ խոսում ձեզ հետ:

10.12.1993 թ.

ԻՆՉՊԵ՞Ս

Երգերը իմ անարատ
Այս ինչպե՞ս դարձան տխուր,
Զոհերս այսքան առատ,
Երազս՝ կրակ ու հուր:
Մի՞թե իմ հավքը թռավ,
Ցամաքեց երգիս առուն,
Ամպերը ուղիս առան,
Ծածկեցին կյանքս գարուն:
Տնքում եմ վիշտ ու ցավից,
Խոցում են հույսն իմ անմար,
Տանջվում եմ անլուր դավից,
Վերքերից իմ անհամար:
Բայց էլի մարտնչում եմ՝
Թշնամուն խորտակելով,
Իմ բազում հոգսերի մեջ
Կասկածս փարատելով:
Արցախն եմ, եղել եմ, կամ,
Կցնդվի ցավս խորին,
Վճռական եւ ինքնակամ
Կողջունեմ ես բոլորին:
Ու կգան, կգան մի օր
Աշխարհի ամեն ծայրից,
Կկարդան երգերն իմ նոր՝
Փարատված վիշտ ու ցավից:

11.02.1994 թ.

ԱՍԱՑԻ

Ասացի.- Մայր իմ, քեզ սիրում եմ Հայրենիքիս չափ,
Ասացի.- Հայրենիք, քեզ սիրում եմ մորս չափ:
Ասացի.- Մայր իմ, թե դավաճանեմ Հայրենիքիս,
Պատժիր ինձ անողոք նրա անունից:
Ասացի.- Հայրենիք, թե ուրանամ մորս,
Պատժիր ինձ անողոք նրա անունից:
Ասացի.- Մայր իմ, եթե կյանքը քեզ խլի ինձնից,
Հայրենիքը մայրություն կանի քեզ պես,
Իսկ,- եթե Հայրենիքը խլեն ինձնից,
Դու ինչո՞վ, ինչպե՞ս ինձ մայրություն կանես...

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ

Ոչ արդար ձեւացա, ոչ անարդար եղա,
Ոչ մեղքեր գործեցի, ոչ ասացի.- մեղա՜...
Ոչ սիրող ձեւացա, ոչ մնացի անսեր,
Ոչ տիրող ձեւացա, ոչ մնացի անտեր,
Ոչ բարի ձեւացա, ոչ ընտրեցի չարը,
Բարին սրտիս մեջ էր, նա էր հոգուս ծառը,
Ուժեղ էի, սակայն՝ չմնացի մենակ,
Թե բարի ես, բարին քեզ կդառնա հենակ...

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Դարերում փորձված մեր սրբություն,
Զգո՜ւյշ, քո անվամբ երդվում են կեղծերը,
Շահասերը աճուրդի է հանում քո սերը,
Դարերում փորձված մեր սրբություն:

Տառապանքից ծնված մեր մաքրություն,
Զգո՜ւյշ, փեշիդ տակ է մտնում ցածրությունը,
Կեղտոտը «Խունկ» է դարձնում պարզությունդ,
Տառապանքից ծնված մեր մաքրություն:

Մրրիկներում կոփված մեր ամրություն,
Զգո՜ւյշ, քսմսվում է քեզ ստահակը,
Եղկելին քանդում է ոտքիդ տակը,
Մրրիկներում կոփված մեր ամրություն:

Երազներով օծված մեր բարություն,
Զգո՜ւյշ, քեզ փարվում է չարացածը,
Երախտամոռը ձեռքն է առնում աղ ու հացդ,
Երազներով օծված մեր բարություն:

Մեզ միշտ քաղցր պահող մեր քաղցրություն,
Զգո՜ւյշ, թույն չխառնեն քո նեկտարին,
Արի չթաքցնենք, խառն է դարը,
Մեզ միշտ քաղցր պահող մեր քաղցրություն:

ԽՈՐՀՈՒՐԴ

Երիտասարդ իմ բարեկամ,
Տրտնջում ես, նվում, լացում,
Ե՞րբ են հարթել գարնան ճամփան,
Գարունն ինքն է ճամփա բացում:

Երգը սրտի մեջ է ծլում,
Արյամբ սնվում, դառնում տաղիկ,
Ժայռի մեջ հունդն ո՞վ է ջրում,
Ինքն է ելնում, դառնում ծաղիկ:

Հեռվում ո՞վ է սերում աստղեր,
Ո՞վ է շոյում հյուսքը նրանց,
Ինքնին դարձած լույսի շողեր,
Մեզ են փարվում սիրով անանց:

Շառաչները ամպ ու շանթի,
Ինքնաբուխ են անձրեւ բերում,
Կյանքը նման է հեքիաթի,
Կամազուրկին նա չի ներում:

Թե ծնվել ես դու բանաստեղծ,
Պիտի փախցնես քունն աչքերիդ,
Աստվածանաս խոսքով անկեղծ,
Տրված երգիդ ու ասքերիդ:

Սիրտդ վառիր դու ինքնակամ,
Երգիչ ես, ո՛չ մատաղացու...
Ե՞րբ են հարթել գարնան ճամփան,
Գարունն ինքն է ճամփա բացում:

1991 թ.

ՀՐԱՎԵՐ

Արի, ընկեր,
Արի զննենք օրերն այս բարդ,
Արի բացենք սրտերը մեր,
Հոգիները մեր ցավազարդ:
Արի նորից մեջտեղ բերենք
Ճանապարհ ու ճակատագիր,
Արի նորից մտաբերենք
Ընկերներին մեր տարագիր:

ՕՐԵՐԴԱ ՀԵՏ (1960-2010)

Տեսնենք ե՞րբ ենք ուրախացել,
Ե՞րբ ենք քրտնել ամռան տապին,
Ե՞րբ ենք լացել, ե՞րբ ժպտացել
Ու դիմացել դաժան ցրտին:
Ինձ ասում ես՝ սիրտդ պահիր,-
Ո՞նց խնայեմ սիրտս, ասա,
Ո՞վ գլուխը իր պահելով
Երազների ափին հասավ:
Պատմությունը մեր թերթելիս
Ամեն էջի հետ լացում եմ,
Ամեն երգը մեր երգելիս
Ոչ թե ժպտում, այլ թախծում եմ:
Պապերիս հետ զրուցելիս
Սխալներն եմ տեսնում մեր հին,
Խարազանում թագավորին,
Նախարարին ու սեպուհին,
Թե ինչո՞ւ չեն եղբոր նման
Իրար լսել ու պաշտպանել,
Բռունցք դարձել միասնաբար,
Ոսոխներին երկրից վանել,
Պահել հողը մեր պապական,
Ոստանները մեր սյունազարդ,
Աղբյուրները անապական,
Մասիսները ձյունագագաթ:
Կորցրել ենք հող, օջախ ու տուն,
Ժողովուրդ ենք տվել մահվան,
Գոչել ենք միշտ արդարություն,
Մշուշելով հույսը վաղվա:
Ահա՛, այս մեծ կորուստների
Շարանն է իմ սիրտը քրքրում,

Էլ իմ հոգին ինչպե՞ս օծեմ
Ուրախության ոսկե հրում:
Չի լինում, չէ՛, ո՞նց մոռանաս
Քո անցյալը կորուստալից,
Ախր ինչպե՞ս չդառնանաս
Սխալներից աղետալի:
Գոնե հիմա խելոքանանք,
Հիմա լսենք մեկս-մեկու,
Որ մեր վիշտը չծովանա
Ու չդառնա մեկը՝ երկու:
Կանգնենք մի սուրբ դրոշի տակ,
Մի հավատի լույսով ապրենք,
Մի ձգտումով լոկ տաքանանք
Ու պատիվը մեր պահպանենք:
Պայքարի մեջ լինենք մեկտեղ,
Տագնապ ու վիշտ մեկտեղ վանենք,
Մեր գալիքը կռենք մեկտեղ,-
Իմ երազը դա՛ է, ընկեր:

1992 թ.

ԱՌԵՂԾՎԱԾ

Տիեզերքն ու երկիրը մեր
Դաշնությամբ են ապրում, իրավ,
Այդ դաշնությամբ դար ու դարեր,
Պաշտպանում են, պահում իրար:

Տիեզերքի շերտերի մեջ
Արարվում է լույսն անմարում,
Եվ այդ լույսով երկիրը պերճ
Ստանում է մեծ համարում:

Տիեզերքից մինչեւ երկիր
Ուլունքվում են աստղերը վառ,
Ու ժպտալով՝ շողերն արբշիռ
Շաղ են տալիս երկինքն ի վար:

Սակայն մի տեղ մութն է իշխում
Ու մի տեղ էլ խորշակը խենթ,
Մի տեղ կենաց ծառն է խշշում,
Մի տեղ հնչում մահվան քայլերգ:

Առեղծվածն այս ե՞րբ կբացվի,
Երբ լույսը կա, խավարն ի՞նչ է,
Երբ խինդը կա, էլ ի՞նչ թախիծ,
Երբ վերելք կա, էլ ի՞նչ վայրէջք:

Մայր երկրի եւ տիեզերքի
Դաշնությունը ո՞նց հասկանաս,
Խաղալիք է նրանց ձեռքին
Մարդը՝ սաղմից մինչեւ Պառնաս:

1992 թ.

ԳԱՆԳԱՏ

Այսպես ապրել չի լինի՜, չէ՛,
Բանաստեղծի բանը բուրդ է,
Ցավդ ո՞ւմ պատմես, ո՞ւմ հետ վիճես,
Ժամանակը անհագուրդ է:
Առեւտրական դառնամ ես էլ,
Կյանքի դուռը բացեմ շահով,
Երգից ախր ի՞նչ եմ տեսել,

Ե՞րբ եմ ապրել ես ապահով:
Ես էլ լծվեմ առուծախին,
Մեկը դնեմ, չորսը առնեմ,
Եվ թանկության անգութ հախից,
Թեկուզ դժվար, մի կերպ հառնեմ:
Գուցե դարը խելոքանա,
Գնահատի երգն ու խոսքը,
Առուծախը չեզոքանա,
Թեթեւանա կյանքի հոսքը:
Ողորմի՜ քեզ, Մեծ Լոռեցի,
Քո Պոետն եմ՝ Մուսայիդ հետ,
Նորից խոսքդ հոլովեցի,
Չհաշտվելով իմ բախտի հետ:
Իմաստուն ես եղել, իրավ,
Հավերժության գուշակը մեծ,
Հոգիդ տանջող ցավն անիրավ,
Մեր օրերում մեզ էլ պատեց:
Դեհ, ի՞նչ արած, ժառանգն եմ քո,
Ձավակը նույն ժողովրդի,
Պիտի հալվեմ թախծոտ երգով,
Շնչեմ՝ կարոտ լավ ապրուստի:
Չնախատես ինձ, Մեծ պոետ,
Այսպես ապրել չի լինի, չէ,
Ինչպե՞ս հաշտվեմ իմ երգի հետ,
Երգչի բախտը ինչպե՞ս ջնջեմ:

1992 թ.

ՕՐՍ ԱՆՑԱՎ

Օրս անցավ՝ սրտիս նման
Կարոտներից թպրտալով,
Օրս անցավ՝ երգիս նման
Մերթ թախծալի, մերթ ժպտալով:
Սպասեցի՝ սերս չեկավ,
Լոկ հուշերս եկան այցի,
Կրկին նրանց գիրկը ընկա
Ու կարոտած սիրտս բացի:
Ինձ հասկացան, ինձ հետ լացին,
Սփոփեցին սիրտս նորից,
Ասին. «Ոչինչ հետ չես դարձնի,
Մի անգամ ես ծնվել մորից:
Ոտքից գլուխ սեր ես եղել,
Սեր ես տվել դու բոլորին,
Ապրիր, շնչիր քո երգի հետ,
Մինչեւ կյանքը քո բոլորի»:

1992 թ.

ԻՄ ԽԱՉԱՊԱՇՏ

Իմ խաչապաշտ Հայրենիք,
Քո խաչակիր զավակն եմ,
Հենված թրիս մեծ ուժին,
Օրհնյալ լինի դաշինքն այդ,
Որ պապերից մեզ հասած
Մեր գոյության դասն է հին:

***

Իմ ոգեղեն, հողեղեն,
Իմ հուսածին մայր Արցախ,
Իմ տառապյալ լուսածին,
Այդ ինչպե՞ս ես արարվել,
Այդքան նուրբ ու քնքշասիրտ
Եվ այդքան էլ առնացի:

***

Թե հարկ լինի, իմ ճամփին
Սիրտս ուզեն ես կտամ.
Անգամ կտամ իմ հոգին,
Բայց Արցախիս մի մազը,
Նրա խաշամն անգամ չոր,
Ես չեմ զիջի ոչ ոքի:

***

Ես ծնվեցի քո գրկում,
Բախտս գտա քո անվամբ,
Եվ ապրեցի քեզ համար,
Օրհնիր, օգնիր իմ Արցախ,
Քեզնով գտած իմ բախտը
Դարձնեմ ճամփիդ մի կամար:

30.12.1994 թ.

ԱՍՏՎԱԾ Է ՆԱ

Հաց արարող մարդու նման
Ոչ ոք ձեռք չի մեկնում հացին,
Հաց կտրելիս խոհուն է նա
Եվ նման է լուսաբացի:

Շոյելով է հացը կտրում,
Ճաշակում է գորովանքով,
Ասես հացի երգն է գրում
Եվ ընթերցում ջերմ գգվանքով:
Հացի փոքրիկ կտորի մեջ
Իր աչքերի շողն է տեսնում,
Հույսն է տեսնում իր լուսառէջ,
Իր մեծ սրտի դողն է տեսնում:
Այդ կտորում տեսնում է նա
Ակոսների ծիլերն անթիվ,
Նա տեսնում է հոգեհմա
Հերանց մեկնող արտերն անծիր:
Հաց արարող մարդու նման
Ոչ ոք ձեռք չի մեկնում հացի,
Մի հացապաշտ աստված է նա
Եվ նման է լուսաբացի:

05.02.1994 թ.

ԱՆՑ ԵՆ ԿԵՆՈՒՄ

Անց են կենում թեւեր առած՝
Ապրած-չապրած իմ օրերը,
Մերթ վարդաբույր, մերթ փուշ դառած,
Մերթ հուշ դառած իմ օրերը,
Սիրտս հաճախ աղավնաթեւ,
Ճախրումներով քնքուշ, թեթեւ,
Հասնում է հին իմ օրերին,
Որ ինձ շոյող մի լուր բերի:
Ու բերում է...
Ու բերում է...

Կորցրածս շատ, գտածս քիչ,
Քիչ գտածից քիչն ամոքիչ,
Ամոքիչն էլ դու ես, իմ Սեր,
Որ ինձ թողիր կյանքում անտեր:
Եկեք- եկեք իմ նոր օրեր,
Եկեք հերկով, բերքով եկեք,
Ախ, այս անգամ, ախ, այս անգամ,
Մոր պես շոյող տեսքով եկեք:

09.02.1994 թ.

ԴԱԼԱՐ ՄՆԱՍ

Ճանապարհս ինձ տանում է
Արեւսարի լանջերն ի վար,
Սրտիս խորքում արթնանում են
Պատանեկան տենչերս վառ:
Ես ձայներ եմ լսում ծանոթ
Ամեն քայլում, ամեն ինչում,
Ու թվում է՝ ես ոչ թե օդ,
Այլ կարոտ եմ միայն շնչում:
Հուշ է դարձել մայրս արդեն,
Առանց նրա՝ հայրս մի բուռ,
Էլ պարտեզում չկան վարդեր,
Հառաչում է միայն մի դուռ:
Նստում եմ մեր թթենու տակ,
Արցունքներով աչքերս լի,
Մշուշվում են պարտեզ ու բակ
Եվ սարերը մեր սիրելի:
Մոտենում է հայրս դողդոջ

Եվ սիրտ տալիս ինձ ժպտալով,
Բայց տեսնում եմ - ո՞նց է ինձնից
Նա հեռանում թաքուն լալով:
Ելնում եմ ես, շրջում կրկին,
Ողջ գյուղն ասես փարվում է ինձ,
Մանուկներն են շրջապատում,
Ողջագուրվում ցնծումնալից,
Ամեն մանուկ մի կանաչ շիվ,
Մի նոր գարուն, վարդ ու ծիծառ,
Ամեն մանուկ մի նոր շավիղ,
Մի լույս օջախ, երգ ու ծիծաղ:
Հայացքներում այդ ժիր մանկանց
Ինձ ժպտում է աշխարհն անծայր,
Այդպես հավետ դալար մնաս,
Իմ թանկագին, իմ Արեւսար:

ՔԵԶ ՀԵՏ ԵՄ ՄԻՇՏ

Ինչ էլ լինի, երազներս
Սրտիս միջով հասնում են քեզ,
Ու թե հաճախ մթնում եմ ես,
Մթնում եմ լոկ ամպի հետեւ
Ծածկված գարնան արեւի պես,
Որ վառվում է կյանքի սիրով,
Իսկ իմ կյանքը դու ես, անգին:
Ինչ էլ լինի, իմ վերքերը
Սրտիս միջով հասնում են քեզ,
Ու թե հաճախ լռում եմ ես,
Լռում եմ լոկ ջրերի պես,
Այն ջրերի, որ հողի տակ

Մաքրվում են, ելնում նորից
Ու կարկաչում ծաղկի սիրով,
Իսկ ծաղիկս դու ես, անգին:
Ինչ էլ լինի, իմ երգերը
Լույսի փոխված հասնում են քեզ,
Ու թե հաճախ տխրում եմ ես,
Տխրում եմ լավ երգ գտնելու
Անմար հույսով,-
Իսկ իմ երգը դու ես, անգին:

ԱՅԳՈՒՄ

Բարդիները հուշում էին երգերը իմ,
Առուները կրկնում էին իմ բառերը,
Ծաղիկները հիշում էին ձեռքերը իմ,
Զուգվել էին հուշարձանված իմ ծառերը:
Թփերի մեջ թաք էր կացել իմ երազը,
Իմ երազը՝ թուխ աչք-ունքով իմ սիրո պես,
Յասամանն էր պահում նրա քնքույշ նազը,
Վարդն էր ժպտում նրա նման սիրունատես:
Եվ ամեն ինչ... բնությունը շռայլաշող,
Իմ Առաջին Սերը լիներ ասես ծաղկած,
...Օրհնյալ լինես, վերուստ տրված Սիրո-երազ,
Օրհնյալ լինես, Սիրո աղբյուր, դու Կին-Աստված:
Բոլոր-բոլոր տղամարդկանց վեհ անունից
Ես ծնկի եմ գալիս, օրհնում Լինելը քո,
Դու ծնվել ես մեր երազից եւ ավյունից,
Դու ծնվել ես մայր բնության անուշ տեսքով:

***

Քայլում եմ ես ինչպես արտից եկող հնձվոր,
Հաշվում եմ իմ ձեռքով հնձած լավ խրձերը,
Հաշվում եմ ես ամեն պահի եւ ամեն օր,
Իմ կյանք դարձած ու դեռ եկող իմ իղձերը:
Եվ հոգուս մեջ, արյունիս մեջ աստղաբույլեր,
Փարվում եմ քեզ, արեւածին իմ լեռնաշխարհ,
Օրհնում եմ քեզ ինձ պարգեւած կյանքի համար,
Բայց իմ կյանքը պիտի քեզ տամ, որ ապրեմ հար:

ՕՐՀՆԵՐԳ ԿՅԱՆՔԻ

Լուսավոր ու բարդ իմ ճանապարհին,
Կյանք, քո սիրով է սիրտս բաբախում,
Քո երազով եմ փարվել աշխարհին,
Գալիքի դուռը քեզնով եմ բախում:

Սին երազ, ցնորք, խորթ են իմ հոգուն,
Ով կյանք, ինձ համար համբույր ես սիրո,
Ինձ համար մանկան ճիչ ես ու խնդում,
Գալիքին ձգված հուր ես թեւավոր:

Ես օրհներգում եմ լինելդ, ով կյանք,
Քո մեջ թող ժպտան կյանքերը բոլոր,
Թող ամենուրեք լինեն սեր, բերկրանք,
Ոչ ոք չքայլի տխուր ու մոլոր:

Թող քո շրթերով օրհնվի միշտ բարին,
Արմատազերծվի չարը քո ձեռքով,
Թող սերը ծաղկի քո հրաշք ծառին,
Թող օծվես հավետ լիությամբ, երգով:

Քեզ սիրահարված օրհներգուն չեմ լոկ,
Քո զինվորյալն եմ՝ պատրաստ քո կոչին,
Սերդ սրտերում միշտ պահիր բորբոք,
Հանուն քո սիրո թող չարը կորչի:

ՏԱԳՆԱՊ

Երազիս մեջ մանուկ էի,
Հողագունդը օրորոցն էր իմ մայրական,
Հովը երգ էր սուլում քնքույշ,
Ծառը զով էր անում վրաս,
Ժպիտներով օծում էր ինձ արեւը ջերմ,
Աստեղնահյուս մի հեքիաթ էր աշխարհն իմ դեմ...
Երազիս մեջ մի կեռկտուց
Ուրուր եկավ եւ ինձ խլեց...
Աշխարհն հանկարծ գլխիս մթնեց,
Իմ օրորոց-հողագունդը ճեղքվեց ասես...
Հովն ինձ կորցրած
Լաց էր լինում մորս նման,
Ծառը թեքված որոնում էր բարուրը իմ,
Արեգակը փետտում էր իր վարսերն անմար:
Ես արթնացա...
Եվ ցնծացի, որ չարիքն այդ
Երազ է լոկ...
Բարի մարդիկ, բռունցք դարձեք
Կռնչացող ուրուրի դեմ,
Ելեք, փրկեք հողագունդը՝
Օրորոցը ողջ մանկության,
Մեր պապերի օրորոցը,
Մանուկների օրորոցը,
Մեր հեքիաթը անապական,
Մեր ապագան...

ՁԵՐՄՈՒԿՈՒՄ

Ձինջ աստղերի թեւի տակ,
Սարերի լանջին,
Անտառներով երիզված,
Ծովում կանաչի,
Իր նոր կյանքով է ապրում
Ձերմուկը լուսե
Եվ նվիրում է մարդկանց
Ուրախություն, սեր:
Առողջարան չէ նա լոկ,
Նա օջախ է սուրբ,
Նա մայրական սիրտ ունի,
Գթառատ ու նուրբ:
Գիրկն է առնում հավասար,
Բուժում անթերի,
Ուստերին ու դուստերին
Բոլոր ազգերի:
Հար ժպտում են սարերը
Շոյող ձեռքերից,
Թեւ են առնում, թե թռչեն
Տարբեր երգերից:
Ամեն մի երգ իր թեւին
Մի գույն է բերում,
Եղբայրության հանդես է
Վայոց լեռներում:

ՁԵՐՄՈՒԿ

Լանջերը կանաչ, փեշերը կապույտ,
Կուրծքը ժայռեղեն, սիրտը հրաբորբ,
Նա անձեռակերտ մի սեգ կոթող է,
Աստղերից կախված կախարդական գորգ:

Ձուրն այնքա՜ն հստակ, ասես անուրջ է,
Քարերը կարծես ուզում են թեւել,
Օդը գթասիրտ մայրական շունչ է,
Սրտեր է բուժում ու տալիս թեւեր:

Գալիս են այստեղ տարբեր վայրերից
Այնպե՜ս մտերիմ եւ այնպե՜ս բարի...
Հպարտություն է՝ լինել զավակը
Բարության ակունք այս լեռնաշխարհի:

ՀԱՅԻ ԽՈՍՔԸ

Միշտ արեւ եմ պահել ես ինձ,
Արեւի պես բարձր ու մեծ,
Արեւի պես շռայլաշող,
Վառված կյանքի սիրով անշեջ:
Ես աշխարհին, կյանքին, մարդուն
Նայել եմ միշտ բարու լույսով,
Ու սրտերը թեւահատված
Ողողել եմ շող ու հույսով:
Արեւ եմ ես մարդու համար,-
Բարի մարդու, բարի սրտի,
Ու չեմ թողնի երբեք նրան

Անօգնական մնա ցրտին:
Արեւ եմ ես իմ ջերմ հոգով
Հայրենական հող ու հանդին,
Ժպիտներս դուք կտեսնեք
Բացվող ծիլին, բուրող վարդին:
Մարում չկա իմ արեւին,
Այնքան պիտի վառվեմ անթարթ,
Որ անսպառ իմ ջերմությամբ
Մարդը սնվի ու դառնա Մարդ:

ԱՐՁԱԳԱՆՔ

Կանգնել եմ Կանաչ խութի կատարին,
Մանկան աշխույժով կանչո՜ւմ եմ, կանչո՜ւմ,
Առաջվա նման ժայռերն իմ բարի
Արձագանքում են վեհ ու շառաչուն:

Ձայնս մի լանջից թեւում է մեկին,
Քիչ հանգստանում իմ Ուխտաձորում,
Հետո քնքշանքով հետ գալիս կրկին,
Փարվում է հոգուս մեղրի պես ծորուն:

Մայր հողի սերը միշտ պահենք հրկեզ,-
Ուր էլ որ գնանք, ուր լինենք կյանքում,
Նրա կանչերից թեւ առնենք այնպես,-
Ինչպես որ ինքն է մեզ արձագանքում:

ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Ռումբեր պայթեցին Բեյրութում,
Բեկորը կպավ իմ սրտին,
Ախր գաղթական հայը
Փարվել էր Բեյրութի գրկին:
Բեյրութում շենքեր փլվեցին,
Փլուզվեց իմ հոգին տակնուվեր,
Ախր բնավեր հայը
Նորից է մնում տնավեր:
Մենք կրկին Աստծո օրհնանքով
Թիկնեցինք մարդուն, նոր դարին,
Որտե՞ղ ես, Աստված գթասիրտ,
Նորի՞ց ես թուր տալիս չարին:
Բեյրութում հայն էր սպասում,
Որ արդար հատուցում կտաս,
Թե իրոք Աստված ես տղամարդ,
Ասա մեզ, դու կա՞ս, թե՝ չկաս:

Հունվար, 1983 թ.

Հանդիպում «Գրիգոր Նարեկացի» համալսարանում

ՄԱՅՐ

1

Դու նա ես, որին հեքիաթների մեջ
Համեմատել են լոկ արեւի հետ,
Դու նա ես, որի կրակը անշեջ
Խաչմերուկներում չի մարել երբեք:
Դու նա ես, որով օջախն օջախվեց,
Որով այր մարդը հղկվեց, մեղմացավ,
Դու նա ես, որի անունով անգամ
Մեզ սնող հողը մայր երկիր դարձավ:
Մայր երկիր դարձավ, քեզ մայր անվանեց,
Խղճով, քնքշությամբ օծեց սիրտը քո,
Բարության ձայնը, տենչն արարելու,
Նորածին մանկանց անցավ քո կաթով:
Դու նա ես, որի լույս երազներով
Ծիլը նուրբ ծաղիկ, ամպը ցող դարձավ,
Սիրո կարոտը դարձավ ծիածան,
Քո համբույրի հետ սրտերին անցավ:
Դու նա ես, որ հին, չար աշխարհի դեմ
Դարձավ պայքարի կոչ ավետաբեր,
Եվ ազատության քաջ ասպետներին
Դարձավ զինակից, դարձավ սուրբ ընկեր:
Դու նա ես, որ թեժ մրրիկների դեմ
Ձինեց ամուսնուն, եղբորը, որդուն,
Նրանց հետ քայլեց, մարտնչեց խիզախ,
Որ կյանքը ժպտա լույսերով հորդուն:
Դու մանուկների երազ ու համբույր,
Դու խաղաղության ինքնաբուխ աղբյուր,
Դու սրտերի մեջ սիրո մեղմ ճրագ,
Կյանքը բորբոքուն պահող ջերմ կրակ:

2

Միշտ արեւ ես պահել դու քեզ,
Արեւի պես բարձր ու մեծ,
Արեւի պես շռայլաշող,
Վառված կյանքի սիրով անշեջ:
Դու աշխարհին, կյանքին, մարդուն,
Նայել ես միշտ բարու լույսով,
Ու սրտերը թեւահատված
Ողողել ես շող ու հույսով:
Արեւ ես դու մարդու համար,-
Բարի մարդու, բարի սրտի,
Ու չես թողնի երբեք նրան
Անօգնական մնա ցրտին:
Արեւ ես դու քո ջերմ հոգով
Հայրենական հող ու հանդին,
Ժպիտները քո տեսնում ենք
Բացվող ծիլին, բուրող վարդին:
Մարում չկա քո արեւին,
Այնքա՜ն պիտի վառվես անթարթ,
Որ անսպառ քո ջերմությամբ
Մարդը սնվի ու դառնա Մարդ:

ՈՒՂԵԾԻՐ

Ով չի քայլել ուղիղ, նա ուղեծիր չունի,
Ով ուղեծիր չունի, չունի դիմագիծ,
Դիմագիծը անգամ պետք է իմաստունին,
Դրան պիտի ձգտել եւ մնալ անբիծ:

Ինչքան էլ որ կյանքը իր գույները փոխի,
Հոգուդ գույնը պիտի հար նույնը մնա,
Պետք է միշտ նմանվես հայրենական հողին,
Շռայլ նվիրումով քո ուղին գնաս:

Մարդն իր ուղեծիրը ջանքի մեջ է գտնում,
Պիտի դրոշ դարձնել սերն աշխատանքի,
Ով այդ չի հասկանում, խարխափում է մթնում,
Քրտինքով է օծվում պսակը փառքի:

Ուղեծիրի մեջ է մարդը նայում ուղիղ,
Իր թեւերը մարզում ու նայում առաջ,
Ուղեծիրն է մարդուն նպատակի մղում,
Այնտեղ նպատակը կանաչ լույս է ու կանչ:

Ուղեծիրիս հասած, գտած իմ լույս ուղին,
Երգով ձեզ եմ դիմում, լավ լսեցեք ինձ.
Ով չի քայլել ուղիղ, նա ուղեծիր չունի,
Ով ուղեծիր չունի, չունի դիմագիծ:

***

Երբ ամպերը պար բռնեն
Մռով սարի կատարին,
Երբ արծիվը խենթացած
Իր սխրանքը կատարի,
Իմացիր, իմ բարեկամ,
Որ այդ արծվի սխրանքը
Ներշնչանքն է իմ երգի...

Երբ ամպերը որոտան,
Գարնան անձրեւը մաղի,
Հողը առնի ծարավն իր
Ու ժպտա շող ու շաղին,
Իմացիր, իմ բարեկամ,
Որ անձրեւն այդ կենարար
Թարմությունն է իմ երգի:

Երբ խաղաղվի երկինքը,
Ծիածանը կամարվի,
Գալիք բերքի ծիլերով
Մի նոր աշխարհ արարվի,
Իմացիր, իմ բարեկամ,
Որ ծիածանն այդ բարի
Հավերժումն է իմ երգի:

ԱՆՈՒՆՍ ՉԳԻՏԵՍ

Լեռնային մի գետի կարկաչով
Հոսեցի, ձուլվեցի քո ծովին,
Քո ծովում ապրում եմ քո կանչով,
Հեքիաթ եմ՝ շաղախված քո հողին:
Ծաղկիդ հետ բացվում եմ ու բուրում,
Հովիդ հետ երգում եմ ու թռչում,
Անհանգիստ հին ու նոր աշխարհում
Դարձել եմ տագնապած մի թռչուն:
Ձուլվել եմ ավյունիդ, արյունիդ,
Երկիր իմ, քեզնով եմ թեւ առնում,
Եվ ի՞նչ փույթ՝ անունս չգիտես,
Ձինվորյալ զավակին ի՞նչ անուն:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Հայրենական պատերազմում զոհված
224 վերին՝շենցիների սուրբ հիշատակին:
Ձրույց Գասպար ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ
նկարի հետ

Դու կրակեցիր ինքդ քեզ,
Որ թշնամին չգերի,
Զոհվեցիր Վարդան զորավարի պես,
Հայրենիք բառը շրթերիդ:
Դու կրակեցիր ինքդ քեզ,
Թշնամին ցնցվեց ու զարմացավ,
Մահդ հաղթանակի փոխվեց,
Երգի թեւերով սերունդներին հասավ:
Հիմա նկարից խոհուն, ջահել,
Նայում ես գյուղիդ՝ Մռովի լանջին,
Նայում ես մանուկներին՝ քեզ պես թխահեր,
Նայում ես, ասես ունկնդիր նրանց կանչին:
Կանգնել ենք նկարիդ դեմ,
Քո վերքը սպիացել է մեր սրտում,
Ու ոգի առած քննում են արարքդ.
Մեկն ասում է. «Իսկ եթե չկրակեր իր վրա»,
Մյուսն ասում է. «Կգերվեր, կազատվեր հետո»,
Մեկ ուրիշը շշնջում է. «Հետո կապրեր գլխահակ»,
Իսկ մեկն էլ հոգու մեջ հայացքդ անթարթ,
Ասում է. «Գասպարը ապրում է եւ կապրի հպարտ»:

ՄԱՂԹԱՆՔ

Իմ գործընկերուհի Կարինեի մաղթանքը իր դստեր՝ Մարինեին՝ ծննդյան օրվա առթիվ...

Իմ կյանքի գուռ, իմ հույսի դուռ,
Ուրախության իմ արեգակ,
Մայրն իր դստեր սիրում է լուռ,
Խոսքը պահած իր կրծքի տակ:
Սակայն այսօր լեզուս բացվել,
Սրտիս սերն է քեզ հաղորդում,
Իմ շնչով ես դու մեծացել,
Երազներս պահել հորդուն:
Երբ ժպտում ես, ցնծում եմ ես,
Քո քայլերով առնում թեւեր,
Իսկ երբ հոգնած դու քնում ես,
Թեւածում եմ քո գլխից վեր:
Դու հասակ ես առնում, փոխվում,
Հասունանում նոր կյանքի հետ,
Բայց ինձ համար փոքր ես մնում,
Ասես՝ ես ծով, դու՝ փոքրիկ գետ:
Բառերն ի՞նչ են, որ հերիքեն
Սրտիս սերը բերելու քեզ,
Կարոտներս դառած երգեր,
Շրշում են հար անտառի պես,
Քո անունն են տալիս անվերջ,
Ջուր եմ ըմպում քո երազից,
Դու հյուլե ես իմ արյան մեջ,
Դու գալիքն ես իմ աստղալից:
Ամեն տարիդ մի կամար է,
Ամեն օրդ՝ մի արեգակ,
Իմ աղոթքը քեզ համար է
Այս հավերժող արեւի տակ:

Քո ծնունդն եմ օրհնում, դուստրս,
Քեզ իմ սիրտն եմ բերում ընծա,
Դու իմ սրտի քնքույշ մասն ես,
Իմ գալիքն ես հազարաձայն:
Մայր բնության առջեւ չոքած
Պաղատում եմ՝ հույսերով մոր,
Որ քո ճամփին մոր պես հոգա
Ու պահպանի ուժով հզոր:
Դու իմ դուստր, իմ արեգակ,
Երազիս ծով՝ իմ կրծքի տակ,
Հեքիաթ դարձող իմ կյանքի գուռ,
Ինձ ջերմացնող իմ հույսի դուռ:

28.05.2001 թ.

***

Սիրտս խոցել են մարդիկ,
Երգիս դուռը չի գոցվել,
Երազներով իմ անթիվ
Հոգուս գուռն է հնոցվել,
Իր մեջ առել բյուր աստղեր,
Երկինքների հմայքով,
Անցորդներին հմայել
Ու ջուր տվել հոգեթով:
Արյունս երգ, տենչս երգ,
Երգս դարձած ծիածան,
Քայլում եմ ես հերկից-հերկ,
Դարձած երգի սերմնացան:
Պիտի ծլի ու ծաղկի
Ու թեւածի վարդաբույր,
Խոսքս երբեք չի թախկի,
Կշողա ոնց աստղաբույլ:

18.10.02 թ.

ԻՄ ԵՐԱԶՆԵՐԸ

Եթե ձյուն դառնան,
Թող խաղաղ իջնեն հայրենի հողին,
Թե արեւ դառնան,
Թող մեր պապերի երազով օծվեն,
Թե դուռ ու դարպաս՝
Թող թշնամու դեմ հավիտյան գոցվեն:

Ա՜Խ, ԱՅՍ ԳԱՐՈՒՆԸ

Ա՜խ, այս գարունը՝ Դիցուհին այս խենթ,
Վառում է հոգիս, ու սիրտս է վառում,
Նա մերթ դառնում է սիրո անուշ երգ,
Ու մերթ էլ դեպի անդունդ է վարում:
Ա՜խ, այս գարունը՝ աղջիկն այս հուրսիրտ,
Խուժում է սիրտս, երազս շոյում,
Մերթ խոցում է նա արարքով իր բիրտ,
Ու մերթ փայփայում երազի ծովում:
Ա՜խ, այս գարունը՝ կյանքն այս հարահոսք,
Տակնուվրա է անում իմ հոգին,
Աստծո շունչն է նա՝ ջերմ ու բազմախոսք,
Նա է տենչանքի, ապրելու ոգին:
Ա՜խ, այս գարունը՝ սիրո շունչս տաք,
Այնպես է ծփում սիրող կրծքիս տակ,
Այնպես է ժպտում աղջկա նման,
Ասես իմ սերն է՝ միշտ հոգեհմա:

12.05.2002 թ.

ԱՉՔԴ ԼՈՒՅՍ, ՇՈՒՇԻ

Հայաստանի կամերային նվագախմբի՝ Շուշիում կազմակերպած տոնական համերգի առթիվ, որ կայացել է 2003 թ., հուլիսի 5-ին

Շուշի, կանթեղված մեր հավատի թեմ,
Աղոթքդ կրկին Աստծո հետ է,
Կրկին դարձել ես հայոց երգի բեմ,
Երգդ Թարթառն է, Իշխանագետն է,
Արաքսն է երգդ, Մասիսն է խրոխտ,
Քիրսն է Դիզակա, սեգ Արագածն է,
Հայկ Նահապետի ոգին է ըմբոստ,
Ապու Մուսեի թրի հարվածն է:
Աչքդ լույս, Շուշի, ու լույս՝ աչքը մեր,
Երգդ օծվում է աստղալույսերով,
Հայոց հանճարը առած հաղթ թեւեր,
Հոգիդ լցնում է վառման հույզերով:
Հրեշտակներ են հայոց դուստրերը,
Նրանց նվագը սարերն են լսում,
Նոր Արամներ են հայոց ուստրերը,
Նրանց նվագը դարերն են լսում:
Մեր բյուր երգերը՝ նուրբ ու հաղթական,
Մաքրում են անվերջ գերության փոշին,
Ազատ Արցախի բազուկը վկա,
Մասիսն էլ մի օր կայցելի Շուշի,
Մեր կոմիտասված երգը կշնչի
Նարեկա վանքում, լճափին Վանի,
Աղթամարի հին բակում կհնչի
Թրերով պարը Խաչատրյանի:
Հայոց երգերով առած նոր թեւեր,
Շուշի, աչքդ լույս ու լույս՝ աչքը մեր:

05.06.03 թ.

***

Երբ գնում եմ Հայաստան,
Ասես լինեմ պապունց տանը,
Մասիսն իմ պապն է կարծես,
Հեռվից իր մոտ է կանչում,
Արաքսն իմ տատն է ասես,
Ինձ նայում է, հառաչում,
Արարատյան դաշտն առատ
Ասես հորս մառանն է,
Կաթնասերը անարատ՝
Ասես մորս մերանն է:
Ամեն-ամեն-ամեն ինչ
Ինձ փարվում են մեղմ ու ջինջ,
Սակայն կարոտ մի անհուն
Նորից կանչում է ինձ տուն,
Ինձ Արցախն է միշտ գերում,
Ինչու այսպես է, մայրիկ,
Մայրիկս ասաց՝ Որդի ջան,
Մորդ կարոտն է բերում:

ՀՐԱՇՔ

Այս գիշեր, երազիս մեջ,
Գանձասար վանքն էր խոսում,
Թարթառը՝ ափերով պերճ,
Դեպի մեր բակն էր հոսում:

Խաչենը նուրբ թեւերով
Փարվել էր Ամարասին,
Գտիչը ճերմակ շորով,
Նման էր նորահարսի:

Մեր ոգին դարձած Առան,
Թշնամու թուրն էր ջարդում,
Հոռեկա վանքի դռան
Դավթակը երգ էր կարդում:

Նժդեհը՝ ձեռքը ուսիս,
Ժպտում էր մեզ հիացած,
Մռովից մինչեւ Մասիս
Փայլում էր մի ծիածան:

02.02.1991 թ., Երեւան

***

Հոգուս գույները առատ են ու խիտ,
Ես արեւից եմ այդ առել,
Լուսնից եմ առել, հեռու աստղերից,
Ծիածաններից՝ արքայավայել:
Այդ լեռներից եմ առել հայաշունչ,
Մեր անտառներից, դալար, մեղմօրոր,
Մեր աղբյուրներից ժայռածին ու պաղ,
Տատիս քնքշանքից, տագնապից իմ մոր:
Հորս ձեռքերից՝ հողոտ, հացաբույր,
Քույրերիս թախծից, եղբորս ցավից,
Իմ մանուկների երազից բոսոր,
Առաջին սիրուց իմ հեզահամբույր:
Հոգուս գույները ազգիս ցավերն են,
Երազանքներն են՝ չար աշխարհի դեմ,
Հայոց մեծերի հուսավառ երգն է,
Մտքի թռիչքն է՝ դարձած սյուն ու վեմ:

Հոգուս գույները երգիս մեջ փնտրեք,
Երգիս մեջ՝ ցավի եւ հույսի ծփանք,
Ցավի ու հույսի ճամփան ենք անցել,
Ցավը մեզ բաժին, իսկ հույսը մեզ կյանք:

16.02.04 թ.

ՄՈՐՍ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ Է

Մորս ծննդյան օրն է, տաղիկներ,
Տաղիկներ, հնչեք մորս քնքշանքով,
Մորս ծննդյան օրն է, շաղիկներ,
Շաղիկներ, շնչեք մորս քնքշանքով:

Մորս ծննդյան օրն է, արեգակ,
Արեգակ, շողա մորս ժպիտով,
Մորս ծննդյան օրն է, արուսյակ,
Արուսյակ, ցոլա մորս ժպիտով:

Մորս ծննդյան օրն է, ծաղիկներ,
Ծաղիկներ, բուրեք մայրիկիս շուրջը,
Մորս ծննդյան օրն է, բալիկներ,
Բալիկներ, շարվեք մայրիկիս շուրջը:

Եկեք՝ զարդարենք սուրբ գիրկը նրա,
Նա քնքշությունն է արար աշխարհի,
Եկեք՝ սփոփենք նուրբ սիրտը նրա,
Եկեք, թող նրա կյանքը երկարի:

1989 թ.

ՊԻՏԻ ԳՈՌԱՅԻ

Ես պիտի մի օր
Հզոր Միության
Նորածին շեմին
Գոռայի անվախ.
- Մի՛ խլեք ինձնից իմ Արցախ մորը,
Ինձ որբ մի՛ թողեք, մի նետեք հորը,
Ախր զավակն եմ
Ա՛յն հերոսների,
Որ ջահ են դարձրել երգը պայքարի,
Որ բանտերի մեջ տանջվել են, հյուծվել,
Հեղափոխության հիմներն են հյուսել,
Որ մայր Արցախը ազատ արարի:
Պիտի գոռայի.
- Ես մի արմատն եմ Հայոց աշխարհի,
Ախր ի՞նչ ունեմ գրկում օտարի,
Իմ հողի լեզուն թողեք ե՛ս կարդամ,
Թողեք իմ երկրին ես իմ սիրտը տամ,
Ե՛ս ուխտի գնամ իմ Գանձասարին,
Ե՛ս ելնեմ գահը իմ Մռով սարի,
Իմ Ամարասի դռանը խաչվեմ,
Իմ կրակի մեջ թողեք ես՛ խաշվեմ,
Շունչս հաց դարձնեմ, իսկ հոգիս՝ նոր երգ,
Դառնամ աշխարհը փայփայող մի ձեռք:
Պիտի գոռայի.
- Արդարությունը ինչո՞ւ եք կեղծում,
Ճշմարտությունը ինչպե՞ս եք եղծում:
Ինչո՞ւ եք ճյուղը հատում արմատից,
Ո՞նց եք փրկվելու դուք արդար Դատից:
Պիտի գոռայի,

Բայց «եղբայր» թուրքն իմ փոխարեն ճչաց,
Քծնեց ու փնչաց.
«Ի՛մն է Արցախը, Թարթառը իմն է,
Գանձասար կերտող հանճարը ի՛մն է,
Չտաք Արցախը, նավթից կզրկեմ,
Թե տաք՝ աշխարհը ձեզ հետ կփրկեմ»:
Եվ տվին, այո՛, տվին օտարին.
Իմ մայր Արցախը, Նախիջեւանը իմ,
Եվ արշալույսը լենինյան դարի,
Ինձ գերի դարձրեց կերտած տանը իմ:
Պիտի գոռայի,
Բայց չգոռացի...
Հիմա դարձել եմ ես կալանավոր,
Չեն թողնում ճչամ, ասեմ խոսքս նոր,
Չեն թողնում հարթեմ իմ գալիք ուղին,
Որ իմ թոռները միշտ քայլեն ուղիղ,
Չեն թողնում անգամ իմ վիշտը լացեմ,
Լացելով, նորից դռներս բացեմ,
Գոչեմ կարոտած, սիրող որդու պես.
«Իմ մա՜յր Հայաստան, միանում եմ քեզ»:
Սաստում են.
«Լռիր, ծայրահեղակա՛ն,
Ազգայնամոլ ես դարձել տեղական
Գործադուլների հեղինակն ես դու,
Պիտի պատժվես, այն էլ ահարկու,
Գոռում ես անվերջ. «Ի՜մն է Արցախը»,
Կորցրել ես անգամ քո սրտի վախը,
Ապացույց չունես, որ հողը քոնն է,
Որ օջախների վառ պողը քոնն է:
Հո մենակ դո՛ւ չես քո հոգին տանջում,

Վերակառուցման շահն է պահանջում.
Ուժեղին հավերժ ենթարկվել անզոր,
Որ Միությունը ապրի միշտ հզոր:
Պիտի գոռայի
Ես Խորհուրդների հենց արշալույսին,
Իզուր կառչեցի իմ խաբված հույսին...
Հիմա դարձել եմ ես կալանավոր...
Սակայն ելել է սերունդը իմ նոր,
Գոչում է ուժգին ողջ աշխարհով մեկ,
Որ թագավորը մերկ է, մորեմերկ,
Գոչում է, սրտից դեն նետած վախը,
Որ վիհից փրկի մեր մայր Արցախը:

26.04.1990 թ.,
Տնային կալանքի ժամանակ

* * *

Այս լույսի մեջ, այս արեւի,
Քո բարության ցոլանքը կա,
Այս ծաղկանց մեջ, այս հովերի,
Քո հարության խոյանքը կա:
Այս մանկանց մեջ, այս խաղերի,
Ժպիտներիդ շոյանքը կա,
Երգերի մեջ ու տաղերի,
Երազներիդ հորձանքը կա:

ԽՈՍՔ Ի ՍՐՏԵ

Մորս քաղցր լեզվի պես
Պետությունս թող խոսի,
Երակներով իմ հայկյան
Նրա ուժը թող հոսի:

Որ ամենուր ինձ զգամ
Տիգրան Մեծի պես հպարտ,
Որ չլացեմ, չսգամ
Ու չդառնամ թիապարտ,
Կպաշտպանեմ՝ ոնց որդի,
Կփայփայեմ ինչպես հայր...
Պետությունս է իմ ոգին
Եվ պատիվս լուսավառ:

13.02.2005 թ.

ԽՈՀԵՐ ՏԽՐՈՒԹՅԱՆ

Տխուր օրերը Աստծո պարգեւ չեն,
Աստծո մեծ սրտից լույսն է միշտ հորդում,
Աստծո տենչերը երբեք անթեւ չեն,
Աստծո տենչերն են մեր սրտի խորքում:

Տխուր օրերը չարերի գործն է,
Չարերն են անվերջ ոստայններ հինում,
Բարու երազը խնդության գորգն է,
Բարության ծովը աղտոտ չի լինում:

Բարին՝ հավիտյան թիրախն է չարի,
Չարի արարքը մերժումն է, ցավն է,
Բարին արարող լույսն է աշխարհի,
Չարի աշխարհը նենգության դավն է:

Բայց աստվածային առեղծվածն է խոր,
Աստծո մատյանը լույսի հեղեղ է,
Չարը քայլում է պարտված ու մոլոր,
Բարին հրաշք է եւ ամեն տեղ է:

Կյանքս հյուսել եմ բարության սիրով,
Բարության հունդը իմ սրտի մեջ է,
Չարին վառում եմ բարության հրով,
Ահա, թե ինչու սերն իմ անշեջ է:

23.07.2004 թ.

ՔԱՌՅԱԿՆԵՐ

***

Աստված մի օր իր մոտ կանչեց Խաչի պապիս,
Ասաց. «Բախտիդ դուռը բացեմ, նստիր թախտիս»:
Պապս ասաց. -«Ազգիս բախտի դուռը բացիր,
Կասեմ՝ Աստված, դու նման ես Գրիգոր պապիս»:

***

Դարերի մեջ ես իմ վանքը կերտեցի,
Բայց թշնամիք իմ երազը հերքեցին,
Աստվածները բարձրից տեսան, զարմացան,
Ու ծնկաչոք իմ կուռ կամքը երգեցին:

***

Իմ կորուսյալ Հայոց աշխարհ, իմն ես դու,
Թեկուզ իմ դեմ մի գոց-նշխար, իմն ես դու,
Արմատներդ օձ ու կարիճն են կրծում,
Իմ հոգու ցավ, իմ սրտի խար, իմն ես դու:

* * *

Շամանդաղդ՝ ժպտերես,
Այգաբացդ՝ վարդաշաղ,
Մի ծլունակ հարս բերես,
Տունս դառնա մանկաշատ:

* * *

Կինը որ կա, քայլող ծառ է, քայլող ծառին ես մատաղ,
Արեւի փայլ, շող ու զառ է, նրա զառին ես մատաղ,
Աստծո հրաշք ձեռքին մատաղ, որ կնոջն է ստեղծել,
Կինը մարդու հոգու լարն է, այդ նուրբ լարին ես մատաղ:

* * *

Հոգուս դառնության մատյանը բացել,
Ազգիս ցավերի էջերն եմ կարդում,
Այդ ցավերի մեջ ես աչք եմ բացել
Ու լուռ տառապել իմ ամբողջ կյանքում:

ԻՆՉՈ՞Ւ ԽՌՈՎԵՑԻՐ
(Երգ)

Հեռախոսը զրնգում է,
Հանկարծ վեր եմ թռչում տեղից,
Դռան զանգը ծլնգում է,
Փշրվում եմ հազար տեղից:

Ինձ կենդանի խորովեցիր,
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:

Երեկ անցա ձեր տան մոտով,
Այնպես դանդաղ, այնպես սահուն,
Խաչմերուկում մինչ երեկո
Ես քո ճամփան էի պահում:

Ինձ կենդանի խորովեցիր,
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:

Ժամանակս մոլորվել է,
Կանգ է առել ու չի հոսում,
Սիրուց արբած ամբողջ օրը,
Քո նկարի հետ եմ խոսում:

Ինձ կենդանի խորովեցիր,
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:

ՂԱՐԱԲԱՂ
(Երգ)

Ուր գնացել եմ, սիրել եմ ես քեզ
Ու մնացել եմ միշտ ղարաբաղցի,
Ընկերներիս հետ ազնիվ եղբոր պես,
Իսկ աշխատանքում քաջ ու առնացի:

Իմ ուժ ու ավյուն,
Իմ սիրտ ու արյուն,
Դու իմ հաց ու աղ,
Իմ մայր Ղարաբաղ:

Բոլոր գետերի շառաչների մեջ
Թարթառի ձայնն եմ լսել ամենուր,
Մռովի կարոտից սիրտս շիկնել է,
Ու ճաք է տվել որպես կարմիր նուռ:

Իմ ուժ ու ավյուն,
Իմ սիրտ ու արյուն,
Դու իմ հաց ու աղ,
Իմ հայր Ղարաբաղ:

Ես երկինքների կապույտ գավաթով
Քո աստղոտ երկնի հայացքն եմ խմել,
Այգիների մեջ թվացել է, թե
Ինձ օրորում են բարդիները մեր:

Իմ ուժ ու ավյուն,
Իմ սիրտ ու արյուն,
Դու իմ հաց ու աղ,
Իմ մայր Ղարաբաղ:

Իմ նախապապի հին քարանձավը
Եվ իմ հոր լուսե օջախը վկա,
Որ այս աշխարհում իմ հոգու համար
Քեզնից թանկ ու սուրբ մի անուն չկա:
Իմ ուժ ու ավյուն,
Իմ սիրտ ու արյուն,
Դու իմ հաց ու աղ,
Իմ մայր Ղարաբաղ:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ
(Երգ)

Մեր գյուղը՝ սարի լանջին,
Լուսինը՝ օղ ականջին,
Աղբյուրը ձեռքին քնար,
Առվակը՝ զնգուն մի լար:

Թե սիրտս էլ ուզի կտամ,
Մեր գյուղը՝ սարի լանջին,
Նա մորս շունչն է տաք,
Եվ սերը իմ առաջին:

ՕՐԵՐԻՍ ՀԵՏ (1960-2010)

Օրերը կանաչ-կարմիր,
Շորերը վարդ ու կակաչ,
Կրծքի տակ հազար երազ,
Իմ հոգուն մոտ ու ճանաչ:

Քրտնաջան իր վաստակով
Դարձել է նա երգ ու տաղ,
Ապրում է փառք ու պատվով,
Ես նրա պատվին մատաղ:

Աստված իմ, ով է արարել հայոց «Դլե-յաման» երգը, որ այնպես վառում է մեր սրտերը եւ միաժամանակ սփոփում անանցանելի մեր ազգային ցավը

ԱՐՄԵՆ ԵՎ ՆԱՆԱՐ

Մեր թոռ Արմենի եւ Նանարի հարսանյաց հանդեսի առթիվ, որ տեղի է ունեցել 2009թ. օգոստոսի 30-ին:

ԱՐՄԵՆ

Իմ դիցուհի, իմ լավ Նանար,
Աշխարհ եկար դու ինձ համար,
Ինչ էլ լինի, ուր էլ գնանք,
Գարուն լինի կամ թե ամառ,
Ձմռան ցրտին, աշնան գրկում,
Պիտի կապես ոսկե կամար
Մեր սրտերի, հոգու միջեւ,
Ով իմ Նանար, իմ ոսկեթեւ:

ՆԱՆԱՐ

Ճիշտ ես ասում, ով իմ Արմեն,
Քեզ սիրեցի սրտիս կանչով,
Աստվածն օրհնեց, ասաց՝ Ամեն,
Մայրս ասաց՝ սիրիր սրտով,
Հայրս ասաց՝ գնա ճամփով
Քո երազի,
Քույր ու եղբայր հավանեցին,
Ասին՝ հասիր քո մուրազին...
Սիրում եմ քեզ սրտիս խորքից,
Չենք հեռանա իրար կողքից:

ԱՐՄԵՆ

Քեզ սիրելը քիչ է, Նանար,
Ես կդառնամ քո աղբյուրը,
Սիրտդ շոյող քո համբույրը,
Քո երեկոն, լուսաբացը.
Մեր անարատ սիրո հացը,
Մեր հավատի օրհնված աղը,
Մեր երազի շամանդաղը:

ՆԱՆԱՐ

Դու իմ հույսը, ես քո՝ լույսը,
Ես քո երգը, դու իմ հույզը,
Ես քո վարդը, դու իմ սարը,
Դու իմ սիրո նուրբ քնարը,
Դու՝ դյուցազուն իմ սիրակեզ,
Քո գիրկը ինձ, իմ սիրտը քեզ:

ԱՐՄԵՆ ՈՒ ՆԱՆԱՐ

(միասին)

Մենք սիրեցինք սրտով, հոգով,
Ու կլինենք միշտ միասին,
Այնպես կապրենք, որ բոլորը
Սիրով խոսեն միշտ մեր մասին:
Կդառնանք յոթ զավակի տեր,
Որ շատանա հին ազգը մեր,
Որ բուրի մեր օջախը սուրբ,
Որ ծաղկեն մեր սարերը լուրթ,
Դառնանք թոռան ու ծոռան տեր,
Ամուր պահենք դաշինքը մեր,
Որ զորանանք տասնապատիկ,
Ոնց Արցախի պապ ու տատիկ:

ՆԱՆԱՐՆ ՈՒ ԱՐՄԵՆԸ

ԱՐՄԵՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ

Մեր թոռնուհի Արմինեի եւ փեսա Արմենի հարսանյաց հանդեսի առթիվ, որ տեղի է ունեցել 2009թ. նոյեմբերի 30-ին:

ԱՐՄԵՆ

Իմ Արմինե, երբ քեզ տեսա,
Սիրտս ասաց՝ նա է, որ կա,
Հոգիս գոչեց՝ ի՜նչ լավ հասար
Քո երազած այդ աղջկան:
Արմինե ջան, չեմ թաքցնում,
Աստծո կոչով եկա քեզ մոտ,
Հենց առաջին հանդիպումից
Դու շողացիր ոնց առավոտ:

ԱՐՄԻՆԵ

Ցավող ատա՞մ ունես, ասա,
Շատ չե՞ս խոսում, նստիր, բուժեմ:

ԱՐՄԵՆ

Չէ, Արմինե, ատամս չէ,
Սիրո ցավն ինձ քեզ մոտ բերեց...

ԱՐՄԻՆԵ

Չեմ թաքցնում, գիտե՞ս, Արմեն,
Քո խոսքն էլ իմ սիրտը գերեց:

ԱՐՄԵՆ

Ես Արմեն եմ, դու՝ Արմինե,
Մեր հին ազգի անունով,
Պիտի անցնի մեր օրն ամեն
Քաղցր սիրո լուսե հունով,
Աստծո ձեռքը մեր գլխին

Միշտ կլինի հովանի,
Սիրո երգը՝ մեր շրթին,
Մեզ նոր ափեր կտանի:

ԱՐՄԻՆԵ

Ես՝ Արմինե, դու՝ Արմեն,
Ես քեզ սրտով սիրեցի,
Բարձրահասակ Արմեն տղա,
Դու իմ սիրտը գերեցիր...
Երբ տալիս եմ անունը քո
Սիրտս թեւեր է առնում,
Երազներով իմ հոգեթով
Աստվածուհի եմ դառնում:

ԱՐՄԵՆ

Ճիշտ ես ասում, իմ Արմինե,
Իմ դիցուհին ես դարձել,
Ինձ թվում է, թե ողջ կյանքում
Մենք մի տան ենք մեծացել,
Թվում է, թե մեր պապերը
Մեր օրորոցն են խազել,
Թվում է, թե մանկությունից
Մեր մեծ սերն ենք երազել:

ԱՐՄԻՆԵ

Քո խոսքերը, իմ Արմեն,
Սրտիս միջով են անցնում,
Ինչ որ ես եմ ուզում ասել,
Խոսքս դու ես լրացնում...
Քնած լինեմ, թե արթմնի,
Թեւ եմ առնում քո կանչով,

Երազները իմ նորօրյա,
Ջերմանում են քո շնչով:

ԱՐՄԵՆ - ԱՐՄԻՆԵ

(միասին)

Մի Արմինե, մի Արմեն,
Մի սիրտ ենք ու մի հոգի,
Ճանապարհը մեր կանցնենք
Միշտ միասին, կողք-կողքի...
Մայր Արցախի գրկի մեջ
Յոթը զավակ կունենանք,
Ծնողները մեր անգին
Կդառնան մեծ տատ ու պապ:
Մի նոր օջախ ենք հյուսում՝
Մի Արմինե, մի Արմեն,
Մեր մեծ սիրո դաշինքին
Աստված ասում է՝ ԱՄԵՆ...
Համբույրներով սրտաբուխ,
Մենք էլ կրկնում ենք՝ ԱՄԵՆ:

ԱՐՄԻՆԵՆ ՈՒ ԱՐՄԵՆԸ

ԴԱՎԻԹ ԵՎ ԱԼԻՆԵ

*Իմ հարեւան Արմոյի որդի **Դավիթի եւ Ալինեի***
հարսանյաց հանդեսի առթիվ

ԴԱՎԻԹ

Սիրտս քո առջեւ բաց է, Ալինե,
Քեզ համարում եմ լույսը իմ ճամփի,
Կանցնեն օրերը, կանցնեն տարիներ,
Դու միշտ կլինես արեւը կյանքիս:

ԱԼԻՆԵ

Սասունցի Դավթի թոռնիկն ես, Դավիթ,
Խանդութ-Խաթունդ ես եմ այս օրից,
Ինչ էլ որ լինի, ես քեզ չեմ դավի,
Ինձ համար բարձր կլինես բոլորից:

ԴԱՎԻԹ

Իմ վարդը դու ես, իմ զարդը դու ես,
Հոգիս ջերմացնող կրակը դու ես,
Գեղեցիկ աչքեր շատ կան աշխարհում,
Իմ սիրտը գերող հրակը դու ես:

ԱԼԻՆԵ

Իմ Մասիս սարն ես, իմ սեգ Մռավն ես,
Իմ Խաչեն գետն ես, իմ հորդ Թարթառն ես,
Շատ են աշխարհի սիրո երգերը,
Իմ սիրո քաղցր բարբառը դու ես:

ԴԱՎԻԹ

Սիրտս ափիդ մեջ, հոգիս՝ քո հոգում,
Կապրենք միասին՝ միշտ փարված իրար,
Յոթը մանուկներ կունենանք կյանքում,
Որ մեր բերկրանքը լինի անսպառ:

ԴԱՎԻԹ - ԱԼԻՆԵ

(միասին)

Մեր սերը վառ է, վարդերի բույր է,
Սիրո ժպիտ ու սիրո համբույր է,
Յոթը մանուկներ կունենանք, այո՛,
Որ ասենք՝ Արցախ, մենք քո որդին ենք,
Մեր զավակներով միշտ քո կողքին ենք:

21.08.2008 թ.

ՍԱՄՎԵԼ ԵՎ ՄԱՐԻՆԵ

Մեր Մարինեին եւ Սամվելին՝ իրենց հարսանյաց հանդեսի առթիվ

ՍԱՄՎԵԼ

Եթե վառվեմ, վառվեմ սիրուդ արեւի մեջ,
Եթե թեւեմ, թեւեմ սրտիդ թրթիռներով,
Թե կարոտեմ, միշտ կարոտեմ լույսիդ անշեջ,
Թե սլանամ, քո երազի հրթիռներով:

ՄԱՐԻՆԵ

Եթե աստղ դառնամ, միայն սիրուդ ճամփին,
Եթե աղբյուր դառնամ, կոտրեմ ծարավը քո,
Իմ ջերմությամբ միշտ էլ վառեմ բախտիդ արփին,
Թե զով դառնամ, միայն շոյեմ հայացքը քո:

ՍԱՄՎԵԼ

Օրս բացվի քո սրտաբուխ «բարի լույսով»,
Իմ երեկոն գա ու փարվի քո ուսերին,
Բաղձանքներս ծիածանվեն քո վառ հույսով,
Երազներս գան-գումարվեն քո հույզերին:

ՄԱՐԻՆԵ

Իմ պատիվը կզարդարվի պատվիդ ոսկով,
Իմ անունը կդառնա քո կանչը սրտիդ,
Իմ տենչերը թեւեր կառնեն սրտիդ խոսքով,
Կյանքիս ծառը բարիք կտա քո ջերմ գրկին:

ՄԱՐԻՆԵ - ՍԱՄՎԵԼ

(միասին)

Մեր սրտերի կանչով միայն իրար գտանք,
Կյանքի դռնով երազների փնջով մտանք,
Մանուկներով կզարդարենք օջախը մեր,
Ծնողք ու ազգ նաեւ մեզնով կառնեն թեւեր:

Մեծ Պառնի, 18.12.2005

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ

Նվիրում եմ Արմինեին եւ Գագիկին
նրանց հարսանյաց հանդեսի առթիվ

ԳԱԳԻԿ

Տիեզերքի մեջ փնտրեցի աստղեր,
Փնտրեցի ջահը իմ երազ բախտի,
Որոնումս ինձ նվիրեց թեւեր,
Հիմա հասել եմ իմ սիրո թախտին:

ԱՐՄԻՆԵ

Փարվանա արքան իմ հայրն է, որ կա,
Մայրս Անահիտ-երազ Դիցուհին,
Իմ դեմ կտրիճներ շատ ծնկի եկան,
Բայց սերս գտա օրենքով մեր հին:

ԳԱԳԻԿ

Դու Անահիտի դուստր Արմինե,
Դու հայոց սիրո մեղրահամ գինի,
Սրտով եմ սիրո իմ գորգը հինել,
Սիրտս քեզ ընծա, ոնց սիրո սինի:

ԱՐՄԻՆԵ

Դու իմ սիրելի, իմ Գագիկ արքա,
Սերը միշտ սեր է բերել աշխարհում,
Խոսքի փոխարեն իմ սիրտն է վկա,
Ես քո սիրով եմ աստղեր արարում:

ԱՐՄԻՆԵ - ԳԱԳԻԿ

(միասին)

Մենք երազով ենք գտել իրարու,
Օջախի հուր է մեր սերը անգին,
Մեր սիրո ջահը՝ հավերժ վառվռուն,
Պատիվ պիտ բերի ե՛ւ մեզ, ե՛ւ ազգին:

31.06.1998թ.

ԱՐՏԱԿ ԵՎ ԼԻԼԻԹ

Նվիրում եմ Միրզոյան Արտակին եւ Լիլիթին,
իրենց հարսանյաց հանդեսի առթիվ:

Արտակն ասաց՝ Սիրտս առար,
Ես ի՞նչ անեմ, իմ Լիլիթ:
Լիլիթն ասաց՝ Սերս առար,
Քո բաժինն է, իմ իգիթ:
Արտակն ասաց՝ Այս գարունը
Քո անունն է շշնջում:
Լիլիթն ասաց՝ Իմ նուրբ սիրտը
Քո անունով է շնչում:
Արտակն ասաց՝ Սերը լույս է,
Բայց քո լույսն է ինձ կանչում:
Լիլիթն ասաց՝ Սերը հույս է,
Քո հույսով եմ կանաչում:
Արտակն ասաց՝ Դեռ չեմ սիրել,
Դու իմ սերն ես առաջին:
Լիլիթն ասաց՝ Դու իմ սերն ես
Թե առաջին, թե վերջին:
Արտակն ասաց՝ Դու իմ վարդն ես,
Ես քո բլբուլն եմ՝ սիրող,
Լիլիթն ասաց՝ Դու իմ կյանքն ես՝
Ինձ արեգակ նվիրող:
Ու սիրտ-սրտի տվին նրանք,
Ու սեր տվին - սեր առան,
Վկայությամբ մեր ամենքիս
Երկուսն էին՝ մեկ դառան:
Եկեք՝ ասենք շնորհավոր,
Ձեր սերը ծով մի անտակ,
Ապրեք մեկտեղ ու փառավոր,
Մեր Լիլիթ ու մեր Արտակ:

18.08.2002 թ.

ՊԱՎԵԼ ԵՎ ԷԼԻՆԱ

Էլինայի եւ Պավելի հարսանյաց
հանդեսի առթիվ...

Սիրո հեքիաթը սրտերից ծնվեց
Եվ օծվեց լույսով աստղաբույլերի,
Սերը նուրբ սրտի վառ սիրով սնվեց,
Եվ իմաստ բերեց ծաղկաբույլերին:
Սիրո լեգենդը դարերի խորքում
Հերոսներ դարձրեց սիրող սրտերին,
Սերը ծփում է սիրողի հոգում
Եվ կրակ դառնում անգամ ցրտերին:
Աշխարհում եղան Ռոմեո, Ջուլիետ,
Կրակված Մեջնուն, նրբասիրտ Լեյլի,
Սերը դարձավ եւ կարոտի հորդ գետ
Սայաթ-Նովայի սրտում թախծալի:
Սիրո դարավոր ծովից ուժ առան
Մեր նուրբ էլինան ու Պավելը քաջ,
Մեկ-մեկու համար արեւներ դառան,
Որ սիրո այգին միշտ պահեն կանաչ:
Թող նրանք պաշտեն պատիվը հայոց,
Միշտ բորբոք պահեն հուրը օջախի,
Դառնան ծնողներ իմաստուն որդոց,
Ոնց Տատն ու Պապը մեր հին Արցախի:
Թող ծնողներին պաշտեն ու հարգեն,
Դառնան թոռների ու ծոռների տեր,
Թող նրանց ճամփան լույսերով հարթեն,
Պարգեւեն անվերջ ե՛ւ հարգանք, ե՛ւ սեր:
Թող մեկտեղ բազմեն սիրո լույս գահին,
Եվ միասին մեկ բարձի ծերանան,

Օրինակ դառնան Արցախ աշխարհին,
Որ սիրողները տեսնեն. հիանան:
Սիրով են կոփվել սիրո թեւերը,
Սերն է այս կյանքը դարձրել քաղցր երգ,
Թող Էլինայի-Պավելի սերը
Արեւով թրծվի, դառնա նոր լեգենդ:

04.02.2009 թ.

ԱՐՄԵՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ

Սուզայի եւ Բիոլետայի դուստր Ռուզանին եւ Արմենին՝
նրանց հարսանյաց հանդեսի առթիվ

Քիրսա սարի հայացքի տակ,
Օրհնանքի տակ Գտչավանքի,
Թող ձեզ փարվի արեւը տաք,
Թող փայլի ձեր աստղը կյանքի:
Մեկտեղ անցնեք միշտ ձեր ճամփան,
Թող ծերանաք մի սուրբ բարձի,
Հար վաստակեք պատիվ, համբավ
Ու միշտ հասնեք լավին, բարձրին:
Յոթ բալիկի ծնող դառնաք,
Յոթ անգամ յոթ թոռների տեր,
Լինեք ինչպես գիրկը գարնան,
Միշտ ստանաք համբույր ու սեր:
Մեծ Թաղերի պապերի պես,
Այաների պես նրբասիրտ,
Ձեր օջախը պահեք միշտ կեզ,
Ձեր գյուղը՝ շեն, արեւանիստ:
Համբուրում եմ ճակատը ձեր,
Նուրբ Ռուզան ու քաջ Արմեն,
Թող աստված ձեզ տա հաղթ թեւեր,
Քրիստոսը ասի՝ Ա մ ե ն...

22.09.1995թ., գ. Մեծ Թաղեր

ԷԴՎԱՐԴ ԵՎ ԱՆՈՒՇ

Անուշ Աթայանին եւ Էդվարդին՝ նրանց ամուսնության առթիվ

Մեր Անուշը, մեր դուստրը հուր,
Երեկ փոքրիկ, այսօր հարս է,
Երեկ կոկոն վարդերի քույր,
Այսօր աստղ ու ոսկեվարս է:
Երեկ երազ՝ տենչերի բույլ,
Այսօր օջախ պահող կրակ,
Երեկ եղբոր աննման քույր,
Այսօր մի նոր տոհմի երակ:
Երեկ տիկնիկ սիրող աղջնակ,
Այսօր զուգված մի թագուհի,
Երեկ միայն մորը սիրող,
Այսօր կիսուր պաշտող հարսիկ:
Երեկ հորն իր թեւավորող,
Այսօր նաեւ կեսրար հարգող,
Երեկ ուսանողուհի նազող,
Այսօր քաջն էդվարդ սիրող:
Մեր Անուշը, մեր ընտիրը,
Թող որ դառնա քաղցր տատիկ,
Մեր էդվարդը, մեր իգիթը,
Թող որ դառնա բարձր պապիկ:
Թող միասին օջախ պահեն,
Արցախ պահեն միշտ շողշողուն,
Դառնան թոռ ու ծոռան տերեր,
Հերոսածին Հայոց հողում:
Շնորհավոր ասենք սրտանց,
Սիրո արեւ մաղթենք հոգով,
Երբ էլ լինի, ուր էլ լինի,
Կյանք վայելեն պար ու երգով:

15.11.2003 թ.

ԼԵՌՆԻԿ ԵՎ ԱՐԻՆԱ

Լեռնիկ ՂԱԼԱՅԱՆԻ եւ Արինայի
հարսանյաց հանդեսի առթիվ

Լեռնիկ, ասել է լեռների որդի,
Մասիս ու Մռով, Քիրս ու Արագած,
Արինա, ասել է սիրո լույս ոգի,
Ամուսնու ճամփին՝ հավերժ ճառագած:
Լեռնիկը իր տան պատերը դրսի,
Արինան՝ ճրագը օջախի ներսում,
Թե ձյուն էլ լինի, մեկտեղ չեն մրսի,
Մեկտեղ կդառնան թե վեմ ու թե սյուն:
Լեռնիկ, ասել է մանկանց բարի հայր,
Արինա՝ մանկանց մայրիկ սիրասուն,
Լեռնիկն իր երկրի քաջն զինվորյալ,
Արինան Խանդութ՝ Արցախից-Սասուն:
Լեռնիկն՝ իմաստուն որդի եւ փեսա,
Արինան՝ դուստր եւ գթասիրտ հարս,
Մեկը թշնամուն հնձող մի հեսան,
Մյուսը՝ տան սերուցք ու բերկրանքի հաս:
Երկուսը մեկտեղ ծուխը ծխանի,
Տոհմի առողջ ճյուղ եւ ազգի պատիվ,
Աստված նրանց դեմ թող աստղեր ցանի,
Եվ միշտ պարգեւի բարիքներ անթիվ:
Իսկ մենք՝ մեր սրտի իղձերն անարատ
Մաղթում ենք նրանց ինչպես սիրո երգ,
Եվ ապաշխարում Աստծուն գթառատ,
Նրանց պարգեւի միշտ բարիք ու բերք:

25.08.2001 թ.

ԿԱՐՈ ԵՎ ՄԱՐԻՆԵ

*Նվիրում եմ հարեւանիս դուստր ՄԱՐԻՆԵԻՆ
եւ ԿԱՐՈՅԻՆ՝ նրանց հարսանիքի առթիվ:*

Լեռներ, մեր սեգ լեռներ,
Պար բռնեցեք այսօր,
Ծափ զարկեցեք այսօր:
Գետեր, մեր հորդ գետեր,
Հովեր, մեր զով հովեր,
Սիրո երգեր երգեք,
Սիրո հերկեր դարձեք:
Ծովեր, կապույտ ծովեր,
Աստղեր, պայծառ աստղեր,
Նուրբ ժպտացեք, վառվեք:
Համբուրվեցեք, փարվեք,
Ծառեր, դալար ծառեր:
Բաժակները առեք,
Բարեկամներ արի,
Թող այս հարսանիքը
Անցնի ուրախ, բարի,
Խմենք կենացները,
Մեր զույգ ծաղիկների,
Ասենք՝ ապրեք սիրով,
Մարինե եւ Կարո:

03.10.1982 թ.



Հարեւանիս՝ ինժեներ Էդվարդ ԱՂԱԲԱԼՅԱՆԻ հետ - Մարինեի եւ Կարոյի հարսանիքի ժամանակ

ՈՎ ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

ՄԱՐԻԱՄԻՆ

Ով սիրուն աղջիկ, երբ քայլում ես դու,
Ճամփան ժպտում է սիրահարի պես,
Խուտուտ է գալիս մեջքը նուրբ հողի,
Եվ խոնարհվում է երազկոտ ու հեզ:

Ով սիրուն աղջիկ, այգը ժպտում է,
Երբ առավոտյան ելնում ես տնից,
Լուսաստղը երկնում ասես քրտնում է,
Երբ արթնանում ես քո քաղցր քնից:

Ով սիրուն աղջիկ, ամպերն են ցրվում,
Երբ նախատում ես գալուստը նրանց,
Քո մեղմ հայացքից արտերն են ծլում,
Վարդերն են թացվում կարոտով անանց:

Ով սիրուն աղջիկ, երբ խոսում ես դու,
Ասես հնչում է ձայնը Մարիամի,
Երգը ծփանք է տալիս իմ հոգում,
Աստվածանում եմ ասես այդ ժամին:

Ով սիրուն աղջիկ, ժպտա աշխարհին,
Այս ի՞նչ հրաշք ես, սատանան տանի,
Մեկ-մեկ էլ եղիր իմ հանդեպ բարի,
Քո չեմ ու չումով ինձ մի սպանիր:

14.09.2008

ՍՐՏԻ ԽՈՍՔ

Սիրո կարոտը սրտից է բխում,
Սրտից է ծնվում սիրո մրմուռը,
Ով սիրո տեր է՝ աստծո օրհնանքով,
Նա է միշտ բախում իր Սիրո դուռը:
Կյանքը հրաշք է. հրաշք է սերը,
Իսկ սիրո աստղը դու ես, դու, իմ Սեր,
Երանի մի օր սիրտս մտնեիր
Ու տեսնեիր քո պատկերը լուսե,
Տեսնեիր, որ քո անունը հիմա
Գրված է սրտիս երանգների մեջ:
Արդար չէ բախտը, մեկին շոյում է,
Մյուսին թողնում կրակների մեջ...
Մեղք չունեմ, անգին, որ տենչում եմ քեզ,
Սերն առեղծված է՝ առասպելի պես:

21.11.2009

***

Աշխարհն առած ոտքերիս տակ,
Գարունները աչքերիս մեջ,
Դարձել եմ ես քո գիրկը տաք,
Ու բացում եմ սիրտս քո դեմ:

Հոգնում եմ ես ամեն ինչից,
Բայց իմ սիրուց չեմ ձանձրանում,
Դու ամեն օր դառնում ես նոր
Եվ ամեն օր խիստ քաղցրանում:

ՎԵՐՀՈՒՇ

Վարդերն առել ամեն գարնան,
Թերթիկներն եմ մեկ-մեկ պոկել,
Անրջել եմ. կգա, չի գա,
Ու չես եկել, ու չես եկել:

Չեմ կորցրել ես իմ հույսը,
Այն բորբոք եմ պահել անվերջ.
Քո պատկերը որոնել եմ
Իմ հոգու եւ իմ սրտի մեջ:

Սպասել եմ, եւ եկել ես,
Փայփայում եմ քեզ ջերմագին,
Մինչեւ հիմա երազ էիր,
Հիմա կյանք ես դարձել, անգին:

***

Ոչ թողեցիր քեզ լավ սիրեմ,
Ոչ թողեցիր քեզ մոռանամ,
Ոչ ինքդ՝ դու, ինձ տիրեցիր,
Ոչ թողեցիր ես տիրանամ:
Ոչ այրվեցիր, ոչ այրեցիր,
Ոչ թողեցիր ես վառեմ քեզ,
Չգիտեի ինչ անեի,
Հասկանալը դժվար էր քեզ:
Նույն աշխարհն է, նույն ծփանքը,
Եվ նույն սիրո շքերթն է վառ,
Բայց այդ սիրո շքերթի մեջ
Ոչ զինվոր եմ, ոչ զորավար:

***

Մի թեւավոր թռչուն էիր դու ինձ համար,
Երգում էիր իմ հոգու մեջ, սրտիս վրա,
Ինքնամոռաց լսում էի ձայնդ զուլալ,
Եվ գոհ էինք, որ գտել ենք կյանքում իրար:
Սակայն, ավա՜ղ, մի քար կպավ այն նուրբ ճյուղին,
Որին նստած երգում էիր՝ ինձնով տարված,
Թփրտացին քո թեւերը, ձայնդ խզվեց,
Իմ կարոտը տարար քեզ հետ՝ սրտիդ փարված:
Եվ դարձել ես միայն պատրանք դու ինձ համար,
Այդ պատրանքը ես պահում եմ կոպերիս տակ,
Քուն թե արթուն երեւում ես աչքերիս մեջ,
Նվիրելով սիրո բերկրանք:

***

Իմ խոհերի աշխարհում
Նույն աղջիկն ես թխադեմ,
Կյանքն ինձ ուր էլ տանում է,
Գալիս, կանգնում ես իմ դեմ:
Շոյում ես իմ մազերը,
Անմեղորեն ինձ ժպտում,
Ալիքվում են նազերդ
Քեզ երազող իմ սրտում:
Հոգնած ձեռքերս առնում,
Հպում ես վարդ շրթերիդ
Ու ես թեւեր եմ առնում,
Հասնում աստղոտ եթերին:
Իսկ երբ հիվանդ եմ լինում,
Մոտս կանգնում ես տրտում,
Աղավնաթեւ մատներով

Իմ արցունքներն ես սրբում:
Ինչ էլ որ ինձ պատահի,
Գիտեմ, գիտեմ, դու կգաս,
Ինձնից հեռու եւ ինձ հետ,
Այս ինչ լավ է, որ դու կաս:

***

Մեր սարե՞րը մեզ հուշեցին
Սիրո երգը, թե՞ վարդերը,
Մեր ծառե՞րը, ջրե՞րը մեր,
Թե՞ հերարձակ մեր արտերը:

Լեռան լանջից փչող հո՞վը,
Թե՞ հավքերը՝ լուսաբացին,
Գիշեր ու տիվ անքուն ծո՞վը,
Տիեզե՞րքը անծայրածիր:

Չեմ կասկածում՝ մեր սիրո մեջ
Խառն է դրանց մեկի ձեռքը,
Թե չէ այսպես նուրբ ու քաղցր
Չեր հնչի մեր սիրո երգը:

ՍԵՐ ԻՄ

Սիրելիս, կանգ առ, թող խոսքս ասեմ,
Չեմ կարող թաքցնել, որ քեզ եմ սիրում,
Ախր ի՞նչ եղավ, ասա ինձ, լսեմ,
Չէ՞ որ այդ դու ես իմ սրտին տիրում:

Այս քանի՞ օր է, սպասում եմ քեզ,
Սակայն դու չկաս, դու չես երեւում,
Տեսնելիս անգամ ինձնից շրջվում ես,
Ես ողջունում եմ, դու չես բարեւում:

Գոնե երգիս մեջ թող քեզ փայփայեմ,
Երգիս մեջ գոնե զգամ շունչը քո,
Քեզնով հմայված աշխարհին նայեմ,
Քեզնով աշխարհը սիրեմ հոգեթով:

***

Սիրուս ջահը քեզ եմ մեկնել,
Վառի՜ր, վառի՜ր,
Սիրուդ ծովում սիրուս նավը
Վարի՜ր, վարի՜ր,
Սիրտս վերցրու ափերիդ մեջ՝
Նուրբ ու բարի,
Կարոտել եմ այդ ամենին,
Արի՜, արի՜:

***

Սիրո ստվերները
Թանձրանում են իմ մեջ,
Դառնում գարնան ծաղիկ,
Աչիկներով կապույտ,
Ես խենթ պատանու պես
Արբում եմ այդ ծաղկով,
Ու փայփայում նրան
Ծարաված ու անփույթ:
Սիրո ստվերների խտացումը դու ես,
Դու ես այդ ծաղիկը
Իմ երազում, կյանքում,
Քո անունն է շրթիս
Դառնում շշունջ ու երգ,
Հոգուս հանգիստ բերում,
Երբ մնում եմ անքուն:

ԼԻԼԻ

Սիրում եմ քեզ, սիրում, Լիլի,
Ախր մեղքս ինչպե՞ս թաքցնեմ,
Կրակներս քո շնչով լի,
Ասա, Լիլի, ինչպե՞ս հանգցնեմ:
Դու աղջիկ չես մի հասարակ,
Երազների հյուսվածք ես դու,
Հույսի դուռ ես լուսապարար,
Որ հաճախ չի տրվում կյանքում:
Ժպիտներդ այնպես տխուր,
Տխրությունդ շողոտ այնքան,
Նազանքներդ փշուր-փշուր,
Ու երազկոտ քայլերդ անգամ:
Թվում է, թե աստղ ես՝ իջած
Բարձունքներից տիեզերքի,
Որ եկել ես իմաստ տալու
Իմ տենչերին եւ իմ երգին:
Սիրում եմ քեզ, սիրում, Լիլի,
Սիրո մեղքս ինչպե՞ս թաքցնեմ,
Քո պարգեւած կրակների
Անտես հուրը ինչպե՞ս հանգցնեմ:
Այս աշխարհում՝ վարդերով լի,
Իմ հեքիաթի վարդն ես, Լիլի:

05.06.1994

ԿԱՊՈՒՏԱՉՅԱ ԻՄ ԵՐԱԶ

Կապուտաչյա իմ երազ, իմ կապույտ թռչուն,
Իմ ողջ կյանքում որոնած հեքիաթի հրաշք,
Քո անունը կարոտիս շրթին է հնչում,
Իսկ քայլերս դարձել են քեզ որոնող աչք:
Քեզ տեսնելուց բարեւս առնում է թեւեր
Ու դառնում է սիրատենչ ճերմակ աղավնի,
Իմ տոչորված բառերը դառնում են հուրիեր,
Ես չգիտեմ, թե ճամփան ինձ ուր կտանի:
Երգ եմ գրում, տենչում եմ, որ սիրտդ շոյի,
Կոկոն վարդ եմ տեսնում ես, թվում է՝ դու ես,
Այդպես Աննան է վառել իր Սայաթ-Նովին
Ու կրակի մեջ նետել սիրո երգի պես:
Ես չգիտեմ, թե ինչու քեզ հանդիպելիս
Սիրտս թփրտում է լուռ ու հալվում անբառ,
Դե, ի՞նչ արած, թող այդպես լինի, իմ անգին,
Կյանքի օրենքն է այդպես՝ եւ՛ քաղցր, եւ՛ դառն:
Սիրող սիրտը միշտ Աստծո կրակի մեջ է,
Արժե աստծո կրակում կիզվել ինքնակամ,
Ոտքից-գլուխ այս կյանքը արեւոտ տենչ է,
Որ երազ է պարգեւում թախծի մեջ անգամ:
Ես չգիտեմ, թե կյանքը մեզ ուր կտանի,
Սակայն հաստատ ես գիտեմ՝ Դու ես իմ ոգին,
Աստված թող քո ճամփեքին արեւներ ցանի,
Չմոռանաս դու երբեք, որ կամ քո կողքին:

15.04.2007

ՍՊԱՍՈՒՄ

Սպասում էի, որ իմ երազած,
Իմ աստվածային Սերը կայցելի,
Կգա՝ աստղահյուս ձեռքերը պարզած,
Կգա եւ կասի՝ սերս վայելիր:
Սպասում էի թրթիռով սրտի,
Սպասում էի՝ այրումով վստահ,
Սպասում էի՝ տապին ու ցրտին,
Սիրտս ասում էր՝ ուր որ է, կգա:
Բայց թեւին տվին իմ տարիները,
Եվ իմ ճերմակած քունքերը տեսա,
Մինչեւ կայցելեր իմ երազ-Սերը,
Իմ ծերությունը դռներիս հասավ:

27.03.2008

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Նկարդ թաքուն եմ պահում,
Որ նորից չվառվի հոգիս,
Տխուր եմ այս լուսե աշխարհում,
Երբ չկաս, երբ չկաս կողքիս:
Չգիտեմ՝ ո՞ր մեղքիս համար,
Մեր Տերը քեզ խլեց ինձնից,
Իմ սիրո հուրն էիր անմար,
Առաջին բառն էիր սիրո:
Աստծուն շատ էիր նման,
Հայացքդ լուսնային շող էր,
Բարեսիրտ Աստծուն նման,
Համբույրդ կենսաբեր ցող էր,

Թվում էր՝ աշխարհը քոնն էր,
Դու էիր արարել կարծես,
Աշխարհում երբ մութ էր, թոն էր,
Տառապում էիր դու մոր պես:
Երեւի մեր Տերը տեսավ,
Որ շատ ես դու նման իրեն,
Քեզ կանչեց բարության ոգով,
Որ օգնես, որ օգնես իրեն:

09.02.2008

ԵՐԳ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Նոնա Մանգասարյանին՝ աստվածային սիրով

Ինքդ քնքուշ երգ ու տաղ ես,
Երգի մասին ինչ խոսք գրեմ,
Ժպիտներով շամանդաղ ես,
Հեւքի մասին ինչ խոսք գրեմ...
Տեղովդ մեկ Ղարաբաղ ես,
Քո արեւոտ հոգուն մեռնեմ,
Հեքիաթային վարդի թաղ ես,
Քո նուրբ նարոտ հոգուն մեռնեմ:
Երբ երգում ես՝ զառ-բլբուլ ես,
Քո սիրտ շոյող ձայնին մեռնեմ,
Երբ ժպտում ես՝ արեւ-հուր ես,
Քո լուսաշող ժպտին մեռնեմ:
Կյանքը երազ, երազը՝ կյանք,
Ես քո երազ կյանքին մեռնեմ,
Կյանքը վռազ, երազը՝ ջանք,
Ես քո երազ ջանքին մեռնեմ:
Տարիներդ հեւքով կանցնեն,
Ես քո լուսե հեւքին մեռնեմ,
Սոկրատ Խանյանն ասաց՝ Նոնա,
Ես քո քնքուշ երգին մեռնեմ:

ՄԵՐ ՍԵՐԸ

Մանկուց եմ սիրել ես ծովը,
Սիրել եմ ծփանքը նրա,
Սիրել եմ լեռների մեղմ հովը՝
Աստղերի համբույրը վրան:
Սիրել եմ գարունը բուրավետ,
Երազս որոնել վարդերում,
Վարդերը խոսել են սրտիս հետ
Եվ բուրել հոգուս ծալքերում:
Սիրել եմ կարկաչը ջրերի,
Եվ նրանց ուլունքը աստղազարդ,
Հասակն եմ սիրել սարերի,
Լանջերի ծաղկունքը շենշող:
Սիրել եմ... եւ նրանց հմայքը
Որոնել աղջկա հայացքում ,
Չգիտեմ, բերե՞լ է իմ բախտը,
Թե սերըս գրվել է լուսանցքում:
Դու կաս իմ երազի բարձունքին,
Հնչում է սրտիս մեջ մի նուրբ լար,
Մի շող է փարվում իմ արցունքին,
Եվ սերն է շափաղում ոնց գոհար:
Իմ հոգում նազում ես ծփանքով,
Սիրո մեջ առնում եմ նոր թեւեր.
Մեր սերը պատկերն է Աստծո,
Մեր սերը Վերինն է պարգեւել:

2006 թ.

ՍԻՐՈ ԵՐԱԶ

1

Երազներիս թեւերին, իմ երազների,
Հեքիաթային, գունավոր երազդ լիներ,
Քո տենչերը ծուլվեին իմ մուրազներին,
Ու մի անխոս առասպել իր հենքը հիներ:
Առանց խոսք ու զրույցի թեւեինք անվերջ
Եվ օթեւան հիմնեինք արեգակի մոտ,
Եվ մեր սրտում բռնկվեր մի կրակ անշեջ,
Եվ այն դառնար հավերժող ու կապույտ կարոտ:
Այդ կարոտից ծնվեին երազներ քանի,
Այդ երազը ցող դառնար եւ իջներ հողին,
Ծաղիկ դառնար բուրավետ՝ անվանդ արժանի,
Աստվածային քո սիրով վառեր իմ հոգին:

16.06.1995 թ.

2

Մի աղջիկ է նա՝ քաղցր անունով,
Մռավա սարի լանջերի ծաղիկ,
Քայլը կանչում է երազի հունով,
Ձայնը հնչում է ինչպես նուրբ տաղիկ:
Հայացքն աստղերից փնջած շողիկ է,
Դեմքը բոլորած մի լույս լուսնկա,
Ժպիտն օջախի կրակ-պողիկ է,
Արցախա հրակ աղջիկն է, որ կա,
Նա բազմել է իմ երազի գահին,
Թող Աստված նրան միշտ բարձր պահի:

13.06.1995 թ.

ՄԻ ԹՌՉՈՒՆ ԱՆՑԱՎ

Ազատամարտիկ Լիլի Համբարձումյանին

Մի թռչուն անցավ աստղերի մոտով,
Թուխ աչքերի մեջ շողը արեւի,
Հարբած երկրային ծաղկունքի հոտով,
Մի թռչուն անցավ՝ ցողը թեւերին:

Տիեզերական լույսերով օծված,
Հողեղեն սիրո կրակով բոցված,
Արցախին հասած վերքերից խոցված,
Մի թռչուն անցավ՝ պողը թեւերին:

Թարթիչները սուր՝ նետերի նման,
Ժպիտները հուր՝ շեղբերի նման,
Նազանքները լուռ՝ գետերի նման,
Մի թռչուն անցավ՝ դողը թեւերին:

Երազի հեւքով ետքից գնացի,
Հոգու դռները շոյելով բացի,
Վահագնի սիրտը տեսա, մնացի,
Մի թռչուն անցավ՝ շողը թեւերին:

17.12.1992 թ.
Ստեփանակերտ

ՍԻՐՈ ՃԱՄՓԱՍ

ՄԱՐԳՈՅԻՆ

1

Կիսատ ճամփաս, ճանփաս սիրո,
Եկել՝ փռվել ոտքերիդ տակ՝
Հին ու անդարձ կորուստներով,
Աղերսում է քո սերը տաք:

Սիրտս ափիդ մեջ է արդեն,
Քնքնքշանքներով շոյիր նրան,
Դաժան կյանքը շատ է ջարդել,
Հազար ու մի վերք կա վրան:
Ամեն մի վերք իր դեղն ունի,
Դարձիր սրտին իմ բալասան,
Կյանքս քեզ հետ իմաստ ունի,
Այս աշխարհում ապերասան:
Բանաստեղծի մեծ հայտնությամբ
Մարդ կարող է սիրել կրկին,
Իմ կրկնվող սերը անմար
Թող թեւ առնի քո ջերմ գրկին:
Սերս քեզնով թող վառ մնա,
Սերս՝ դարձած մի մանանա:

03.08.1998թ. Ջերմուկ

2

Այս երեկո ուշ եկա տուն,
Եվ ունքերիդ խաչմերուկում
Խանդ կարդացի,
Մռովի պես, Քիրսի հանգուն
Ժպտում էի հոգուս խորքում՝
Արդարացի:
Խոսքդ տարա, նազդ տարա,
Տարա խանդդ՝ առանց հիմքի,
Սուր հայացքդ, լացդ տարա,
Ցավդ տարա նախատինքի:
Ժամեր անցան, գիշերն անցավ,
Առավոտը ժպտաց նորից,
Կրկին խանդը քո թանձրացավ,

Որպես մշուշ Մթնածորից:
Դու ամպեցիր, ես ժպտացի,
Ցողն ու շողը մեր միացան,
Իմ ժպիտից արդարացի
Ծնվեց սիրո մի ծիածան,
Ի՜նչ ծիածան՝ սիրո համբույր,
Որ կոչեցինք սիրո աղբյուր:

04.08.1998թ., Ջերմուկ

ՆՎԵՐ

Նորապսակ մի աղջկա

Քո հայացքում, աչքերի մեջ,
Ծիածան եմ տեսնում գունեղ,
Քո քայլվածքում, նազանքի մեջ,
Բնությունն եմ տեսնում շքեղ,
Քո անվան մեջ՝ սրտիս անբիծ
Երազներն եմ լռին կարդում,
Ով քեզ նման աղջիկ ունի ,
Երջանիկ է նա իր կյանքում:
Ինչպես երազ-աստվածուհի,
Մեծ օջախի արեւ ես դու,
Աստված քեզ զույգ ձեռքով պահի,
Միշտ բաց պահի դարպաս ու դուռ:
Իսկ ե՞ս, իսկ ե՞ս, ա՜խ, ինչ անեմ,
Քեզ պաշտելով՝ ցավդ տանեմ:

23.07.1999 թ.

***

Աշխարհը նոր չէ, հիրավի,
Նոր չէ ընթացքը կյանքի,
Նոր չէ այրումը արեւի՝
Աղբյուրը սիրո, բերկրանքի:
Սակայն նոր ամեն սերնդի
Արեւը ժպտում է նորովի՝
Սիրո նոր ավիշ պարգեւում
Ու մղում սիրո նոր կորովի:
Արեւի նորացած ժպիտը
Փայլում է քո դեմքին, Օքսաննա,
Արեւի կտոր է քո սիրտը,
Քո հոգին՝ առինքնող մանանա:
Դու սիրուն, դու խելոք, դու ծաղիկ,
Թող կյանքդ միշտ օծվի բերկրանքով,
Պոետի կրծքի տակ դու տաղիկ,
Շաղախված արեւի օրհնանքով:
Տարիներ կգան ու կանցնեն,
Վառ հուշեր կունենաս դու կյանքում,
Կհիշես, թե որպես դիցուհի,
Քո գահն ես ունեցել իմ հոգում:

***

Բեմում սիրածը չի հասնում սիրուն,
Ամբողջ դահլիճն է հառաչում տխուր,
Իսկ մոտս նստած մի թխաչ սիրուն,
Թաշկինակն առած արտասվում է լուռ:

Նայում եմ... նրա արցունքներն ասես
Գալիս են, հոգուս խորքում ծովանում,
Նրա նուրբ սիրտը փշրողը տեսնես
Որտե՞ղ է անհոգ ժպիտներ ցանում:

***

Քո նվիրած մի ժպիտը
Աշխարհի հետ ես չեմ փոխի,
Իմ թխահեր արեւ...
Իմ հոգու մեջ, իմ կրծքի տակ
Հար չխամրող արեւը բարկ,
Այդ դու ես վառել:
Քո նվիրած հուր ժպիտին
Իմ երգն է գրված,
Քո ժպիտը իմ տառապյալ
Սրտից է ծնված:

***

Նստիր իմ դիմաց,
Հիանամ քեզնով,
Կյանքը մոռանամ,
Լիանամ քեզնով,
Սիրո զոհերին
Միանամ քեզնով...

***

Իմ երազած ծաղկանց ծաղիկ,
Իմ փայփայած հույս ու հավատ,
Իմ սպասած գարնան շաղիկ,
Ձեռքիս չեղած ոսկյա գավաթ:
Իմ չհասած սիրո բարձունք,
Իմ չխմած զուլալ աղբյուր,
Իմ սրտի մեջ կաթած արցունք,
Իմ շրթերին ցողված համբույր:
Իմ մոտավոր՝ ինձնից հեռու,

Երգի տողեր իմ ցիրուցան,
Իմ աչքերից գույներ առած
Դու ուրիշի նուրբ ծիածան:
Սրբատուն իմ՝ ինձ արգելված,
Իմ գիշերերգ՝ խլված ինձնից,
Լույսի հեղեղ իմ, բայց գերված,
Վշտերիս մեջ իմ հույս - նարոտ,
Աստղաժպիտ դու իմ կարոտ:

Մարտ, 1983 թ.

***

Կյանքում ուր էլ եղել եմ ես,
Իմ քայլերը շտապել են
Միշտ դեպի քեզ,
Սիրուց անվերջ ես հարբել եմ,
Երազներս առաքել եմ
Միշտ դեպի քեզ:

Կռունկների կանչերի հետ
Ծրարել եմ նարոտներս
Միշտ դեպի քեզ,
Իմ սրտի հետ, իմ խոհերի,
Ուղարկել եմ կարոտներս
Միշտ դեպի քեզ:

Չեմ մեղանչել սիրուս առաջ,
Ուրիշ աստղեր չեմ որոնել,
Աստղերի շողք-փայլով արբած
Քայլել եմ ես միշտ դեպի քեզ,
Սպասումիդ հույս եմ բերել,
Սպասումիդ լույս եմ բերել,

Թվացել է ու թվում է,
Թե ծնվել եմ այս աշխարհում,
Որ ժրաջան մեղվի նման,
Ծաղիկների բույրերն առած,
Թեւեմ անվերջ
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ:

ԳԱՐՆԱՆ ՄԻ ՕՐ
(Երգ)

Գարնան մի օր հանդիպեցինք,
Ու գարունը մեզնով ծաղկեց,
Սիրո տված մեր խոստումից
Բնությունը ասես հարբեց:

Մրրիկ լինի, թե փոթորիկ,
Ես քեզ երբեք չեմ մոռանա,
Կայծակն անգամ կուրծքս ճեղքի,
Ես քեզանից չեմ հեռանա:

Քեզ համար եմ աշխարհ եկել,
Եվ ծնվել ես դու ինձ համար,
Դու իմ ճամփին կյանք ու արեւ,
Ես քո սրտի հուրը անմար:

Մրրիկ լինի, թե փոթորիկ,
Ես քեզ երբեք չեմ մոռանա,
Կայծակն անգամ կուրծքս ճեղքի,
Ես քեզանից չեմ հեռանա:

Դու ձուլվել ես իմ երազին,
Ջերմանում է հոգիս քեզնով,
Քեզնով հասա իմ մուրազին,
Երջանկացավ սիրտս քեզնով:

Մրրիկ լինի, թե փոթորիկ,
Ես քեզ երբեք չեմ մոռանա,
Կայծակն անգամ կուրծքս ճեղքի,
Ես քեզանից չեմ հեռանա:

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

*Կնոջս՝ **Սրբուհու** սուրբ հիշատակին*

1

Քանի՜ օր է՝ բաժանվել ենք իրարից,
Քանի՜ օր է՝ հանդիպում ենք երազում,
Ո՞նց հավատամ, որ իմ կողքին էլ չկաս,
Որ քո անդարձ կարոտի երգն եմ ասում:
Մենք վազեցինք միշտ էլ լույսի հետեւից,
Հասա՞նք նրան, ես ի՞նչ ասեմ, չեմ կարող,
Իմ սերն էիր, բայց հուշ դարձար, իմ անգին,
Հիմա պիտի ապրեմ լոկ քո նկարով:
Պիտ զրուցեմ քո նկարի հետ միայն,
Միշտ զգալով, որ ինձ մոտ ես, իմ հոգում,
Կյանքս քեզ հետ մի դրախտ էր լուսապերճ,
Քո տեսիլքն է հիմա սիրտս ամոքում:
Թեւին տվիր դու ինձանից հեռացար,
Նույն աշխարհն է նույն վազքի մեջ ու եռքի,
Սրտիս խորքում մի վշտահար լար ծնվեց,
Եվ նա պիտի միշտ ուղեկցի իմ երգին:
Մենք բարության հուրն ենք վառել սրտերում,

Հիշատակդ իմ սրտի մեջ չի մարի,
Թեկուզ մահդ ինձ մեծ վշտի տեր արեց,
Բայց էլի թող բարին մաղթեմ աշխարհին:
Դու ինձ համար նույն երազն ես, նույն սերը,-
Քո անվամբ եմ վառում իմ տան լույսերը:

Հունիս, 1981 թ.

2

Կրծքիս տակ մի ձայն է ղողանջում,
Քո երգն է, քո շունչն է մտերիմ,
Իմ սերը կրակ է, չի հանգչում,
Քո հրե կարոտն է, սեր իմ:

Դարերի իմաստով պսակված
Ու ծաղկած իմ սիրո ցավի մեջ,
Դու եղար ինձ համար ոնց Աստված,
Ժպտացիր իմ սիրո գավի մեջ:

Քեզանով հրթիռվեց երազս,
Քեզանով նա փարվեց արեւին,
Բայց ինչու՞ ձեռքիցս դու թռար,
Ի՞նչ ասեմ քեզ կարոտ դարերին:

3

Այս այգու մեջ մի կածան կար,
Այն կածանը ու՞ր է հիմա,
Իմ խենթության խոսող վկան,
Ասեք, ինչու՞ լուռ է հիմա:

Իմ սերն առնում իր թեւերին,
Ինձ կանչում էր իմ սիրո մոտ,
Կյանքի՜ն նայեք, սերը քի՜չ է,
Կածանն էլ է դառնում կարոտ:

Այստեղ վարդեր կային բացված,
Այն վարդերը ու՞ր գնացին,
Կածանի հետ սիրով կապված
Իմ հուշերը ու՞ր մնացին:

Իմ սերն առնում իր թեւերին,
Ինձ կանչում էր իմ Սիրո մոտ,
կյանքի՜ն նայե՜ք, սերը քի՜չ է,
Կածանն էլ է դառնում կարոտ:

1982թ., մայիս

***

Դարձյալ ես քեզ պիտի ներե՜մ,
Պիտի ներե՜մ ու համբերե՜մ,
Հանբերելը դեռ իր հերթին,
Ցով աչքերդ պիտ համբուրեմ:
Պիտի տանեմ նազերը քո,
Պիտի շոյեմ մազերը քո,
Պիտի շոյեմ ու զարմանամ
Քո հանդեպ իմ ծնկի գալուց...
Ա՜խ, ներելս թույլ կամքի՞ց է,
Թե՞ քո սիրով տառապելուց:

***

Դու ինձ համար մեր լեռների
Զով հովերն ես բերել,
Քո աստղային ժպիտներով
Իմ հոգին ես գերել:
Թաքուն-թաքուն նայում եմ քեզ,
Սրտիս մեջ մի ծփանք,
Այդ ծփանքում չասված խոսքեր,
Եվ երազներ, եւ կյանք:
Այդ ծփանքում սիրո ճիչեր՝
Շղթայակապ, արթուն,
Այդ ծփանքում երազանքներ՝
Իմ սրտի պես անքուն:

Դու ժպտում ես վարդի նման,
Գերող ու հմայող,
Ա՜խ, զգու՞մ ես, կապանքներից
Մի սիրտ կա քեզ նայող,
Զվարթաձայն ու մի ջերմ սիրտ,
Որ զարկում է, անգին,
Յուրաքանչյուր քո ժպիտը
Արեւ դարձրած ճամփին:

***

Քնքշանքի կարոտ սիրտս բացել եմ,
Եթե կարող ես, փայփայիր նրան,
Իմ կորած սիրո համար լացել եմ,
Տես, քանի՜ վերք կա իմ սրտի մեջ,
Ինձ մի նախատիր, որ քեզ՝ գրկիս մեջ
Հաճախ կոչում եմ նրա անունով,
Առաջին ու սուրբ իմ սերը նա էր,
Նա է միշտ հոսում իմ սիրո հունով:

***

Սիրելիս, կանգ առ, թող խոսքս ասեմ,
Չեմ կարող թաքցնել, որ քեզ եմ սիրում,
Ախր ի՞նչ եղավ, ասա ինձ՝ լսեմ,
Չէ՞ որ այդ դու ես իմ սրտին տիրում:

Այս քանի՜ օր է, սպասում եմ քեզ,
Սակայն դու չկաս, դու չես երեւում,
Տեսնելիս անգամ ինձնից շրջվում ես,
Ես ողջունում եմ, դու չես բարեւում:

Գոնե երգիս մեջ թող քեզ փայփայեմ,
Երգիս մեջ գոնե զգամ շունչը քո,
Քեզնով հմայված աշխարհին նայեմ,
Քեզնով աշխարհը սիրեմ հոգեթով:

***

Դուռդ բաց եմ տեսել,
Աչքդ թաց եմ տեսել,
Փոթորկված եմ տեսել
Ու վշտավառ...
Սեր-քնարս եմ լարել,
Չարի դավն եմ վառել,
Միշտ քո ցավն եմ տարել՝
Քեզ սիրահար...

Կյանքը նույնն է էլի,
Սիրո հունն է էլի,
Սիրտս բույն է էլի՝
Միշտ փրկարար:

***

Ես շշնջացի. «Քո ցավը տանեմ»:
Այդ ասել է, թե
Քեզ հետ եմ ամեն մի դժվար պահի,
Այդ ասել է, թե քեզ համար սար եմ,
Արեւ ու ջուր եմ քո ճանապարհին:
Ոչ թե մեկ անգամ, այլ հազար անգամ,
Բյուր հազար անգամ քո ցավը տանեմ,
Իմ հոգու մեջ ես, իմ երազներում,
Իմ սրտից, ասա, քեզ ինչպե՞ս հանեմ,
Քո ցավը տանեմ...

***

Սերս փոթորկված ծովի է նման,
Հանգիստ չգիտե նա ծնված օրից,
Նա հողեղեն չէ, աստղ է մի անմար,
Սիրտս շիկնում է նրա շողերից:

Իմ սերը հորդ է գարնան հեղեղից,
Ձարմանք է իջել իմ հոգու վրա.
Այսքան թարմություն նրան որտեղի՞ց,
Ջերմություն այսքան՝ որտեղի՞ց նրան...

***

Արեւսարի ուսին արեւը քուն մտավ,
Ուխտաձորի կանաչ գիրկը խլրտաց,
Պատշգամբից թուխմազ սիրածս տուն մտավ,
Տեսակցության համար սիրտս թփրտաց:

Մութն ինձ մտերմացավ, բարդին դարձավ ինձ քույր,
Պարտեզը մայր դարձավ, ա՜խ, ինձ՝ գժվածիս,
Իմ շուրթերից պոկված սուլոցը ոնց թռչուն,
Ճեղքեց դուռ ու դարպաս, հասավ սիրածիս:

Նա դուրս եկավ տնից, փարվելով իմ կանչին,
Սիրտս առավ քնքուշ շոյանքների մեջ,
Սերս աստղեր ծնեց Արեւսարի լանջին,
Արեւին քույր դարձավ ու մնաց անշեջ:

***

Երազիս մեջ
Մի օր դարձա մեծ նկարիչ
Ու դարձրի արէգակը ներկապնակ.
Նկարեցի վարդ ու շուշան,
Ջուլալ առու, դալար բարդի,
Մի մասրենի՝ մեր տան ճամփին,
Մի արծաթված փշատենի,
Մի ուռենի՝ վարսերն արձակ,
Մի թթենի՝ թեւատարած,-
Եվ ստացվեց մի նուրբ աշխարհ:
Մտա խորքը այդ աշխարհի,
Ու շրջեցի հեգեհմա...
Այնքա՜ն էր նա հոգուդ նման:

***

Քո բորբոքուն արեւի դեմ
Ես արեւի ծաղիկ դարձա,
Վարդ շուրթերիդ հավետ իջած
Գարնանային շաղիկ դարձա:

Սերդ անծիր մի տիեզերք,
Ես մի աստղ՝ նրա գրկում,
Նվիրումիդ արարումով
Ինձ մարելուց դու ես փրկում:
Ես կանաչ եմ հողիդ փարված,
Սրտիդ միջով հոսող գետ եմ,
Քո լուսայգն եմ քեզնով վառված,
Ինչ էլ լինի, ես քեզ հետ եմ:

ՎԱՅՐԵՆԻՆ

(Եղելություն)

Նրանք հանդիպեցին պարտեզի մեջ մի օր,
Երբ իր երկրորդ դեղին շորն էր հագել հոնին,
Կյանքը սեր էր հուշում անուշ ու մեղմօրոր
Թուփ ու ծառից ամեն, ամեն մի կոկոնից:
Տղամարդը ասես աստծո պատկերն էր սուրբ,
Կինը՝ ողջ բնության խտացումը նրբին,
Տղամարդը կարծես մոմ էր ու վարդաջուր,
Ծանոթացման պահը երգ էր դարձել շրթին:
Շրթունքները նրա այնպես էին դողում,
Իր օրերի երթում կի՞ն չէր տեսել ասես,
Կապույտ մի մշուշ էր աչքերի մեջ շողում,
Դեմքը փայլփլում էր որդան կարմիրի պես:
Մութի թեւերի տակ թավալվեցին նրանք,
Կնոջ ոտքերը նուրբ կարկառվեցին դեպ վեր,
Տղամարդը թեքվել կնոջ մարմնի վրա,
Մռնչում էր ինչպես գազանացած մի դեւ:
Կինը լուսնի տեսքով փայփայում էր նրան,
Քաղցր խոսքերի մեջ մի հաճույք էր թեւում,

Տղամարդը սակայն հասել մեղքի դռան
Ու վճիռով մի նենգ կափկափում էր, հեւում:
Ու խենթ կատաղությամբ նա մի նոր թափ առավ,
Ու կրկնակի ծուլվեց կնոջ քնքուշ մարմնին,
Կուրծքը տրորելով հաղթ ձեռքերը տարավ
Ու կոկորդից բռնեց ուժով մի վայրենի:
Շնչահեղձ էր լինում, թպրտում էր կինը,
Պտտում էր կոնքը ջաղացքարի նման,
Տղամարդը սակայն հպվել էր ոնց ցինը
Եվ հագուրդն էր առնում գիժ ու մահահմա:
Շունչը փչեց կինը, տղամարդը ելավ,
Կապեց իր վարտիքը ու հեռացավ հանգիստ,
Քամին այգու միջից դեղնած մի թերթ բերավ,
Ծածկեց կուրծքը կնոջ մերկ ու գեղեցկանիստ:
Երկինքը լաց եղավ, այգին փշաքաղվեց,
Ու կերկերաց աստծո ձայնը աստղագծում.
-Ո՜վ մարդ, քո Ադամա խիղճը որտե՞ղ թաղվեց,
Իմ ընծայած անբիծ սերն ինչո՞ւ ես պղծում:

1992 թ.

ԽՈՀ

Մենակ եմ ես, սիրտս՝ մենակ,
Արի սրտիս ընկերացիր,
Ընկեր դարձիր, դարձիր հենակ
Ու սիրո մեջ մի թերացիր:
Շրջել եմ ես աշխարհն արար,
Ու տեսել եմ անթիվ սերեր,
Նվիրել եմ սերս վարար,
Ու սրտերին տվել թեւեր,
Սակայն ոչ ոք չի հասկացել

Ոչ իմ սիրտը, ոչ իմ հոգին:
Ոչ ոք, ոչ ոք չի մնացել
Ոչ իմ սրտում, ոչ իմ կողքին,
Մենակ եմ ես, սիրտս մենակ,
Հուշերի մեջ իմ հրածին,
Դու իմ միակ հույս ու հենակ,
Արի սրտիս ընկերացիր:

03.01.1994 թ.

ՊՈԵՏԻ ԵՐԱԶԸ

Նվեր Ծովինար Առաքելյանին

Մռովը շիկնել է, փայլում է Մռովը,
Ծովինար աղջիկն է գալիս,
Օրհնանք է հոլովում Թարթառի օրորը,
Ծովիկին բարեւ է տալիս:
Արցախը ձեռքերը պարզել է երկնքին,
Շոյում է մազերը աստղերի,
Աստղերը ծփում են երկրային բերկրանքից,
Փարվել են Ծովիկի նազերին:
Երկնքի կապույտը դողում է նախանձից,
Ծովիկը հմայքն է սարերի,
Ծովիկի աչքերի կապույտը կխանձի
Կրակված շուրջպարը արեւի:
Ծովիկ է անունը եւ խելքն էլ ծովակ է,
Նավակ է նա սիրո ծովի մեջ,
Վահագնի բոցեղեն եղեգնից ծնված է,
Լուսաստղ է երկնքի մովի մեջ:
Հրեղեն սիրտ ունի, Արցախի լուսինն է,
Արցախի ծաղիկն է, հովիկը,
Սիրո մեծ երթի մեջ Ծովիկը մի հիմն է,
Պոետի երազն է Ծովիկը...

17.11.1990թ.

ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Աստղերին մի օր հարցմունք արի ես,
-Ինչո՞ւ գիշերն եք երեւում միայն,
Պատասխանեցին աստղերը, այսպես,
-Մեր ջերմությունն ու երանգը մեր թուխ
Մենք նվիրել ենք հայ աղջիկներին,
Մենք նրանց շողքն ենք դարձել վերեւում,
Դրա համար էլ, երբ ցերեկները ժպտում են նրանք,
Մենք չենք երեւում:

****

Ոչ թողեցիր քեզ լավ սիրեմ,
Ոչ թողեցիր քեզ մոռանամ,
Ոչ դու՝ ինքդ ինձ տիրեցիր,
Ոչ թողեցիր ես տիրանամ:
Ոչ այրվեցիր, ոչ այրեցիր,
Ոչ թողեցիր ես վառեմ քեզ,
Չգիտեի ինչ անեի,
Հասկանալը դժվար էր քեզ:
Նույն աշխարհն է, նույն ծփանքը,
Եվ նույն սիրո շքերթն է վառ,
Բայց այդ սիրո շքերթի մեջ
Ոչ զինվոր եմ, ոչ զորավար:

***

Կարոտի կրակն իմ սրտի մեջ է,
Մատներդ մեկնիր, թող որ տաքանան,
կրակս սեր է, կրակս տենչ է,
Ծարավը մարող ջինջ աղբյուր է նա:
Կարոտի կրակը իմ երգն է, սիրտն է,

Սիրո ճամփեքին ծաղկուն իմ գիրկն է,
Իմ սրտի երգն եմ բերում քեզ ընծա՝
Իմ վառվող սրտով թող սիրտդ ցնծա:

14.02.2003

***

- Սիրուն աղջիկ, ո՞ւմն ես դու:
- Ջահել տղա, քոնն եմ ես:
- Ի՞նչ պտուղ ես, ի՞նչ ծաղիկ:
- Քո կարմրաշուրթ հոնն եմ ես:
- Սիրուն աղջիկ, թախծոտ ես:
- Քո տխրության թոնն եմ ես:
- Որ մոռանամ, ի՞նչ կանես:
- Սիրուդ քաղցր ձոնն եմ ես:
Ուր էլ գնաս, ջան տղա
Քո վառ սիրո տոնն եմ ես:

03.02.2003

ՍՐՏԻ ԽՈՍՔ

Մերիին՝ ծննդյան 16-ամյակի առթիվ

Երբ ծնվեցիր, աստված վերից
Արեգակի շողեր ցանեց,
Կյանքը շիկնեց այդ նվերից,
Իր ճամփեքից մութը վանեց,
Ծաղիկ բուսավ ժայռ ու քարին,
Կարկաչեցին աղբյուրները,
Անգամ բուրեց փուշը վայրի,
Ու շատացան համբույրները:
Ու տասնվեց տարի հետո

Դու դարձել ես մի Արեգակ,
Եվ թախծում ես ծով կարոտով,
Եվ ժպտում ես լույսի պես տաք:
Թող միշտ այդպես Աստղ մնաս,
Թող կյանքը քեզ ժպտա հավետ,
Ուր էլ լինես, ուր էլ գնաս,
Սերդ դառնա սրտառուչ երգ:

04.04.2000թ.

ՍԻՐՈ ՄԱՍԻՆ՝ ՍԻՐՈՎ

Իմ հրեշտակ, ինձ հավատա,
Որ վառվել եմ քո տեսքով,
Թե հարկ լինի, սիրտս կտամ,
Կյանքս կտամ՝ բերկրանքով:
Թե հարկ լինի, ոտքերիդ տակ
Երազներս կցանեմ,
Որ դու ապրես միշտ երջանիկ,
Ես քո ցավը կտանեմ:
Ինչ կորցրել եմ, թող որ գտնեմ,
Ժպիտներիդ երկնքում,
Թող տենչերիդ այգին մտնեմ,
Քեզնով գտնեմ փրկություն:
Իմ հրեշտակ, ինձ հավատա,
Դու գերել ես իմ հոգին,
Թե հարկ լինի՝ սիրտս կտամ,
Միայն լինես իմ կողքին:

05.04.2000 թ.

ԴՐԱԽՏԻ ՓԵՐԻՆ

Սիրով՝ Բելային

Դրախտը երգ, դրախտը՝ անհաս,
Դրախտը հոգու պատկեր ու թրթիռ,
Դրախտն արվեստի քողարկված պառնաս,
Անտառի ծփանք, բուրումներ արբշիռ:
Բայց ո՞վ չի կյանքում ծարավել նրան,
Ո՞վ չի երազել նրա գիրկը լույս.
Նրա պատկերը իր սրտի վրա,
Ո՞վ չի շոշոփել տեսքը ծաղկահյուս:
Աստծո անունով եւ սիրով աստծո
Դրախտը դարձել է խորհուրդը ջանքի,
Եվ դարերի մեջ մարդը միշտ թախծոտ,
Դրախտը ձուլել է հետմահու կյանքին:
Բայց Բելան դարձավ դուստրը Աստծո,-
Դրախտի պատկերը առած հոգու մեջ,
Դրախտ է երկնել իր վառ երագով,
Ծաղկունքին տալով երազն իր անշեջ:
Ով որ չի եղել գրկում դրախտի,
Ըմբոշխնել բույրը նրա վարդերի,
Թող դուռը բացի այն սուրբ օջախի,
Ուր արարում է դրախտի փերին:

***

Դու իմ կորած սիրո հուրն ես,
Գտել եմ քեզ, հրիդ մատաղ,
Իմ երազը, իմ անուրջն ես,
Սիրո զուլալ ջրիդ մատաղ,
Արեւսարի իմ աղբյուրն ես,
Որ բխել ես Մռով սարից,
Ուխտածորի իմ համբույրն ես,
Ծնված իմ ջերմ երգ ու բառից...
Ցաված սրտիս բալասանն ես,
Իմ չգրված երգի տողն ես,
Արեգակ եմ կորցրել կյանքում,
Իմ որոնած աստղաշողն ես,
Հանգրվանն ես իմ երազի,
Իմ մուրազի լուսատուն ես,
Սիրտս թեւող թռչուն է մի,
Դու իմ սրտի լուսե բույնն ես,
Արի, ձեռքդ դիր իմ ճակտին,
Շոյանքիդ է սիրտս կարոտ,
Անքնության ծանր պահին
Քո ջերմ սերն ինձ դարձրու նարոտ,
Թող քո սիրով հույսս թացվի,
Միշտ քո սիրով լույսս բացվի...

14.09.2002 թ., կես գիշեր

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարգոյի ծննդյան օրվա առթիվ

1

Արեւից ծնված իմ դրախտ-եդեմ,
Այս ինչպե՞ս դարձար սերս արեւկա,
Այս ինչպե՞ս ուշքս ու միտքս առար
Եվ ինձ գերեցիր հմայքներով լի,
Իմ սիրտն ես մտել սիրով մի անհուն,
Դարձել իմ հոգու երազը լուսե:

2

Երբ դու ինձ հետ ես, ապրում եմ բերկրանք,
Թեւեր եմ առնում ժպիտներով քո,
Սիրում եմ կյանքը՝ հիացքով անանց,
Այդ դու ես կյանքը իմ հոգեհմա,
Ինձ նվիրում ես թեւեր ու կորով,
Քեզնով թեւում է նաեւ իմ երգը,
Թող վկա լինեն Մռով, Արարատ,
Երդվում եմ անբիծ սիրով Արցախա,
Եթե ինձ մի օր զոհելու տանեն,
Կրկին կկոչեմ՝ քո հոգուն մեռնեմ:

3

Քեզ ընծա լինի թրթիռը սրտիս,
Հոգուս երկինքը քեզ ընծա լինի,
Թող իմ երազը դառնա թեւավոր,
Փարվի երազին քո սրտի, հոգու,
Ու քեզ ուղեկցի քո ամբողջ կյանքում:
Աշխարհ ես եկել իղձերով հրե,
Քո ջերմ հրով եմ հիմա ես ապրում,
Դու հրեշտակ ես մի աստվածառաք,
Ժպիտդ պայծառ, իսկ հոգիդ՝ ոսկե,
Իմ երգերի մեջ իմ սիրտն ես հրկեզ:

10.02.2001 թ.

ԴԻՑՈՒՀԻ

Ն-ին

Քո ժպիտը սրտիս կրակն է փայլող,
Որպե անգամ նա չի սառչում, չի մարում,
Ինչպես աստղ, ինչպես արեւ հավերժող,
Սրտերի մեջ երազներ է նա վառում:
Տիրոջ ձեռքը գեղեցկություն արարեց,-
Իդեալը լույս աղջիկ էր հրացայտ,
Նրա սերը աղբյուրի պես վարարեց,
Եկավ - քնքույշ քո սրտի մեջ ծովացավ:

Աստծո կերտած Արցախ երկրի առասպել,
Սուրբ Մարիամի տեսքով փայլող դու հեքիաթ,
Լուսնի լույսը, ասա, դու՞ ես առաքել,
Արեգակը դու՞ ես հունցել՝ ոնց հրաշք:
Նռան գինին եռ է գալիս ժպտիդ մեջ,
Յասամանի քո ծփանքը ո՞վ ունի,
Անմահական հուրը քո շունչն է անշեջ,
Նոր օրերին նոր տեսք բերող դիցուհի:

***

Սիրո դաշտի մեջ ես մեղվի պես եմ,
Նեկտարված սիրո դռներն եմ թակում,
Ծաղկի առէջում իմ սիրո կեսն եմ,
Սիրուս համբույրն եմ մեղվափեթակում:
Սիրո դաշտի մեջ ես մեղվի պես եմ,
Նեկտար եմ առնում ու կյանք պարգեւում,
Երաշտից, ցրտից թոշնած ծաղիկն էլ
Իմ համբույրներից ելնում է, թեւում:
Իմ նվիրումով՝ թունավոր ծաղկին,
Քաղցրություն բերող արեւի կեսն եմ,
Չեմ թողնում սիրո երազը թախկի,
Սիրո դաշտի մեջ ես մեղվի պես եմ:

03.06.2009թ.

***

Բանաստեղծություն, խղճում եմ ես քեզ,
Փշրել են ուզում քնքույշ սիրտը քո,
Փախանակ շոյեն ամպի թեւի պես,
Հոգիդ ջարդում են մետաղյա ոտքով:
Սուրսայր դանակով երազդ են հատում,
Մարմինդ օծում մետաղի փոշով,
Արյունդ հեղում են, արցունքդ դատում,
Շրթները սրբում ջինսակար փեշով:
Տունդ դարձնում են հասարակաց բեմ,
Լցնում ճիչերով բիրտ, վայրիվերո,
Քրքջում են քո իմաստության դեմ,
Տողերդ թրջում պիղծ համբույրներով:
Բանաստեղծություն,ծածանիր նորից
Իմաստավորված հույզերիդ փունջը,
Չէ՞ որ Վահագնի ծննդյան օրից
Դու ոգին ես մեր, մեր սիրո շունչը:

03.06.2003 թ.

Հանդիպում աստունքող աշակերտների հետ Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում

ԲՅՈՒՐ ԵՐԱՆԻ

1

Քո լինելը՝ իմ լինելն է,
Քո ծիծաղը՝ ծիծաղը իմ,
Քո թեւելը՝ իմ թեւելն է,
Քո նազանքը՝ ծիծառը իմ:
Դու արեւի կրծքից պոկված,
Օնվել ես, որ ինձ արեւես,
Ամպ էլ լինի հոգուս չոքած,
Քո շողերով կփրկվեմ ես:
Քեզնով ասես կանաչում է
Իմ կյանքի նոր եղրեւանին,
Երախտիքով ես կանչում եմ,
Օնող մորըդ բյուր երանի:

20.02.1999

2

Երբ դու ինձ հետ ես,
Սիրտս չի ցավի,
Քեզ սիրող սիրտս
Սրտիդ չի դավի...
Երբ դու ինձ հետ ես,
Հոգիս գարուն է,
Երգիս աղբյուրը
Հորդ, վարարուն է,
Երբ դու ինձ հետ ես,
Վարդերս նուրբ են,
Խոհերս սիրո
Անբիծ ու սուրբ են,
Սերդ իմ երգի
Ջուլալ առուն է,
Երբ դու ինձ հետ ես,
Կյանքս գարուն է:

11.01.2003թ.

3

Ինձ հասկացիր առանց խոսքի,
Իմ աչքերում կարդա երգս՝
Իմ խոհերի հորիզոնում
Տես քո սիրուց ցավող վերքս:
Սրտիս դուռը բաց է, մտիր,
Քո անունը կարդա այնտեղ,
Հոգուս խորանները գտիր,
Այն քեզ համար լույս է ու դեղ:
Դու ոչ միայն իմ լույս սերն ես,
Դու իմ Աստվածն ու իմ տերն ես,
Քո անունը քնար դառած
Իմ քնարին շունչ է բերում,
Երգիս հուրը՝ քեզնով վառված,
Խորովում է սիրտս, գերում:
Ինձ հասկացիր առանց խոսքի,
Լեզուս կապ է ընկնում քեզ մոտ,
Փոթորկվում է եւ իմ հոգին,
Դու իմ սրտում, ես քեզ կարոտ:

14.05.2009 թ.

4

Այն ո՞վ է ասել՝ առաջին անգամ սրտեր չեն վառվում,
Առաջին անգամ արեւ չեն դառնում, այն ո՞վ է ասել,
Այն ո՞վ է ասել հայացքով, տենչով իրար չեն փարվում,
Երազ չեն դառնում առաջին անգամ, այն ո՞վ է ասել:
Ես նրան տեսա՝ ասես արեւն էր փայլում իմ դիմաց,
Նրա հայացքում, աչքերում տեսա հրաշքն իմ սիրած:

5

Այսօր կրկին բախտն ինձ բերեց,
Ես նստեցի նրա մոտ,
Այսօր կրկին սիրտս գերվեց,
Նրա տեսքից ծաղկահոտ:
Երանության օվկիանի մեջ,
Այսօր կրկին գտա ինձ,
Ու դիմեցի ես սիրատենչ՝
իմ աննման, գթա ինձ:

6

Ահա, այսպես, օրը օրին,
Անց ենք կենում մենք վառվելով,
Նախանձելով եկող նորին,
Սակայն նորին միշտ փարվելով...
Այս է կյանքը մեր արեւկա,
Ուրիշ տեղ այս կյանքը չկա:

7

Ինձ հասկացիր առանց խոսքի,
Իմ աչքերով կարդա երգս՝
Քեզ ընծայված,
Իմ աչքերի հորիզոնում
Տես դեպի քեզ պարզած եռքս,
Սրտիս վրա քո անունը կարդա, սեր իմ,
Իմ փոթորկված հոգին մտիր,
Ուր կկարդաս ոչ թե «Սեր իմ»,
Այլ կկարդաս, «Միակ տեր իմ»:
Քո անունը քնար դառած
Իմ քնարին շունչ է բերում,

Երգիս հուրը՝ քեզնով վառկած,
Խորովում է սիրտս, գերում:
Ինձ հասկացիր առանց խոսքի,
Լեզուս կապ է ընկնում քեզ մոտ,
Փոթորկվում է իմ ծով հոգին,
Դու իմ սրտում, բայց իմ կարոտ:

12.05.2009 թ.

ԷՔՍՊՐՈՄՏ

Ն-ին

Անունդ - արեւ ասել է,
Անունդ - թրթիռ է սրտի,
Անունդ աստղերին հասել է
Եվ իջել՝ արեւը գրկին:
Ժպիտդ՝ վարդերի ցոլանք,
Ունքերդ՝ բախտի լույս կամար,
Ձայնդ՝ աղբյուրի խոյանք,
Երազդ՝ կենսաբեր ամառ:
Քայլվածքդ՝ քնքուշ է, նազանք,
Թեւերդ՝ թռչելու խորհուրդ,
Բարեւդ՝ միտք ու երազանք,
Խոսքերդ՝ ծարավի հագուրդ:
Անունդ՝ սիրո մատյան է,
Անունդ՝ քնքշալից երգ ու տաղ,
Անունդ՝ երազի ատյան է,
Ես քո լույս երազին մատաղ...

16.07.2004 թ.

ՍԻՐՈ ՆՇԽԱՐՆԵՐ

«Սերը աշխարհ կփրկի» շարքից

1

Ա՜խ այս աղջիկը, հրաշք աղջիկը,
Արեւի կտոր թխաչ աղջիկը,
Լեռների՞ց իջավ, թե՝ տիեզերքից,
Թե իմ սիրավառ հոգու եզերքից...
Գուցե տենչերիս սերմնացանն է նա,
Գուցե իմ Երազ - Ծիածանն է նա,
Գուցե առաջին Սիրուս հոգին է,
Գուցե չգրված երգիս ոգին է,
Որ եկել է սուրբ Աստծո պատվերով,
Իմ կորած Սիրո ժպտուն պատկերով,
Որ նորից սիրո կրակով վառվեմ,
Երկրպագեմ ու թեւերին փարվեմ,
Իր ժպիտներով օծվեմ, ամրանամ,
Իր ծով կարոտից դողամ, համրանամ...
Ա՜խ, այս աղջիկը որտեղի՞ց եկավ.
Աստղոտ լեռների՞ց, թե՝ տիեզերքից,
Գուցե երազող հոգուս եզերքից:

2

Այս ի՞նչ արիր, հոգուդ մեռնեմ,
Ինձ վառեցիր անշեջ հրով,
Ընծայեցիր տենչ ու թեւեր,
Սիրտս առար քնքույշ սիրով:
Այս ի՞նչ արիր, հոգուդ մեռնեմ,
Ինձ կարոտի ծովը տարար,

Այս ի՞նչ արիր, կյանքիդ մեռնեմ,
Թեւեր տվիր, սիրտս՝ առար:
Դու դարձրիր կյանքս երազ,
Երազս՝ կյանք,
Դու դարձրիր ջանքս մուրազ,
Մուրազս՝ ջանք:
Քո ջերմ սիրով թեւավորված,
Տիեզերքի հզոր տերն եմ,
Սիրտս լոր է՝ ափիդ դրած,
Այս ի՞նչ արիր, հոգուդ մեռնեմ:

3

Քունս չտարավ մի ամբողջ գիշեր,
Միտքս քեզ հետ էր եւ ուշքս՝ քեզ հետ,
Իմ խոհերի մեջ մորմոք էր, հուշ էր,
Ցավս քեզ հետ էր, զրույցս՝ քեզ հետ:
Քունս չտարավ մի ամբողջ գիշեր,
Շունչս քեզ հետ էր ու երգս՝ քեզ հետ,
Մեկն ինձ ասում էր՝ դեհ, քնիր, ուշ է...
Սիրտս քեզ հետ էր ու վերքս՝ քեզ հետ:
Քունս չտարավ մի ամբողջ գիշեր,
Նազդ ինձ հետ էր, վարսերդ՝ ինձ հետ,
Թեկուզ մեր ճամփին անդունդ էր, փուշ էր,
Ձայնդ ինձ հետ էր, պատկերդ՝ ինձ հետ:
Քունս չտարավ մի ամբողջ գիշեր,-
Կանչերս քոնն են... կանչելդ՝ իմը,
Շրթերիս վրա հնչում էր մի շեր.
«Տանջվելս քոնն է... տանջելդ՝ իմը»:

4

Իմ մոտիկ , իմ հեռու,
Իմ աղբյուր, իմ ծարավ,
Այս ցավոտ օրերում
Իմ սիրտը ո՞նց առար...
Թվում էր, թե կյանքը
Պատժել է ինձ արդեն,
Իմ թոշնած բերկրանքը
Ո՞նց դարձրիր ալ վարդեր:
Թվում էր՝ մարել է
Լուսաստղը իմ բախտի,
Այս ինչպե՞ս ինձ դարձրիր
Տիրակալ դրախտի:
Թվում էր, թե ճամփաս
Կորել է սարերում,
Թվում էր, թե հարբած
Ճամփորդ եմ երերուն...
Ինձ ինչպե՞ս մորմոքի
Ծովի մեջ գրկեցիր,
Տառապած իմ հոգին
Այս ինչպե՞ս փրկեցիր:

5

Այս գիշեր, երազիս մեջ,
Արագած սարն էր իմ դեմ,
Նա դարձած հրե մի տենչ,
Խոսում էր Մասիսի հետ:
Արաքսը հառաչում էր
Մասիսի ստորոտում,
Սիփանը շառաչում էր

Շանթերի խենթ որոտում:
Հրաբորբ կանգնել էի
Սարերի խաչմերուկում,
Արցունքիս շողերն էին
Փայլում իմ կարոտ երգում:
Դու եկար այդ թեժ պահին,
Արբեցիր արցունքն աչքիս,
Ասացիր խոսքդ բարի.
«Հավատա մեր հրաշքին:
Հավատա, որ շատ շուտով
Արարատ սարը կգա,
Մռովն իր հաղթանակով
Մասիսին ողջույն կտա,
Կբացենք խնջույքը ճոխ,
Կլինես սեղանապետ,
Արբեցած քո ջերմ խոսքով,
Կբացեմ սիրտս քեզ հետ,
Կշոյեմ երազը քո՝
Քնքշանքով սրտիս բոցի,
Արարատ սարը մի օր
Մեր սիրով պիտի օծվի»:

6

Սեր ես տվել, խլել քունս,
Հանգիստ չունեմ գիշեր ու տիվ,
Խնկաբույր ես դարձրել հունս՝
Հոգսերի մեջ մեր այս անթիվ:
Աստղի նման ժպտում ես ինձ,
Կարկաչում ես առվի նման,
Դարձել ես մի քնքույշ տեսիլք՝
Շոյանքներով քո աննման:

Կոպերիս տակ, սրտիս խորքում,
Գրավել ես գահդ լուսե,
Մրմունջներն իմ ցաված հոգու
Դարձրել ես երազ ու սեր:
Հեռախոսի զանգն է հնչում,
Թպրտում է սիրտս կարոտ,
Դռան զանգից վեր եմ թռչում,
Որ պիտի գաս ոնց առավոտ:
Խոհերիս մեջ ու երգերում
Հրեշտակս դու ես դարձել,
Հուր մորմոքով իմ վերքերում
Բախտիս դուռը դու ես բացել:
Ես կաղոթեմ Աստծուն անվերջ՝
Ծնկի գալով քո դեմ - դիմաց,
Իմ հեքիաթված երազ ու տենչ,
Իմ անմարում սիրո իմաստ:

7

Ա՜խ, ասում ես՝ դիմացիր,
Մեկ օրն ի՜նչ է...
Սեր իմ, մեկ օրս առանց քեզ
Կարոտի ճիչ է...
Սպասումի մի դար է,
Օվկիան է ցավի,
Կրծքիս ընկած մի սար է,
Մի քար է դավի,
Սեր իմ, մեկ օրս առանց քեզ
Խոհերի ծով է,
Հոգուս խորքում հրակեզ
Երգերի սով է,
Աղ ու հացս մենության

Դառնություն է թեժ,
Տառապանք է գերության,
Սրտակուլ հրեշ:
Ա՜խ, ասում ես՝ դիմացիր,
Մեկ օրն ի՜նչ է,
Սեր իմ, մեկ օրս առանց քեզ
Անկարապ լիճ է:
Մի վարդազուրկ պարտեզ է,
Տոչորված հանդեր,
Սեր իմ, մեկ օրս առանց քեզ
Իմ սիրտն է՝ անտեր:

8

Մատներդ հույսի մոմեր են,
Լույս վառիր հոգուս խորքերում,
Աչքերդ հույզի ծովեր են,
Ծածանվիր սիրուս երգերում:
Նազերդ երազի թեւեր են,
Իմ սրտի վրայով քայլիր,
Թախիծս արեւի ծարավ է,
Սրտամաշ թախծիս մեջ փայլիր:
Պատմության կանչերից ծնված
Իմ Երազ Աստղիկն ես, որ կաս,
Ես սիրո ծարաված ուխտյալ,
Գիտեի, որ մի օր պիտի գաս:
Պիտի գաս, գտնես ինձ՝ ծնկաչոք,
Աղոթքս կարդաս իմ սրտում,
Եվ դարձած հավատի առավոտ,
Քո սիրով հավերժվես իմ գրկում:

Օգոստոս-հոկտեմբեր, 2000թ.

ԱՐՄԻՆԵԻՆ

Ասում են՝ Աստված կնոջն ստեղծեց,
Իր նմանությամբ, գեղեցկությամբ իր,
Հենց այդ էր, այո, Աստծո գյուտը մեծ,
Աստծուն-Աստված դարձնող ուժը հին:
Քանի՜ դարեր են եկել ու անցել,
Հմայքն Արարչի նորոգվում է դեռ,
Այս նուրբ աղջկա ժպիտը վկա,
Այդ դու ես նրան ընծայել, իմ Տեր...
Արեւ ես դրել նրա կրծքի տակ,
Որ բանաստեղծին պարգեւի թեւեր...

12.07.2003 թ.

ԻՆՉՈՒ

Դու ինձ համար Աստվածուհի,
Չվերծանվող հեքիաթ,
Դու ինձ համար ե՛ւ նոր, ե՛ւ հին
Ադամանդ ու ակաթ:
Դու լեռնային զուլալ աղբյուր,
Ես քո ջրին ծարավ,
Դու ինձ համար գարնանաբույր
Արեւելք ու հարավ:
Դու արեգակ հրեշտակաթեւ,
Անմահական թռչուն,
Ես քեզանով հզոր Անթեյ,
Բայց ինչո՞ւ ես տանջում:
Ինչո՞ւ ես քեզ սիրել տալիս,
Ուշք ու միտքս խառնում,
Ինչո՞ւ ես ինձ թեւեր տալիս
Եվ թռիչքս առնում:

1991 թ.

ԻԷՎԱՅԻՆ

Լատվիան չեմ տեսել երբեք, Իէվա,
Այցելել եմ ես երազներիս մեջ,
Քո հայացքի մեջ՝ նուրբ, հոգեհմա,
Տեսել եմ նրա լույսերը անշեջ:
Քո նուրբ հայացքում արեւներ կան վառ,
Քո խոհերի մեջ երազներ անթիվ,
Հավատա, որ իմ Արցախում չքնաղ,
Քեզ հիշելու եմ ես գիշեր ու տիվ,
Երազներիս մեջ դու միշտ կերեւաս,
Լատվիայի հրաշք դուստր, Իէվա:

Ծաղկաձոր, 04.10.2007թ.

Այս հրաշք աղջիկները՝ Ռինա Հովսեփյանը, Սուսաննա Մանգասարյանը, Զարինե Աղաբեկյանը երգելով են տպագրում իմ երգերը

ՊՍԱԿ ՑԱՎԻ ԵՎ ՎՇՏԻ

Ինձ մոր պես փայփայած, քնքույշ
եւ խոհեմ զոքանչի՝ Աղավնի
ՀՈՎՍԵՓՅԱՆԻ սուրբ հիշատակին...

Գնաս բարով, անուշ մայրիկ,
Խելոք մայրիկ, գնաս բարով,
Դու իմաստուն, դու եւ բարի,
Միշտ զարդարված խոսքաշարով:

Դեռ պատանի, ես սիրեցի
Արեւատես քո աղջկան,
Կյանքում նույնիսկ չգիտեի
Այս աշխարհի կան ու չկան:

Բայց մայրաբար ինձ ժպտալով
Ասիր՝ սերը չեն խանգարի,
Աստվածորեն համբույր տալով,
Օրհնեցիր իմ տասնութ տարին:

Այս օրվանից, ոնց շոյող ձեռք,
Իմ բերկրանքն ու ցավն ես կիսել,
Ես քեզանից կյանքում երբեք
Մի անտեղի խոսք չեմ լսել:

Ժողովրդի թարմ հուշերով
Ձինված դու մի առածանի,
Դու Անիի հին փեշերով
Հավերժ հոսող Արածանի:

Գնաս բարով, երբ հանդիպես
Մորս՝ չասես ցավիս մասին,
Հորս չասես ցավիս մասին,
Ծնողներս նուրբ են այնպես:

Բայց Սրբուհուն՝ իմ անունից
Դու կպատմես, թող իմանա,
Թեկուզ չկա՝ առաջվա պես
Իմ Մեծ սիրո Աստվածն է նա:

Ասա՝ մոտը գահն իմ պահի,
Գալու եմ եւ բազմեմ կողքին,
Մենք՝ թագավոր ու թագուհի,-
Մեկտեղ է մեր հավերժ հոգին:

Գնաս բարով, քաղցր մայրիկ,
Հոգիդ լույս էր այս աշխարհում,
Քեզ պես քաղցր մայրիկների
Թողած լույսը, ոչ, չի մարում:

Ներիր, որ քո սուրբ դագաղի
Մի ծայրը իմ ուսին չառա,
Արցուքներս են հոսում աղի,
Ցավը սիրտս քամեց - տարավ:

Իմ այս երգը սրտիս խոսքն է,
Դու շատ էիր սիրում երգը,
Մեր հուշերում հավերժ կապրի
Քո փայփայող, քնքույշ ձեռքը:

Գնաս բարով, աղավնաթեւ
Իմ Աղավնի քաղցր մայրիկ,
Հողդ վրադ լինի թեթեւ,
Մայրերի մեջ բարձր մայրիկ:

19.12.1996թ., Երեւան, № 3 հիվանդանոց

ՑԱՎԻ ՍՓՈՓԱՆՔ

Իմ սանուհի, ճանաչված ուսուցչուհի
Անահիտ Պետրոսյանի վաղաժամ
մահվան առթիվ

Աստծո անունով դու մեր դիցուհի,
Աստծո օրհնանքով օծված բարություն,
Քո ժպիտնրով գարունն էր բացվում,
Եվ սրբությունն էր առնում հարություն:
Ձայնդ կարկաչուն աղբյուր էր լեռան,
Սիրտդ աստղերի շողարձակ աղբյուր,
Հոգիդ արեւ էր, որի շոյանքից
Ծաղիկներն էին փայլում բազմաթույր:
Տան ճրագ էիր, մանկանց սրբամայր,
Հոր ու մոր հավատ ու լուսավոր կյանք,
Քո երազները կանթեղված աշխարհ,
Քո ընկերներին համակող բերկրանք:
Դու Անահիտված մեր լույս Անահիտ,
Աստված այդ ինչպե՞ս խլեց կյանքը քո,
Գուցե լավերին նա տանում է շուտ,
Որ գահը վարի շքեղ վայելքով:
Դու մեր ընտրյալ Անահիտ Աստված,
Դու չես մոռացվի, կապրես հար-հավետ,
Հավերժող կյանքդ վերուստ է հաստված,
Դու ապրելու ես սերունդներիդ հետ,
Որպես Դիցուհի, որպես սուրբ Աստված:

26.05.2005

ԿԱՐՈՏԻ ԵՐԳ

Հորեղբորս թոռնուհի, վաղամեռ
Իրայի հիշատակին

Օրերն անցնում են, ու կանչում ենք քեզ,
Սակայն դու չկաս, չես պատասխանում,
Դու դեռ նոր բացված մի նուրբ ծաղիկ ես,
Ինչո՞ւ չես գալիս, այդ ի՞նչ ես անում:

Բա դու չասացի՞ր. "Գնում եմ դասի",
Չասացի՞ր. "Մայրիկ, շուտով կգամ տուն",
Սպասում ենք քեզ, ինչո՞ւ չես գալիս,
Ինչո՞ւ չես գալիս, մնում ենք անքուն:

Հավատում ենք դեռ քո վերադարձին,
Գիրքդ սեղանին մնացել է բաց,
Իրիկնամուտին, թե լուսաբացին,
Սպասում ենք մենք մեր աչքերը թաց:

Սպասում են քեզ դասընկերներդ,
Դպրոցի զանգն էլ կարոտել է քեզ,
Ձեռքով են անում ծաղկած ծառերը,
Բայց թառամել ես աշնան ծաղկի պես:

Մեր արցունքները առու են դարձել,
Կրակվել են մեր սրտերը բոլոր,
Ասա, ինչո՞ւ ես դու մեզ մոռացել,
Ինչո՞ւ ես թողել մեզ մտամոլոր:

Իրիկնամուտին, թե լուսաբացին,
Մենք քո կարոտից վառվում ենք, լալիս,
Հավատում ենք դեռ քո վերադարձին,
Սպասում ենք դեռ, ինչո՞ւ չես գալիս:

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Մեր վաղամեռիկ գեղեցկուհի Անահիտ
Գուրգենի ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ սուրբ հիշատակին

Անահիտ ասենք, գարունը ծաղկի,
Ասենք Անահիտ, բացվեն վարդերը,
Հրաշք կատարվի, Անահիտը գա,
Եվ մենք մոռանանք մեր խոր դարդերը:

Անահիտ ասենք, խոսի Մռովը,
Ասենք Անահիտ, Թարթառը երգի,
Հրաշք կատարվի, Անահիտը գա
Եվ ծնողների արցունքը սրբի:

Անահիտը գա- լինի հարսանիք,
Ամբողջ Արցախը երգի ու պարի,
Նա պիտի դառնար Անահիտ մայրիկ,
Մոր լույսով պիտի ժպտար աշխարհին:

Ա՜խ մի՞թե, մի՞թե Աստված անգութ է,
Ախ, մի՞թե,- մի՞թե հրաշքը սուտ է...

21.05.1989թ. Ստեփանակերտ

ՑԱՎԱԾ ՍԻՐՈ ԿԱՆՉ

Ֆիզիկոս - մանկավարժ Արարատ ՍԱՐԳՍՅԱՆԻ
զրույցը կյանքից անժամանակ
հեռացած իր սիրելի կնոջ՝ ԱՆԺԵԼԱՅԻ
սրբացած հոգու հետ...

Սեր իմ, հիմա հուշ ես, երազ,
Հուշերիս մեջ Դու ես հառնում,
Հուշերիս մեջ Դու ես դարձյալ
Աղավնաթեւ Սերս դառնում:
Ես ապրում եմ ներկայի մեջ,

Բայց քեզ հետ եմ՝ սրտով, հոգով,
Դու ես կյանքիս կանթեղն անշեջ,
Իմ կրծքի տակ պատկերն է Քո:
Դու ես ցաված սիրտս շոյում
Եվ ինձ գերում առաջվա պես,
Առաջվա պես ինձ հմայում,
Դիմավորում միշտ սիրակեզ:
Երդվել էինք՝ լինել մեկտեղ,
Մեկտեղ վառել աստղերը մեր,
Մեր օջախը պահել մեկտեղ,
Մեկտեղ երգել տաղերը մեր:
Թոռների հետ մեկտեղ խաղալ,
Ծերությունը շահել մեկտեղ,
Մեր օջախում՝ ջերմ ու խաղաղ,
Մեր թոռներին պահել մեկտեղ:
Սակայն, ավա՜ղ, Հեքիաթ իմ Սեր,
Բախտը դաժան եղավ իմ դեմ,
Հրեշտակի թեւեր առար,
Ինձ թողնելով մենակ, անթեւ:
Չեմ մոռանում ես Քեզ երբեք,
Դու դարձել ես կարոտի երգ,
Որ հնչում է ոչ թե շրթիս,
Այլ փոթորկված իմ արյան մեջ,
Որ շնչում է ոչ թե գրկիս,
Այլ հնչում է հոգուս տան մեջ:
Խոսք - զրույցս միշտ Քեզ հետ է,
Կարոտ - հույզս մի հորդ գետ է,
Քեզ հետ եմ իմ ցավը տանում,
Երազ դարձած իմ սրբանուն:

13.02.2010 թ.

ՏԱՏԻԿՆ ՈՒ ՍԱԹԻԿԸ

Նվեր վաստակաշատ մանկավարժ
Զոյա Սարգսյանին եւ նրա
թոռնուհի Սաթիկին...

1. ՍԱԹԻԿԻ ՏԱՏԻԿԸ

Ես Սաթիկն եմ, Սաթիկը,
Գեղեցիկ է տատիկս,
Աշխատասեր ու բարի,
Նա պսակն է աշխարհի:
Երբ ես «հինգ» եմ ստանում,
Տատիս քունը չի տանում,
Պատրաստում է կարկանդակ,
Ինձ նվիրում է գնդակ,
Փայփայում է ինձ անվերջ,
Եվ ինձ պահում գրկի մեջ:
Ես Սաթիկն եմ, Սաթիկը,
Արեւ է իմ տատիկը:

04.05.2006թ.

2. ՍԱԹԻԿԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ես սիրում եմ տատիկիս,
Նա էլ ինձ է շատ սիրում,
Օգնում է իմ դասերին,
Ինձ հետ հաշվում է, գրում:
Բայց ամեն օր դպրոցում
Պայուսակս է ծանրանում,
Չէ՞ որ տատիս օգնությամբ
Միշտ «5»-եր եմ ստանում:
Մի օր տատիս ասացի.

- Պայուսակս է ծանրանում,
Ասա, ինչպե՞ս բերեմ ես
Մեր դպրոցից մինչեւ տուն:
Տատիկս ասաց .- Սաթիկ ջան,
Այդ մասին մի մտածիր,
Պայուսակդ ես կբերեմ,
Միայն «5» - եր ստացիր:

05.05.2006թ.

3. ՏԱՏԻԿԻ ԳԼԽԱՑԱՎԸ

Այսօր դասից եկա տուն,
Տեսա հիվանդ է տատիս,
Թեեւ հիվանդ եւ անքուն,
Ճաշ է եփել ինձ համար:
Ես տուն եկա շա՜տ ուրախ,
Նա ինձ գրկեց, հիացավ,
Հենց որ տեսավ «հինգերս»,
Գլխացավը իր անցավ:

20.05.2006 թ.

4. ԽՈՍՔԸ ԿԱՍԵՆ ՄԻ ԱՆԳԱՄ

- Սաթիկ, Սաթիկ, իմ Սաթո,
Տատը մատաղ լինի քեզ,
Ինձ չքողնես ամոթով,
Դասդ սերտիր միշտ ինձ պես:
- Տատիկ, արեւ իմ կյանքի,
Սիրտս էլ ուզես քեզ կտամ,
Համ էլ հիշիր, այ տատի,
Խոսքը կասեն մի անգամ:

31.05.2006 թ.

5. ՏԱՏԻԿԻ ԽՈՍՔԸ

Տատիկն ասաց.
«Իմ Սաթո,
Արդեն ունենք
Լավ կատու,
Կատվին շատ եմ
Սիրում ես,
Ու մնում եմ
Միշտ արթուն»:
Սաթիկն ասաց.
«Իմ տատի,
Թող ես լինեմ
Փիսիկդ,
Իմը լինի
Տաք գիրկդ,
Միշտ ինձ սիրիր,
Իմ տատի,
Ես ել սիրեմ
Քո կատվին»:

03.06.2006 թ.

6. ԴԻՄԱՎՈՐՈՒՄ

Տատը տնից ելավ բակ,
Դիմավորեց Սաթիկին,
Իսկ շնիկն իր հաչոցով
Ջղայնացրեց տատիկին:
Սաթիկն ասաց. «Ա՜յ շնիկ,
Ի՞նչ ես անվերջ դու հաչում,
Քեզ պահում է տատիկը,
Դու նրան չե՞ս ճանաչում»:

05.06.2006 թ.

7. ՄԻ ՍԱԹԻԿ Է, ՄԻ ՏԱՏԻԿ

Մի տատիկ է, մի Սաթիկ,
Մի Սաթիկ է, մի տատիկ,
Տատը՝ թոռան հովանի,
Թոռը՝ արեւ մի հատիկ:
Տատը լույսն է Սաթիկի,
Սաթոն՝ հույսը տատիկի:
Տատն ասում է, որ ոչ ոք
Չի հասնի իր Սաթիկին,
Սաթոն Վարդն է տատիկի,
Տատը կյանքն է Սաթիկի,
Մի տատիկ է, մի Սաթիկ,
Մի Սաթիկ է, մի տատիկ:

07.06.2006թ.

8. ՄԱՍՈՒՐՈՎ ԹԵՅ

Տատիկ, այսօր մայրիկս
Մասուրի թեյ տվեց ինձ,
Համտես արավ հայրիկս,-
Չհավանեց նա նորից,
Ասաց. «Խելոք իմ Սաթիկ,
Կրկին դիմիր տատիկին,
Նա մասուրը չի եփում,
Հյութն է քամում հատիկի»:
Սաթոն դիմեց տատիկին.
«Տատի, բերեմ մասուրը,
Եռացրու դու ջուրը,
Ընտրեմ մասուրը ալվան,
Ջուրը լցրու դու եռման...
Կհավանի հայրիկս,
Կսովորի մայրիկս»:

5.06.2006 թ.

ԲԱՐԻ ԼՈՒՅՍԸ

Ավոն հարցրեց.
- Արշալույս,
Ե՞րբ են տալիս
«Բարի լույս»:
Արշալույսը
Հիացած
Համբույր տվեց
Եվ ասաց.
-«Բարի լույսը»,
Այ, Ավո,
Կտան ամեն
Առավոտ:

ՎԱՐԴԻ ԹՈՒՓԸ

Վարդ է սիրում
Մեր Հարութը,
Բայց կտրում է
Վարդի թուփը:
Չի հասկանում
Չարաճճին,
Որ առանց թուփ
Վարդ չի աճի:

ՉՅՈՒՆԵ ՊԱՊԻՆ

Մեր Արտակը
Չյունից պապիկ
Պատրաստեց,
Արեգակը
Ելավ՝ ձյունը
Հալեցրեց:
Արտակը՝ թե.
- Պապն ո՞ւր գնաց,
Այ Մերի,
Մերին ասաց.
- Գնաց
Ծաղիկներ բերի:

ՉՄԵՌ ՊԱՊԻ

Նվեր ԱՆՈՒՇԻՆ

Չմեռ պապի, ես Անուշն եմ,
Սպասել եմ քո գալուն,
Մորս համար քաղցր նուշ եմ,
Տատիս համար՝ վառ գարուն:
Դու ծաղիկներ մեզ նվիրիր,
Մեզ նվիրիր արեգակ,
Պապիկիս պես դու ինձ սիրիր
Ու նվիրիր ուրախ կյանք:
Կսովորեմ միշտ գերազանց,
Տանը կօգնեմ մայրիկիս,
Տատիս կօգնեմ, որ թխի հաց,
Կսիրեմ եւ պապիկիս:

Ձմեռ պապի, ես Անուշն եմ՝
Աշխատասեր ու բարի,
Մորս համար քաղցր նուշ եմ,
Բարով բերես նոր տարին:

01.01.2000թ.

ՀԱՍՄԻԿԸ

Նվիրում եմ Հասմիկ Հովիկի ՔԱՐԱՄՅԱՆԻՆ

Ինքը Հասմիկ,
Ունքը Հասմիկ
Հասմիկի:
Կյանքը քաղցր,
Ձանքը բարձր
Հասմիկի:
Թե նվագի,
Կամ թե երգի,
Դեղ կդնի քո վերքին,
Ժպիտը մեղմ,
Սրտիկը ջերմ,
Թուխ, թխահեր
Հասմիկի:

Ինչքան գնա,
Թող բարձրանա,
Թող քաղցրանա
Հասմիկը,
Մեր ոգու եռք,
Մեր անուշ երգ,
Մեր բուրավետ
Հասմիկը:

Բաքու, 13.06.1971թ.

ՈՂՋՈՒՅՆ ՄԵՐ «ԼՈՒՍԱՅԳ»-ԻՆ

Երբ կարդում եմ «Լուսայգ»,
Իմ պապին եմ տեսնում՝
Բահը ձեռքն առած,
Դառած աղբյուր հույսի:
Իմ տատին եմ տեսնում՝
Արեւի պես ժպտուն,
Թոռան սերը սրտում,
Փոխված լույսի:
Երբ կարդում եմ «Լուսայգ»,
Հայրիկիս եմ տեսնում՝
Միշտ մեր դաշտ ու հանդում,
Հոգսերի մեջ արթուն,
Իմ նուրբ մորն եմ տեսնում՝
Հորս թեւ ու թիկունք,
Իմ եղբորն եմ տեսնում՝
Ջինվորական դիրքում:
Ինձ եմ տեսնում նաեւ,
Իմ լավ ընկերներին,
Սիրով, համբերությամբ,
Ուշիմ դաս սերտելիս,
Մեր ողջ գյուղն եմ տեսնում
Մայր Արցախի գրկում,
Լույս երազներ սրտում՝
Նոր կյանքն իր կերտելիս:
Եկեք ողջույն ասենք
Թերթին մեր լուսաշող,
Մենք՝ ընթերցող որպես,
Որպես լրագրող:

2006 թ.

ԱՐՑԱԽԻ ՀՈՂԸ

Արցախի հողը
Քաղցր է, ինչպես նուշ,
Հոր սրտի դող է,
Մոր երգ է անուշ:
Պապիկի դաս է,
Տատիկի հեքիաթ,
Քաջ եղբոր ասք է
Ու քրոջ քնքշանք:
Արցախի հողը
Մեր օջախն է հին,
Նա մեր գալիքն է,
Պայծառ ու անգին:

09.04.2008թ.

ՁՅՈՒՆԸ ԴԵՌ ՉԻ ԱՆՑԵԼ

Պատշգամբի մեր բազրիքին
Ձյունը դեռ չի անցել,
Մեր թթենու բարձր ճյուղին,
Ուլունքներ է սարքել:
Իմ Անահիտ քույրիկի հետ
Հորինել ենք մի երգ,
Ճմճղուկներին մոտ ենք կանչում,
Որ գան, ճաշեն մեզ հետ:
Պատշգամբում կուտ ենք ցանել,
Որ վայելեն անվախ,
Որ ծլվլան ու թռչկոտեն
Մեզ պես՝ կուշտ ու ուրախ:
Իսկ երբ ձյունը հալչի, գնա,

Մենք կայցելենք այգի,
Ծիտիկներին բարեւ կտանք
Ամեն մի լուսայգի:
Նրանք մեզ հետ թեւին կտան,
Կերգեն, ոնց բարեկամ,
Մեզ հետ կերգի նաեւ առուն,
Որ եկել է գարուն:

09.04.2008թ.

ԱԼԻԿԻ ՍԽԱԼԸ

Մայրը գնաց հիվանդանոց,
Ալիկն իսկույն ելավ փողոց,
Փոքրիկ Սեթին լացացրեց,
Քրոջ գիրքը տարավ-թաքցրեց,
Մտավ այգին հարեւանի,
Ջարդեց ծաղկած սալորենին,
Աջ վազվզեց,
Ձախ վազվզեց,
Խաղով ընկավ, դասը մնաց,
Այդպես օրը անցավ, գնաց:
Մայրը եկավ
Ու զարմացավ,
Այդ ամենից
Ձղայնացավ,
Նորից պառկեց,
Հիվանդացավ:
Ալիկն ասաց.- Հանգստացիր,
Սխալվել եմ, աչքդ բացիր,
Խոսք եմ տալիս Հայկի նման
Միշտ քեզ լսեմ, խելոք մնամ:

ԱՄՈԹ ՔԵԶ

Վա՜յ, ամոթ քեզ,
Այ Սաթիկ,
Ունես այդքան
Լավ տատիկ,
Բայց դու նրան
Չես հարգում,
Գիտեն անգամ
Ձեր բակում.
Ձուր է ուզում,
Չես տալիս,
Մոտ է կանչում,
Չես գալիս,
Քեզնից փոքրիկ
Եղբորդ
Լացացնում ես
Ողջ օրը,
Քրոջդ մազերն ես
Քաշում,
Ժամանակին
Չես ճաշում,
Բակից ուշ ես
Գնում տուն,
Գիշերն ուշ ես
Մտնում քուն:
Վա՜յ, ամոթ քեզ,
Այ Սաթիկ,
Ունես այդքան
Լավ տատիկ,
Բայց դու նրան

Չես հարգում,
Գիտեն անգամ
Չեր բակում:

ՄՐՑՈՒՅԹ

Մրցում են «Կայծակ» եւ «Շանթ» թիմերը

Արի, «Կայծակ», արի մրցենք,
Արի մրցենք ամեն ինչում,
«Շանթն» եմ, դու այդ լավ իմացիր,
Ոչ մի անգամ ես չեմ զիջում:
Ես չեմ թողնի, որ ուսման մեջ
Ինձնից առաջ անցնես, գնաս,
Թե կրակ էլ դառնաս անշեջ,
Պիտի ինձնից դու հետ մնաս:
Վազելու մեջ, թե ցատկելու,
Առաջինը ես եմ, «Կայծակ»,
Ամբողջ օրը աշխատելու
Ես ինքս եմ «Շանթ ու կրակ»:
Մեր մեծերին հարգելու մեջ
Դարձյալ ես եմ առաջինը,
Մեր փոքրիկին սիրելու մեջ
Ես եմ, ես եմ առաջինը:
Ուսուցչին հարգողը ես,
Տատին, պապին պաշտողը ես,
Մորը սիրով օգնողը ես,
Քրոջ սրտի նուրբ դողը ես:
Ի՞նչ ես դու քեզ առաջ տալիս,
Հետո՞ ինչ, թե դու «Կայծակ» ես,
«Շանթի» դիմաց, լավ իմացիր,

Թեւը կոտրած մի մոծակ ես:
Թե թշնամուն ջախջախել կա,
Ես եմ, ես եմ առաջինը,
Լավ գործերին մասնակցել կա,
Ես եմ, ես եմ առաջինը,
Ծառատունկ կա, էլի ես եմ,
Երգ ու պար կա, էլի ես եմ,
Նկարել կա, դու չես, ես եմ,
Ճիշտն ասած, գործի կեսն եմ:
Դու չես կարող ինձ հետ մրցել,
Քանի ուշ չէ՝ հանձնվիր, «Կայծակ»
Սկսել ես արդեն մրսե՞լ,
Ես առյուծ եմ, իսկ դու մոծակ:
Չես պարապել մի ողջ տարի,
Վեր կաց գնա մարդավարի...

ՄԱՐԻԱՄԻԿԸ

Մարիամիկը գետի ափին
Ջրահարս է մի աննման,
Ձարմացել է ամռան արփին,
Մարիամն իրեն շատ է նման,
-Մարիամ, արի,- հովն է կանչում,
Վարդն է կանչում՝ Մարիամ արի,
Գահավիժող գետն է շաչում՝
Դու հրաշքն ես լեռնաշխարհի,
Կարկաչում է զուլալ առուն՝
Մարիամ, արի թուշդ պաչեմ,
Իսկ եղեւնին շշնջում է՝
Մարիամ, քեզ պես թող կանաչեմ:

Համերգում են ծղրիդները՝
Բազմած ճյուղին եղրեւնու,
Մարիամիկին երգ է ձոնում
Ցիտն էլ շյուղին ձիգ եղեւնու:
Մարիամիկը գետի ափին
Ջրահարս է մի աննման,
Հիացել է ամռան արփին,
Որ Մարիամին շատ է նման:

27.07.2008 թ.

ՄԵՐ ԿԱՐԵՆԸ

Փոքրիկ ԿԱՐԵՆԻՆ, որ իր պապիկի հետ հանգստանում էր Ջերմուկում՝ մեր հարեւանությամբ

Մեր Կարենը շատ լավիկն է,
Ցնողների ժիր բալիկն է,
Նա լսում է Մարգո տատին,
Խորհուրդները Սոկրատ պապի,
Ժամանակին սնվում է կուշտ,
Գիշերները քնում մուշ-մուշ,
Պատառաքաղ բռնել գիտե,
Փոքրիկ է, բայց խելքի գետ է,
«Բարի լույսը» եւ «երեկոն»
Նա մաղթում է մեծի խելքով,
Չի մոռանում իր հայրիկին,
Ճերմակահեր Հուսիկ պապին,
Ընկերների հետ պարում է,
Պարերի մեջ արարում է...
Ջինջ երազներ ունի գալիք,
Պիտի դառնա խելոք բալիկ,
Երջանկացնի Արմեն հորը

Եվ պաշտպանի Ալլա - մորը,
Թող իմանան եւ բոլորը,
Որ նա կյանքում մեր արեւկա,
Կունենա եւ լույս ապագա...

10.08.1998թ.

ԾՈՒՅԼԸ

Հանգիստ մեռնում էր մի ջահել հսկա,
Մարդիկ շուրջ բոլոր թախծում էին լուռ-
Հանկարծ քաղաքից եղբայրը նրա,
Մեծ իմաստունից բերում է մի լուր.
Թե մեռնող հսկան իր դագաղի մեջ
Համտես անի մի եփած կարտոֆիլ,
Աստծո օրհնանքով նրա կրծքի տակ
Կհորդի նորեն ավիշը կյանքի:
Հարազատները տագնապած, հուզված,
Եփեցին իսկույն կարտոֆիլն ընտիր,
Երբ բերին, տվին հսկային պառկած,
Նա դժկամորեն ասաց բոլորին.
«Ինչո՞ւ չեք կլպել դուք կարտոֆիլը,
Ինչո՞ւ էք պլշած հրմշտում իրար,
Չեմ կարող մաքրել կարտոֆիլը ես,
Շուտ արեք, հողը լցրեք ինձ վրա»:

ԱՐՏԱՇԵՍԻ ՆԿԱՐԸ

Արտաշեսը նկարեց
Սարերը Քիրս ու Մռով,
Ամարաս ու Գանձասար
Եվ էլի վանքեր...

Հետո գետեր նկարեց.
Խաչեն ու Թարթառ,
Իր պապ Սոսին նկարեց,
Տատիկին՝ Զարդար,
Իր եղբորը նկարեց՝
Շարքերի մեջ՝ փողոցում,
Ձեռքին պաստառը կարմիր,
Վրան գրած. «Միացում»,
Դեմը զինվոր նկարեց,
Ինքնաձիգներ ու տանկեր...
Արան տեսավ եւ ասաց.
- Դա Արցախն է մեր:

01.02.1989 թ.

ԱՐՑԱԽ

Նունեն հարցրեց Արամին.
- Ի՞նչ ասել է Արցախ:
Արամն ասաց.
- Այ Նունե,
Արցախը հին անուն է,
Ես հարցրել եմ մեր Հայկին,
Այն կոչվում է «Մեծ այգի»:

23.12.1988 թ.

ՀԱՅԿԻ ԲՈՂՈՔԸ

Դուռը բացեց մայրիկը,
Նրան օգնեց Հայկիկը,
Մայրիկն ասաց. «Ախպեր ջան»,
Դո՞ւ էլ դարձար գաղթական:
Բազմած քեռու թեւերին,

Հայկը սաստեց հաղթական.
«Արտաշես է իմ քեռին,
Մի անվանեք գաղթական»:

19.01.1989 թ.

ԱՐԱՄՆ ՈՒ ՆԱՆԸ

-Ղարաբաղը մե՞րն է...
Ղարաբաղը մե՞րն է...
Հա՜ կրկնում է Արամը:
Դողդոջ ասում է Նանը.
-Ղարաբաղը մե՞րն է,
Ղարաբաղը մե՞րն է,
Մեր պապերից մեզ հասած
Սրտի դաղը մե՞րն է...

25.12.1989 թ.

ՀԱՅԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Իր խաղալիք - ինքնաթափով
Հայկը ավազ էր թափում,
Մայրը կանչեց. «Հայկ, տուն արի,
Ի՞նչ ես կորցրել այդ բակում»:
Հայկը ասաց. «Բա չես տեսնու՞մ,
Քար-ավազ եմ հավաքում,
Նոր դպրոց եմ կառուցելու
Ես մեր Գյումրի քաղաքում»:

18.12.1988 թ.

ԶՐՈՒՅՑ

1988թ. դեկտեմբերի 7-ին մեծ երկրաշարժի օրը շատ ծնողներ ցանկացան որբացած հայ երեխաներ որդեգրել: /Թերթերից/

Մայրիկն ասաց. - Իմ բալիկներ՝
Հայկ ու Արամ, եկեք մոտ,
Եկեք, ձեզ հետ զրույց ունեմ,
Ձեր խորհրդին եմ կարոտ:
Սպիտակի մոտ, - ասում են,-
Գոյացել է մի նոր լիճ,
Վշտի լիճ են կոչում հիմա,
Արցունքի պես աղի, ջինջ:
Որոշել եմ այդ լճակից
Քույր բերել՝ ձեզ վշտակից,
Դեհ, բալիկներ, նրա համար
Անուն գտեք մի հարմար...
Արամն ասաց.- Աստղիկ կոչենք,
Որ միշտ շողա աստղի պես,
Հայկը ասաց.- չէ, չէ, Արամ,
Անունը տամ, հիմա տես:
Աստղերից չեն նրան հանում,
Որ Աստղիկ ես անվանում,
Եթե վշտի ծովից է նա,
Պիտի կոչենք՝ Ծովինար:

21.12.1988 թ.

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ երկրորդ նախագահ
Ռոբերտ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Արցախ աշխարհ՝ Մռով ու Քիրս,
Հայաստանի դուռ ու դարպաս,
Աչքդ հառած դեպի Մասիս,
Միշտ առել ես հաղթության դաս:
Քո բանաստեղծ որդին այսօր
Հաղթանակիդ լույսով հարբած,
Ձավակներիդ գովքն է երգում՝
Հպարտությամբ ու սրտաբաց:
Ձավակներիդ աստղաբույլում
Աստղ դարձած զավակը քո,
Հայոց ազգի ցավն է տանում
Որդիական սիրտ ու հոգով:
Աշխարհով մեկ ցրված ազգին
Մի դրոշի տակ է բերում,
Ու վայրենի քոչվորների
Հարվածները նա չի ներում,
Սեգ Արցախի ձեռքից բռնած,
Նա Հայաստան մորն է հանձնում,
Վանա լճի ծարավը հին
Նրա հոգուց, ոչ, չի անցնում:
Փառքդ հավերժ պիտի ծփա
Իմ Հայաստան, իմ ժողովուրդ,
Քոչարյաններ ծնող ազգ ես,
Հպարտ ապրիր լեռներում լուրթ:
Արագածից մինչեւ Մռով
Նոր հուն մտած լույս տուն ունես,

Դժվար դարիդ ուղին հարթիր,
Դու Քոչարյան զավակ ունես:
Քո երազի դրոշն առած
Նա կոփվել է գոռ մարտերում,
Ով կոփվում է մարտում համառ,
Նա է ազգին պատիվ բերում:
Ռոբերտ ծնող իմ ժողովուրդ,
Իմ Հայոց ազգ՝ դեռ ցանուցիր,
Նա քո մաքուր արյան կանչն է,
Դու նրանով հպարտացիր:

ԹՈՒՐԴ ՊԱՏՅԱՆ ԴՈՒ ՉԴՆԵՍ

ՀՀ երրորդ նախագահ
Սերժ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ձինված հայոց լեզվի զենքով,
Ձեռքդ առար թուրը հատու,
Երգի փոխված մեր երազին
Թեւեր տվիր ահեղ մարտում:
Արմատներդ Սյունյաց երկրում,
Դու հառնեցիր Արցախում սեգ,
Մեծ ու փոքր Սյունիքների
Ճամփին դարձար քաջ զորապետ.
Դու Հայկի ծոռ, Առանի թոռ,
Բելերի դեմ ելած մարտի,
Սյունիք-Արցախ երբ մեկտեղ են,
Ոչ մի չար ուժ մեզ չի հաղթի:
Մայր Արաքսից մինչեւ Օմար
Ձինվորական հետքերն են քո,
Հայոց հզոր բանակը արդ,

Հրամանդ է լսում հոգով:
Փառք քո անցած ճանապարհին,
Երիցս փառք կամքիդ, ուժիդ,
Թուրդ պատյան դու չդնես,
Այդ է հուշում նաեւ Շուշին:
Դու Հայկի ծոռ, Առանի թոռ,
Բելերի դեմ ելած մարտի,
Սյունիք-Արցախ երբ մեկտեղ են,
Ոչ մի չար ուժ մեզ չի հաղթի:

ԽՈՍՔ ՍՐՏԱԲՈՒԽ

ԼՂՀ երկրորդ նախագահ Արկադի ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ՝
ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչման
արժանանալու կապակցությամբ

Վստահել ենք եւ վստահում ենք Ձեզ,
Դա Ձեր վաստակի արժեքն է, որ կա,
Վստահությունը արեւ է հրկեզ,
Թեւում է որպես լուսավոր պատգամ:

Վստահությունը հավատի լույսն է,
Հավատը ուժն է կերտվող պատմության,
Ձեր արդար գործը արդարի հույսն է,
Եվ հորդ աղբյուրն է հավատարմության:

Շնորհավորում ենք Ձեր կոչումը նոր,
Որպես գործընկեր, որպես բարի հայր,
Այսուհետ էլ Ձեր խոսքը փառավոր
Հնչեցրեք որպես դոկտոր-նախագահ:

28.03.2003 թ., Ստեփանակերտ

ԶՐՈՒՅՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԵՏ

Մեծությունները ուշ-ուշ են գալիս,
Բայց ժամանակին:
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Դու ճիշտ ասացիր, սիրելի Սեւակ,
«Մեծությունները ուշ-ուշ են գալիս,
Բայց ժամանակին»:
Սակայն չուզեցիր ավելացնել.
«Մեծությունները շատ շուտ են գնում,
Ոչ ժամանակին»:
Ափսոսում էիր քո երգերի մեջ
Վշտանալ կրկին,
Որ քնարակուռ Դուրյանը գնաց
Ոչ ժամանակին՝
Հոգու կրակը դեռ ամբողջությամբ
Չփոխարինած աստղաբույլերի,
Դեռ կարոտ սիրո,
Կարոտ համբույրի:
Այո՛, պարզապես դու չցանկացար
Փոթորկել կրկին
Փոթորկված հոգիդ,
Որ Մեծարենցի սիրտն արեւաբորբ,
Իր ժողովրդի բախտի նման որբ,
Ծարավ օգնության ու ծարավ լույսի,
Չմարեց կյանքի իր մայրամուտին,
Այլ՝ արշալույսին:
Ասենք, ո՞ր մեկին ողբայիր երգով.
Մեծ Կոմիտասի՞ն,
Զոհրապի՞ն հանճար,
Վարուժանի՞ն, թե

Սիամանթոյի՞ն,
Թե՞... ախր ինչպե՞ս թվարկեմ մեկ-մեկ,
Կյանքն ինչքան էլ մեզ թեւերին առնի,
Վիշտն այդ դարերով կմխա մեզ հետ:
Դու ճիշտ ասացիր, սիրելի Սեւակ,
«Մեծությունները ուշ-ուշ են գալիս,
Բայց ժամանակին»,
Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ,
Դու շուտ գնացիր,
Ոչ ժամանակին,
Գուցե ասեիր. «Մեծությունները
Ուշ-ուշ են գալիս,
Բայց հազա՜ր ափսոս,
Որ շուտ են գնում»:

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻՆ

Ծննդյան 100-ամյակի առթիվ

Ժողովրդիդ տառապանքից
Դու փնջեցիր հույս ու հավատ,
Դարձար նրա արեւորդին,
Սիրտդ տված անրջանքին,
Դու երգեցիր սերն անարատ
Եվ բնության անմեռ ոգին:
Չար աշխարհի ճիրաններում
Չչարացար աշխարհի դեմ,
Երազեցիր լույսը կյանքի:
Ու հողաբույր քո երգերում
Բահը զնգաց, ջուրը ծափեց,
Շունչը թեւեց աշխատանքի:

Ժողովուրդդ վերածնված,
Տառապանքը թողած հետեւ,
Արեւներ է հյուսում հիմա:
Իսկ երգերդ՝ լույսով սնված,
Նրա սրտում՝ հազարաթեւ,
Կարկաչում են հոգեհմա...

19.03.1986 թ., Ստեփանակերտ

ՀԱՎԵՐԺԻ ԶՈՒԳՈՐԴԸ

Նվիրում եմ ժողովրդական արտիստ
Սոս ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Արտավազդ Արքան ողջունեց նրան
Եվ ասաց՝ բացիր թատրոնը հայոց,
Լավ էր ճանաչել իմաստուն Արքան,
Որ նրա սիրտը կրակ է ու բոց:

Եվ նա թատրոնը բացեց ջերմ խոսքով՝
Էվրիպիդեսի անունը շրթին,
Եվ առասպելվեց դարերի խոսքով,
Հոգում արվեստի հարցերը խրթին:

Բոլոր կենսաբույր պիեսների մեջ
Նա կատարում էր գլխավոր դերը,
Թատրոնի ջահը վառում էր անշեջ,
Ականատեսն էր Արամազդ Տերը:

Պաշտում էր նրան սուրբ Անահիտը,
Նրան սիրում էր Աստղիկ Դիցուհին,
Ասում էր՝ հայն այս ոսկեհատիկ է,
Նման տենչ ու սեր միայն Դիցն ունի:

Եվ նա Աստղիկի երազով շիկնած,
Եվ Անահիտի օրհնանքով անբիծ,
Թատրոնի դռները չէր թողնում գոցված,
Խորհում էր՝ դարձած մեծ արվեստի Դից:

Նա զրույց բացեց Մանդակունու հետ,
Պաշտեց ե՛ւ խոսքը, ե՛ւ թուրն հավլունի,
Ասաց՝ իմացիր, Հայոց հայրապետ,
Այն ազգն է ուժեղ, ով թատրոն ունի:

Եվ անվերջ քայլեց նա դարերի հետ,
«Սասնա ծռերը» երգի պես սերտած,
Մերթ Դավիթ դարձավ ու մերթ Դավիթ Բեկ,
Սիրտը դիցարան ու հոգին քերթվածք:

Նա Թումանյանի վշտերը կարդաց,
Ու սիրո ցավը կարդաց Վարպետի,
Մերթ անհուն խինդով, մերթ աչքերը թաց,
Եկավ, միացավ նորօրյա երթին:

Եկավ, միացավ նորօրյա երթին,
Անցյալի դասը դարձրած մի մատյան,
Ձիմզիմով դարձած՝ մտրակը ձեռքին,
Դարձավ Դոն Կիխոտ ու դարձավ Տիբալթ:

Յագոյի դերում չարիքը ժխտեց,
Եվ ապա դարձավ Ուստա Մկրտիչ,
Ամեն դերի մեջ տանջվեց ու քրտնեց,
Բայց էլի սիրտը հուշեց՝ քիչ է, քիչ:

Դարձավ Նահապետ ու Ձորի Միրո,
Անթիվ զոհերի վրեժով լեցուն,
Արարեց Հայոց արվեստի հրում,
Ծիածանելով Մաշտոցի լեզուն:

Նրա աշխարհը Սասունն էր, Մուշը,
Ցավից մխում էր մասիսված հոգին,
Իսկ երբ Արցախին իջավ մշուշը,
Նա կանգնեց նաեւ Արցախի կողքին:

Հիմա այստեղ է - Արցախի գրկում,
Ամբողջ Արցախը առած կրծքի տակ,
Արցախն ասում է՝ իմ անգին որդի,
Որդին կանչում է՝ մայր իմ հարազատ:

Արցախն ասում է՝ քեզնով անպարտ եմ...
Որդին ասում է՝ ես պաշտում եմ քեզ:
Մայրը ասում է՝ քեզնով հպարտ եմ...
Որդին ասում է՝ դու իմ արեւն ես:

Նրանց լսում են դարերը գալիք,
Եվ զրուցում են ապագայի հետ,
Հավատն է ծփում ալիք առ ալիք,
Հավատը՝ դարձած մաքառումի երգ:

Այդպես դարերի խորհուրդը առած,
Նա քայլում է իր ժողովրդի հետ,
Նա՝ աստղերի մեջ նոր աստղ դառած,
Իր գահն ունեցող Սոսը՝ Նահապետ:

16.2.2001 թ., Ստեփանակերտ

ՄԵՐ ՆՈՒՆԵՆ

Հռչակավոր երգչուհի, ժողովրդի ոգու
քնքշալից արտահայտչին՝ աստեղնածին
Նունե ԵՍԱՅԱՆԻՆ

Հոգեպարար հայոց երգի
Կարոտաբեր սոխակն ես դու,
Ոսկեկամար հայոց հերկի
Արեւահեր պսակն ես դու:

Քո հեւքերին մատաղ, Նունե,
Քո քաղցրախոս ձեռքերին,
Երգերդ մեր հոգու հունն են,
Մատաղ քո նուրբ երգերին:

Դու քո ձայնով՝ սրտեր շոյող,
Մեր թախիծն ես փարատում,
Ձայնդ հույս է արեւաշող,
Կարկաչում է մեր սրտում:

Սիրողներին թեւ են տալիս
Քո սիրատենչ երգերը,
Քո երգերը՝ կարոտալից,
Բուժում են մեր վերքերը:

Ծառս են լինում քո երգի տակ
Մռով սար ու Արարատ,
Որ հայության պատիվը թանկ
Պահենք բարձր ու անարատ:

Քո հուսաբեր ու ջերմ երգով
Երազում են Մուշ ու Վան,
Որ Արցախի բացած ճամփով,
Գան ու հասնեն Երեւան:

Միայն քե՜զ չեմ ասում՝ մատաղ,
Մատաղ Աստղ քո մորը,
Հեքիաթային երգ է ու տաղ,
Նրա քնքույշ օրորը:

Քո հեւքերին մատաղ, Նունե,
Քո քացրախոս ձեռքերին,
Երգերդ մեր հոգու հունն են,
Մատաղ քո նուրբ երգերին:

01.07.2003 թ., Ստեփանակերտում ՆՈՒՆԵԻ տոնական համերգի առթիվ

ԱՐԾՎԱՍԻՐՏ ՍԱՄՎԵԼ
(Երգ)

Սամվել ԲԱԲԱՅԱՆԻՆ՝ «Արցախի հերոս» բարձր կոչմանն արժանանալու համար

Մռավ սարը արեւատես
Ողջունում է Քիրսա սարին,
Նա երգում է հպարտ հոր պես,
Փառաբանում որդուն արի.
-Սիրտդ արծվի սիրտ է, Սամվել,
Հոգիդ՝ լեռան մաքուր շուշան,
«Ոսկե արծվի» շողերի հետ
Մեր սերն էլ քեզ՝ շքանշան:

Մայր Արաքսից մինչեւ Օմար,
Զինվորներիդ ոգին դառար,
Երկրիդ ազատ կյանքի համար
Քաջ Նժդեհի դասերն առար:
Թեւերն ես քո ընկերների,
Զորապետն ու եղբայրն ուշիմ,
Թող աչքն էլ լույս մեր դարերի,
Հայերեն է քայլում Շուշին:
Սիրտդ արծվի սիրտ է, Սամվել,
Հոգիդ՝ լեռան մաքուր շուշան,
«Ոսկե արծվի» շողերի հետ
Մեր սերն էլ քեզ՝ շքանշան:

09.05.1997 թ.

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԲԱԺԱԿԱՃԱՌ

Նվիրում եմ ԼՂ պաշտպանության բանակի
ԿՊՇ բոլոր զինվորներին՝ գնդապետ
Սամվել ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ գլխավորությամբ

Բարեկամներ, մեր նոր տարվա շքամուտին
Եկեք նորից ուրախանանք,
Ժպտանք հնի ելումուտին
Ու նորին մեր գիրկը բանանք:
Եկեք, տղերք, հենց առաջին մեր բաժակով
Խմենք կենացը ժողովրդի,
Որ իր սրտի քնքուշ ափով
Փայփայել է ձեզ նման քաջ, արի որդիք:
Եկեք երկրորդ մեր բաժակով
Խմենք բարի կենացը ձեր,
Որ ձեզ ծնող ժողովրդին
Նվիրում եք սրտերը ձեր,

Տեր եք կանգնել նրա ճամփին,
Դարձել հույսը նրա կյանքի...
Եկեք, տղերք, երրորդ եւ սուրբ այս բաժակով
Հիշենք մեր քաջ զոհյալներին,
Նրանք հիմա երրորդության սահմաններից,
Նայում են ձեզ եւ հիանում,
Կարոտներով ձեզ միանում,
Ձեր նոր դժվար փորձերի մեջ,
Հայրենաշեն գործերի մեջ:
Եկեք, տղերք, մեր նոր՝ չորրորդ բաժակով էլ
Խմենք կենացը մեր բանակի,
Գեներալից մինչեւ զինվոր,
Եվ զինվորից մինչ գեներալ,
Եվ միշտ հիշենք,
Չմոռանանք,
Որ մենք ապրող ազգ կդառնանք,
Թե ունենանք հզոր բանակ:
Թե ունենանք հզոր բանակ.
Կունենանք եւ պատիվը մեր,
Պետությունը մեր կունենանք,
Կունենանք մեր տերությունը,
Ազատ կյանքը մեր կունենանք,
Եվ մեզ իրար միաբանող
Մեր նժդեհյան սերությունը:
Դեհ, ուրեմն, բարձրացնենք բաժակները,
Հպարտությամբ ու սիրով նոր
Ու միասին դիմենք նրան.
«Գալդ բարի, մեր Ամանոր»:

31.12.1998 թ., Ստեփանակերտ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Նվիրում եմ «Ջերմուկ»
առողջարանի բժիշկներին

Օրը քանի՜-քանի՜ աչքեր
Նայում են ձեզ լույս-հավատով,
Սփոփում եք քանի՜ սրտեր,
Դուք փրկության հույս-հավատով:
Քիչ է ասել փրկարար եք,
Այն սրբերն եք մարդանվեր,
Որոնց դարեր երազել են
Աստվածապաշտ պապերը մեր:
Ձեր ժպիտը բալասան է,
Խորհուրդը ձեր՝ կյանքի նոր կանչ,
Դուք Ձեր հոգու կրակն անշեջ
Նվիրում եք սիրով մարդկանց:
Դուք մանկան հետ մանկանում եք
Ու մեծանում մեծերի հետ,
Ամեն սրտում ակոսում եք
Երախտիքի մի արահետ:
Բժիշկները մարդկանց հոգում
Ապրում են ոնց հույսի ջահեր,
Առողջ կյանք եմ ես ձեզ մաղթում,
Որ բոլորին առողջ պահեք:

03.10.1978 թ., Ջերմուկ

ԾԻԱԾԱՆ

Հորեղբորս որդուն՝
Յաշա Եփրեմի ԽԱՆՅԱՆԻՆ

Ցավ ու լաց եմ տեսել ես,
Աչքդ թաց եմ տեսել ես,
Յաշա եղբայր, Աստծո պես
Սիրտդ բաց եմ տեսել ես:
Մայրեր, հայրեր կորցրինք,
Քաջ եղբայրներ կորցրինք,
Յաշա եղբայր, սակայն մենք
Երբեք իրար չկորցրինք:
Մի արմատ ենք ու մի ճյուղ,
Մի ցողուն ենք ու մի շյուղ,
Նվիրել է աստված մեզ
Քեզ պես որդի ծնող գյուղ:
Սիրուշ-Սերը քո գնաց,
Բայց հիշատակն իր մնաց,
Ձավակներիդ հետ մեկտեղ
Էլ չտեսնես վիշտ ու լաց:
Սրտով, մտքով քեզ հետ եմ,
Կյանքդ օրհնող մի երգ եմ,
Յաշա եղբայր, քո հանդեպ
Օրհնանքների մի գետ եմ:

Հունիս, 2005 թ., Ստեփանակերտ

ԱՅՆ Ե՞ՐԲ Է ԵՂԵԼ

Սերգեյ ԴԱՎԹՅԱՆԻ ծննդյան
70-ամյակի առթիվ

Սերգեյ Սերգեյիչ,
Նախ, կասկածում եմ՝ քո յոթ-տաս տարին
Դեռ չի լրացել,
Քանզի նման ես լեռներից բխած
Աղբրի ակունքին,
Քանզի քայլելիս, ոտքիդ տակ հողը
Ծաղկում է հուռթի,
Քանզի քո անցած ամեն մի տարին
Ծփանք է բերքի,
Քանզի քո անցած ամեն մի օրը
Նվագ է երգի...
Սերգեյ Սերգեյիչ,
Այն ե՞րբ է եղել, որ դու ապրել ես
Արցախից հեռու,
Այն ե՞րբ է եղել, որ չարիքի դեմ
Դու չես մարտնչել խիստ ու աններում,
Այն ե՞րբ է եղել, որ քո սրտի մեջ
Չի արձագանքել Արցախի կոչը,
Այն ե՞րբ է եղել, որ դու չես հատել
Դաժան թշնամու կեղտակուր պոչը...
Այն ե՞րբ է եղել, որ մեր գանձառատ
Դաշտ ու հանդերի, սրտի եւ հոգու
Հունը չես պեղել,
Այն ե՞րբ է եղել:
Սերգեյ Սերգեյիչ,
Մեր սեղանների սուրբ աղն ու հացն ես,

Պապերից եկող մեր նիստն ու կացն ես,
Ընկերության մեջ մեր զարկերակն ես,
Հաղթանակներն ավետող զարկն ես,
Մեր խենթ քեֆերի պարագլուխն ես,
Ամենապարզը եւ հորդաբուխն ես...
Յոթանասունդ այդ ե՞րբ լրացավ,
Դու մեր լավ ընկեր, միշտ էլ սրտացավ...
Դե, որ ասում ես, արի հավատանք,
Ու բարեմաղթենք հարյուր տարվա կյանք...

ՄԵՐ ՍԱԻԴԱՆ

(Երգ)

Անվանի ջուլհակուհի
Սաիդա ՕՐԲԵԼՅԱՆԻՆ

Լեռնային մի ծաղիկ է,
Մայիսյան մի շաղիկ է,
Անմոռաց մի տաղիկ է,
Սաիդան, մեր Սաիդան:

Մետաքս է գործում քնքուշ,
Երկրից է առնում նա ուժ,
Բոլորին քույր է անուշ
Սաիդան, մեր Սաիդան:

Գործի մեջ թեժ կրակ է,
Թխադեմ, բայց հրակ է,
Սիրո մեջ արեգակ է,
Սաիդան, մեր Սաիդան:

Շողառատ մի փարոս է,
Համեստ ու քաղցրախոս է,
Խնդասիրտ մի հերոս է,
Սաիդան, մեր Սաիդան:

ՍԻՐՈ ԹԵՎԵՐ
(Երգ)

Դու իմ խոհերի
Թեւավոր թռչուն,
Կապույտ ծովերի
Շառաչ ու հնչուն,
Իմ երազների
Անմարում արեւ,
Իմ սուրբ հրաժեշտ,
Ինձ վառող բարեւ:
Թվում է, թե միշտ
Քեզնով եմ թեւել,
Իմ փլատակված
Սիրո նոր թեւեր:
Քո ժպիտներով
Վառվում է հոգիս,
Դու իմ թեւավոր,
Միշտ մնա կողքիս,
Իմ ցաված սիրտը
Բուժիր քո սիրով,
Կրծքիս տակ աստղեր
Վառիր քո հրով:
Բարի աստվածն է
Քեզ ինձ նվիրել,
Դու իմ հրեշտակ,
Իմ սիրո թեւեր:

08.03.2010 թ.

ԵՐԳ ԲԵՐԿՐԱՆՔԻ

Առաջնեկիս՝ ՀԱՄԼԵՏԻՆ՝ ծննդյան
60-ամյակի առթիվ...

Շնորհավոր ծնունդը քո, իմ որդի,
Աշխարհ գալդ իմ երազի ծփանքն էր,
Աշխարհ գալով՝ աշխարհ դարձավ իմ հոգին,
Քո առաջին ճիչը հորդ հրճվանքն էր:
Դեռ չծնված ես քեզ Համլետ կոչեցի.
Շեքսպիրի քաջ հերոսի անունով,
Երբ ծնվեցիր՝ երգս զուլալ մի գետ էր,
Քո լինելով՝ երգս հորդեց նոր հունով:
Աստված մի օր ինձ ողջունեց հայրաբար,
Ասաց՝ «Պոետ, ավագ որդիդ խելոք է»...
Տարիները թեւին տալով հոսեցին,
Հասակ առար, դարձար տաճարն իմ հոգու:
Իմ երգերը քո անունով խոսեցին,
Քո թռիչքը հաղթ թեւերն են իմ ոգու,
Գիտության մեջ հորիզոններ բացեցիր,
Ստեղծելով ժամանակդ քո կյանքում:
Իմ երազն է, որ բախտավոր լինես դու,
Եվ կլինես, ունես Օլյա՝ խելոք կին,
Ունես որդի՝ Ալեքսանդրն իմաստուն,
Ունես դուստր՝ մեր Ելենան թանկագին:
Ամենուրեք աղոթում եմ քեզ համար,
Որդիներիս ավագ եղբայր, իմ Համլետ,
Գալիքի հետ սիրտս կապող, իմ կամար,
Դու հոր նման միշտ կվարվես նրանց հետ:
Շնորհավոր ծնունդը քո, իմ որդի,
Թեկուզ հեռու, բայց շնչում եմ ես քեզ հետ,
Ութսունամյա հորդ ողջույնն ընդունիր,
Դու իմ պարծանք, Վաթսունամյա իմ Համլետ:

18.03.2010 թ.

ՀԱՅՐԱԿԱՆ

ՍԼԱՎԱՅԻՍ՝ նրա ծննդյան 60-ամյակի առթիվ...

Քեզ եմ դիմում, իմ հոգու սյուն Սլավա,
Առեղծված է կյանքը, դու այդ լավ գիտես,
Հաճախ բախտը պղտորվում է ոնց սելավ,
Եվ հաճախ էլ լույս է սփռում աստղի պես:
Մայրդ դարձավ արեւն իմ բարդ ճամփեքին,
Դու հառնեցիր իմ թիկունքին, որպես սար,
Ոգի տվիր ե՛ւ իմ սրտին, ե՛ւ երգին,
Ինձ պաշտեցիր որդիներիս հավասար:
Դարձար եղբայր իմ Համլետին, Կարենին,
Հաստատեցիր, որ խորթ եղբայր չի լինում,
Դա խորհուրդն է անցած բոլոր դարերի,
Այդ խորհուրդով քո գոբելենն ես հինում:
Ես առանց քեզ ուրախանալ չեմ կարող,
Իսկ տխրության պահին, որդիս, ինձ հետ ես,
Արմեն ունես, ունես արեւ Արմինե,
Նրանց ճամփին սերս զուլալ մի գետ է:
Հարսի տեր ես, տեր ես խելոք փեսայի,
Եվ աջ կուռդ Արինան է՝ կինը քո,
Չեմ թաքցնում, ինձ երջանիկ եմ զգում,
Երբ քո ճամփին մայրդ է ցնծում ջերմ հոգով:
Վաթսունամյա հոբելյանդ իմ տոնն է,
Ես հպարտ եմ քեզնով՝ ինչպես սիրող հայր,
Իմ այս երգը հպարտության իմ ձոնն է,
Դու իմ որդի, որդիներիս լավ եղբայր:

14.08.2010 թ.

ՄԻՔԱՅԵԼ ՔԵՌԻՆ

Նվիրում եմ Բոլնիս-Խաչենցի
այգեգործ Միքայել ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հողից է ծնվել Միքայել քեռին,
Կաղնու նման է՝ արմատները խոր,
Կուրծքը դեմ արած դաժան հողմերին,
Հյուսում է գյուղի լեգենդը իր նոր:
Մայր հողի լեզուն նա գիտե անգիր,
Կյանքի բարդ գիրքն է այդ լեզվով կարդում,
Խաղողի վազը շոյում է այնպես,
Ինչպես ծնողը՝ իր սիրած որդուն:
Նրա խոսքերում արտերն են ծփում,
Հասկերն են շրշում բառերում նրա,
Ձեռքը ծնկանը այնպես է խփում,
Որ լույս է փայլում մատների վրա:
Սիրտը գարուն է, ծաղկալից գարուն,
Մանկանց համար է բաբախում անվերջ,
Կարծես խնձորի ծառ է դալարուն,
Աստղեր է տեսնում իր ճյուղերի մեջ:
Հայկ Նահապետի ծոռն է քաջարի,
Բոլնիս Խաչենի բերքատու ծառն է,
Կրծքի տակ պահած ոգին Արցախի,
Գյուղի գալիքի երգող ծիծառն է:
Նա Աղայանի դյուցազուն Տորքն է,
Խորհրդանիշն է հայրենի հողի,
Ամեն ծաղկի մեջ նրա շնորհքն է,
Նա իր գործերով փոխվել է շողի:

25.02.1990 թ.,
Երեւանի հանրապետական հիվանդանոց

ՄԵՐ ԲԱԿՈՒՄ

Նվիրում եմ Մեծ հայրենականի վետերան,
պոեզիայի սիրահար իմ հայրենակից
Գեորգի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Վետերանն է քայլում խրոխտ,
Կրծքին քանի՜ շքանշան,
Մանուկները խնդրում են՝ հա՜
«Մեդալ տուր մեզ, քեռի Գեւորգ»:
Հորդորում է վետերանը.
«Որ մեծանաք, ձեզ էլ կտան»:
Սակայն նրա հայացքի մեջ
Տենչ է փայլում մի հայկական.
... Երկինքներից արեւատես,
Սեւ ամպերը թող հեռանան,
Մինչեւ հերթը գա-հասնի ձեզ,
Կռիվները թող վերանան...

ԶՐՈՒՅՑ

Նվիրում եմ ջավախքցի ընկերոջս՝ ՀԱԿՈԲԻՆ

Ես բարձրաբերձ մեր Արցախից,
Դու՝ Ջավախքի լեռնաստանից,
Սակայն ունենք մի բախտ, մի գիր,
Մեր կյանքը մեզ ուր էլ տանի:

Մի բախտ, մի գիր, որ գալիս են
Մեր պատմության անհուններից,
Որ մեզ երազ, ուժ են տալիս
Նույն սրբազան անուններից:

Մենք կանգնել ենք լեռան ուսին,
Ջերմուկն է մեր ոտքերի տակ,
Մի տես, ո՜նց ենք հպարտանում
Այս լեռների ջրերով տաք:
Արի, արի հպարտանանք
Մեր նվաճած եռագույնով,
Այնպես ապրենք, որ լեռներն էլ
Հպարտանան մեր անունով:

1997 թ., Ջերմուկ

ՈՐՊԵՍ ԿԵՐՈՆ

Հայտնի բժիշկ, ԱՄՆ քաղաքացի, պարոն Վարդգես ՆԱՋԱՐՅԱՆԻՆ, Արցախի պետական համալսարան այցելելու առթիվ

Սիրտդ որպես կերոն,
Հոգիդ որպես արեւ,
Մեր զավակն ես հերոս,
Քեզ ողջույն ու բարեւ:
Դու մեր սրտի մեջ ես,
Դու մեր վերքն ես բուժում,
Նվիրումը քո մեծ
Ազգիդ սերն է հուշում:
Քո հայկական ոգին
Սասնա կանչ է արյան,
Մեծ Հերացու որդի՝
Վարդգես Նաջարյան:

13.10.1993 թ., Ստեփանակերտ

ՆՈՐԱԾԻՆ ԱՍՏՂԵՐ

Առաջին կուրսի մեր ուսանողներին

Հրավառ տենչերից հյուսված
Նորածին աստղեր եք, մեր սաներ,
Երփներանգ տողեր եք կենսաթով,
Կյանքն է իր գրկում ձեզ ցանել:
Ասում ենք. «ձեզ բարի գալուստ»,
Ձեր ճամփան թող օծվի լույսով,
Ձեր ամեն վայրկյանը թող անցնի
Արարման տքնանքով ու հույսով:
Թե կյանքում քրտնել կա, թող քրտնեք
Գիտության շողերը փնջելիս,
Թե կյանքում որոնել, գտնել կա,
Թող գտնեք՝ միշտ վատը ջնջելիս:
Դուք կանա՜չ- կանա՜չ ծիլեր եք,
Թող լցվեք ցորենի հասկի պես,
Թող թեւեր առնեք անդադար
Ու թեւեք իմաստուն ասքի պես:
Գիշերներն անքուն թե մնաք,
Թող մնաք ծիածան հյուսելով,
Ձեր հոր ու ձեր մոր սրտերը
Միշտ լցնեք արեւոտ հույզերով:
Թող երբեք ծանր բեռ չդառնաք
Ոչ կյանքի, ոչ երկրի ուսին,
Այնպիսի արեւներ դարձեք դուք,
Որ կյանքը շիկանա ձեր լույսից:
Ուսուցիչ բառը ձեր շրթին
Թող հնչի որպես սրբություն,
Աշխարհի մեծերը բոլոր

Ուսուցիչ անունն են կրում:
Թող որ չորս տարին ձեզ բերի
Նաեւ սեր՝ ազնիվ ու հրկեզ,
Մեր հոգին ջերմ պահող մեր սաներ,
Մենք բարի գալուստ ենք մաղթում ձեզ...

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Բանաստեղծ Էռնեստ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ՝
նրա ծննդյան 60-ամյակի առթիվ

Սիրտդ երգի թրթիռ, հոգիդ երգի կամար,
Դու ծնվել ես, եղբայր, քնքույշ երգի համար:

Լեռդ աստղերի քույր, հողդ բերքի աղբյուր,
Տենչդ կարոտի բույլ, խոսքդ ծաղկի համբույր:

Տողդ սիրո բերկրանք, սիրո շոյանք ու հուր,
Սիրտդ ցաված սիրո ալեկոծվող սարսուռ:

Արցախ երկիր ունես, նրա բախտի դուռն ես,
Քո երգերով նրբին՝ նրա զինվոր-ծուռն ես:

Նրա ըմբոստության, բախտի խաչակիրն ես,
Նրա հավատի տան խոսող երգն ու գիրն ես:

Դու ապրում ես, եղբայր, Արցախա տան հեւքով,
Քո ազնվագույն սրտի շարականված երգով:

18.03.1997 թ., Ստեփանակերտ

ՔՈ ԵՐԳԵՐԸ

Սիրով՝ Հանրապետության վաստակավոր արտիստուհի Էլմիրա ԱՌՍՏԱՄՅԱՆԻՆ...

Սիրտս կարոտած շոյող երգերիդ,
Արցախ աշխարհի սարերով անցա,
Լեռնալանջերին ու թե ծերպերին,
Քո քաղցր ձայնին սիրահար դարձա:

Սիրտս կարոտած շոյող երգերիդ,
Արցախ աշխարհի դաշտերով անցա,
Ծաղիկների հետ, բացվող վարդերի,
Քո անուշ ձայնն իմ սրտում ծովացավ:

Սիրտս կարոտած շոյող երգերիդ,
Արցախ աշխարհի գետերով անցա,
Լսեցի խոսքը ջինջ աղբյուրների.
- Մեր կարկաչներում դու նրան անսա:

Անցա գյուղից-գյուղ, քաղաքից-քաղաք,
Երգեր լսեցի թե նոր եւ թե՛ հին,
Կռվի թեժ պահին, օրերում խաղաղ,
Ինձ պարուրեցին երգերդ նրբին:

Էլմիրա, մեր քույր, քեզ պատիվ ու փառք,
Թեւեր ենք առել միշտ էլ քո երգով,
Որտեղ քո երգն է, մենք այնտեղ էլ կանք,
Իսկ որտեղ լինենք, կապրի երգը քո:

14.03.2002 թ., Ստեփանակերտ

ԲՈՐԻՍ ԴԱԴԱՄՅԱՆԻՆ

Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի եւ ուսանողության ուղերձը հարգարժան ազատամարտիկ Բորիս ԴԱԴԱՄՅԱՆԻՆ՝ ծննդյան 75-ամյակի առթիվ

Դու Արցախի քաջն որդի,
Խելոք որդի, ազնիվ որդի,
Պայքարի մեջ դու արծվաթեւ,
Թող չերերա երբեք ոգիդ:
Ժողովրդի ազատ կյանքին
Նվիրեցիր ուժերը քո,
Չերազելով գահը փառքի,
Դու ֆիդայի դարձար հոգով:
Ինքդ լեգենդ, կյանքդ լեգենդ,-
Լեգենդները չեն ծերանում,
Դու քո գործով ու քո կամքով
Քաջերին ես ընկերանում:
Հոբելյանդ շնորհավոր,
Կյանքդ վառ է, ոնց ծիածան,
Ճամփադ լուսե ու փառավոր,
Դու իմաստուն մի սերմնացան:
Կյանքդ՝ երազ, երազդ՝ կյանք,
Մաղթում ենք քեզ սեր ու հարգանք:

14.12.2001 թ., Ստեփանակերտ

ԵՐԳ ԸՆԿԵՐԱԿԱՆ

Նվիրում եմ բանաստեղծ
Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ՝
ծննդյան 50-ամյակի առթիվ...

Այգեստանի ճանփան ծաղկոտ,
Աստղոտ ճամփան Այգեստանի.
Շրթին երգը՝ շաղոտ-շողոտ,
Քայլում է մի ժիր պատանի...
Նա քայլում է՝ սրտի խորքում
Գարնանացող, նուրբ նվագներ,
Հոգու խորքում մի լեռնաշխարհ՝
Հորովելված արեգակներ:
Հետ է նայում՝ դարեր են բյուր,
Շուրջն է նայում՝ սեգ սարեր են,
Անտառներ են կանաչաթույր,
Իսկ ծառերը նուրբ լարեր են,
Որ ճամփում են իրենց որդուն
Դեպի հեռուն՝ երազականչ,
Անտառների դալար խորքում
Հույսերի փունջ, վարդ ու կակաչ:
Ու քայլում է Դավիթ որդին՝
Համառ կամքով դարաբաղցու,
Նա պատկերն է պապի ոգու,
Որ չի եղել մատաղացու,
Միշտ ապրել է մի ձեռքին թուր,
Իսկ մի ձեռքին արորը հին,
Երազել է հեզահամբույր
Լավ օրերը իր թոռնիկի:

Պապի տենչով, հոր նամուսով,
Քայլել է հար Դավիթ որդին,
Արարել է իր հոր հույսով,
Պապի տենչով՝ լուսահոգի:
Ու որտեղ երթ՝ Դավիթն այնտեղ,
Դավիթն այնտեղ՝ որտեղ նուրբ երգ,
Ու որտեղ հերկ՝ Դավիթն այնտեղ,
Դավիթն այնտեղ՝ ուր խոսքի բերք:
Հիմա եկել՝ սրտով իր հուր,
Փունջն է բերել իր երգերի,
Գովքն է լսում մաքրամաքուր,
Ողջույնները ընկերների...
Շուրջն է նայում՝ գյուղն է անգին,
Հետ է նայում՝ փրկված սարեր,
Խինդը՝ հոգում, երգը՝ շրթին,
Իսկ քնարին՝ հնչուն լարեր,
Քնքուշ լարեր՝ սրտեր գերող,
Սրտերի մեջ՝ սիրո հերկեր,
Երգեր՝ սիրո երազ բերող
Ու պայքարի տանող երգեր:
Ուրեմն թող օրհնյալ լինի
Մեր Դավիթը՝ իր կես դարով,
Մի ողջ դար ենք մաղթում հիմի,-
Միշտ զարդարված երգ ու պարով:

15.12.2002 թ.,
Ստեփանակերտ

ՍԱՐԻ ԱՂՋԻԿ

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների
հարազատների միության նախագահ
Վերա ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Սարի աղջիկ, սարի նազիկ, սարի երգ,
Սարի սրտից ծնված արեւ դու անմար,
Ինչպե՞ս եղավ՝ խնդության տեղ առար վերք,
Բայց քո վերքից հոսեց լույսի մի կամար:

Ձեռքդ դրած վշտից խոցված քո սրտին,
Ցավ ունեցող մարդկանց համար հույս դարձար,
Գթության մայր դարձար տապին ու ցրտին,
Շողացիր ոնց սփոփանքի ծիածան:

Խաչքարերի լույս աղոթքով սնվեցիր,
Շիրիմներին արտասվեցիր մոր նման,
Քո իսկ ծնած որդու անվամբ ծնվեցիր,
Որ արեւես երազանքով քո վառման:

Որ արարես հուշամատյան-օջախն այն,
Որ քաջերը նկարներից են ժպտում,
Ուր խոհերդ փոթորկվում են լուռ, անձայն,
Ուր արցունքի ծովն է ծփում քո սրտում:

Քո մատների քնքշանքներով լույս դառած,
Ամեն նկար մի աշխարհ է, մի գարուն,
Ամեն նկար պարզում է ջահն իր վառած,
Որ մթան մեջ ճամփա գտնենք մեր դարում:

Սարի աղջիկ, սարի նազիկ, սարի երգ,
Արցունքի մեջ ճառագայթող քնքուշ սիրտ,

Դու քո վերքով սփոփում ես բազում վերք
Ու երազում, որ մարդանա մարդը բիրտ:

Ազգիդ ցավը քեզ դարձրել է իմաստուն,
Իմ օրհնանքով թող զավակդ շուտ գա տուն:

ԽՈՍՔ ՍՐՏԱԲՈՒԽ ԵՎ ԱՐԺԱՆԻ

Արձակագիր Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ՝
ծննդյան 60-ամյակի առթիվ

Քո սիրտը հարավի ծնունդ է,
Հարավի երազներ նա ունի,
Երազդ սրտերի սնունդ է,
Երազդ խորհուրդն է անհունի:
Խորհուրդդ հյուսվածքն է մեր ցավի,
Ցավից են թեւ առնում տողերդ,
Ով խմի քո խոսքի կուռ գավից,
Կըմբոշխնի հոգեբուխ շողերդ:
Պատումդ կարոտի շափաղ է,
Ասքերդ փնջեր են հույսերի,
Հերոսդ մշակ է, հոտաղ է,
Սերերդ մրմունջ են հույզերի:
Պայքարդ ցասումն է լեռներիդ,
Գրիչդ սվին է հրացայտ,
Արցախն է հավատում երգերիդ,
Երգերդ՝ զինվորի վառ հավատ:
Երեկ ես հիշեցի իմ գյուղը,
Կարոտս մարեցի քո գրքով,-
Իմ հայրն էր, իմ մայրն էր , մեր հյուղը,
Տատիկս էր՝ սրբացած իր գրկով:
Իմ զոհված քեռու վարդ այրին էր,
Առաջին իմ սերն էր՝ ինձ գերող,
Իմ սիրո եղբայրը վայրի էր,

Քո սիրո եղբոր պես միշտ ներող:
Ինչ որ ես չեմ ասել իմ երգում,
Գտնում եմ խոսքիդ մեջ բուրավետ,
Թող խոսքդ միշտ հնչի ոնց երդում.
Զրույցդ միշտ լինի Աստծո հետ:

1994 թ., Ստեփանակերտ

ԿԱՐՈՏԻ ԹԵՎԵՐՈՎ

Իմ սիրելի քենի ՍՎԵՏԱՅԻՆ՝
ծննդյան 60-ամյակի սոթիվ

Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր,
Ձեր տանը ցնծություն ու եռք էր,
Օջախ էր՝ մարդաշատ, մարդամոտ,
Ամեն օր բերկրանք էր ու երգ էր...
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

Ձեր բակի չորս բոլոր ծաղիկ էր,
Ծաղկունքին աստղալույս շաղիկ էր,
Վարդաբույր թթենու շվաքում
Շուրջպար ու սրտաբուխ տաղիկ էր,
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

Քաջ Սիոն հայրիկի ջանքերով,
Աղավնի մայրիկի մատներով,
Ապրում էր հացառատ մի օջախ,
Բարության իր լույսը ցանելով...
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

Քույրիկիդ ջերմ սիրով վառվեցի,
Հույսով լի ձեր տանը փարվեցի,
Դու փոքրիկ վեցամյա աղջնակ,
Մեր պատվին երգեցիր, պարեցիր,
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

Օրերը թեւեցին ու անցան,
Կապելով կարոտի ծիածան,
Ի՞նչ եղավ Սրբուհուն, Թարիկին.
Ա՞խ, ինչո՞ւ մեզանից հեռացան...
Նրանց հետ մեր կյանքը վառ երգ էր,
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

Աստծո ձեռքին է ամեն ինչ,
Թող կյանքիդ աստղերը լինեն ջինջ,
Որդիքդ, թոռներդ թող ժպտան,
Քո ճամփին լույս դառնան ամոքիչ,
Քեզ համար, միշտ պարեն ու երգեն,
Քո բախտի հերկերը նոր հերկեն:

Վեց տասնյակ քո տարին լրացավ,
Օրերը, չիմացանք, ոնց անցան,
Թող կյանքդ ջրի պես երկարի,
Ինչպես միշտ՝ ծաղիկներ արարի...
Գարուն էր... ծաղկունք էր... ու երգ էր...
Այն ե՞րբ էր, Սվետա, այն ե՞րբ էր:

23.03. 2002 թ., Երեւան

Ձախից՝ Սվետան քրոջ՝ Սրբուհու հետ

ՍՐՏԻ ԽՈՍՔ

Նվիրում եմ ուսուցչապետ Թեւան
ՋԱՎԱԴՅԱՆԻՆ՝ ծննդյան
95-ամյակի առթիվ

Մարդու կյանքը պիտի դառնա լույսի ճամփա,
Կյանքդ լույսի մի ճամփա է, Թեւան քեռի,
Վաստակել ես եւ լավ անուն, եւ մեծ համբավ,
Քո սարերի համար փոխված ջերմ արեւի:

Դու իմաստուն ուսուցչապետ՝ հոգեւոր հայր,
Հողի մշակ, բարիքների դու սերմնացան,
Ցավ ու դավին դիմացել ես որպես քաջ այր,
Տարիներդ կամարվել են ոնց ծիածան:

Երազներդ ձուլվել են մերթ սարին Մռով,
Մերթ Մռովից հասել-փարվել Քիրսա սարին,
Կրթօջախ ես ջերմացրել սրտիդ հրով,
Սերունդներին թեւավորել խոսքով բարի:

Քո սաների անունից եմ հիմա խոսում,
Նրանց ճամփին հուր ես փռել կանթեղի պես,
Մեր կրծքի տակ քո անմարում սերն է հոսում,
Որդիական մեր հարգանքն ու ողջույնը քեզ:

1998 թ., Ստեփանակերտ

ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ԱրՊՀ օրհներգը*)

Արցախ աշխարհի մայր համալսարան,
Մեր մտքի կաճառ՝ դարերից ծնված,
Մենք սաներն ենք քո, մեր կամքով համառ,
Մեր ժողովրդի հանճարով սնված:

Փառք քեզ, փառք քեզ, փառք, մայր համալսարան,
Նորօրյա պարծանք ամբողջ հայության,
Փառք քեզ, փառք քեզ, փառք, մայր համալսարան,
Նորօրյա պարծանք ամբողջ հայության:

Գիտության ծովում՝ միշտ կմաքառենք՝
Բարձր պահելով դրոշը մտքի,
Մեր պապերի պես համառ ենք կամքով,
Մեր հողը պաշտող, սիրահար գրքին:

Փառք քեզ, փառք քեզ, փառք, մայր համալսարան,
Նորօրյա պարծանք ամբողջ հայության,
Փառք քեզ, փառք քեզ, փառք, մայր համալսարան,
Նորօրյա պարծանք ամբողջ հայության:

---

*Օրհներգի երաժշտությունը՝ Արկադի ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Պրոֆեսոր Ստ. Դաղայանը հրաշքի արարումից հետո

ՀՐԱՇՔԻ ԾՆՈՒՆԴԸ

Պրոֆեսոր Ստեփան ԴԱԴԱՅԱՆԻՆ՝ ծննդյան 60-ամյակի եւ «Մաշտոցյան գրերը» եռանիստ հրաշքը ստեղծելու առթիվ

Գիշերը մինչ լույս քունը չտարավ,
Մտքով անցյալի հողմերի մեջ էր,
Վառվուն էր հոգին՝ արարման ծարավ,
Ամբողջ էությամբ երազ ու տենչ էր:
Ի՞նչ էր կատարվել Հայոց երկրի հետ,
Օտարի լեզուն ի՞նչ որս էր անում,
Օտարի լեզուն՝ հեղեղուն մի գետ,
Հայ սերունդներին դեպ ու՞ր էր տանում:
Լուսավորիչի քարոզը՝ դեռ թույլ,
Տրդատի սուրը՝ անցյալն ավերող,
Իսկ ժողովուրդը՝ սարերում իր լուրթ,

Մի տեղ՝ անհամբեր ու մի տեղ՝ ներող:
Չկար Արշակը եւ Պապը չկար,
Նախարարները ելած իրար դեմ,
Սուրբ գիրքը օտար, դպրոցը՝ օտար,
Անդունդի եզրին՝ երկիրը եդեմ:
Խոր ցավ էր զգում նա խոհերի մեջ,
Հայոց ճամփեքը տեսնում մշուշոտ,
Այդ տագնապներին ո՞վ պիտի տար վերջ,
Ո՞վ պիտի մաքրեր ճամփեքը փշոտ:
Ո՞վ պիտի փրկեր հավատն ու լեզուն,
Հայոց դրոշը ո՞վ պիտի պարզեր...
Մտորում էր նա խոհերով լեցուն,
Մտքում՝ եռացող, չլուծված հարցեր:
Եվ հանկարծ հոգու փոթորկված ծովում
Հառնեց Մաշտոցը՝ գրերը ձեռքին,
Եվ իր արարող ձիրքերի բովում
Աստծո ոգին միացավ հեւքին:
Հեւքին միացավ ազգային ոգին,
Ու ժպտաց նրան արվեստի աչքը,
Եվ ընկուզենու դարավոր գրկից
Ծնվեց Մեսրոպյան գրի հաշքը:
Հառնեց Մաշտոցը՝ գրերի լույսով,
Գրերի լույսով՝ հավատն ու խաչը,
Եվ հանգիստ առավ վարպետի հոգին,
Երբ զգաց գլխին՝ Աստծո աջը...
Իսկ հոգու խորքում խոսքն էր Մաշտոցի.
«Ապրես ոսկեմատ իմ Ստեփանոս,
Հոգիդ աշխարհ է՝ գույներով լեցուն,
Քեզ պես որդիներ ունեցող ազգը
Կապրի հավիտյան՝ շրթին մայր լեզուն»:

07.03.2010 թ.

ՀՐԱՄԱՅԻՐ

Նվիրում եմ ԱրՊՀ ռեկտոր Կառլեն ԱԴԱՄՅԱՆԻՆ՝ նահատակ ուսանողների հիշատակը հավերժացնող ծառուղու ստեղծումը նախաձեռնելու առթիվ

Սրտերի մեջ պայքարի հուր,
Շրթունքներին՝ անունն Արցախ,
Ծառեր դարձած խորհում են լուռ,
Մեր նահատակ սաները քաջ:
Ձիգ շարքերով հառնել են վեր՝
Արեւատեսք ու հմայիչ,
Պողպատակուռ կամքով իրենց
Փրկել են հող, օջախ, պատիվ:
Հրամայիր՝ դասի գնան
Ու գիտության նավը վարեն,
Իմաստությամբ հզորանան,
Երազների ջահը վառեն:
Հրամայիր հորդորանքով,
Թող դալարի նրանց ոգին,
Հրամայիր գորովանքով,
Քեզ կլսեն ինչպես որդի:
Ծարավել ենք նրանց խոսքին,
Թող շշունջով խոսեն ծառի,
Թող միանան կյանքի հոսքին՝
Կարոտած մեր հանդ ու սարին:
Թող գան, բազմեն սիրո գահին
Ու քեզ ընտրեն սեղանապետ,
Ապասում են, հրամայիր,
Ոնց սրտացավ ուսուցչապետ:

04.03.2001 թ., Ստեփանակերտ

ԾԱՌԵՐԸ

ԱրՊՀ զոհված ուսանողների հիշատակը հավերժացնող ծառատունկի առթիվ...

Ծառերն այս ունեն անուններ,
Ծառերն այս ապրում են, շնչում,
Ծառերն այս բացում են նոր հուներ՝
Եվ ըմբոստ պայքարի կոչում:
Ծառերն այս հուշ են, հիշատակ,
Ծառերն այս թիկունք են ու թեւ,
Ծառերն այս սրտեր ունեն տաք,
Խոնարհվենք ծառերի առջեւ:

01.03.2001 թ., Ստեփանակերտ

ՀԱՅՐԱԿԱՆ ՎԻՇՏ

Կառլեն ԱԴԱՄՅԱՆԻ որդու՝ ԱՐԱՄԻ հիշատակին

Այս քանի՜ օր է, քո ձայնին ծարավ,
Կռիվս եմ տալիս իմ ցավերի դեմ,
Չար փորձանքը քեզ, ա՜խ, ինչո՞ւ տարավ,
Ճամփադ քարո՞տ է, թե՝ ծաղկած եղեմ:

Ո՞վ է ճակատդ շոյում մոր նման,
Հոր նման ո՞վ է դռներդ բացում,
Ո՞վ է ափսոսում քո սերը վառման,
Ո՞վ է քեզ համար թախծում ու լացում:

Լինում է՝ դուռը մենք թողնում ենք բաց,
Տեսիլների մեջ խորհում ենք անհուն,
Երբ դռան զանգը հնչում է հանկարծ,
Թվում է՝ դու ես, որ դարձել ես տուն:

Քեզ բժիշկները չօգնեցին, որդիս,
Գուցե Վերինը քեզ այնտեղ բուժի,
Թեկուզ հուշ ես դու եւ չկաս կողքիս,
Էլի քեզնով է շիկանում հոգիս:

Հաշտվում եմ, որդիս, իմ խոր վշտի հետ,
Ու քո կարոտով դիմում Աստծուն,
Որ նման մահը ժխտի այսուհետ,
Որ նման կորուստ չբերի մարդուն:

Նկարում աջից՝ Ս. Խանյանը, Ս. Բարսեղյանը, Կ. Ադամյանը, ԼՂՀ երկրորդ նախագահ Ա. Ղուկասյանը, Հ. Գրիգորյանը, Հ. Ավանեսյանը զոհված ուսանող ազատամարտիկների հուշարձանի բացման օրը ԱրՊՀ-ում

ՎՐՉԻՆ ՈՒ ԵՐԳ

ԼՂՀ վաստակավոր նկարիչ, Արցախի զինանշանի հեղինակ, պրոֆեսոր Լավրենտ ՂԱԼԱՅԱՆԻ ծննդյան 70-ամյակի առթիվ

Ս. ԽԱՆՅԱՆԸ պարով է դիմավորում իր բարեկամներին՝ պրոֆեսորներ Արզիկ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ եւ Լավրենտ ՂԱԼԱՅԱՆԻՆ

Ձեռքին վրձին,
Շրթին՝ երգ,
Հոգին աստղոտ
Տիեզերք,
Հորովելված
Երգարան,
Երանգների
Նուրբ դարան,
Արցախածին
Արեգակ,
Ողջ Նաիրին
Կրծքի տակ,
Արցախի քաջ
Զինվորյալ՝
Զավակներով
Ընտրյալ.
Մեկը՝ Մռով,
Մեկը՝ Քիրս,
Մեկը՝ Մասիս,
Մեկը՝ Սիս...
Սերը նոճի
Սլացիկ,
Ինքը Արա
Գեղեցիկ.

Երազներով
Շունչ առած
Ձինանշան
Ու Թարթառ,
Երգերի մեջ
Թեւ առած
Իշխանագետ
Ու Կարկառ,
Ժողովրդին՝
Աղբրի գուռ,
Հավերժության
Բացված դուռ:

10.01.2008 թ., Ստեփանակերտ

ՄԱՂԹԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ



Ֆիզիկոս-մանկավարժ
Ռաֆայել ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ՝
ծննդյան 70-ամյակի
առթիվ

Ահարոնի իմաստուն թոռ,
Ու Խանյանի աներձագ,
Ձերազեցիր բարձր աթոռ
Ու միշտ եղար համարձակ:
Ամենուրեք վաստակեցիր
Սրտաբուխ սեր ու հարգանք,

Ճահճուտներում ջինջ մնացիր,
Երազելով մաքուր կյանք:
Ֆիզիկայի մեծերի հետ
Դու խնջույքի նստեցիր,
Վիճողներին՝ թույլ ու անգետ,
Քո ձեռնոցը նետեցիր:
Ջրաբերդից մինչեւ Շուշի,
Բազում սաներ ունեցար,
Ամեն մեկի քաղցր հուշին
Գումարվեցիր ոնց ծիծառ;
Դու թեւավոր իմ բարեկամ,
Քաջ Աստծատուր ունեցար,
Դու ունեցար սուրբ Գայանե,
Գոհարակուռ նուրբ Գոհար:
Փեսաների, հարսի տեր ես,
Տեր ես խելոք թոռների,
Իմ բաղձանքն է, որ դու պարես
Հարսանիքում ծոռներիդ:
Ձեռքիդ դրած աստվածամայր
Աիդայի ուսերին,
Ասես՝ Տեր իմ, գոհ եմ քեզնից,
Որ տեր դարձար հույսերիս:
Իսկ մենք՝ ընկեր ու բարեկամ,
Միշտ հավաքվենք շուրջը քո,
Ասենք՝ Ռաֆո, քեզ երկար կյանք,
Ուղիդ անցնես բերկրանքով:
Իսկ ես, անգին իմ աներձագ,
Ձեռքիս օղին թունդ հոնի,
Պարեմ քո քույր Մարգոյի հետ
Հարյուրամյա քո տոնին:

08.03.2010 թ.

ԿԱՐՈ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Ծննդյան 70-ամյակի առթիվ

Յոթանասուն վարդերի փունջ,
Յոթանասուն հզոր կամուրջ,
Յոթանասուն ծաղկած բարձունք,
Յոթանասուն խինդի ակունք,
Թողած քո լույս ճանապարհին,
Նոր եռանդով ու փորձով հին,
Ընթանում ես նորերի հետ,
Երազելով բարիք ու բերք:
Դու վանեցի տնավեր լաճ,
Ղարաբաղում գտած տունդ,
Ճամփադ կանաչ...
Խեղճ, որբացած մանուկների
Շարքերի մեջ
Ոտաբոբիկ մի մանչ Կարո,
Արագածի շողերի տակ
Գիտուն մարդկանց շարքերի մեջ
Հիմա դարձած ճանաչ Կարո,
Ուսած անցած տարիների վաստակը քո,
Խղճով մաքուր ու ջերմ հոգով,
Առած հարգանք, առած պատիվ,
Դարձած առույգ ու քաջ պապիկ,
Քո պատվարժան որդիներով,
Քո սաներով,
Քո թոռներով,

Տասնապատիկ երջանկացած,
Բարձունքներից չես իջնում ցած,
Թեւում ես հար ինչպես արծիվ,
Միշտ սիրահար ընտրած գործիդ...
Թող հավիտյան ջահել մնա
Քո սիրտը ջինջ,
Մեր լավ ընկեր, մեր ուսուցիչ...

18.10.1974 թ., Ստեփանակերտ

ԵՐԱՆԻ ՆՐԱՆ

Ճանաչված մանկավարժ
Արմո ՆԵՐՍԻՍՅԱՆԻ
հիշատակին...

Հազար երանի այն ուսուցչին,
Ով պիտի դառնա անմարում ոգի,
Ում որ փոքրերը կհամարեն հայր,
Իսկ ավագները՝ իմաստուն որդի:
Երանի նրան, ով աստղի նման
Հոգու լույսերը կցանի կյանքում,
Ով կապրի հպարտ եւ հոգեհմա,
Ով երազները կընծայի մարդուն:
Երանի նրան, ով ճանապարհին
Սիրով կփարվի կյանքին, աշխարհին,
Ով հետք կթողնի աշխարհի վրա,
Երանի նրան... երանի նրան...

20.12.2000 թ., Ստեփանակերտ

ՍՐՏԻ ԽՈՍՔ

ԱրՊՀ պրոֆեսոր Սերգեյ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝
ծննդյան 75-ամյակի առթիվ...

Սառնաղբյուրից մի կաթան
Որ ձգված է դեպ հեռուն,
Մի հեքիաթված ծիածան,
Քեզ վառ հուշեր են բերում:
Այդ հուշերի թեւերին
Սլանում ես դեպի հետ,
Փարվում անցած օրերին,
Որ հոսում են ինչպես գետ:
Դու օրերի ծով գրկում
Երազներդ փռեցիր,
Այբուբենված քո գրկում
Բաղձանքներդ գրեցիր:
Դեռ երազող պարմանի,
Ընկերացար զենքերին,
Հետո գիրքն ու գրիչը
Շունչ առան քո ձեռքերին:
Ուսուցչապետ դու դարձար,
Լույսի շողեր ցանեցիր,
Ճանապարհին քո անցած
Մութ մշուշը վանեցիր...
Իմաստության քո դասը
Փառքիդ պսակն է դարձել,
Ընկերներդ ջերմ սիրով
Իրենց սրտերն են բացել՝
Մաղթանքներ են բերում քեզ,
Որ դու մնաս միշտ ջահել,
Որ սրտերում հրակեզ,
Նորից վառես բյուր ջահեր:

11.12.2000 թ., Ստեփանակերտ

ԳԱՂՏՆԻՔԴ ԲԱՑԻՐ

Հոգեբան Գրիգոր ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ՝
ծննդյան 80-ամյակի առթիվ

Գրիգոր, եղբայր. երջանիկ ես դու,
Գյուղդ աստղամերձ Մռովի լանջին,
Երազդ՝ պայծառ, ոսկորդ՝ ամուր,
Ականջդ՝ լուսե գալիքի կանչին:
Քո խոսքն է, եղբայր. «Մարդը սեգ սարից,
Իսկ սարը մարդուց թեւեր են առնում,
Ակնթարթի պես անցնում է տարին
Եվ անվերադարձ մի երազ դառնում»:
Դու մի դժվարին ճանապարհ անցար,
Կամքդ պողպատ էր եւ միտքդ՝ հատու,
Բայց նկատեցիր, որ ՊԱԿ-ը ցինիկ,
Դարձել է արդեն ծերացած կատու:
Քո համառ կամքով, սրությամբ մտքի,
Դու դարձար դարի հմուտ հոգեբան,
Բայց դարը դաժան եղավ քո ճամփին,
Քո հանդեպ դարձավ մի չար հոգեհան:
Արցախցի ես դու, իսկը՝ լեռնածին,
Կողերդ՝ ամուր ու միտքդ՝ ջահել,
Ասա, Գրիգոր, ինչպե՞ս պահեցիր
Քո երազները միշտ անմար ջահեր:
Այդ առեղծվածի դռները բացիր,
Որ մենք էլ քեզ պես միշտ առույգ մնանք,
Եվ տարիներին՝ խենթ-փոթորկածին,
Քո իսկ եռանդով մեր ավյունը տանք,
Մնանք քեզ նման կյանքը միշտ սիրող,
Կանաչ ավիշով կյանքին միշտ տիրող,
Թեկուզ դարն էլի մնա հոգեհան,
Քեզ նման լինենք հմուտ հոգեբան:

22.12.2001 թ., Ստեփանակերտ

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ

Նվիրում եմ դոցենտ-լեզվաբան
Գուրգեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ՝
ծննդյան 75-ամյակի առթիվ

Մեր տենչը՝ մեկ, մեր բախտը՝ մեկ,
Մեկ՝ երազի մեր հեքիաթը,
Մեր ուղին բարդ, սակայն անթեք,
Մեզ չօրորեց երբեք կյանքը:
Վարանդայում ծնված առու,
Կասպիականի ափը հասար,
Մեր սրտերում ծաղկած գարուն,
Հանդիպեցինք եղբայրաբար:
Մենք ասեղի անցքով անցանք,
Մկրտվեցինք հայոց գրով,
Մենք Մաշտոցի շունչը դարձանք
Եվ օծվեցինք նրա ջրով:
Ուսուցչի սուրբ գործի մեջ
Շռայլեցինք ուժ ու եռանդ.
Մեր սրտերի կրակն անշեջ
Դեռ ցանում ենք երանգ-երանգ:
Դու բառերի հին ծովի մեջ,
Ես դժվարին երգի ճամփին,
Լուծը քաշենք հազարատենչ,
Մինչեւ մարի մեր շունչ-արփին:
Մեր տենչը՝ մեկ, մեր բախտը՝ մեկ,
Մեկ՝ մեր անցած հույս-հեքիաթը,
Անցնում ենք մեր ուղին անթեք,
Եղբայր, սա է, սա է կյանքը:

29.05.2001 թ., Ստեփանակերտ

ԱՅՍ Ե՞ՐԲ ԴԱՐՁԱՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ

Տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վանիկ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ՝
ծննդյան 70-ամյակի առթիվ

Մեր հոբելյար, մեր հին ընկեր,
Այս ե՞րբ դարձար յոթանասուն,
Քո կենացը, դե՛հ, թասդ բեր,
Այդպես շտապ ո՞ւր ես վազում:

Հետ ես նայում՝ ծաղկուն հետքեր,
Բյուր երազներ ու սեր՝ նազուն,
Գիտության մեջ դեռ նոր հերկեր,
Այս ե՞րբ դարձար յոթանասուն:

Դեռ քայլում ես ջահելի պես,
Վեճերի մեջ քոնն ես ասում,
Ընկերներդ հարցնում են քեզ,
- Այս ե՞րբ դարձար յոթանասուն:

Արցախցի ես՝ գլխով-ոտքով,
Կողդ ամուր, միտքդ հասուն,
Դեռ հեքիաթ ես հյուսում հոգով,
Այս ե՞րբ դարձար յոթանասուն:

Դեռ առջեւում ճամփա ունես,
Նոր դասեր են դեռ սպասում,
Ինչ էլ լինի՝ մաղթում ենք քեզ
Եվս մի նոր յոթանասուն:

11.11.2000 թ., Ստեփանակերտ

ԲԱՐՈՎ ԵՍ ԵԿԵԼ

Նվիրում եմ փիլիսոփայության պրոֆեսոր Շահեն ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ՝ ծննդյան 70-ամյակի առթիվ

Բարով ես եկել, եկել ես բարով,
Սարից ես գալիս,
Աստղերից լույս ու շողեր ես բերել,
Քո վառարանից,
Մեզ ջերմացնող մի պող ես բերել,
Մեր հովիվների, մեղվաբույծների
Ձուլալ սրտերից ջերմ դեղ ես բերել,
Ձայնիդ մեջ առվի կարկաչ ես բերել,
Ժպիտներիդ մեջ կակաչ ես բերել:
Մեր քաջ պապերի ու մեր հայրերի
Ոտնահետքերն ես բերել հացաբույր,
Մեր տատիկների ու մեր մայրերի
Սերն ու տագնապն ես բերել քնքշաբույր:
Սարերի գրկում ինքդ դարձած սար,
Հոգուդ մեջ ծաղկանց գույներն են հազար:
Բարով ես եկել, եկել ես բարով,
Թող որ ջերմանանք բարեւիդ հրով:

22.01.2003 թ., Ստեփանակերտ

Պոեզիայի ժամ

ՈՒՍՈՒՑՉԻ ՈՒՂԻՆ

ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ
Ժորա ՖԱՐՍՅԱՆԻՆ՝ ծննդյան
70-ամյակի առթիվ...

Քիրսա սարի հայացքի տակ,
Կարկառ գետի ծաղկուն ափին,
Սրտում՝ ուսման սերն անհատակ,
Երազներում՝ գարնան արփին,
Ընտրեց ուղին ուսուցչի,
Որ իր լույսը տա աշխարհին,
Ընկերությամբ ազնիվ ու ջինջ,
Չարերի դեմ բարի՜ - բարի՜:
Իր քրտնաթոր վաստակի մեջ
Նա շահել է սեր ու հարգանք,
Վառ է պահել այն ջահն անշեջ,
Որ ընտրել է ու դարձրել կյանք:
Յոթանասուն գարունների
Ծաղկեփունջ է կյանքը նրա,
Վկաները իր սաներն են,
Նրանց սերը միշտ հուրհրան:
Երջանկության ուղին է դա,
Որ ընտրել է ընկերը մեր,
Սերունդների սիրով կոփված,
Նրանց համար առած թեւեր...
Սեգ Արցախի զավակն է նա,
Ուսուցիչ է՝ սրտով-հոգով,
Մեր մաղթանքն է՝ այսուհետ էլ
Կյանքը անցնի միշտ բերկրանքով:

15.05.2002 թ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊՍԱԿ

Պրոֆեսոր Գեորգի ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝
ծննդյան 70-ամյակի առթիվ

Մենք նույն տարում աշխարհ եկանք
Եվ ունեցանք մեր աշխարհը,
Ինձ համակեց երգը կյանքում,
Քեզ՝ դաշտերի բերքն ու բարը:
Ես քրտնեցի տողի վրա,
Դու՝ խաղողի խենթ վազերի,
Երգ ու բարիք մոտ են իրար,
Օնված մեր ջինջ երազներից:
Երազների փունջն իմ հոգում
Որոնեցի հետքերը քո,
Արտում գտա, գտա այգում,
Ուր ցողվում էր քրտինքը քո:
Ժպիտներդ խաղողի մեջ,
Գինու եռքում՝ տենչդ ջահել,
Յոթանասուն տարիներիդ
Իմաստնալից շունչն են պահել:
Յոթանասուն տարիներիդ
Վաստակն արդար պսակն է քո,
Ոնց նոր պսակ՝ ընկերներիդ
Սերն եմ բերում ես իմ երգով:
Քո ամեն մի օրն ու տարին
Բարեբեր ու ամոքիչ է,
Քեզ նմանի համար, ընկեր,
Անգամ հարյուր տարին քիչ է...

16.10.2000 թ., Ստեփանակերտ

ՄԻՇՏ ԱՅԴՊԵՍ ՄՆԱ

Քիմիկոս, պրոֆեսոր Վոլոդյա ՄԻՐԶՈՅԱՆԻՆ՝
ծննդյան 50-ամյակի առթիվ

Միշտ այդպես մնա՝ լուրջ ուսուցչապետ,
Որ հոգուդ լույսը նվիրես մարդկանց,
Սաներիդ հանդեպ գիտուն նահապետ,
Վայելած նրանց հարգանքը անանց:

Միշտ այդպես մնա՝ սրտակից ընկեր,
Ինչքան իմաստուն, այնքան էլ համեստ,
Կյանքի ծովի մեջ՝ խոհով ծանրաբեռ,
Որ ջահելներին պարգեւես թեւեր:

Միշտ այդպես մնա՝ սուրբ օջախի տեր,
Կնոջդ արեւ, որդոցդ քաջ հայր,
Ու թե տեղը գա, լինես անհամբեր,
Որ թոռ ու ծոռան տեր դառնաս արագ:

Միշտ այդպես մնա՝ կյանքին լույս բերող,
Երկրին հույս բերող գիտուն մանկավարժ,
Միշտ քո վաստակով սաներիդ գերող,
Միշտ ջահը ձեռքիդ եւ արհեստավարժ:

Միշտ այդպես մնա, ինչպիսին դու կաս,
Երկրորդ կես դարիդ հայացքդ հառած,
Թոռ ու ծոռներիդ սիրուց անպակաս,
Դյուցազունների մեծ պապիկ դառած:

Արդ մենք գինովցած՝ սրտով ու հոգով,
Շնորհավորում ենք հոբելյանը քո:

19.03.2004 թ.

ՀԱՅՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Գիտական-մանկավարժ
Գեորգի ՍՍՀԱԿՅԱՆԻՆ՝
ծննդյան 50-ամյակի առթիվ

Ամեն անգամ քո երգերը լսելիս՝
Ժողովրդի հոգու ձայնն եմ ես լսում,
Քո գրքերի լույս աշխարհը կարդալիս,
Ժողովրդի միտքն է ասես լուռ հոսում:
Մեծի հետ մեծ, փոքրերի հետ փոքր ես դու,
Ընկերության սեղանները զարդարող,
Աստծո շունչը թեւածում է քո հոգում,
Աստծո նման խաղաղ ես եւ արարող:
Չեմ հավատում, որ անցել է կես դարդ,
Թարմ են, իրոք, թռիչքները քո մտքի,
Երգի պես են հնչում խոսքդ ու բառդ,
Որ զարդարում, շուք են տալիս քո կյանքին:
Ես երգիչ եմ ջահելության ու լույսի,
Ընծայում եմ քեզ իմ երգը հոգեթով,
Հարյուր տարին գումարում եմ իմ հույսին
Ու զարդարում իմաստության ուղին քո,
Դու իմ որդու ազնիվ ընկեր ու ոգի,
Դու իմ որդուն թիկունք ու թեւ, իմ որդի:

24.04.2006 թ.

ՍՐՏԻ ԽՈՍՔ

Կարեն ԱՐԱՄՅԱՆԻՆ՝ ծննդյան
50-ամյակի առթիվ...

Մարդ կա՝ սրտից փուշ է հանում,
Բարու առատ սերմ է ցանում,
Ճամփաներում աստղ դարձած,
Մարդկանց դեպի լույս է տանում:

Որդի կա՝ հոր պատվի հետ է,
Հոր վաստակած փառքի հետ է,
Հոր մշակած այգեստանում
Բարիք բերող ջանքի հետ է:

Որդի կա՝ հոր թեւն է դառնում,
Հոր պես՝ իր տան տերն է դառնում,
Իր սեփական տուն ու տեղով
Ժողովրդի սերն է դառնում:

Խոսքս՝ կյանքի փորձն է, որ կա,
Կյանքի սիրո բոցն է, որ կա,
Երգս՝ Սարգիս Արամյանի
Կարեն որդու գործն է, որ կա:

Շնորհավորենք հիսուն տարին,
Մաղթենք նրան՝ լույսն ու բարին,
Թող հոր նման իր գործերով
Նոր փառք բերի մեր աշխարհին:

Եվ կբերի, քանի որ նա
Աստծո թոռն է հոգեհմա:

09.05.2001 թ.

ՀԻՍՈՒՆ ԳԱՐՈՒՆ

ԱրՊՀ դոցենտ Վյաչեսլավ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ծննդյան 50-ամյակի առթիվ

Հիսուն գարնան ծաղկունքն առած,
Հիսուն ամռան հասունությամբ,
Դու քայլում ես՝ ջահդ վառած,
Դեպի գագաթն իմաստության:
Կյանքի գիրքը դու կարդալով,
Հորինում ես գիրքը կյանքիդ,
Քո տենչերին մարմին տալով,-
Դաշն ես կնքել միայն ջանքին:
Անյայի հետ արեւ-սիրով
Արարել ես մի սուրբ օջախ,
Ուր երդվում են քո անունով,
Քո անունով քայլում ուրախ:
Ընկերներիդ հույս-ընկերն ես,
Ծնողներիդ սիրած որդին,
Առյուծից է կորյուն ծնվում,
Կորյուն մնա՝ հորդ կողքին:
Մաղթում եմ քեզ գարունների
Նոր երթ, նոր երգ ու նոր բարձունք,
Հարսանիքում քո թոռների
Պարես խնդուն եւ անարցունք:
Հավերժ մնաս օջախի սյուն,
Հորդ նման՝ մեծ նահապետ,
Միշտ վայելես երջանկություն՝
Դու՝ կյանքի հետ, կյանքը՝ քեզ հետ:

24.02.2001 թ., Ստեփանակերտ

ԱՐԱՐԱՏՎԱԾ ԱՐԱՐԱՏ

Պատմաբան Արարատ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ՝
ծննդյան 50-ամյակի առթիվ...

Վարդան պապը թուրը առավ,
Ծնկի եկավ Մասիսի դեմ,
Աստծո սիրով աղոթք արավ,
Ասաց.- «Սար իմ, վեհ ու վսեմ.
Երդվում եմ ես զինվորի պես,
Հողվորի պես՝ քաջ ու արդար,
Իմ զավակին՝ արեւատես,
Ասեմ՝ հիշիր քաջն Հայկին,
Որ մեծանաս՝ քո ձեռքերում
Միշտ ունեցիր Թուր-Կայծակին,
Նաեւ մտքի մեր հերկերում
Իմաստության կայծն արձակիր:
Իսկ թոռնիկս, երբ աշխարհ գա,
Պիտի ցնծամ սիրով առատ,
Եվ անունով քո արեւկա
Նրան կոչեմ ես Արարատ»:
Ծնվեց թոռը Վարդան պապի,
Եվ Արարատ կոչեց նրան,
Որ թե ցրտին ու թե՛ տապին,
Պատկերն առնի սրտի վրա,
Դառնա նրա զինվորյալը,
Պատմաբանը մատյանների,
Շրթին հայոց ցասման բառը,
Դիմի բոլոր ատյաններին.

«Գերված սարս իմ անունով,
Հառնել է հար պապիս սիրով,
Սարս իմ հոր բացած հունով
Տուն կբերեմ Դավթի սրով»:
Ու նա հպարտ ու ձյունափառ
Պապիս սիրով միշտ անարատ,
Կասի. «Հայոց իմ անվանը
Արժանի ես, ո՜վ Արարատ»:

27.03.2004 թ., Ստեփանակերտ

Հրաժեշտի պահ վերջին զանգից հետո

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

(ԵՐԳ)

Պատերազմում զոհված քաջեր,
Դուք ջահեր դարի,
Մեր սրտերում դարձած կանչեր,
Հավիտյան բարի:

Հաղթանակը մեր արեւն է՝
Ձեր սրտով վառված,
Արեւի պես կապրեք դարեր,
Մեր կյանքին փարված:

Կառուցում ենք գյուղ ու քաղաք,
Դուք օգնում եք մեզ,
Պաշտպանում ենք կյանքը խաղաղ,
Դուք օգնում եք մեզ:

Հաղթանակը մեր արեւն է՝
Ձեր սրտով վառված,
Արեւի պես կապրեք դարեր
Մեր կյանքին փարված:

Ոչ, պատերազմ չենք ուզում մենք,
Տեսել ենք արցունք,
Բայց թե լինի, ձեզ պես կանցնենք
Բարձունքից՝ բարձունք:

Հաղթանակը մեր արեւն է՝
Ձեր սրտով վառված,
Արեւի պես կապրեք դարեր,
Մեր կյանքին փարված:

ԴԱՎԻԹ

Անմոռանալի Դավիթ Գրիգորի
ՍԱՐԳՍՅԱՆԻ հիշատակին

Սասնա Դավթի թոռը Դավիթ,
Դու Արցախա ոգի,
Չար թշնամու դաժան դավի
Զոհը դարձած որդի:
Մայր Արցախի հողից հառնած
Դու հողեղեն հերոս,
Գանձասարի շողից հառնած
Դու ոգեղեն փարոս:
Սիրուց գերված, սիրո ծարավ,
Սիրո քո հեքիաթում,
Սեւ գնդակը քեզ ո՞նց տարավ,
Սերդ թողած անքուն:
Արի կարդա, գիրքդ բաց է,
Դու ես նրա տերը,
Մեր օջախի գիրկը բաց է,
Դու ես նրա թեւը:
Հեռուներից քեզ կանչեցին,
Կարող էիր գնալ,
Ճամփիդ սերեր կանաչեցին,
Կարող էիր մնալ:
Բայց դու եկար մայր Արցախի
Մայրական սուրբ կանչով,
Մարտի ելար առանց վախի
Ու կռվեցիր փառքով:
Ավարտական քննությունդ

Դու հանձնեցիր դիրքում,
Արցախական քաջությունդ
Գրվեց կյանքիդ գրքում:
Քո դիպլոմը Մռով սարի
Փրկված հեւքը դարձավ,
Կիսատ սերդ խենթ Թարթառի
Հավերժ երգը դարձավ:
Հոգիդ ծուլվեց Գանձասարի
Աղոթքներին քնքուշ,
Դու Դավթի թոռ հերոս Դավիթ,
Մեր պարծանք ու մեր հուշ:
Հաղթանակի օրը կգա,
Կծագի վառ արփին,
Արցախը քեզ համբույր կտա
Հավերժության ճամփին...

1993 թ., Ստեփանակերտ

ԿՈՐԱԾ ՍԵՐ

Ազատամարտիկ Վալերի
ՎԵՐԴՅԱՆԻ հիշատակին

Ձինվորն ընկավ Ձրաբերդում,
Մոր պես լացեց խենթ Թարթառը,
Բոթը լացեց օրվա թերթում,
Սգի մեջ էր լեռնաշխարհը:
Ով էլ կարդաց, խոր արտասվեց,
Չէր դադարում վառող լացը,
Բայց վշտահար հեկեկացին,
Երբ լսեցին մոր պատմածը.

Խնդրում էի. «Ամուսնացիր»,
Բայց մերժում էր որդիս տխուր,
Ասում. «Կանայք որբեւայրի
Շատացել են մեր Արցախում:
Պատերազմը երբ վերջանա,
Ում հավանես, կբերեմ տուն»:
Որդիս գիտեր, խելոք էր նա,
Որ սերն էլ է նահատակվում:

23.05.1993 թ., Ստեփանակերտ

ՎԵՐԱԴԱՐՁԵՔ

«Մարտական խաչի» ասպետներ
Հենրիխ ՄԻՐԶՈՅԱՆԸ եւ Վիգեն
ՍՈՂՈՄՈՆՅԱՆԸ միասին նետվեցին
մարտի եւ միասին նահատակվեցին

Խավար գիշեր էր, մութն էր որոճում,
Եվ կատաղել էր դաժան թշնամին,
Գնդացիրների կրակոցներով
Նրա ոռնոցն էր տարածում քամին:
Հրամանատարը պատվիրեց՝ գնալ,
Եվ լռեցնել ոռնոցը նրա,
Դուք ձեր կուռ կամքով գտաք մի հնար,
Կրակ մաղեցիք ոսոխի վրա:
Թեժացավ մարտը, դուք մոխիր դարձրիք
Նրա դիրքերը սեւ ու մահաբեր,
Այդժամ դուք մահվան կրակը հանգցրիք,
Արցախին տալով սրտի հուրը ձեր:
Ա՜խ, վերադարձեք հրեշտակի պես,
Հրամանատարը սպասում է ձեզ...

1999 թ., Ստեփանակերտ

ՍԱՄՎԵԼ

«Մարտական խաչի» ասպետ
Սամվել ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հիշատակին

Սամվելների եղբայր Սամվել,
Չի՞ լավացել վերքդ, ասա,
Կրակների դեմ-հանդիման
Մռով սարի փեշին հասար:
Հոգուդ խորքում հույսը շողաց,
Մեր սարերին դու ժպտացիր,
Ժպիտներդ մարդկանց թողած,
Մեր լեռներից դու գնացիր:
Դու գնացիր դեպի բարձունք,
Որ այնտեղից կյանքին ժպտաս,
Որ մոռացած մահ ու արցունք,
Նոր սերնդին խորհուրդդ տաս:
Հավերժության ճամփան է դա,
Որ փռվել է ոտքերիդ տակ,
Սամվելների եղբայր Սամվել,
Դու՝ անմոռաց սուրբ նահատակ:

1999 թ., Ստեփանակերտ

ԳԱԳԻԿԻ ԵՐԳԸ

Գագիկ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ հիշատակին

(Տեսիլք)

Սիրուն աղջիկ, սիրուն աղջիկ,
Թող քեզանով հմայվեմ,
Կանգ առ մի պահ, սիրուն աղջիկ,
Իմ նկարից քեզ նայեմ:
Իմ երազի նման ես դու,
Իդեալին՝ իմ սիրո,

Թվում է, թե ամբողջ կյանքում
Ես վառվել եմ քո հրով:
Սիրուն աղջիկ, սիրուն աղջիկ,
Սիրտս նվիրել եմ քեզ,
Որ դու լինես միշտ երջանիկ,
Քաջ Վահագնի Սիրո պես:
Մռով սարի ստորոտում
Ես իմ արյունն եմ հեղել,
Իմ արյունից ելնելու են
Բյուր կակաչներ՝ հրեղեն:
Դու կքաղես կակաչներն այդ,
Ալ թերթերը փայփայես,
Ալ թերթերը քո բախտն են վառ,
Դրանց սեւը՝ ես եմ, ես:
Սիրուն աղջիկ, սիրուն աղջիկ,
Թող քեզանով հմայվեմ,
Կանգ առ մի պահ, սիրուն աղջիկ,
Իմ նկարից քեզ նայեմ:

1999 թ., Ստեփանակերտ

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱՏԻՑ

Բորիս ՉԱՔԱՐՅԱՆԻ հիշատակին

Հայր իմ, այսօր շոգ ու տոթ է,
Տաք է խրամատում,
Բայց թախծելը ինձ միշտ խորթ է,
Թույլին միշտ եմ դատում:
Խրամատիս դեմ՝ թշնամու
Կրակակետն է թառած,
Ինձ է նայում թնդանոթի

Փողը՝ հրեշ դառած:
Իմ պապերի հողի վրա
Մեր օջախն եմ պահում,
Մեկը լինի՝ հարցնի նրան,
Ո՞վ ես այս աշխարհում:
Ո՞վ է պապդ, ե՞րբ է եկել
Ու տեր դարձել այդտեղ,
Այս վանքերը ո՞վ է կերտել՝
Մեր հոգու պես շքեղ:
Վեր են կացել՝ նենգ, սելջուկյան
Բարբաջանքով անմիտ,
Ձենք են առել, գրքեր գրել՝
Թեւեր տալով ստին:
Հայր իմ, եթե մի օր ընկնեմ,
Չվշտանաս երբեք,
Ես իմ արյան գնով անգամ
Պետք է սուտը հերքեմ:
Ողջ աշխարհը պիտ խոնարհվի
Մեր Արցախի հանդեպ,
Եթե մարտում զոհվեմ, հայր իմ,
Լաց չլինես երբեք:

1999 թ., Ստեփանակերտ

ԳԱՐՈՒՆ Է ԵԿԵԼ

Անմոռանալի 18-ամյա Դավիթ
ՍԱՐԳՍՅԱՆԻ հիշատակին

Արցախ աշխարհի արծվասիրտ Դավիթ,
Գարուն է եկել, աչքերդ բացիր,
Մայիսն է բուրում՝ ծնված մեր ցավից,
Մի՛ թող մայրիկդ սգա ու լացի:

Դու տասնութամյա անվախ դյուցազուն,
Սիրտդ դեռ սիրո շոյանքի կարոտ,
Կրծքիդ տակ վառած երազ ու ցասում,
Նահատակվեցիր մի ջինջ առավոտ:

Նահատակվեցիր Շուշվա բարձունքին,
Նրա թռիչքին դարձած հենարան,
Մեր տենչերի մեջ ու մեր արցունքի
Ե՛վ անմար շող ես, ե՛ւ հույս կենարար:

Չարությունը իր մահագույժ սրտում,
Թշնամին գուցե նորից մեզ դավի,
Բայց Շուշին կերգի Արցախի գրկում,
Քանզի դու այդ ես երազել, Դավիթ:

Շուշին մոր նման քեզ կասի օրոր,
Ազատությունը կծփա հավերժ,
Մեր սեգ լեռներում սերունդները նոր
Միշտ քո անունով կկոչեն՝ Վրեժ:

ԱՆՈՒՆԴ ԿԱՊՐԻ

«Մարտական խաչի» ասպետ
Սերգեյ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ հիշատակին

Դու երգեր շատ էիր սիրում,
Անունդ մի երգ է դարձել,
Քո մասին երգեր են գրում,
Դու փառքի դռներն ես բացել:

Ձուլվել ես մեր լույսի շողին,
Մեր ճամփին դարձել ես փարոս,
Վարդերը՝ բացված մեր հողին,
Քո հրե տենչերն են, հերոս:

Դարերը կգան ու կերթան,
Կծաղկի Արցախը հայրենի,
Անունդ կհնչի ամեն տան՝
Մեր լեզվով քաղցր ու մայրենի:

Կանգուն են սարերը մեր սեգ,
Հավերժ են գետերը մեր հորդ,
Անունդ կապրի նրանց հետ,
Ինչպես հավերժի ճամփորդ:

1999 թ., Ստեփանակերտ

ԴՈՒ ՔԱՅԼՈՒՄ ԵՍ

«Մարտական խաչի» ասպետ
Ալեքսանդր ԳԱՍՊԱՐՅԱՆԻ հիշատակին

Դու Արցախի հողին ծուլված,
Ծաղկի փոխված հերոս որդի,
Դու խաչենված, դու գարունված,
Հավերժացած սիրտ ու հոգի:
Դու ժպտում ես արեւի հետ,
Եվ աստղերի մեջ շողշողում,
Անունդ ոնց կարոտի երգ,
Մեր կարոտն է անվերջ ցողում:
Ա՜խ, երանի հնար լիներ,
Թեւեր առած գայիր մի օր,
Արցախը քեզ գիրկը առներ
Ու փայփայեր կարոտով մոր:
Սակայն, հերոս, դու կաս մեզ հետ,
Եվ քայլում ես հաղթանակով,
Դու կքայլես դար ու դարեր -
Ձինվորյալի հպարտ հոգով:

1999 թ., Ստեփանակերտ

ՄԵԶ ՀԵՏ ԵՍ ՄԻՇՏ

«Մարտական խաչի» ասպետ
Արարատ ՂԱԶԱՐՅԱՆԻ հիշատակին

Դու զոհվեցիր Ձրաբերդում,
Մոր պես լացեց խենթ Թարթառը,
Մշուշ իջավ արտ ու հերկում,
Սգի մեջ էր լեռնաշխարհը:
Ով էլ լսեց, խոր արտասվեց,
Չէր դադարում վառող լացը,
Անբուժելի վերքիդ համար
Անգամ լացեց լուսաբացը:
Տարիները եկան-անցան,
Հաղթանակի լույսը բացվեց,
Կարոտների մի ծիածան
Մեր լեռներում կամար կապեց:
Մեր երազի ճամփան բռնած
Մենք քայլում ենք դեպի գալիք,
Ու քո սրտով՝ միշտ անարատ,
Մեզ հետ ես դու, քաջ Արարատ:

1999 թ., Ստեփանակերտ

ԱՐԱՔՍԻ ԱՓԻՆ

«Մարտական խաչի» ասպետ
Արգամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հիշատակին

«Մայր Արաքսի ափերին»
Երգը շրթերիդ,
Ականջդ հին դարերին,
Ձենքը թեւերիդ,
Ընկերներիդ հետ հասար

Հաղթության գահին,
Սակայն խոր վերք ստացար
Պայքարի պահին:
Մահդ սգաց Արաքսը,
Անունդ շրթին,
Ասաց.- Հերոս իմ զավակ,
Քեզ հետ եմ կրկին:
Մինչեւ հիմա անունս էր
Հնչում քո շրթին,
Հիմա կապրեմ՝ անունդ
Գրած իմ սրտին...

1998 թ., Ստեփանակերտ

ՄՀԵՐ ՁԱՆ, ԱՐԻ

«Մարտական խաչ՝ առաջին աստիճանի» շքանշանակիր Միեր ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հիշատակին

Աստղերը ժպտում են, մենք քեզ ենք հիշում,
Բուրում են վարդերը, մենք հիշում ենք քեզ,
Ամեն ինչ քո թանկ անունն է հուշում
Ու քեզ տուն կանչում հարազատ մոր պես:
Թվում է՝ կգաս արծվի թեւերով,
Ծիծեռնակի հետ կգաս խնդալից,
Հրեշտակ դարձած կգաս՝ թեւելով,
Ու քեզ կողջունենք կարոտներով լի:
Թվում է՝ կգաս հարսնացուիդ հետ,
Բալիկներիդ հետ կայցելես մորը,
Դարձած օջախի սյունը ձեր հավետ,
Ծով երջանկություն կբերես հորը:
Թվում է՝ կանցնես մեր հին փողոցով,

Կանցնես թխահեր, ապա ճերմակած,
Միերի նման մեր առյուծաձեւ,
Սասնա Դավթի պես զենք-զրահ հագած:
Քո թափած արյան սուրբ կաթիլներից
Արեւ կծագի Արցախ աշխարհին,
Ու միշտ ջերմացած հենց այդ արեւից,
Մարդիկ կկանչեն. «Միեր ջան, արի»:

21.06.1993 թ., Ստեփանակերտ

ԵՐԱՋ

Ռուբեն ՉԱՔԱՐՅԱՆԻ հիշատակին

Երազիս մեջ վարդեր առած
Սարից իջա մեր տուն,
Մայրս բակում կարոտ դառած
Դիմավորեց անքուն:
Վարդերս առավ ու փարվեց ինձ,
Ասաց. «Ա՜խ, ուշ եկար...
Որդիս,- ասաց,- վերադարձիդ
Սպասեցի երկար:
Սեր-աղջիկդ ինձ ամեն օր
Ողջունում է թախծոտ,
Քո գալստյան հույսն ենք վառում
Ամեն մի առավոտ:
Ա՜խ, ինչ լավ է եկար, որդիս,
Հիմա կանչեմ նրան,
Այնքան ջինջ է նրա հոգին,
Ասես լույս կա վրան»:
Ասաց մայրս, բակից ելավ,
Ծաղիկներս ձեռքին:
Ա՜խ, չհասցրեց քնքուշ ձեռքը
Դնել իմ բաց վերքին:

1999 թ., Ստեփանակերտ

ԱՐԵՎԻ ՆՄԱՆ

Արմեն ԱՆՏՈՆՅԱՆԻ հիշատակին

Դու գարուն շատ էիր սիրում,
Գարնան հետ ծաղկում ես հիմա,
Քո Սերը կարոտի հրում
Վառվում է արեւի նման,
Վառվում է, սպասում ճամփիդ,
Որ կգաս ժպտադեմ ու ժիր,
Այդ Սերը իմաստն էր կյանքիդ,
Երազդ՝ վառվռուն ու անծիր:
Դու գարուն շատ էիր սիրում,
Եվ սիրտդ ձուլեցիր ծաղկունքին,
Եվ գարնան մի օր էր վառվռուն,
Որ ընկար Մռովի բարձունքին,
Քո ջահել կյանքով փրկեցիր
Պատիվը Արցախ աշխարհի,
Աստղերի պես վառվում է քո սերը,
Անունդ կհնչի բարի:

ՄՈՐ ՑԱՎԸ

(Եղելություն)

Մարտում զոհվել էր մինուճար որդին,
Հավաքվել էին ընկեր, բարեկամ,
Սփոփում էին մոր սիրտն ու հոգին,
Անհուն վշտի մեջ դարձած լույս ու կամք:
Մայրը նստել էր որդու սնարին՝
Աստվածածինն էր ասես իջել ցած,
Լացի մեջ անգամ քնքուշ ու բարի,
Գովում էր որդուն՝ քրիստոսացած,

- Դիպլոմն ստացավ, չհասավ Սիրուն,
Ոչ կիսուր դարձա եւ ոչ էլ տատիկ,
Որդիս զոհ դարձավ Արցախի սիրուն,
Սրտի մեջ իղձը մեր Հաղթանակի:
Լաց եղեք, քույրեր, մայրեր, լաց եղեք
Թեթեւացնում է լացը սգվորին,
Ձավակ եք կորցրել, արցունք եք հեղել,
Արցախի վիշտը ցավն է բոլորիս:
Բայց պիտի մերժեմ սովորույթը հին,
Չեմ հագնվելու ինչպես սգող մայր,
Ես սեւ կհագնեմ միայն այն պահին,
Թե որդուս Իղձը մնա անկատար:

1994 թ., Ստեփանակերտ

ԵՎ ՓԱՌՔ, ԵՎ ՊԱՏԻՎ

Զոհված ուսանողների ծնողներին

Այս ազատ ու լույս օրերի համար,
Օրերի համար այս խաղաղ կյանքի,
Մենք Երախտիքով ու սիրով անմար
Պարտական ենք ձեր որդոց սխրանքին:
Իրենց քաջությամբ, հայրենի սիրով,
Նոր սերունդների մեջ են ձեր որդիք,
Երկրին պարգեւած սրտերի հրով
Նրանք դարձել են ե՛ւ դաս, ե՛ւ ոգի:
Նրանք ապրում են սերունդների հետ՝
Իրենց երազով, տենչերով անթիվ,
Ձեզ՝ մեր սրտերը՝ միշտ երախտագետ,
Ձեզ՝ հավերժական ե՛ւ փառք, ե՛ւ պատիվ:

2001 թ., Ստեփանակերտ

ՍԻՐԵԼԻ ԱՐԱՔՍՅԱՅԻՆ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ասում են, թե թուխ արեգակ չկա,
Ես չեմ հավատում՝
Արաքսյան վկա,
Վկա նրա թուխ ժպիտը կրակ,
Նրա այտերի փոսիկները թուխ,
Նրա բառերը՝ ջերմությամբ թուխի,
Նրա հայացքը, խոսքը սրտաբուխ:
Մատները նրբին՝ շողեր են լույսի,
Նրա բառերը կանթեղներ հույսի,
Հայացքը՝ հեքիաթ արարող աղբյուր,
Շուրթերը երազ պարգեւող համբույր,
Թուխը՝ խավարը ցրող լույս կանթեղ,
Ցավի բալասան, սիրո վերքի դեղ...
Ասում են, թե թուխ արեգակ չկա,
Սուտ է,
Թուխ արեւ Արաքսյան վկա...

12.11.2008 թ.

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Երբեք ու երբեք, քեզ չեմ մոռանում,
Միշտ զրուցում եմ անհուն կարոտով,
Ինչքա՜ն-Ինչքա՜ն էլ քեզնից հեռանում,
Ասես անցնում ես լռին իմ մոտով:
Ձայնդ հնչում է հոգուս խորքերում,
Քաղցր ժպիտդ փարվում է սրտիս,
Դու ապրում ես իմ սրտի ծալքերում,

Ասես ծաղիկ ես՝ բուրում ես գրկիս:
Դու արեւի հետ ելնում ես սարից,
Շողերին ձուլված ջերմացնում ինձ,
Լուսնի բոլորած հայացքի տեսքով
Շոյում ես կյանքս՝ հմայքներով քո:
Ծով իմ, իմ Արաքս, ծփանքով անհուն
Ու ջինջ խոհերով երգերիս մեջ ես,
Դու երազներիս բուրումնալից հուն,
Ինձ համար կարոտ, ինձ համար տենչ ես:

24.12.2008 թ.

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Իմ ծովածուփ, իմ Արաքս,
Ունենայի մի հնար,
Սիրտս լրիվ հանեի,
Մաս-մաս ճամփիդ ցանեի,
Որ լինեի միշտ քեզ մոտ՝
Դարձած բաղձանք ու կարոտ:
Իմ ծովածուփ, իմ Արաքս,
Դու իմ գարուն, իմ ամառ,
Իմ երգի գուռ, իմ աղբյուր,
Հեքիաթային իմ համբույր:

25.11.2008 թ.

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Այս գիշեր, երազիս մեջ,
Զբոսնում էի քեզ հետ,
Աստղերը ժպտում էին,
Աշխարհը դարձել էր երգ:
Վարդերը բուրում էին,

Ու երգում հավքերն անթիվ,
Թվում էր՝ ծուլվել էին
Աստղալից գիշեր ու տիվ:
Արցախը պար էր բռնել,
Օփում էր երկինքն անհուն,
Երազս երգ ու տաղ էր,
Կորել էր հանգիստ ու քուն:
Այս գիշեր երազիս մեջ
Զբոսնում էի քեզ հետ,
Իմ հոգին ծածանվում էր՝
Ինչպես մի լույս-տիեզերք...

23.11.2008 թ.

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Չի լինում երբեք՝ չկարոտեմ քեզ,
Չի լինում մի պահ՝ անունդ չտամ,
Դու Սայաթ-Նովի երգած դիցուհի,
Քո ճանապարհին՝ ես մի ջրատար:
Դու հեռո՜ւ-հեռվից ժպտացող աստղ,
Ճակատագիրս կապված քո լույսին,
Ես սիրո ծովում մարտնչող լողորդ,
Երազանքներս կապված քո հույսին:
Ես ճամփաներում մոլորված ճամփորդ,
Դու վառվող փարոս՝ անհասանելի,
Ես կարոտների մի Արաքս՝ միշտ հորդ,
Դու՝ երանություն՝ երազներով լի:
Ես բարձր լեռան մի հեզ ուխտավոր,
Դու բարձունքներում հրաբորբ կանթեղ,
Սիրո աշխարհում ես միշտ թեւավոր,
Սակայն չեմ հասնում սիրուդ ոչ մի տեղ:

Թե մի օր ասես՝ սիրտս կիանեմ,
Կփռեմ ճամփիդ՝ որպես մանանա,
Ասա, սիրելիս, ասա՝ ի՞նչ անեմ,
Որ հասնեմ սիրուդ ու երջանկանամ:

16.12.2008 թ.

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Երգը ծնվում է անհուն կարոտից,
Քո մասին երգս կարոտի հեւք է,
Կարոտի հուր է, որ վառում է ինձ,
Կարոտի ծով է, քեզ փայփայող ձեռք:
Երգը սնվում է քնքուշ երազից,
Քո մասին երգս երազի կանչ է,
Երազի թույր է, երազի թեւեր,
Երազի երազ, երազի կանչեր:
Երգը ծնվում է սիրո ծարավից,
Քո մասին երգս ծարավն է սիրո,
Ծարաված սրտիս ծփանքն է երգս,
Որ շողշողում է քո սիրո հրով:
Լեռան գագաթին բուրող իմ շուշան,
Ձեռքս չի հասնում,որ նուրբ գուրգուրեմ,
Գոնե իմ երգի քնքուշ թեւերով
Թող խենթի նման ձեռքդ համբուրեմ:

25.12.2008 թ.

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ

Ամանորի շեմին, Ամանորի,
Սիրտս նվիրեմ քեզ՝ երազներիս փնջով,
Սիրտս թեւեր ունի՝ նման լորի,
Սիրտս թեւածում է քո առինքնող շնչով:

Ամանորի շեմին, Ամանորի,
Քեզ նվիրեմ հոգիս՝ քո արեւով օծված,
Հոգիս ծովանում է քեզնով՝ օրը-օրի,
Ու բացվում են իմ դեմ՝ դռները գոցված:
Ամանորի շեմին, Ամանորի.
Աստվածային սիրո պսակը քեզ բերեմ,
Ու ծնկի գամ քո դեմ ու մեղանչեմ նորից,
Կրկին ինքնամոռաց ձեռքդ համբուրեմ;
Օրհնանքներս ցանեմ քո ճանապարհին,
Բաղձանքներս հյուսեմ՝ թաշկինակիդ հանգուն,
Ապաշխարեմ Աստծուն, որ միշտ մնա բարի,
Առատ պահի սերդ՝ սերդ իմ դեմ անհուն:
Իսկ իմ սերը, անգին, միշտ կրակ է քո դեմ,
Քեզ շողեր է բերում՝ շեմին Ամանորի,
Ինձ համար քո գիրկը դարձրու ծաղկուն եդեմ՝
Ամանորի գրկում՝ այս Ամանորի:

27.12.2008 թ.

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Շնորհավոր Սուրբ Ծնունդը, Ամանորը,
Շնորհավոր քո հուշերի հինը, նորը,
Թող նոր տարում ծիածանվի սերը քո սուրբ,
Երգի նման հար կարկաչի երազդ նուրբ,
Արեգակը իր շողերով թող շոյի քեզ,
Թող քո սիրտը հրավառվի արեւի պես,
Ամեն աստղ թող զարդարի ճանապարհը,
Թող քեզանով հպարտանա մեր աշխարհը,
Երջանկության ծովը ծփա բախտիդ դռան,
Քո այտերը փայլեն ինչպես գույնը նռան:

Ինքդ Արաքս, թող Արաքսը ծփա ճամփիդ,
Ինքդ գարուն, թող քեզ ժպտա գարնան Արփին,
Թող շրթերիդ միշտ կարկաչի երազ ու տաղ,
Բանաստեղծը սիրով դիմի՝ «Տեսքիդ մատաղ»,
Դու պոետի քնքուշ երազ,
Ո՞ւր ես թեւում այդպես վռազ:

10.06.2009 թ.

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Սրտիս մեջ է պատկերը քո,
Իմ երգերը դու ես հուշում,
Կյանքիս անցնող օրերի մեջ
Քո ժպիտն եմ անվերջ հիշում:
Դու ես շոյում սիրտս թախծոտ,
Մարող հույսս դու ես վառում,
Քո անվամբ եմ փարվում կյանքին,
Քո սիրով եմ ես արարում:
Քո սիրով է բուրում վարդը,
Սերդ է երգում աղբյուրը ջինջ,
Գարունը թե ծաղկազարդ է,
Պարտական է քո ջերմ շնչին:
Ոտքից գլուխ բնություն ես,
Ես՝ բնության մեծ սիրահար,
Իմ մեծ սիրո քննությունն ես,
Հոգիս քո դեմ միշտ սիրավառ:
Կարոտներիս կանչն ես դարձել,
Շնորհակալ եմ դրա համար,
Երազներիս դուռն եմ բացել՝

Սերդ դարձրել ոսկե կամար:
Սիրտս լիքն է կրակներով,
Երազներով՝ միշտ հրահուր,
Դու իմ Արաքս, դու իմ հեքիաթ,
Հար կարկաչող դու իմ աղբյուր:

03.03.2009 թ.

ԵՐԳ ՏԱՍԵՐՈՐԴ

Երբ տխրում ես՝ հիշիր ինձ,
Երբ ուրախ ես՝ ինձ հիշիր,
Իմացիր՝ որ կյանքում կամ
Ու քեզ հետ եմ՝ ինքնակամ:
Իմացիր՝ որ սերս կա,
Որի լույսը դու ես, դու,
Վառվող սիրտը իմ վկա,
Միակ հույսս դու ես, դու:
Ողջ աշխարհում փնտրել եմ
Թուխ աղբյուրը իմ կյանքի,
Սիրտս հիմա զվարթուն,
Ասում է՝ այդ դու ես, դու,
Իմ Արցախի բուրող զարդ,
Իմ որոնած-գտած վարդ:

20.03.2009 թ.

ՎԼԱԴԻՄԻՐ ՖԻՐՍՈՎ
(Ռուսաստան)

ԱՐԵՎԸ ՈՒՍԵՐԻՍ ՎՐԱ

Գիտես, անգինս,
Ամեն երեկո,
Երբ դեռ խավարը չի չոքում հողին,
Արեւն իջնում է ուսերիս վրա
Եվ կանչում հեռու,
Հեռավոր ափեր...
Գիտեմ, սիրելիս,
Որ հեռուներում
Կանայք կան չքնաղ,
Ուրիշ աչքերով,
Նազերով ուրիշ...
Սակայն ինձ համար
Հաճելի է միշտ լինել քո կողքին:
Ես գիտեմ նաեւ,
Օվկիանից այն կողմ,
Մի դրախտային հրաշք քաղաք կա,
Որտեղ շատ-շատ են նուրբ երանգները,
Լույսերն ուրիշի:
Բայց չեմ տենչացել
Ես այն ափերը,
Իմ հոգին, գիտե՞ս,
Սպիտակ կեչու հոգուն է ձուլված,
Ուրիշ լույսերը
Չեն կարող հոգին այդ ջերմացնել,
Եվ այն պատկերը,
Որ Ռուսիան է տպել իմ սրտին,
Այնտեղից ջնջել ոչ ոք չի կարող:

Հիվանդ եմ ես այդ պատկերով դարեր,
Այդ պատկերը միշտ ինձ հետ եմ տարել
Եվ ուրախ պահին,
Եվ ժամին վշտի:
Իսկ արեւին ի՞նչ,
Ամեն ինչ մեկ է արեւի համար,
Ում օվկիանոներն են,
Ում ծովն ու գետը...
Մեծ է արեւը, բոլորի համար՝ միակը կյանքում:
Ախր, ի՞նչ եմ ես
Արեւի կողքին,
Որը միակն է
Ժողովուրդների, դարերի համար:
Բայց ես սիրտ ունեմ,
Որ զգում է միշտ ակացիաների
Բուրմունքը կապույտ,
Եվ թանկ է նրան
Ծուխն օջախների,
Եվ կեչիների ստվերները ծիգ:
Ու երբ լինում է՝ շանթն ու որոտն են
Իջնում անտառին,
Ասես լսում եմ թխկթխկոցները սուր կացինների:
Քնիր, անգինս,
Վաղուց է անցել ժամը քնելու:
Իսկ ես չեմ քնում,
Ես թափառում եմ անքուն, անհանգիստ,
Ես թափառում եմ
Մեր կեչիների ծփանքի միջով,
Մեր ստեպներով, եզրով արեւի,
Պատկանելով միշտ մայր Ռուսիային
Եվ քեզ, սիրելի՜ս...

ՄԻԽԱՅԻԼ ԻՍԱԿՈՎՍԿԻ
(Ռուսաստան)

ԱՆՑԻՐ ԾՈՎԵՐ ՈՒ ՕՎԿԻԱՆՆԵՐ

Անցիր ծովեր ու օվկիաններ,
Երկրագունդը շրջիր ամբողջ,
Դու կտեսնես շատ երկրներ,
Բայց մերի պես չկա, օ՜, ոչ:

Հորդառատ են գետերը մեր,
Հովերը մեր՝ անծայրածիր,
Ու դաշտերում այդ բարեբեր
Չի թառամում եւ ոչ մի ծիլ:

Մի նոր թռիչք, մի պարգեւ է
Յուրաքանչյուր օրը բերում,
Մեր երկրի պես հարուստ երկիր
Դու չես գտնի ողջ աշխարհում:

Կարող ձեռքով տրված է մեզ
Մի մեծ, անխախտ եղբայրություն,
Ու մեր երկրում բազում ազգեր
Ապրում են մի ընտանիքում:

Հարազատի նման նրանք
Միասին են ծաղկում, քայլում,
Նրանց սերն է հավերժական
Ծիածանի նման փայլում:

Ողջ ազգերն են փառաբանում
Հաղթանակի դրոշը մեր,

Ամենուր ջինջ լույս է ցանում
Մեր մեծ երկրի արեւը ջերմ:

Հողագնդի ամեն ծայրից
Մեր աստղերն են տեսնում լուսե,
Փառքը մեր մեծ Հարենիքի
Արեւին է անգամ հասել:

Բայց ոսոխներ ունենք մենք դեռ,
Որ ատում են մեզ, զրպարտում,
Մռնչում են որպես մի նեռ,
Մեր դեմ մաղձ են անվերջ թափում:

Չենք վախենում սակայն երբեք,
Եվ կերտում ենք, եւ պայքարում,
Մեր երկրի պես հզոր երկիր,
Չկա-չկա ողջ աշխարհում:

ՍԵՐԳԵՅ ՍՄԻՌՆՈՎ
(Ռուսաստան)

«ԼՈՒՍՆԱԳՆԱՑ -1»

Միշտ թվում է ինձ, ոչ թե մեքենա,
Այլ մի կենդանի, զորեղ էակ ես,
Որ սիրտ ունես դու ջերմ, հոգեհմա
Եվ աչքեր ունես պարզ ու հեռատես:
Երբ ամեն անգամ այգն է ճառագում,
Շարունակում ես ճամփան քո անթեք,
Լուսնի գաղտնիքն ես դու մեզ առաքում
Եվ լեզու առած խոսում երկրի հետ:

Չմրսես, անգին,
Արեւի քամուց,
Ասում են շատ է դաժան այդ քամին,
Շատ է սառնաշունչ:
Դու միշտ լավ լսիր
Մեր հրամանը,
Հիշիր՝ մեզ մոտ ես,
Այստեղ, մեր տանը:
Ութ անիվներդ շարժիր դու վստահ,
Հետախույզի պես եղիր միշտ անահ,
Դու մի վարանիր,
Ինչ որ գաղտնիք կա՝ խորքերից հանիր,
Իմացիր, որ քո փորձերն առաջին
Ուժ են ներարկում
Մեր նոր թռիչքին:
Հավատա, շուտով քեզ այցի կգան
Քեզնով զորացած եղբայրներդ նոր,
Դու մեր տենչերից ծնված հաղթանակ,
Դու մեր գիտության քաջ պատգամավոր:

ՊԱՎԵԼ ԿԱՏԱԵՎ
(Ռուսաստան)

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԳ

Բանաստեղծ Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Օ՜, Գուրգեն, երբ դու երգերդ ես կարդում,
Քո հրաշք լեզվով,
Կարծես, թե կյանքի էջերն ես թերթում:
Լսում եմ ձայնը հույսի, քնքնշանքի,
Գետի կարկաչը ու կանչը հավքի...
Թեկուզ չգիտեմ ես քո մայր լեզուն,

Բայց երբ կարդում ես,
Բոլոր տողերդ փարվում են հոգուս...
Չկա մշուշոտ մի հնչուն, մի բառ,
Քո լեզվով հնչող քո երգերի մեջ...
Քո նուրբ երգերը՝ հրաշք մի աշխարհ,
Քո երգի լեզուն՝ հեքիաթ լուսատենչ:

Օ՜, Գուրգեն, երբ դու քո Հորովելն ես
Երգում ինձ համար,
Անանց մի թախիծ
Ամպի փոխարկված կապում է կամար...
Երգում ես քո սեգ լեռների լանջին,
Ու երազներդ քո լեռների պես
Քարավան կապած քայլում են դեպի
Հեռուները ջինջ...
Քո երգը, Գուրգեն, ե՛ւ հաղթ, ե՛ւ նազուն,
Քո սեգ լեռներին այնպե՜ս են սազում:

ՊԱՎԵԼ ԲԻԿՈՎ
(Ռուսաստան)

ԻՄ ՀԱՍԱԿԱԿՑԻՆ

Աշխարհի կեսն ես դու անցել, ընկեր,
Այդ երեւում է քո մեդալներից,
Որպես բրոնզե ջերմ արծագանքներ,
Նրանք նշում են ճամփադ սխրալից:
Մենք կրակների, մարտերի միջով,
Գնդացիրների ահեղ ճռինչով,
Անցել ենք առաջ,
Ոսոխից անթիվ վերք ենք ստացել,

Բայց չենք ընկճվել, ելել, սլացել,
Ծնկի ենք բերել դաժան թշնամուն,
Սանձել ենք ահեղ ամեն մի սամում,
Մենք չենք խնայել թե արյուն, թե ջանք,
Որ պատերազմին աշխարհում վերջ տանք,
Որ էլ արհավիրք չտեսնենք կյանքում,
Որ խաղաղ ապրենք,
Կերտենք, սովորենք
Խաղաղության բերդ մեր Հայրենիքում:
Գիտեմ, հիշում ես դու Բուդապեշտը,
Դու Վարշավան ես հիշում, Պրագան.
Ինչքա՜ն զրկանքներ տեսավ մեր վաշտը,
Որ պայծառ լինի նրանց ապագան:
Ֆաշիստների դեմ մղած մարտերում
Քանի՜ ամրոցներ, բարձունքներ առանք,
Եվ հաղթանակի մեր դրոշներով
Ժաղովուրդներին խաղաղ կյանք տարանք:
Ու մեր մարտական ուղին պսակվեց
Մայիսի ինով,
Ռայխստագի վրա ծփացող
Մեր ալ դրոշով.
Խաղաղության թանկ, առատ բերքերով,
Մեր սրտից բխած հուզիչ երգերով:
Չար թշնամու դեմ մղված պայքարի
Հուրն է զոդել մեր սրտերը իրար,
Դու ղեկն ես առել արդ տրակտորի,
Ուսադիրներ եմ ես կրում, եղբայր:
Ու մենք երկուսս էլ կրկին մեր ջանքով
Մայր Հայրենիքի ճամփան ենք հարթում,
Դու հողից քամած քո առատ բերքով,

Ես՝ մեր սահմանի հսկումով արթուն:
Ուժն ու եռանդը մեր չենք խնայում՝
Պահպանելու միշտ խաղաղությունը,
Այդ սրբազան ու արդար պայքարում
Հավատում է մեզ ողջ մարդկությունը:
Ընկեր իմ, գիտեմ՝ եթե աշխարհի
Խավար ուժերը նորից սպառնան,
Կելնես ցասումով, կընդունես վաշտը,
Հրամանատար կրկին կդառնաս:
Մենք չենք վախենում դաժան թշնամուց,
Մեր հզոր երթը, ո՛չ, չի խանգարվի,
Մեր հրթիռներն են հիմա պաշտպանում
Խաղաղությունը ամբողջ աշխարհի:

ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ
(Ռուսաստան)

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԸ

Գրականագետ Լեւոն ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Մեր տղաները, օրենքներից դուրս,
Միշտ թեւածում են մտքով անխաթար,
Եվ ես Լեւոնի երազի միջով
Արարատին եմ նայում անդադար:
Եվ տեսնում եմ ես... Կարոտով անհուն,
Դեպի աստղամերձ գագաթը սարի,
Ոնց է մաքառում
Աբովյանն արի,
Բարձրանում է նա՝
Հոգում երազը Հայոց աշխարհի,

Ջրհեղեղներից բացված կիրճերով,
Անծանոթ, վայրի կածաններով հին:
Բարձրանում է նա դարերը ուսած
Ձյուների միջով,
Եվ ոտքերի տակ սառույցն է ջարդվում
Մտերմիկ ճիչով:
Բարձրանում է նա՝ Նոյյան Տապանը
Փրկելու անմար իր սրտի լույսով,
Իսկ նրա ետքից ելնում են ահա
Հայ սերունդները՝ իրենց նոր հույսով:
Եվ նրանք չունեն հանգիստ ու դադար,
Նրանց տենչերում կատարն է սարի,
Փոթորիկներին, հողմերին ընդդեմ,
Իրենց մեծ դատն են բերում աշխարհին:
Բերում են իրենց դարավոր երգը՝
Մայր Հայաստանի մխացող վերքը:
Քայլում են նրանք առանց հոգնելու,
Քայլում են՝ իրենց երազներով վառ,
Իսկ ես Լեւոնի երազի միջով
Արարատ սարն եմ տեսնում ձյունափառ:

ՄԻԽԱՅԻԼ ՍՎԵՏԼՈՎ
(Ռուսաստան)

ՀՈՐՍ ԵՐԳԸ

Պատուհանիս տակ աշունն է լացում,
Մշուշն է ծածկում շողերն արեւի,
Կյանքս՝ քնձռոտ ձի, հուշերս է բացում,
Երազ - նժույգս է կանչում երեւի:

Սպասել եմ ես երջանիկ օրվա.
Սպասել եմ միշտ... եւ հյուրն է իմ տան,
Սակայն չեմ ժպտում, որ չնկատեն
Իմ թուք արտածող բերանն անատամ:

Երեւի մեկ օր ապրում են մարդիկ
Թեկուզ մի փոքրիկ տրված բերկրանքով,
Երջանկությունը մոռացել է ինձ,
Գուցե անցել է նա իմ տան կողքով:

Որդի ունեմ ես... նա լավն է, իրոք,
Երգեր է գրում, խոհուն է, համառ,
Բայց նա թող գրի, թե ոնց եմ տանջվում
Իմ չարած-չեղյալ մեղքերի համար:

Տղաս չի կրում անունն իմ սիրված,
Տարբեր են իմից խոհերն իր անգամ,
Եվ ով հալածել ու տանջել է ինձ,
Նրան պաշտում է որպես բարեկամ:

Բայց վստահ եմ ես, հիշելու է նա
Հին դեմքերը եւ արարքները շեղ,
Երբ կյանքի գետը թռչում է ուրախ,
Ուրեմն ակունքը տխուր է մի տեղ:

Աշունն է ծեծում պատուհանը իմ,
Սիրտս նվում է անբույժ ցավի պես,
Անհունն է կանչում ինձ ու պառավիս,
Ա՜խ, տեսնես ո՞վ է ուղեկցելու մեզ:

1924 թ.

ՄԱՐԻՆԱ ՑՎԵՏԱԵՎԱ
(Ռուսաստան)

ՀԱՅՐԵՆԻՔ

Մուժիկի նման դու համառ,
Եվ նման սրբազան հայրերիդ,
Երկիր իմ, ինձանից շատ առաջ
Երգել ես ... «Ռոսիա - Հայրենիք»:

Կոլուժյան բլուրից ես մի օր
Տեսել եմ դաշտերդ հուռթի,
Դու հեռվից - հեռու մեղմօրոր,
Փարվել ես նրբագեղ իմ սրտին:

Եվ որպես մի անհաս Հեռաստան,
Որպես ցավ - ծուլվել ես իմ հոգուն,
Դարձել ես լույս գիրը իմ բախտի,
Արծվաթեւ սլացքը իմ ոգու:

Հեռաստան... եւ այսքան ինձ մոտիկ,
Հեռաստան... ինձ հավերժ տուն կանչող,
Հեռաստան... իմ ձայնը, իմ հոգին,
Հեռաստան... երազն իմ կանչող:
Իզուր չեմ ես հանուն իմ հոր տան՝
Քեզ համար մարտնչել, Հեռաստան:
Թե անգամ զրկվեմ իմ զույգ ձեռքից,
Ատամով կգրեմ քո կոճղին.
«Դու կռվի խնձոր ես, իմ երկիր,
Ես մոխիր՝ շաղաղված քո հողին»:

12.05.1932

ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ
(Ռուսաստան)

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻ ԼԵՆԻՆԳՐԱԴ
(Երկրորդ տարեդարձ)

Ես չեմ մոռացել կորուստը նրանց,
Իմ հոգում նրանք կրակներ են թեժ,
Նրանց հիշում եմ կարոտով անանց,
Թեկուզ էլ չկան՝ կորցրել եմ հավերժ:

Եվ առանց նրանց ինձ խեղդում է միշտ
Ցավը բաժանման, վիրավորանքի,
Եվ իմ արյան մեջ հոսում է մի վիշտ,
Որ աղ է ցանում իմ խորունկ վերքին:

Քառասուն չորսին էր, քրտնած հունիսին,
Հառնել էր իմ դեմ մետաքսաշորում,
Մի քաղցր ժպիտ փարվել էր հույսին,
Եվ տառապանքով ինձ էր օրորում:

Մեծ աղետներից, շանթերից՝ հեսան,
Իմ օրրանը դեռ մխում է անշեջ...
Ես իմ հարազատ քաղաքը տեսա
Ծով արցունքներիս ծիածանի մեջ:

31.05.1946, Լենինգրադ

ՎԼԱԴԻՄԻՐ ՖԱՅՆԲԵՐԳ
(Ռուսաստան)

ԹԵ ՈՆՑ ԷԻ ԿՈՉՎՈՒՄ ԿԱՂԱՄԲ

Եվ թախծում եմ, եւ՛ լուռ ժպտում,
Երբ հիշում եմ անցած մի դեպք,-
Թե *ԿԱՂԱՄԲԸ* ոնց էր շրջում
Միշտ կենսուրախ *ԿՈՇԻԿԻ* հետ:

Թե ոնց կանաչ դարպասի մոտ
Հանդիպում է *ՈՒՆԵԼԻՔԸ,*
Կանչում էինք *ԿՈՃՂԻՆ.*- Արի՜,
Ու գալիս էր *ԿՈՃՂԸ*՝ ինքը:

Մեզ վստահած տունը թողած,
Ելնում էինք մեր բակը հին...
Է՜խ, Վոլոդյա, Պետյա, Գուլյա,
Ինչ կհասներ այնժամ բակին:

Քո վարդ թշիկների համար
ՀԱՐՍՆԱՑՈՒ է պիտակը քո,
- Իսկ դու, կաղլիկ, մի իսկական
ՈՒՆԵԼԻՔ ես բարակ ոտքով:

Քայլում էինք կրակ կտրած,
Քայլում էինք ծնկի գալով...
Խաղում էինք ամբողջ օրը՝
Իրար մի նոր պիտակ տալով:

Տարիներ են եկել, անցել,
Կանգնել եմ ես Մայորի դեմ,-

Իմ մանկության ընկեր է նա,
Հարեւանը իմ ժպտադեմ:

Մոռացել եմ ես անունը,
Պարուրել է մի նուրբ թախիծ,
Ինչպես ասեմ. *ԿՈՇԻԿ*, ողջո՜ւյն,
Ես *ԿԱՂԱՄԲՆ* եմ, հիշո՞ւմ ես ինձ...

ԽՈՒՏԱ ԲԵՐՈՒԼԱՎԱ
(Վրաստան)

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ

Ադաթ կա հնուց իմ Վրաստանում,
Հյուրին ընդունել սիրով, գրկաբաց,
Չհարցնել՝ ով է կամ որտեղից է,
Միշտ եւ հյուրընկալ, եւ միշտ սիրտը բաց:

Դարպասների մոտ ողջունել նրան,
Տուն հրավիրել ժպտադեմ, բարի,
Եղջյուրը լցնել գինով հուրհրան,
Կենացը խմել լավ բարեկամի:

Մեր տան դռները ձեր առջեւ բաց են,
Եղբայրներ, միշտ էլ թանկ եք մեզ համար,
Հողմերի միջով մեկտեղ ենք անցել,
Մեր սրտերի մեջ նույն հուրն է անմար:

Մենք հայրենիքն ենք պաշտում նույն սիրով,
Մի նպատակ է թեւավորում մեզ,
Ուր էլ լինում ենք՝ մեր ճանապարհին,
Ողջագուրվում ենք հարազատի պես:

Իմ բարեկամներ, ընկերնե՛ր անգին,
Երգիս տողերում իմ սիրտն է խոսում,
Այն եղբայրական խոսք է ջերմագին,
Նրանում եղբոր բերկրանքն է հոսում:

Համեցեք, շրջենք դաշտերում մեկտեղ
Ու ծաղիկների բույրով արբենանք,
Ելնենք սարերը մեր աստեղնամերձ,
Աղբյուրներին մեր սրտերը բանանք:

Ուր էլ որ լինեք, ուր էլ որ գնաք,
Ձեզ կողջունեն ձեր իսկ երգերով,
Ձեր պատվին սիրով սեղան կբացեն
Ու կզարդարեն առատ մրգերով:

Գովերգում եմ մեր հանդիպումը նոր,
Արվեստի տոնը ու դաշինքը մեր,
Ընդունեցեք իմ այս երգը փոքրիկ,
Եղբոր խոսքի պես սրտաբուխ ու ջերմ:

17 մարտի, 1970թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՐՈԿՈՖԵՎ
(Ռուսաստան)

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Խաղաղության, խինդի երթ է երթը մեր,
Խաղաղության տարի լինես, նոր տարի,
Արդ հագել է լույսի շքեղ զգեստներ
Ամենուրեք Ամանորն իմ աշխարհի:

Թող ջինջ լինի, հստակ՝ երկնի կամարը,
Երջանկության տարի լինես, նոր տարի,
Եվ մեր հրե կամքով, ջանքով մեր համառ
Վեհ փառքերով դու պսակվես, նոր տարի:

Մենք այսպիսի օրենք ունենք մեր կյանքում.
Քնել, ելնել աշխատանքով բարեբեր,
Մտքի համար, ձեռքի համար ամենուր
Մեզ մոտ լի է աշխատանքը, իմ ընկեր:

Դարեդար է աշխատանքը, օ՜, մեզ մոտ,
Երկիր ունենք անծայրածիր, ծաղկազարդ,
Բուգից մինչեւ հեռու Խաղաղ օվկիանոս,
Տարածվել է Հայրենիքը մեր ազատ:

Ու Սեւ ծովից սկսած մինչեւ Սպիտակ ծով,
Քիչ աշխատանք, քիչ գործեր չեն կատարված:
Բայց դեռ ինչքա՜ն անելիքներ ունենք մենք...
Ճանապարհ տուր,
Ճանապարհ տուր, նոր տարի,
Երջանկության,
Խաղաղության մեր երթը թող երկարի:

ՊԵՏՐՈՒ ՋԱԴՆԻՊՐՈՒ
(Մոլդավիա)

ԻՄ ՄՈԼԴՈՎԱ

Դաշտերդ են փռվել գորգերի նման,
Հովն է շնկշնկում հեռուներից պերճ,
Քո պատմությունն է պահվում, Մոլդովա,
Բլուրներիդ ու կուրգաններիդ մեջ:

Տխուր անցյալդ է փռվում իմ առաջ,
Եվ տեսնում եմ ես. անփայլ աչքերով,
Հյուծված գյուղացիք ճամփեքին ընկած,
Բռունցքներ սեղմած, ոսկրոտ ձեռքերով:
Եվ օտտոմանյան այն հին Պորտայից
Նենգ հորդաներն են գալիս գազազած,
Այրելու գարունը մոլդովիայի,
Ասպատակելու մեր հողը ծաղկած,
Եվ աղջիկներին, կանանց անհամար
Միշտ գերության մեջ տանջելու համար:
Ո՞ւր գնալ, Մոլդովա, տխրել ես հոգով,
Բայց հետեւել ես դու Արեւելքին,
Եվ հայդուկային կռվի շռինդով
Լցրել պատմության էջերը քո հին:
Քո ժողովուրդը քաջ, ցասումնալից,
Չի լռել երբեք ոսոխի հանդեպ,
Նա ժամանակին պատյանի միջից
Իր սուրն է հանել, ջարդել թշնամուն
Եվ ժայռի նման կանգնել սահմանում:
Դու հավատարիմ քո ձգտումներին.
Ծանր լուծդ ես նետել դարավոր,
Ձեռքդ մեկնելով ռուս եղբայրներին,
Այս բարձունքին ես հասել լուսավոր:
Օ՜, իմ Մոլդովա, մեր նոր օրերում
Ջահելացել ես, պսակվել փառքով,
Ոնց դափնեպսակ ճակատդ է զուգում
Մեր հայրենական գերբը հոգեթով:
Գործարաններդ են կանգնել քո գրկում,
Անշեջ լույսերի օվկիան ես դարձել,
Եվ քո անցյալը թախծոտ ու տրտում

Պատմության անդարձ գիրկն է անցել:
Եվ քո ձեռքերով վառած աստղի տակ
Դեպի գալիքն ես քայլում հաղթական,
Սիրտդ է ջերմանում սիրով անհատակ,
Քեզ ողջունում է չքնաղ ապագան:
Ծաղկելու համար օգնել են միշտ քեզ
Մեզ հավատարիմ եղբայրներն ազատ,
Քեզ ուժս եմ տալիս, սիրտս սիրակեզ,
Դու իմ Մոլդովա, երկիր հարազատ:

ԿԱՅՍԻՆ ԿՈՒԼԻԵՎ
(Բալկարիա)

ՄԱՅՐԸ

Քարքարոտ ճանփով, սարի լանջն ի վար,
Մի կին է քայլում դեպ աուլը նոր,
Մանուկն է քնել ձեռքերի վրա,
Ինչպես երբեւէ ես՝ գրկում իմ մոր:
Մի կին է քայլում, մի մայր ուրիշի,
Կյանքի իմաստն է իմ դեմ հոլովվում.
Անցնում է ինչպես քնքնշանք ու օրհնանք,
Փեշերից սեխի բույրն է ոլորվում:
Մի մայր է քայլում սարի լանջն ի վար,
Այնպես է սեղմել մանուկն իր կրծքին,
Կարծես աշխարհի բախտը գիրկն առած,
Տանում է՝ հանձնի պայծառ գալիքին:
Անցնում է մայրն այդ եւ ծուլվում հեռվին,
Բայց իմ խոհերն են փոթորկվում նորից.
Ով մարդ արարած, աշխարհը, կյանքը,

Սիրել, փայփայել սովորիր մորից:
Մի տես՝ ինչպես է գրկել մանկանը,
Ինչպես է քայլում զգույշ, տագնապով,
Կարծես գալիս է դարերի խորքից,
Ցրտով ծմեռվա, ամառվա տապով:
Նա մխրճվում է հորիզոնի մեջ,
Խաղաղ է շուրջը, չկա ամպ ու մեգ,
Տեսեք, սարերը ոնց են մոր առջեւ
Խոնարհում իրենց գլուխները սեգ:

ՆՈԴԻՐ
(Բադաշխան)

ՀԱՅՐԵՆԻ ԵՁԵՐՔ

Դու, իմ Բադաշխան, իմ հպարտություն,
Իմ երգի աղբյո՛ւր,
Մեր անծայրածիր հայրենի այգում
Մի ծաղկանոց ես վարդերով քո բյուր:
Քո սեգ սարերի կնճիռների մեջ
Ժամանակները հալվել են անվերջ,
Նրանց իմաստը կարդում են հիմա
Ոնց իմաստունի գիրքը էջ առ էջ.
Կորացել էին ծանր կարիքից
Ե՛վ մեր պապերը, եւ՛ հայրերը մեր,
Բայց ազատվեցիր դու հին կապանքից,
Բռնեցիր ուղին նոր ու կենսաբեր:
Եվ մարդը հպարտ շտկեց ուսերը
Ու տերը դարձավ իր հողի, ջրի,
Շունչ առան նրա բոլոր հույսերը,
Եվ տասնապատկվեց ուժը ձեռքերի:
Իր աշխատանքով նա հարստացավ

Եվ նա լուսավոր բախտի տեր դարձավ:
Դու, իմ Բաղաշխա՛ն,
Վառել ես ահա քո երջանկության
Աստղերը ժպտուն,
Ջահելացել ես,
Եվ քո փառավոր կառույցներն այսօր
Ի՞նչ լավ են ժպտում...
Տեսնում եմ ահա իմ լեռնաշխարհը՝
Իմ Իշկաշիմը բարձր, աննման,
Որտեղ փայլում է ամեն մի քարը
Սուտակի նման:
Եվ Վանչն եմ տեսնում,
Ուր հոնդում են տրակտորները
Դաշտ ու հանդերում,
Ուր օրն սկսում եւ վերջանում է
Հաղթանակների քաղցրալուր երգով,
Ուր հողն է շնչում
Ցորենի անուշ-անուշ բուրմունքով:
Բարտանգն եմ տեսնում՝
Գլուխը պահած միշտ ձյուների մեջ,
Նրա ընդերքի գանձերը անթիվ
Ներկան, գալիքն են զարդարում մեր պերճ:
Ես բարձրագագաթ Մուրղաբն եմ տեսնում,
Ուր ջինջ աստղերի ջինջ հայացքի տակ
Լիճն է կապուտակ,
Որ լույսի փոխված իջնում է սարից
Եվ ժպտում ամեն-ամեն սեղանի:
Հայրենի եզերք, դու իմ Բաղաշխա՛ն,
Սիրտս քեզանով հպարտ է, բերկրուն,
Որ շողշողում ես ադամանդի պես
Հայրենի երկրում:

ՄԱՔՍ ՅԻՄԵՐԻՆԳ
(Գերմանիա)

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մեր փողոցներով երբ քայլում ես դու,
Նայիր սերնդին մեր երիտասարդ,
Շատ բան կընթերցես նրանց հայացքում՝
Գալիքի հանդեպ վառ տենչ ու հավատ:
Տարիներ առաջ ես էլ եմ երգել
Նրանց հասակում, նրանց պես ջահել,
Սակայն կարիքը մեզ միշտ, ամենուր,
Բերկրանքից, խինդից հեռու է պահել:
Թե լրացել է տասնչորս տարիդ,
Քեզ «տղամարդ» են համարել արդեն,
Պիտի գործ փնտրես, եւ ամբողջ տարին
Դու աղքատ լինես, թե հայրդ աղքատ է:
Եվ այդ կարիքի ճիրանների մեջ
Հյուծվել ենք, տանջվել չոր հացի կարոտ,
Դպրոցն է եղել անիրական տենչ,
Իսկ սովորելը - ո՞վ ես դու արդյոք:
Այդպիսի կյանք եմ տեսել ես, որդիք,
Ապրել եմ՝ մի օր սոված, մի օր կուշտ,
Եվ ամենուր էլ մեր ծով քրտինքը
Տերերն են խլել ագահ ու անկուշտ:
Իսկ հիմա...լսեք...
Երբ ես նայում եմ մեր նոր սերնդին,
Նախանձում եմ եւ բերկրանքից ժպտում,
Լույս տենչեր ունեն եւ իղձեր բարի,
Մեծ ապագան են նվիրված կերտում:
Նրանք չգիտեն, թե ինչ է կարիք,

Կառուցման երգն է նրանց շրթերին՝
Ապրել հաշտ, խաղաղ, քայլել դեպ գալիք,
Մեծ ընտանիքում ժողովուրդների:
Մեր փողոցներով, երբ անցնում ես դու,
Նայիր սերնդին մեր երիտասարդ՝
Նոր կյանքի շողն է նրանց հայացքում,
Նրանք մեր երկրի տերերն են հպարտ:

ՌԱՍՈՒԼ ՀԱՄԶԱՏՈՎ
(Դաղստան)

ՀՈՎՎԻ ԵՐԳԸ

Հարազատ իմ տունն են լեռները,
Հմայիչ եւ թանկ են ինձ համար,
Իսկ կապույտ երկնքի փեշերը
Ոնց տանիք, կապել են լուրթ կամար:
Ոնց թուխը անխարույկ գիշերվա
Սեւ է իմ փափախը, այդ գիտես,
Սակայն դու իմ սրտի վրա
Մի սեւ կետ չես գտնի երբեք:
Մոտս չես, սիրած իմ թանկագին,
Իմ բերկրանք, իմ միակ խինդ ու սեր,
Չե՞ս տխրում, արդյոք այս պահին,
Առանց ինձ աուլում մեր լուսե:
Բաց արա պատուհանը ձեր տան
Ու ժպտա որպես մի լուսին,
Ա՜խ, նայիր սարերին կարոտով,
Եվ խորհի՛ր, խորհի՛ր դու իմ մասին:
Ամառ է, ոչխարը սարում

Պիտ հսկել - փայփայել գառներին,
Եվ մինչեւ ձյուն չիջնի լայլաղում,
Չեմ կարող ես գալ լեռներից:
Թե երգեմ, սոխակը կլռի,
Պատկերդ վառ է սրտիս մեջ,
Քո սերը կրծքիս տակ չի մարի,
Խարույկ է նա դարձել մի անշեջ:
Դու արի, մի անգամ արի սար,
Լեռնային գետերը արի տես,
Քո ճամփին կժպտան, իմ սիրած,
Աստղերն ու ծաղկունքը պես-պես:
Բարձրաբերձ սարերի վրա
Խարույկս կվառեմ մինչեւ լույս,
Կբացեմ իմ սիրտը քո առաջ,
Որպես մի շողշողուն արշալույս:

6 ապրիլի, 1961 թ.

ԱԲՈՒԼ- ԱԼԱ ալ - ՄԱՀԱՐԻ
Արաբ բանաստեղծ X-XI դդ.
(Թարգմանությունը ռուսերենից)

***

Համեստությո՛ւն ավելի շատ... կգոչեի ես մարդկանց,
Իսկ երբ հոգիս ե՛ս ծռեի... կդատեի ինձ սրտանց:

Տե՛ր իմ, ե՞րբ է գրողը մեզ որոնելու, գտնելու,
Եվ մենք ե՞րբ ենք մեր վերջնական օրորոցը մտնելու:

Սակայն մարդը չի վռազում այս քարասիրտ դարի մեջ,
Մինչ չփոխվի չոր կմախքի, տառապում է նա անվերջ:

***

Աղոթում եմ երկմտանքով, օ՜, վերին Տեր, ինձ ներիր,
Երկդիմությունն ու հավատը իրար շատ են անհարիր:

Լինում է, երբ արտաքինից գրավում է մարդը քեզ,
Սակայն թունոտ խոսքը նրա սիրտդ է խոցում նետի պես:

Աստծուն դիմել, կեղծել նրան եւ աղոթել անհավատ...
Նման մարդուց հեռու մնա. երկդիմի է ու կավատ:

***

Լուսանում է գիշերն, անշուշտ, ու պայծառ օր է դառնում,
Բայց չար բախտը ճանապարհիդ խտանում է ու հառնում:

Շիրիմներում հար ննջում են հագարացիք անհամար,
Ե՛վ Եմենի ցարն է ննջում, եւ՛ սուրբը, եւ՛ գողը չար:

Եվ հաշիվն են կորցրել վաղուց անցյալ դարձած տերերի,
Բայց ապրում է Եգիպտոսը՝ կյանքի լույսը թեւերին:

Նախատում եմ ես քեզ, երկիր, դու պատասխան պիտի տաս,
Ո՞նց ես տանում անարգներին, տերերին՝ նենգ ու տհաս:

Օ, մայր երկիր, դու մեր սիրտը կյանքին կապող նուրբ լարն ես,
Դաս ես տալիս դու մեզ անվերջ, բայց կեղծում են, որ համր ես:

Եռում է քո օվկիանոսը: Ալիքները փրփրադեզ
Բզկտում են կրքերով բյուր: Որտե՞ղ ապրենք եւ ինչպե՞ս:

Օ՜, մայր Երկիր, շոյել ես մեզ, փայփայել ես սիրով դու,
Սակայն հիմա խոլ զայրույթով բյուր խեղճերին ես խեղդում:

Ատելության հողմն է ոռնում ապրողների ոտքի տակ,
Ամենուրեք վայրենության սուրն է փայլում արյամբ տաք:

Չեն խռովել հոգիդ երբեք ոչ չարի տեսքն արնավառ,
Ոչ գարշանքը իշխանության, ոչ գործերը սնափառ:

Տերերը ցոփ կյանք են վարում՝ մահվան ուժը թեւերում,
Նրանց դաժան արարքները մինչեւ ե՞րբ է տեւելու:

***

Այրի եղջերուն այնպե՜ս լաց եղավ,
Որ ծաղիկներին ցած իջավ եղյամ:

Բայց օրեր անցան, նոր ընկերուհին
Ընծայեց նրան կյանքի հուրը հին:

Դժբախտությունը երբ սիրտդ է խուժում,
Լոկ ժամանակն է վերքերդ բուժում:

***

Երբ բզկտվում է ծերունու հոգին,
Նրա մեծ բեռը պիտ տանի որդին:

Հայրական կամքով աշխարհ ենք գալիս,
Սակայն մեր պարտքը տեղին չենք տալիս:

Ընկերանում ես մեկ-մեկ չար ոգուն,
Բայց լավ է լսես քո խղճին, հոգուն:

Աղքատն ապրում է հեքիաթի հույսով,
Նա շաղախված է բարության լույսով:

Թող մոխիր դառնա սիրտը չար մարդու,
Հավերժությունը ծնի բարություն:

Դրացու ուղտի ծագը միշտ սոված,
Իսկ քոնն ուտում է մինչեւ լուսաբաց:

Կրքին իշխելը ինչպե՞ս սովորել,
Երբ կիրքն է մարդու սիրտը տրորել:

«Ես հողի պորտն եմ».- հպարտն է գոչում,
Բայց ավազի պես այնպես է կորչում:

Ավազուտներում ուղտեր են պահում,
Ավազը խոտ չի տալիս աշխարհում:

Կարելին հաճախ անկարելի է,
Ինչ ճշմարիտ է - անճառելի է:

***

Անապատի խոտի նման բարությունն է բուսնում շիտակ,
Սակայն նա միշտ կոխկրտվում է քոչվորների ոտքերի տակ:

Չարությունը կրակ է խոլ, բորբոքվում է, շուրջը վառում,
Խավարի մեջ նրա լույսով մահ է ցանում վրիժառուն:

Որ ծառն առատ պտուղ բերի՝ պահանջում է ջանք ու վաստակ,
Բայց քրտինքով ծնված բերքից օգտվում է գողն այլանդակ:

Մոլախոտն է, որ անխնամ շռայլում է բերքը առատ,
Չի պահանջում նա ոչ անձրեւ, ոչ ջերմություն, ոչ պահապան:

Ով արժան է, ձգտիր նրան գնահատել երախտիքով,
Սիրիր միայն բարերարին, խաբեբային ատիր հոգով:

Ինչո՞ւ սրել թրերն հատու, անխնա է թուրը բախտի,
Այս թրածին դարի ոգուն ըմբոստացողն ինչպե՞ս հաղթի:

Իմաստուններն ինչ որ մի տեղ Միակ Տիրոջն են հաստատում,
Ենթարկվելով հմայողներին, որ չեն կարդում ու չեն դատում:

***

Համբերությունը անօգնականի պաշտպանությունն է,
Իսկ այրուձիուն՝ մարտերից առաջ՝ զրահ է կռած,

Հոգսը ամեն մի մահկանացուի շունչն ու արյունն է,
Մինչեւ չի թողել տառապանքի մեջ կյանքն իրեն տրված:

Ո՞վ չի մոլորվում. շան համար լավաշը կլոր լուսին է,
Իսկ մանկան համար՝ աստղերը խաղողի ճութեր են ցրված:

***

Դու ուզում ես հողի վրա այս անհոգի
Գտնել արդար ու բարեգութ ադամորդի՞:

Քեզ թվում է, թե մզկիթում աղոթողի
Լայն կրծքի տակ զրուցում է Աստծո՞ հոգին:

Սխալվում ես, բարեկա՜մս, լավ լսիր ինձ,
Իր մեղքերն է նա թաքցնում արդարներից:

***

Մարտից առաջ բարձրացվել է թուրն անիծյալ,
Պիտի կռվեն զարույթի մեջ ուժերն հեծյալ:

Ձինվորները՝ իբրեւ որդի՞ք արդարամետ,
Բայց իմացեք, գազանների ձագեր են խենթ:

Աստղագետը խելքն է գովում տիրակալի,
Թե իբրեւ նա կյանքի աղբյուրն է բերկրալի,

Որ կարող է մարդկանց համար դառնալ հոր ձեռք...
Բայց պողպատե սուրն է հանում արյունաներկ:

Ու չեն հաշտվում գահի շուրջը երկու եղբայր,
Մահվան մուժից սարսափում են թե՛ կին, թե՛ այր:

Հազվադեպ է ժպտում աստղը երջանկության,
Մահն է խեղդում հույսը կյանքի ու փրկության:

Ավազանն է լցվում նեխված կեղտաջրով,
Չես ազատվում անիրավից անգամ հրով:

***

Գազանները տիրողներից խելամիտ են ու բարի,
Նրանք ապրում են իրենց որսով, չեն հրամայում աշխարհին:

Արյունռուշտ առյուծն անգամ, երբ կշտանում է մսով,
Նմանի դեմ էլ չի հարբում ո՛չ արծաթով, ո՛չ ոսկով:

Ոչ մի քաղաք չի հրդեհում գայլն ամենագիշատիչ,
Նա չի խժռում խեղճ զոհերին իր ճառերով խրատիչ:

Հայր Ադամի ամենաթույլ որդին ճնշելն է սիրում,
Ու մանկամիտ բռնակալը հաճախ ախշարհն է տիրում:

Իրարու չեն չարախոսում գազանները անլեզու,
Արյան ծարավ տերերի պես դրախտը չեն երազում:

***

Ատում եմ ես այս աշխարհը՝ հիմարացած, չարամիտ,
Ատում եմ փառք, իշխանություն, որ խաղեր են միշտ անմիտ:

Մեկ-մեկ ես ինձ չեմ ճանաչում, բայց երթի մեջ եմ, գիտեմ,
Որ Ադի եւ Սամուդի պես մոլորվել եմ Աստծո դեմ:

Ասում են, թե պինդ մարմինը պիտի հալենք ջրի պես,
Իսկ օվկիանի ալիքները պիտի ծուլենք քարն ինչպես:

Եվ վիճում են երկնի մասին, որ կախված է հավիտյան,
Ձգտումների վրա մեր կեղծ, երազների՝ մեր անկյանք:

Գուշակում են ոմանք, իբրեւ պիտի փլվի երկինքը,
Իսկ ոմանք էլ պնդում են՝ դա Աստծո գործն է ու ձիրքը:

Վիճու՜մ են, բայց ծծումբն արծաթ չի դառնալու երբեւէ,
Ձգուշանանք, որ աստղերը երկնից չընկնեն լուսաթեւ:

Երբ հնդկական թրերն արդեն բթացել են, դարձել հեգ,
Էլ հնացած պատյանների փառաբանումն ու՞մ է պետք:

ԱՇՈՒՂ ՎԱՀԱՆ

Աշուղ Վահանը ապրել ու ստեղծագործել է 18-րդ դարի վերջին, 19-րդ դարի սկզբին: Նրանից պահպանվել է մի դավթար, Շամախի քաղաքում, որտեղ ծնվել է նա: Նա եղել է կույր, ուստի հայտնի է եղել նաև «Կույր աշուղ» անունով: Նրա գրվածքները հուշում են, որ եղել է տաղանդավոր ստեղծագործող:

Վահանի հոր անունը Կարապետ է, մորը՝ Սոնա, որ հայտնի է իր մի քառատողից.

Վահանը երիտասարդ տարիքում սիրահարվել է մի թուրք աղջկա,սակայն չի հասել նրան, ապրել է մեծ ողբերգություն: Աշուղը եղել է Արեւելքի մի շարք երկրներում, ինչպես նաեւ Անդրկովկասի քաղաքներում: Վահանը գրել է եւ թուրքերեն, եւ՛ հայերեն: Սակայն, ցավոք, հայերեն երգերը անհետացել են: Վահանը լինելով Վրաստանում, հանդիպել է Սայաթ-Նովային: Նա Սայաթ-Նովայի նմանությամբ, թուրքերեն գրել է.

Աշխարհ գիտե, ես շիրվանցի Վահանն եմ,
Կարապետն է հայրս, մայրս Սոնան է,
Ի՞նչ եմ թողել, որ ասեմ իմ նշանն է,
Իզուր տեղը ողջ ջահանը ման եկա:

Վահանը ստեղծագործել է աշուղական պոեզիայի մի շարք ժանրերով:1986թ. հոկտեմբեր ամսվա իր համարում «Սովետական գրականություն» ամսագիրը տպագրել է աշուղի մի շարք երգեր՝ իմ թարգմանությամբ: Նրա երգերը բարու, սիրո, աշխատասիրության, ժողովրդասիրության արտահայտություններ են, որոնք ունեն նաեւ արդիական հնչեղություն: Այստեղ ներկայացնում եմ նրա մի շարք երգեր՝ թարգմանված թուրքերենից: Ժամանակին արտահայտել եմ մի կարծիք, որ ծագումով հայ աշուղների օտար լեզվով գրված երգերը պիտի թարքմանվեն հայերեն, դրանք մեր ժողովրդի սեփականությունն են:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

ՉԵՄ ԿԱՐՈՂ

Թաքուն իմ Սեր, վառվում եմ քո կարոտից,
Ա՜խ, ի՞նչ անեմ, ձեր տունը գալ չեմ կարող,
Քո կարոտը առնեմ գոնե Նարոտից,
Սրտիս դուռը փակ է, ժպտալ չեմ կարող:

Դու հեռացար, սեւ օրերս հետ դարձան,
Իմ հույսերը ամիսների հետ անցան,
Արցունքներս առու դարձան, գետ դարձան,
Մոլորվել եմ, ես ուշքի գալ չեմ կարող:

Դարդոտ Վահան, բերկրանքի լար չգտար,
Քո սեր-յարին հասնելու ճար չգտար,
Նախատում են աջից, ձախից, ինչ անեմ,
Անգութ մահվան ես համբույր տալ չեմ կարող:

ԵԿԵԼ ԵՄ

Էյ աղաներ, ասեք, դարդըս ո՞ւմ պատմեմ,
Սիրո ձեռից յանա-յանա եմ եկել,
Առանց ընկեր, առանց փողի ու հույսի,
Գլուխ վերցրել ես այս մեյդանն եմ եկել:

Ցավս խորն է, սրտիս հույսն եմ կորցրել,
Շատ լացելուց աչքերիս լույսն եմ կորցրել,
Արցունքներից երգերիս հույզն եմ կորցրել,
Մի սելավ եմ, ես ցավի դարն եմ եկել:

Ինձ ասում են.- Դու խար հագիր, այ Վահան,
Մարդիկ չար են, սեւ շալ հագիր, այ Վահան,
Սիրտս ասում է.- Չե, ալ հագիր, այ Վահան,
Բայց չեմ կարող, դավի աշխարհն եմ եկել:

ՉԱՍԵՄ՝ ԿՄԵՌՆԵՄ

Լսեք, աղաներ, մի ցավ ունեմ ես,
Ասեմ՝ կսպանեն, չասեմ՝ կմեռնեմ,
Վշտից ու սգից մոխրանում եմ ես,
Ասեմ՝ կսպանեն, չասեմ՝ կմեռնեմ:

Ոչ խինդ ունեմ ես եւ ոչ էլ ժպիտ,
Չեմ երգում ուրախ, իմ դովրանն է բիրտ,
Միանգամից էլ չի տանում մահն ինձ,
Ասեմ՝ կսպանեն, չասեմ՝ կմեռնեմ:

Թաքուն սեր կա իմ սրտի լարերին,
Էլ չեմ դիմանում կյանքի դավերին,
Դեղն էլ չի օգնի սիրո ցավերին,
Ասեմ՝ կսպանեն, չասեմ՝ կմեռնեմ:

Վահանի վերջին խոսքը վա՜յ դարձավ,
Իմ յարը՝ ինքը նվիրեց ինձ ցավ,
Նա մուսուլմանի աղջիկ, իսկ ես՝ հայ,
Ասեմ՝ կսպանեն, չասեմ՝ կմեռնեմ:

ԻՄ ՏԱՂԵՐԸ

Օ՜, չարխ-ֆալաք, ի՞նչ ես փակել աչքերըս,
Հա՜, նայում եմ, բայց չեմ տասնում սարերն իմ,
Բլբուլ չեկավ, վարդս կոկոն թառամեց,
Երաշտ եկավ ու չորացան բաղերն իմ:

Ավերակ ես արել տեղըս ու տունըս,
Սեւացրել ես պատիվըս ու անունըս,
Դու առել ես եւ՛ հավատըս, եւ՛ քունըս,
Ասա, ու՞ր են էն առաջվա տաղերն իմ:

Ո՜նց է դեղնել այգուս վարդի ալ թերթը,
Անգթորեն կորացրել ես իմ մեջքը,
Տե՜ս ինչպես է մեկնել մահն իր չոր ձեռքը,
Կրակն ընկած ճարճատում են թաղերն իմ:

Ես Վահանն եմ, չգիտեմ կա՞մ թե՝ չկամ,
Սիրտս, հոգիս երգին տվի ինքնակամ,
Փորձանքի զոհ դարձան ընկեր-բարեկամ,
Ա՜խ, ո՞վ պիտի մի օր հոգա թաղվելն իմ:

ՄԱՆ ԵԿԱ

Թաքուն իմ Սեր, դու հեռացար ինձանից,
Ես թիզ առ թիզ Գոբիստանը ման եկա,
Ոտքերիս տակ տվի Շեքին, Շիրվանը,
Կարոտալից Դաղստանը ման եկա:

Մերթ սարերում եղա ու մերթ Արրանում,
Միլում եղա, եղա նաեւ Մուղանում,
Հաճախ եղա Ղարաբաղում ծաղկանուն,
Գլուխս առա Գյուրջիստանը ման եկա:

Մերթ Իրանում աղի արցունք թափեցի,
Ուռումիի հողը ոտքով չափեցի,
Արաբիայում ես մի սեւ քար պաչեցի,
Այնտեղից էլ Հինդիստանը ման եկա:

Ես Քաբուլում զուլում տեսա, ցավ տեսա,
Բուխարայում մահվան քանի՞ դավ տեսա,
Թուրքիմանում քեզ փնտրեցի, դաղ տեսա,
Վիշտն իմ սրտում Խորասանը ման եկա:

Թավրիզի մեջ մտա պարտեզ ու այգի,
Մաքուրիում երգ երգեցի դառնագին,
Նախիջեւանից ողջույն տարա Իրաքին,
Հետո եկա Երեւանը ման եկա:

Աշխարհ գիտե, ես շիրվանցի Վահանն եմ,
Կարապետն է հայրս, մայրս՝ Սոնան է,
Ի՞նչ եմ թողել, որ ասեմ իմ նշանն է,
Իզուր տեղը ողջ ջահանը ման եկա:

ԻՆՉ ԱՆԵՄ

Էյ աղաներ, ականջ արեք իմ երգին,
Թռավ գնաց նազլու յարը, ինչ անեմ,
Համբերելու էլ ուժ չունեմ, ելք չունեմ,
Հեռու գնաց ահու-զարը, ինչ անեմ:

Շատ լացելուց զույգ աչքերս կուրացան,
Արցունքներս հոսեցին ու ծով դարձան,
Ի՞նչ դովրան է, զորբաները զորացան,
Առան նաեւ իխթիյարս*, ինչ անեմ:

Ո՛վ աղքատ է, թող չսիրի աշխարհում,
Թե սիրի էլ, նա՛ չի տիրի աշխարհում,
Մեջնուն դարձա, դարձա գերի աշխարհում,
Խլեցին եւ Սեր-նշխարս, ի՞նչ անեմ:

Ես Վահանն եմ, յարըս տեսնել չեմ կարող,
Առանց յարի երգ էլ երկնել չեմ կարող,
Պարըսպից ներս ձեռքս մեկնել չեմ կարող,
Մենակ եմ ես, կտրեց ճարըս, ինչ անեմ:

** Իխթիյար - իրավունք*

ԳԵՐԱՅԼԻ*

Է՞յ աղաներ, ականջ արեք,
Մի քնքույշ ջեյրան է յարըս,
Ունքերը թուխ, աչքերը թուխ,
Գոհար ու մարջան է յարըս:

Կոկոնի պես շուրթեր ունի,
Կակաչի պես այտեր ունի,
Ծովի նման աչքեր ունի,
Սալբի-խուրաման է յարըս:

Թուխ մազերը փռած ուսին,
Ժպտում է ոնց նորած լուսին,
Փարված եմ միշտ նրա հույսին,
Աշուղի դարման է յարըս:

Մի գոզալ է բարակ մեջքով,
Վառում է միշտ կրակ աչքով,
Արեգակ է՝ հրաշք, տեսքով,
Սրտահույզ դաստան է յարը:

Վահանն եմ ես՝ վառված յարից,
Լաց եմ լինում առանց յարի,
Թողնում եմ ես խոսքս թերի,
Քանզի մուսուլման է յարը:

** Աշուղական պոեզիայի ժանրերից*

ԲԱՅԱԹԻՆԵՐ

***

Ես սիրահար Փիրսաաթին,
Սրբերի վայր Փիրսաաթին,
Այն աղջկան ես սիրեցի,
Ո՞վ տեր դարձավ նրա բախտին:

***

Ես աշուղ թուխ աչքերի,
Դարձա պող թուխ աչքերի,
Ա՜խ, կորցրի ես քո ճամփին
Լույս շողը թուխ աչքերիս:

***

Վահանն եմ՝ հարյուր տարի,
Խոսք կասեմ հարյուր տարի,
Քո ճամփան լուռ կպահեմ,
Չգաս էլ հարյուր տարի:

***

Վահանն եմ, կերթամ խռով,
Անծանոթ սար ու ձորով,
Իմ յարը սիրում էր ինձ,
Խլեցին տարան զոռով:

***

Ջուրը ժայռեր կհարթի,
Երկինքն ամպեր կբարդի,
Վահանին մի նախատեք,
Սերը դարպաս կջարդի:

***

Այս վրան պահողն ով է,
Յուրտ ու սար պահողն ով է,-
Կյանքս առ, մի համբույր տուր,
Նման գին տվողն ով է:

***

Ախ, ափսոս, կյանքս գնաց,
Նա չեկավ, վարդս մնաց,
Օտարը տարավ յարիս,
Վահանիս՝ դարդը մնաց:

***

Գնում եմ արտ, այցի եկ,
Եզները առ, այցի եկ,
Թե բացեբաց չես կարող,
Երազիս մեջ այցի եկ:

***

Շիրվանի մեղրը ընտիր,
Մեր սարի մեղրը ընտիր,
Յարիս մեղր շուրթերը
Հեչ արին մեղրը ընտիր:

***

Պայուսակիդ թութունն եմ,
Արծաթ, ոսկին, թութունն եմ,
Աղա, ինձ տուր աղջիկըդ,
Քո տան ծառան ու սյունն եմ:

***

Հինան՝ նուրբ ծամ շոյողին,
Ուլունքը՝ հմայողին,
Կհանեմ զույգ աչքերը
Իմ յարին խեթ նայողի:

***

Արխալուղիս նախշը զառ,
Օձիքը զառ, նախշը զառ,
Ձեռքս քո զառ փեշին է,
Բաց չեմ թողնի նախշըդ զառ:

ՄԻՍԿԻՆ - ԲՈՒՐՁԻ

ՄԻԱՍԻՆ*

Իսլամական հավատով տեսեք ինչքա՞ն են գալիս,
Շահը՝ Աբաս - Միրզան է,- Իրանի Սուլթանն է գալիս,
Հիսուն հազար թուրքմեններ, մի ողջ Արրան են գալիս
Հարյուր վաթսուն խանի հետ քսան սարդար է գալիս,
Գլուխներից ձեռ քաշած՝ իբրեւ սատար են գալիս:
Երեք տասնյակ տարվա մեջ զինված, համառ են գալիս,
Ոնց իսլամի զինվորներ, արյան համար են գալիս.
Երեք հարյուր թոփչի բաշ, հարյուր հիսուն թոփխանա,
Հինգ հարյուր նոր թնդանոթ՝ փոքր, սակայն ահավոր:
Վեցը հարյուր խոհարար ու չորս հարյուր սրճարար,
Տասնչորս հազար յուզբաշի, յոթհարյուր սուլթան է գալիս,
Տես, խայտառակ լինելու՝ Արազստանն է գալիս:
Գանձակ - բաղը առնելու՝ տասը հազար է գալիս,
Ղարաբաղը առնելու՝ քսան հազար է գալիս,
Շուշին՝ բերդը անառիկ, ալանելու են գալիս,
Դուր է եկել Գանձակը, թալանելու են գալիս:
Շահզադեին օգնելու քանի՞ թրեր են պարզել,
Մուսուլմանները կատաղի քանի՞ սրեր են պարզել:
«Սարը - Գյավուր» անվանված Զուռնաթափան չպարտվեց
«Գանձակ» ասին ու ելան, հեղեղն ասես կատաղեց,
Այգաբացին Գանձակը արթնացավ ու ծառացավ,
Խան-բաղի մոտ թշնամին ծովացավ ու զայրացավ,
Ահեղագոչ մարտի մեջ մուսուլմաններ ջնջվեցին,
Թալանեցին, լլկեցին, թեեւ անվերջ հնձվեցին:
Շատ-շատերը Ամիրխան - Սարդարի հետ մեկ դառան,
Թոփ ու թվանք չէր ճարվում, փայտե դագանակ առան,
Այծի մորթուց գզգզված փափախները գլխներին,

Մտան, թալան արեցին ինչքը հայոց տների,
Բարձած անթիվ էշերի, շտապեցին նամազի,
Թվում էր, թե տիրել են ողջ աշխարհի մի մասին:
Քառասուն օր անցնելուց հասավ զորքը ռուսի,
Աղստաֆայում մի առժամ հանգստացան ուս-ուսի,
Մադաթովի զորքն էր դա, ուներ քսան գնդապետ,
Երեք օրվա ճամփա էր մինչեւ Գանձակ՝ երկնադետ.
Իսկ Ամիրխան - Սարդարը՝ Մադաթովին թշնամի,
Շունչը փչեց Շամքորում - օրհասական այդ ժամին,
Նրա լեշը շների բաժին դարձավ, չթաղվեց,
Այդ ժամանակ Ուղուրլու խանը ուրախ շտապեց
Ու թալանեց զինակցի ունեցվածքը ցիրուցան.
Փորքաշները ձիերի, փալաս-փլուս, հրացան:
Հայերն հաճախ չեն նայում մուսուլմանի արարքին,
Իբր ուժեղ են իրենք եւ հենված են թվանքին...
Մի խումբ հայեր գնացին, Ուղուր-խանի ճանկն ընկան,
Նա էլ ջարդեց, ոնց մի օր գերմաններին գաղթական:
...Թնդանոթի ձայն լսվեց... Պատերազմը թեժացավ,
Ղզլբաշին թիվ չկար, բերում էին մահ ու ցավ,
Շահզադեն է իշխողը՝ թոռը Բաբախան շահի,
Նրա ալթավան ոսկուց է, տիրակալն է աշխարհի:
Ու հեղեղի ուժգնությամբ, ռուսաց զորքը՝ ինչպես հողմ,
Եկավ - հասավ, եւ լուրը շուտ տարածվեց ամեն կողմ՝
Երկու հազար դրակոն՝ սվինները պարզած վեր,
Վեցը հազար հետեւակ՝ առած արծվի հաղթ թեւեր,
Երկու հազար հայ հեծյալ՝ ոնց հինավուրց այրուձի,
Տասներկու հազար են՝ իրենց սրտով առյուծի,
Մադաթովը թունդ օղի հրամցրեց իր զորքին,
Գոմշացուլի ուժերով, չվախեցան ոչ ոքից:
Մադաթովը ասես թե մսագործ էր թեժ մարտում,

Նրա զորքին միակուռ ոչ մի չար ուժ չէր հաղթում:
Լայն դաշտերը Շամքորի լցրեց անթիվ լեշերով,
Թշնամու ալ արյունը հեղվեց դաշտի փեշերով:
Ղզլբաշը եկել է՝ մատաղացու գառ դառնա,
Շահզադեի զորքն է նա՝ պիտի երկինք համբառնա,
...Գիշերն իջավ, սուրհանդակ եկավ - հասավ Գանձակից,
Ասաց՝ Նազար-Ալիխանը փախավ, թեկուզ աջակից:
Մուսուլման հոծ զորքի մեջ մի աղաղակ բարձրացավ,
Աղաչանքը առ ալլահ, գնալով հույժ թանձրացավ:
Պասկեւիչը շուտ հասավ Մաղաթովին օգնելու,
Սուրհանդակը հեռացավ վազքով՝ առանց հոգնելու,
Շահզադեին լուր հասավ պատերազմի թեժ դաշտից,
Որ իր զորքը խորտակվեց, ինչպես ծիլը երաշտից:
Նա հասկացավ, որ ինքը հանդիպել է իգիթի,
Իր պարտության մասին ու՞մ, որտե՞ղ պատմի, չգիտի:
Նամակ հղեց խաներին՝ տրված ծանր վիճակին,
Ասաց՝ Իմամ մարգարեն իրենց հոգին կփրկի:
Հարյուր հազար զինվորներ նորից կռվում փորձեցին,
Մադաթով ու Պասկեւիչ նոր հրաշքներ գործեցին:
Ղզլբաշի արյունը գետի նման էր հոսում,
Մահից փրկված զինվորը ամոթանքից չէր խոսում:
Փրկվածները մազապուրծ անցան գետը փրփրադեզ,
Եվ Արաքսի այն ափին հաշվեց զորքը Շահզադեն,
Տեսավ հարյուր հազարից տաս հազար է մնացել,
Ռուսի նետած արկերից շատ-շատերն են գնացել:
Մեկը ճամփա չի գտել, զինքն է տվել արտերին,
Մեկը գնդակ ստացել ու ծուլվել է դաշտերին,
Մեկը փախել - թաքնվել է բաղերի մեջ Գանձակի,
Նման որսի շներից փոխչող վախկոտ շլդիկի:
... Միսկին-Բուրջին երբեւէ իր խոսքին սուտ չի խառնել,

Շահի զորքը փախչելիս փոշին երկինքն էր առել:
Ռուս զորքը քշում էր ուշքը կորցրած թշնամուն,
Հայերն առած թրերը՝ նման էին թեժ քամու,
Փրկված գնդով Շահզադեն Արաքս հասավ մեկ ժամում:
Մադաթովի զարկի տակ Թավրիզ-Թեհրանն է գալիս,
Աբաս-Միրզա-Շահզադեի ջարդված բերանն է գալիս:

**Բանաստեղծությունը թուրքերեն լեզվով տրամադրել է բանաստեղծուհի-գրականագետ Զինաիդա ԲԱԼԱՅԱՆԸ*

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

***

Մի գայթակղվիր խաբուսիկ փառքով,
Օ՜, երիտասարդ դու գեղեցկադեմ,
Մի նետվիր ահեղ կռվի մեջ թափով
Սեգ ղարաբաղյան ամբոխների դեմ:

ԱրՊՀ հյուրն է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն

ՇՈՎԻՆԱՐ

Շովինարը գրական ասպարեզ իջավ միանգամից: Որպես բանաստեղծուհի, նա արցախյան ազգային ազատագրական պայքարի ծննունդն է:

Շովինարը գրում է ռուսերեն, հայտնի է ոչ միայն Ղարաբաղում, Հայաստանում, այլեւ Մոսկվայում: Ռուս գրաքննադատ Անդրեյ Դոբրինինը գրել է. «Շովինարի պոեզիան ճչացող չէ, պաթոսային չէ, գալիս է նրա ներաշխարհից: Նրա լիրիկան զգացմունքների ու հույզերի ամենափոքր իսկ տատանումների թրթռուն արտացոլանքն է, մեր ծանր օրերի թեթեւ զեփյուռն է: Շովինարը վառ արտահայտված քնարերգու է: Նրա պոեզիան հրապարակային չէ, այն պահանջում է անշտապ ընթերցանություն, նրա գրքերի հետ մենակ մնալու անհրաժեշտություն»:

Շովինարի քնարերգությունը գրավել է նաև հայտնի բանաստեղծուհի Սեդա Վերմիշեւային: Նա ընդգծել է, որ կորուստների վիշտը չի սպանել Շովինար Բաղդասարյանի կյանքի հանդեպ սուր զգացողությունը: Նրա լիրիկան «Ես»-ի խոստովանքային անկեղծություն, ինքնարտահայտման համարձակություն ու անմիջականություն է պարունակում , որն էլ ընթերցողին հաղորդում է անկեղծություն ու ջերմություն:

Շովինարի պոեզիան նկատել ու իրենց դրվատանքի խոսքն են ասել բանաստեղծներ Բ. Ջանյանը, Գ. Գաբրիելյանը, Ա. Հովհաննիսյանը: Բանաստեղծ Վարդան Հակոբյանը Շովինարի «Ցավ ծնված երջանկությունից» գրքի առաջաբանում նշել է. «Պոեզիան ոչ միայն այն է, ինչ արտահայտվում է պոետական բառերով, այլեւ, գուցե, ավելի շատ, այն, ինչը չի ասվում, այլ դրսեւորվում է բանաստեղծության ու գեղեցիկի հանդեպ ինքնամոռաց սիրո եւ վերաբերմունքի մեջ:

Ես բարձր եմ գնահատում Շովինար Բաղդասարյանի նվիրվածությունը բանաստեղծական մուսային: Դա, անշուշտ, գնահատելի է»:

Ծանոթանալով Շովինարի պոեզիային, ես նկատել եմ, որ նրա երգերը իսկ եւ իսկ արցախյան բնության մեղմ շշունջներ են, որ անցել են արցախուհու ցաված ու երազող սրտի միջով: Կյանքի, սիրո, կարոտի, կորստի, վշտի, ակնկալության ծփանքներ են դրանք, կնոջ, մոր, քրոջ, սիրածի նուրբ խոստովանություններ՝ ուղղված մարդկանց, աշխարհին: Այս հանգամանքն էլ հենց ինձ հուշել է՝ թարգմանել Շովինարի բանաստեղծությունների մի մասը, որը կատարել եմ հաճույքով: Ի դեպ, Շովինարի առաջին թարգմանիչներից մեկը բանաստեղծ Արմեն Հովհաննիսյանն է, որը նույնպես իմ կարծիքին է:

Ստորեւ բերում եմ իմ թարգմանությունները, որոնք տեղ են գտել Շովինարի «Ցավ ծնված երջանկությունից» ժողովածուում:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

«ՑԱՎ ԾՆՎԱԾ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ» գրքից

***

Երդվել եմ մի օր, չտանել ինձ հետ
Այն ամենը, ինչ ունեմ հոգուս մեջ,-
Մայր հողի մասին՝ երգերս շիտակ,
Մոր սիրո մասին՝ իմ սրտի պես տաք:

***

Կատարյալ լինելուց դեռ
շատ են հեռու
Աշխարհն ու մարդը,
Դու անկրկնելի գործերով օծիր
Քո տեղն ու կյանքը:

***

Նորից հարազատ իմ Երկրում եմ ես,
Նորից խոհերս քո մասին են լոկ,
Անթիվ հուշերս մշուշ են ասես,
Ներկան շոյանք է, անցյալը՝ կարոտ:
Ստվերները թանկ խաղում են ինձ հետ,
Իսկ երազներս փարվում են հոգուս...
Ինձ փայփայում են իմ ընկերների
ժպիտները բորբ,
Թեւավորում են Երկրիս թույրերը
եւ բույրերը հորդ...

***

Երբեք չեմ վառի արահետները,
Ոտնահետքերը չեմ ջնջի երբեք,
Թող հիշեն նրանց իմ լավ թոռները,
Ես իմ հետքերը կթողնեմ ոնց երգ,

Կթողնեմ նաեւ ես նրանց համար,
Ովքեր դարձել են իմ հոգուն կամար,
Ովքեր ժպիտ են պարգեւել սրտանց,
Բարություն արել հույզերով անանց...
Ես չեմ մոռանա ձեզնից ոչ ոքի,
Ես հիշում եմ ձեզ, դուք եք իմ ոգին:

***

Կյանքը ինձ հասցրեց անթիվ հարվածներ,
Եվ ապրեցի ոնց վիրավոր եղնիկ,
Սակայն քայլեցի ես միշտ անվեհեր,
Թաքցնելով ցավս ժպիտով մեղմիկ:

***

Ես նույնն եմ եղել, կմնամ նույնը,
Ինչպես աստղերը խաղաղ գիշերում,
Իմ հոգու լույսը իմ կյանքի հունն է,
Եվ նույն շողերն են իմ բյուր հուշերում:
Շուրջս թե խավար, թե մշուշ լինի,
Փարոսի պես է երգերիս սինին:

***

Ընդունում եմ քեզ, կյանք՝
Իմ թարմ հիշողության
Բոլոր բջիջներով,
Իմ եռացող արյան,
Իմ բյուր կարոտների
Ցավով ու կանչերով:
Աստղերն ինչքան ժպտան,
Արեւն ինչքան լույս տա,
Ես կփարվեմ քեզ, կյանք,
Սիրով իմ անհատակ:

***

Լուսնի լույսի տակ սիրեցինք իրար
Ու ջահեր դարձրինք մեր վառ հույսերը,
Մոռացել էինք աշխարհը արար,
Դեռ չիմանալով, թե ինչ է սերը:
Մեր սիրտը կապույտ երկնի մեջ լողում
Ու որոնում էր մեր աստղը շողուն:
Ընթերցում էինք մենք իրարու միտք,
Եվ բնությունը դառնում էր մոր գիրկ,
Մեզ նվիրում էր երազ ու հույզեր,
Իսկ մեր շրթերին հնչեցնում՝ «Սեր»:
Լուսնի լույսի տակ գրում եմ էլի,
Մտքով չափում եմ տիեզերքն անծայր,
Հասնում եմ գիրկը փայլուն աստղերի,
Իմ պայծառ աստղը չեմ գտնում սակայն:

***

Երազիս մեջ մի անգամ
Մի ծերունի ինձ ասաց.
«Դու մի թախծիր, իմ անգին,
Ես քեզ հետ եմ՝ սիրտս բաց»:
Լույս էր ցոլում նրանից,
Ինձ թուղթ տվեց, թե՝ գրիր,
Իմ Ասվածն էր երեւի՝
Իմ տեսիլքը լուսառատ:

***

Երգերս նման են վարդերի,
Երգից եմ ես առնում թեւեր,
Երգերս թառած իմ շրթերին,
Հուշում են միմիայն «Քաղցր Սեր»:

***

Այցելեց ահա եւ իմ աշունը,
Թեժ տարիները այս ինչպե՞ս անցան,
Երգի վերածվեց ցավիս շրշյունը,
Կյանքիս էջերը վառ հուշեր դարձան:
Տարիների մեջ փարոսվել եմ ես,
Ապրել, մաքառել,
Ընկել եմ, ելել...
Վկա է Աստված,
Մանկանց պաշտել եմ մոր սրտի հրով,
Նրանց սիրում եմ Արարչի սիրով...

***

Երգերս իմը չեն...
Աստծո խոսքն է շրթերիս վրա,
Ես փոքր մարդ եմ...
Հոգիս Աստծո լույսն է հուրհրան:

***

Մանկան նման մերթ ժպտում եմ
ու մերթ լացում,
Ցավից ճչում, բարի մարդկանց
սիրտ եմ բացում,
Մերթ խավարում արթնանում եմ
ահեղ վախից,
Մերթ քնիս մեջ փարվում երազ
իմ հույսերին,
Գրկած բարձը՝ ինչպես լանջը
քո ուսերի:

***

Ինձ մի որոնեք,-
Դիմավորում եմ ես այգաբացը,
Ինձ մի որոնեք,-
Ճամփու եմ դնում ես մայրամուտին,
Ինձ մի որոնեք,-
Երբ բոցկլտում են աստղերը հեռվում...
Ինձ մի որոնեք,
Երբ լուսինը իր շողերն է ցանում...
Նրանք բոլորը նուրբ քնքշանքներով
Ինձ երանության ափերն են տանում:

***

Կյանքը չի ներում ոչ ոքի երբեք,
Չի ներում նրան, ով սիրտ է դաղում,
Նա զայրանում է ու դատում նրանց,
Ովքեր «Պատերազմ» բառով են խաղում:

***

Ոչ մեկը ոչինչ չի տանի իր հետ,
Հարստությունը չի բերում համբավ,
Քանի դեռ ուշ չէ, այդ մասին խորհիր
Եվ գտիր Մարդուն
Մարդ պահող ճամփան:

***

Ինչո՞ւ հուշս շոյեմ նորից
Եվ ինձ դարձնեմ Աստվածուհի,
Բաժանումը դուռս է ծեծում,
Հուշերիս մեջ սիրտս է հեծծում.

***

Քո շրթերը փակ են հիմա,
Մի պարիսպ է մեզ բաժանում,
Քո աչքերն եմ տեսնում միայն,
Որ ինձ սիրո ծովն է տանում...
Քո աչքերի կարոտը կեզ
Պարգեւում է իմ սրտին հուր,
Ու մեր միջեւ, մշուշի պես,
Չքանում է պարիսպը կուռ:

***

Ինչո՞ւ է չարը չոքել քո հոգում,
Հնարավոր չէ նստել քո կողքին,
Բարությունն ասես մոռացել է քեզ,
Դաժան չարությամբ օծել քո ոգին:
Հանգիստ չես քնում տեղաշորիդ մեջ,
Անգամ չես նայում որդուդ վերքերին,
Պարզապես չարին սիրահարվել ես,
Գոնե մի լքիր բարի երգերիդ:

***

Երբ մնում եմ մենակ,
Սրտիս հուրն է շիջում,
Ասես հուգուս վրա
Ցավի թոնն է իջնում:

***

Աստված իմ, Տեր իմ,
Հազարների մեջ դու ինձ ես
ընտրել սիրով,
Պարտք եմ քեզ իմ կյանքով,
իմ հավատի հրով,
Քո հավատը մաքուր բարություն է ու երգ...
Ուրիշ երջանկություն չեմ երազում երբեք:

***

Անսովոր է իմ աշխարհը,
Թախծելով եմ երգեր գրում,
Սակայն, մարդիկ, ձեր աշխարհում
Ժպտալով եմ միշտ արարում:
Ո՞րը դարձնեմ սրտիս նշխար,
Մի հոգի է՝ երկու աշխարհ:

***

Սխալվում եմ հաճախ,
բացում իմ աչքերը,
Եվ դու մի զարմացիր,
որ հանձն եմ առնում,
Կյանքը, գիտես, բարդ է,
շատ են հրաշքները,
Անթիվ առեղծվածներ
բարդ հարցեր են դառնում:
Եթե ունենայի ես երկու կյանք՝ կյանքում,
Չէի տանջեի ինձ տառապանքում:

***

Մոմը վառվում է,
Ու ես մոռացած շուրջս ամեն ինչ
Թղթին եմ հանձնում իմ երգերը ջինջ,
Ժամանակի հետ խաղաղ ու լուսե,
Հոգուս մեջ մի ձայն հնչում է՝ ոնց սեր.
«Աստված իմ, Տեր իմ,
իմ Ամենազոր,
Ամեն ինչ դու ես
դարձնում լուսավոր»:

***

Երբ այցելի աշունդ,
Ծիածանը երբ մարի,
Հոգին հանգիստ կառնի քո,
Բայց նոր խորքով կարարի:
Սակայն դու չես մոռանա
Ճանապարհը աստղերի,
Լուսնի լույսից կարթնանաս.
Որ ծուլվես նոր երգերիդ:

***

Սիրտը չի ծերանում,
չի ճերմակում երբեք,
Նա ջահել է մնում՝ խորքում երազ ու եռք,
Ահա, ինչու նա միշտ վառած երազ ու սեր,
Միշտ տենչում է հասնել
բարձունքներին լուսե:

***

Տունս այնպե՞ս եմ ուզում՝
Ցավում է հոգիս...
Սերս գոնե երազում
Գտնվեր կողքիս:

***

Ուզում եմ ապրել, երազել, երգել,
Հույսերը՝ պաշտել, մորմոքը՝ հերքել,
Ուզում եմ սիրել, փայփայել մանկանց,
Մանուկն ու երգն են
զարդարում մարդկանց:

***

Մարդիկ, իրար մի սպանեք,
Մի մասնատեք երկրագունդը,
Կյանքը կարճ է, ինչպես երազ,
Մի չորացրեք կյանքի հունդը:
Հողը դարձրեք արծվաբույն,
Իրար տվեք երջանկություն:

***

Թե կենդանի լիներ նա՝
մեր Սայաթ-Նովան,
Կորոնեի ամենուր,
որ գտնեմ նրան,
Հուզված ընծա կտայի
բառերն իմ նրբին,
Նա տողերն իմ կդարձներ
Սիրո մեղեդի...

***

Շնորհակալ եմ, ով Մարդ՝
Ճերմակահեր, խորհուն,
Շնորհակալ եմ, որ հաճախ
Ինձ պես ես խոհում:
Ես էլ քեզ պես եմ խորհում
Ու փարվում կյանքին,
Հասկանում եմ, որ խոհը
Օնվում է ջանքից:

***

Արեւը ջերմ էր, երկինքը կապույտ,
Ես չէի ուզում, որ թողնեմ նրան,
Նա պարգեւել էր ինձ սեր ու համբույր,
Պատկերը թողել իմ սրտի վրա:
Արեւը դանդաղ մարեց ու գնաց,
Բաժանման մի ցավ սրտիս մեջ մնաց:

***

«Ասացեք մորս, որ Աստված վկա,
Մոր սիրուց քաղցր՝ աշխարհում չկա»-
Զանգել է որդին եւ հեկեկացել,
Աստված արցունքը հեղեղ է դարձրել,
Մայրը լսել է խոսքը իր որդու,
Որդին Աստված է դարձել մոր հոգում:

***

Իմ հողը ոչ մի հողի նման չէ,
Իմ հողը՝ փռված սարերի ուսին,
Իմ հողը ոչ մի հողի նման չէ,

Նա պատվանդանն է մեր սիրո, հույսի,
Իմ հողը ոչ մի հողի նման չէ,
Նա Արեւն է մեր, աղբյուրը լույսի,
Իմ հողը ոչ մի հողի նման չէ,
Այստեղ մարդու մեջ
աստղեր են, լուսին:

***

Այս գորշ կյանքի շերտերի մեջ,
Մշուշապատ ճեղքերի մեջ,
Մի լուսականչ ձայն եմ լսում.
«Պաշտում եմ քեզ սիրով անշեջ»:

***

Թռչում եմ հաճախ...
Եվ մոռանում եմ կյանքում ամեն ինչ,
Հեռու եմ թռչում ունայնությունից...
Եվ ինչքան ճախրում-բարձրանում եմ ես,
Մտքերս հոսում են զուլալ առվի պես:

***

Մի հավատացեք, որ էլ ես չկամ,
Մի հավատացեք...
Չէ՞ որ մասնիկն եմ արարող օրվա...
Մի հավատացեք...
Խավարը երբեք ինձ դուր չի գալու,
Արեւի կտոր եմ,- լույս ունեմ տալու...

***

Շտապում ենք ամբողջ կյանքում,
Ամբողջ կյանքում որոնում ենք,
Ագահության տենչով հարբում
Ու մերկ հոգով մոլորվում ենք:

***

Տարիները միշտ
Կռունկների պես չվում են, անցնում,
Բայց մի՛ վշտացեք,
Հոգիների մեջ հետքերն են մնում,
Իսկ տարիները չեն իշխում հոգուն...
Երբ անց է կենում կյանքի կես դարը,
Չի կարեւորվում տարիքը արդեն,
Ձահելության նոր ընթացքն է գալիս,
Երկրորդ ընթացքը՝ լույսի հեղեղով...
Եվ թող այդ լույսը հուրհրա անվերջ,
Թող կյանքը ժպտա ձեր աչքերի մեջ...
Իմաստությունը գանձ է անսպառ,
Եվ նա է դարձնում տարիքը պայծառ:

***

Թե անծանոթ ես մարդկային ցավին,
Ցավի՛ց չեն հնչում քնարիդ լարերը,
Իմացիր՝ Աստծո պոետ որդին չես,
Հանգավորում ես միայն բառերը:

***

Ներիր դու ինձ, իմ Սեր,
չեմ պահպանել ես քեզ,
Քեզնից մնաց մի ցավ
իմ սրտի մեջ հրկեզ:
Ներիր դու ինձ, իմ Սեր,
ես չեմ կարող թաքցնել՝
Վերջ տուր՝ ինձ այսուհետ
ցավի շապիկ հագցնել:
Ուզում եմ ես սիրել,
վառվել սրտի հրով,
Ախր կարճ է կյանքը,
եկ զարդարենք սիրով:
Առանց սիրո կյանքը
թոշնած մի ծաղիկ է,
Եվ լավ գիտեմ՝ սերը
քնքուշ մի տաղիկ է,
Ես լավ գիտեմ՝
ինչ է կյանքը առանց սիրո,
Գիտեմ, որ իմ սերը
դու ես՝ Աստծո գրով...

***

Մայրը աշխարհ է, Սեր ու Բարություն,
Մայրն սպասում է լուրջ պատասխանի.
«Ինչո՞ւ են տանջվում որդիներն իրենց,
Ինչո՞ւ են հոսում արցունքներ աղի,
Անիմաստ կռիվն, ասեք, ո՞ւմ է պետք»...
Մայրը աշխարհ է, Բարություն ու սեր:

***

Մայր եմ... Ի՞նչ անեմ,
Ո՞ւր թաքցնեմ ցավս...
Աստվա՜ծ իմ,
Գիտեմ, ինչ պիտի հուշես.
Մայրը պետք է միշտ ամրակամ լինի,-
Կրծքի տակ եղած ցավից էլ ուժեղ:

***

Մայրիկ...
Խոհերս ես ո՞ւմ հետ կիսեմ,
Ո՞ւմ բացեմ հոգիս,
Դատարկությունն այս
Ես ինչպե՞ս լցնեմ...
Դատարկությունն այդ
ահռելի է, մայր,
Ինձ այնքան ես պետք՝
կիսվելու համար...

***

Անիմաստ խոսքեր,
արարքներ դատարկ...
Եվ պետք չէ պատժել
օրենքով դաժան,
Առանց այդ պատժի սրտեր են ցաված,
Պետք է մենք ապրենք
ցավից անբաժան:

***

Մեր ոտքի տակ հողը ցնցվեց,
Փրկվեց՝ ով ինչպես կարող էր,
Մի պահ երազն ասես ջնջվեց,
Վառվող տուն էր, լաց էր, դող էր:
Հիշողություն, ջնջիր էջն այդ,
Թող հուշն անցնի նետի նման...
Սակայն ցավը իմ չի անցնում,
Վերքս խորն է, չի մոռացվում:

***

Այսօր օրն է Մայրության,
Եվ թախծում եմ լացի չափ,
Ասես վառվող մոմերը
Մորս հույսերն են անափ:
Ո՞ւր ես, մայրիկ, ա՜խ, ո՞ւր ես,
Հնչում է իմ աղոթքում,
Եվ լսում եմ ձայնն իմ մոր.
«Դուստրս, դու կաս իմ հոգում»:

***

Իմ ճանապարհը չեմ շեղել երբեք,
Հրապուրել է կյանքն ինձ ամենուր,
Ինձ ժպտացել է մի ողջ տիեզերք,
Աստղերն են շոյել եւ արեւը հուր:
Հաճախ Լուսնի հետ
մեր տեղն ենք փոխել,
Ինձ գուրգուրել են հովերը նրբին,
Իմ երազները մարմին են առել,
Կյանքն ինձ է փարվել,
իսկ ես էլ՝ կյանքին:

***

Մորս հաճախ եմ հիշում՝
Պատուհանի մոտ նստած,
Որդու պատկերն իր հուշում,
Սպասում էր, որ կգա:
Պատուհանի մոտ հիմա
Ես եմ որդուս սպասում,
Եվ կարոտիս ծփանքով
Ասես մայրիկս է խոսում:

***

Վախը շղթա է, հալածում է մեզ,
Իշխում է նա միշտ, դառնում մեր տերը,
Իսկ երբ ծուլվում է մեր արյանը կեզ,
Դառնում ենք նրա հլու ճորտերը:

***

Տասնյոթ էի,
Եվ դա գարնանն էր,
Մեզ ժպտում էին
Աստղերը վերից...
Առաջին անգամ
մենք հանդիպեցինք,
Ոչ խոստում տվինք,
ոչ էլ երդվեցինք...
Բայց մեր մատներով
մենք ծուլվեցինք լուռ,
Դա մեր մեծ սիրո
կնիքն էր ամուր:

***

Որ քեզ քնքուշ կին անվանեն,
Պիտի աշխարհի գաս՝ հենց այդպես,
Կին կա, պինդ է, պողպատակուռ,
Սակայն առանց ջերմին հոգու:
Բնությունը մեղք չունի, չէ,
Կյանքն է դաժան, բախտն է տհաս:
Եվ երբ չունես խորհրդատու,
Ինքդ պիտի պատասխան տաս:
Եվ երբ կյանքն է նեղում հզոր,
Տխրության մեջ հիշում ենք նոր,
Որ մեր կողքին լիներ, մեզ հետ,
Կինը՝ վառ սեր, կինը՝ աջ ձեռք...

***

Բանաստեղծության
Տողերն իմ նրբին
Ողողանջում են ոնց
Քաղցր մեղեդի...
Դու լսիր նրանց,
Եթե կարող ես,
Եթե չես կարող,
Ուրեմն երգս
Սրտիդ համար չէ...

***

Անցավ քանի՞ տարի,
Բայց ցավը նույնն է,
Ձարկերն իմ սրտի,
Ցավիս հանգուն են...

Էլ աղ մի ցանիր
Իմ ցավի հուշին,
Չեմ ուզում զարնվել
Նրա սուր փշին:

***

Ներիր ինձ, մայր իմ,
Որ ներկա չեմ ես ծննդյանդ օրվան,
Կյանքը դարձել է անաստված ու խենթ,
Հալածում է ինձ անգութ ու դաժան:
Նրան ասում եմ.
«Կանգ առ, մի գժվիր»:
Մայր իմ, քո կյանքը մեծ իմաստ ունի,
Մայրը Աստված է եւ տարիք չունի:

***

Մայր բառից քաղցր
Ուրիշ բառ չկա,
Ուրիշ երգ չկա,
Ուրիշ լար չկա:
Մոր սերը նուրբ է,
Նման է խասի,
Ի՜նչ երջանկություն՝
Գրել մոր մասին:

***

Մայրերին տվեք մի քիչ ջերմություն,
Մի քիչ քնքշություն,
փայփայանք մի քիչ,
Սիրեցեք նրանց, քանի ապրում են.

Որպես դիցուհի՝ հույզերով իր ջինջ...
Սիրեցեք նրանց-քանի ապրում են,
Եվ մի խնայեք խոսքերը շոյող,
Որ հետագայում ձեր խիղճը չզգա
Ոչ անանց մրմուռ եւ ոչ ցավի դող:

***

Աստված իմ, Տեր իմ...
Ինչքա՜ն ժամանակ
կորցրի մաքառմամբ,
Որ գտնեմ բաժին հասած իմ ճամփան,
Չէի ճանաչում կյանքը բազմաշերտ...
Այն ճանաչեցի քո խորհուրդներով,
քո համբերությամբ:

***

Ի՜նչ է կատարվում
ինձ հետ... չգիտեմ...
Որ ցավս չզգամ, երգեր եմ գրում,
Նրանք վանում են վշտերս անթիվ...
Եվ ես գտնում եմ
աշխարհն իմ ուրույն...
Ուր արարում եմ ես գիշեր ու տիվ:

***

Որդիս չի կարդում գրած երգերս,
Նա նեղսրտում է հաճախ իր մորից,
Ճնշում են նրան իմ թաց երգերը,
Մեկ է՝ երգեր եմ հորինում նորից:
Քնքուշ թախիծը ինձ հետ է անվերջ:

Հոգիս ու սիրտս եմ դնում ափիս մեջ,-
Մերթ ցավից ծնված երգն է ինձ տանջում,
Մերթ խինդ պարգեւող
սերն է ինձ կանչում:

***

Որտեղի՞ց են իմ
Բառերն այսքան խենթ,
Չլինի՞ թե ես խենթանում եմ լուրջ,
Թեեւ մեզանից յուրաքանչյուրը
Գոնե մեկ անգամ պիտի խենթանա,
Որ իմաստնանա...

***

Չեմ հոգնի երբեք՝
Աստծուն ասելու՝ «Շնորհակալ եմ»,
Չեմ ուզում, Տեր իմ, հեռանալ քեզնից...
Ինչ որ տեղ, Տեր իմ, նման ենք իրար...
Աստված իմ,
Ես չեմ վարանում ասել.
Դու մարդ ես եղել,
Մարդկանց մեղքերը քո մտքով պեղել
Եվ առել ես քո ուսերի վրա,
Սրտի մեջ՝ քո մեծ համբերությունը,
Որդիդ ընդունեց խաչելությունը:

***

Պատերա՛զմ... Տեր իմ... կանգ առեք, մարդիկ,
Մի՞թե Աստծուց դուք չեք վախենում,
Աշխարհն ինչո՞ւ է խենթացել այսպես,

Ոչ ոք, ոչ ոքի էլ չի խնայում:
Խաղաղության մեջ վատնեք ձեր ջանքը...
Ափսո՜ս է կյանքը...

***

Ինչո՞ւ երգիչ Սայաթ-Նովան
ապրում է հավերժ,
Ինչո՞ւ նրա երգերը նուրբ
շոյում են հոգի,
Ինչո՞ւ նրան ընթերցում են
կարոտով ու թեժ,
Ահել-ջահել Սիրահար են
Նրա ջերմ երգին...
Ինչո՞ւ նա միշտ գեղեցիկ է
ու երիտասարդ,
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,
Երգի աղբյուր կյանք:

***

Կնոջ համար շատ է դժվար, դժվար է շատ,
Դժվար է շատ՝ դառնալ մայր ու դառնալ կիսուր,
Իսկ եթե նա ապրում է ոնց որբեւայրի,
Նրա կյանքը դառնում է գորշ, ահասարսուռ:

***

Աշուն, ուզում եմ հրաժեշտ տալ քեզ
Ու գտնել ուրիշ, աստղային մի սեր,
Մտերմանալ եմ ուզում գարնան հետ
Եվ ամբողջ կյանքում դառնալ ջերմ ընկեր,
Ուզում եմ ցրել թախիծս խորին,

Որ չմատնվեմ նրա ծուփ-ծովին...
Ներիր ինձ, աշուն,
Գարնան կարոտն է իմ սիրտը մաշում:

***

Վառ կարմիր հագած տերեւներն աշնան,
Որ պաշտպանված չեն քամուց ու շանթից,
Երանգներ հագած, ոնց վարդ ու շուշան,
Ձգտում են փախչել իրենց իսկ բախտից,
Որ ապրեն ձմռանն, գարնանը ապրեն,
Որ շողան ամռան արեւի տակ ջերմ,
Որ միշտ մնալով իրենք-իրենց հետ,
Իրենց անսովոր աշխարհն արարեն:

***

Օ՜, Մուսա, իջիր դու ինձ մոտ,
Գերիր իմ սիրտը ոսկե ցանցիդ մեջ,
Ինձ համար բեռ չես, թեւեր ես, կարոտ,
Դու իմ նվերն ես, կրակը անշեջ:
Իջիր, օ՜, Մուսա, իջիր դու ինձ մոտ,
Դարձիր երազըս, հույսն իմ արեւոտ,
Ձարդարիր կյանքս քո արարումով,
Որ նոր երգերով քայլեմ քո հունով:

***

Ուզում եմ բացել ձեր առջեւ հոգիս,
Վանել աչքերիս մարմրող նինջը,
Ուզում եմ ցրել ամպերը կուտակ,
Որ կարողանաք լսել իմ ճիչը:

***

Ուր որ է, գիտմ, երգերս կխոսեն,
Ձուլալ աղբյուրի նման կհոսեն...
Վերքերից ծնված իմ երգերը նուրբ,
Իմ արյան կանչն են, իմ երազը սուրբ:

***

Օրեց-օր, տարեց-տարի,
Բերդերը հող են դառնում,
Հրեղեն ժամանակը
Մի անդարձ շող է դառնում,
Ափսոս, որ դաժան կյանքում
Մենք երբեք դաս չենք առնում:

***

Ամռան երեկո...
Անձրեւից հետո լռություն է մեղմ...
Ծառերը հոգնած քնել են մուշ-մուշ
Եվ տերեւները ննջում են քնքուշ...
Իսկ արեգակը հեռացել է, որ
Մայրական գրկում քուն մտնի անուշ:

***

Մերթ կորցնում եմ ու մերթ գտնում,
Մերթ ընկնում եմ ու մերթ ելնում,
Մերթ արտասվում, ժպտում եմ մերթ,
Բայց մնում է տենչս հեռվում:

***

Հիվանդություն է սերը, իմացեք,
Անբուժելի է եւ միշտ անվեհեր,
Իմ խորհուրդն այս է՝ սերը պաշտեցեք,
Որ երկար ապրի՝ առած հաղթ թեւեր:

***

Աշնան շնչից դողալով,
Տերեւները ընկան ցած,
Վերջին անգամ շողալով,
Շշնջացին դառնացած.
«Եթե պիտի ընկնեինք,
Տրորվեինք ոտքի տակ,
Ինչի՞ համար ծնվեցինք՝
Երազներով մեր շիտակ»:

***

Ժամանակ կորցնելու իրավունք չունենք,
Կարճ է, բայց եռք է մեր սրտի վրա,
Շտապեցնում է, պետք է, որ հասնենք,
Իրավունք չունենք սպանել նրան:

***

Ես լռում եմ միշտ, իսկ լռությունը
Ոսկի է ազնիվ,- շատերն են գրել...
Սակայն լռում եմ՝ ոչ հանուն նրա,
Կարողանում եմ պարզապես լռել:
Իսկ հանդիպելուց աղոթելու ես,
Որ սիրո խոսքով սիրտդ մտնեմ ես:

***

Տարինե՞րը, թե՝ ափերը օտար,
Գուցե իմ սիրտը՝ դարձած տարեգիր,
Գուցե մի ոգի՝ ինձ վեգ ու սատար,
Հորդորում են միշտ՝ «Գրիր, օ՜, գրիր»:

***

Կյանքը հավերժ չէ, հավք չէ ոսկեթեւ,
Մի օր կաս, մեկ էլ տեսար՝ էլ չկաս,
Կարող ես ապրել անհոգ ու թեթեւ,
Բայց կյանքին պիտի պատասխանդ տաս:

***

Խաղաղ գիշեր է, քունս չի տանում,
Խոհերս դեպի երկինքն են հառնում,
Ուր ժպտում են ինձ աստղերը անթիվ,
Եվ ես թախիծս հեռու եմ վանում:

***

Անցնում է օրը, անցնում է տարին,
Փոխվում են անվերջ գույներն աշխարհի,
Սակայն չեն գնում անտարբեր երբեք,
Քո ճանապարհին չեն մնում անհետք...
Ժամանակը լոկ քնում է անտենչ-
Հեքիաթների մեջ:

***

Ո՞վ է նա, գիտեք, կին-պոետ է նա...
Սա հանելո՞ւկ է, թե մի առեղծված,
Նա ե՛ւ տխրություն, ե՛ւ լույս է անմար.

Եվ բարություն է՝ ի վերուստ հաստված:
Կին-բանաստեղծ է, տարիքն ինչքա՞ն է,
Քանի՞ հոգի են պտտվում շուրջը,
Քանի՞սն են համբույր տալիս նուրբ ձեռքին,
Բայց նա սիրում է... միմիայն մեկին...
Կին-բանաստեղծ է, պոետ է, իրավ,
Նրան հուզում է խոսքը հուրհրան...
Սրտի մեջ, հոգում երգն է ծովանում,
Կին-բանաստեղծ է ու չի ծերանում:

***

Ժայռի պռունկին ուռենին տնկել
Եվ նրա կողքին բացել են առու,
Որ հովերը միշտ շոյեն ուռենուն՝
Թե ամառ լինի, թե լինի գարուն:
Բայց առուն լուռ է՝ քնարը ձեռքին,
Լացող ուռենին չի թողնում երգի...

***

Դու մտել ես աշխարհը իմ
Եվ անվանել ինձ մայր,
Ու դարձել ենք մենք մտերիմ
Սրտերով մեր վառ:
Դու մտել ես իմ աշխարհը,
Կյանքս դարձրել ամառ...
Իմ մայրական ջերմությունը
Միշտ պահիր անմար:

***

Ինձ դիցուհի համարեցիր,
ընծայեցիր բույլն աստղերի,
Բայց խենթ համբույրներիս դիմաց
Կախարդուհի անվանեցիր:
Սակայն հիմա Մոխրոտիկն եմ,
Իմանայիր, իմ հետեւից
Ոսկե մի կառք կուղարկեիր:
Բայց հեքիաթ է այս ամենը,
Ժամանակն է՝ Երկիր գալու,
Սակայն, ափսոս, դու այլեւս
Ինձ դիցուհի չես կոչելու:

***

Մի վախեցիր Սիրուց դու,
Միշտ շշնջա՝ սիրում եմ.
Եվ հաստատիր միշտ կյանքում՝
Սերը սրտիս տիրում է:

***

Մի բղավիր աշխարհով մեկ,
Ցավիդ համար մի բղավիր,
Հայտնի է քո ցավը մարդկանց,
Խորին ցավդ ինքդ վարիր,
Որպես դառն իրողություն,
Պահպանիր ոնց հիշողություն...
Բայց ես ինչպե՞ս
Այն պահպանեմ,
Չէ՞ որ մի օր պիտի գնամ
Եվ հուշերս ինձ հետ տանեմ...
Ասեք, հոգիս՝ մի խենթ տարերք,
Ինչպե՞ս ապրի իմ ցավի հետ:

***

Կյանքը նուրբ է,
Ոնց ապակի,
Հեշտ է նրան
Ջարդելն, իրոք...
Բայց նա երբեք
Քեզ չի ների,
Դու նրա հետ
Ձգույշ եղիր...

***

Շնորհակալ եմ քեզանից, մայրիկ,
Իմ այտի քնքուշ, թուխ խալի համար,
Իմ աչքերի մեջ եղած նուրբ փայլի,
Իմ հոգու անմար կրակի համար...
Շնորհակալ եմ սիրո, բարության,
Վառ հիշողության եւ կյանքի համար,
Շնորհակալ եմ ինձ տրված բախտի,
Իմ մաքուր խղճի եւ ջանքի համար:
Իմ հոգու համար՝ բյուրեղյա, բարի,
Շնորհակալ եմ քեզանից, մայրիկ:

***

Օ՜, Վարդ,- այդքան գեղեցիկ,
Ինչի՞ դ է պետք փուշը,
Քեզ ոչ մեկը չի գրկի,
Չի շոյի փեշըդ...
Այդքան նուրբ են շրթերդ,
Ինչի՞ դ են պետք փշերըդ...

***

Հիշողությունը տարիների հետ
ջնջվում է կարծես,
Անհետանում են ծանոթ հայացքներ
եւ անուններ թանկ,
Բայց առեղծված է ինչ պատահել է
մեր շուրջը, մեզ հետ,
Աստղեր են դառնում մեր ճանապարհին
եւ պարգեւում կյանք...

***

Նորից աշունն է այցելել հուրհեր,
Դեղին են հագնում ծառերը նորից,
Քունքերդ դանդաղ հագնում են արծաթ,
Եվ դու ելնում ես տխրության ձորից...
Նորից աշունն է այցելել հուրհեր,
Իսկ սերը կրկին մնում է ջահել,
Մնում է շենշող, ինչպես մի եդեմ,
Եվ լուռ թախծում է հոգիդ նրա դեմ...
Թող կարոտը քեզ պարուրի՝ ոնց երգ,
Թող նա չլինի քո մոտ ու քեզ հետ...
Մեկ է՝ հուշ դարձած սիրով հուրհրան,
Հեշտ է ապրելը այս Երկրի վրա...

***

Օրագրի են նման երգերս,
Հայելիներն են նրանք իմ սրտի,
Թաքստոցի են նման երգերս,
Ուր պահ եմ տալիս թախիծն իմ սրտի:
Թաքցնում եմ նրանց իմ որդիներից,

Հարազատներից, թոռներից իմ նուրբ,
Երգերս՝ ծնված իմ տառապանքից,
Իմ հուշերն են թանկ, կարոտներս սուրբ...

***

Բաց թող ինձ, բաց թող,
Դու ասես փուշ ես՝ խրված սրտիս մեջ,
Բաց թող ինձ, բաց թող,
Բեռն այդ դժվար է կրել այսուհետ...
Ուզում եմ ազատ լինել հավքի պես,
Վերադարձրու թեւերն իմ հրկեզ,
Թող որ թեւածեմ... օրերս են գնում...
Երգող թռչունին վանդակ չեն դնում...

***

Որ մենք հեռու ենք իրարից, փույթ չէ,
Եվ կարեւոր չէ՝ ինչ կապ կա մեր մեջ,
Կարեւորն Աստծո կամքն է մեր հանդեպ,
Աստծո կամքով է մեր սերը անշեջ:

***

Քանի ապրում եմ... Ես սիրում եմ քեզ...
Եվ երազում եմ իմ աչքերը փակ...
Թող շրթունքներս կարոտից դողան,
Թող ինձ չենթարկվող արցունքս շողա,
Կարոտի հրով ժպտում եմ քեզ հետ,
Ասես իմ մոտ ես, կողքիս՝ առհավետ:

***

Ասում են՝ վաթսունս լրացավ,
Հավատա՞մ ես դրան, թե չէ...
Տարիներն այս ինչպե՞ս անցան,
Իսկ գուցե խոսքն իմ մասի՞ն չէ...
Գուցե կատակ է, կամ խաղ է,
Չէ՞ որ իմ կյանքն էլ մի տաղ է...
Վաթսունս թող լինի, հոգ չէ դա,
Տարիքիս հախիցը ես կգամ...

***

Ես փակ աչքերով կերպարդ եմ կերտում,
Ու քեզ ժպտալով քեզ համար երգում,
Շատ էիր սիրում երգս մեղմօրոր,
Բայց ե՞րբ եմ ձայնդ լսելու մի օր,
Ե՞րբ եմ շոյելու մազերդ արծաթ,
Ե՞րբ եմ հպվելու այտերով իմ սաթ,
Ե՞րբ եմ քեզ համար մեղմիկ երգելու,
Մի՞թե էլ երբեք չենք հանդիպելու:

***

Ես հոգնել եմ շտապելուց,
Անվերջ վազքից հոգնել եմ ես,
Հրաժեշտից, տառապելուց,
Խոսք ու ասքից հոգնել եմ ես,
Ամեն ինչին եւ ամենքին
Սպասելուց հոգնել եմ ես:

***

Աստված իմ,
Եթե ես մեղք եմ գործել,
Ապաշխարում եմ...
Թե կյանքս պետք է, վերցրու, խնդրում եմ...
Բայց նման կյանքից... հրաժարվում եմ...
...Ի՜նչ երջանկություն, Տեր իմ բարեգութ,
Ես հարություն եմ առնում քո սիրով...

***

Քիչ տարիներ չեն եկել ու անցել,
Աստղերը կրկին նույնն են մնացել,
Լուսինն է դարձյալ փայլում հմայքով,
Արեւն է կրկին ժպտում հրայրքով...
Քիչ տարիներ չեն եկել ու անցել,
Հոգիս ցավի մեջ նույնն է մնացել...
Աշխարհ եմ տեսել ուխտավորի պես,
Բայց նորից թախծում ու տենչում եմ քեզ...

***

Չես հասցնում նայել քո շուրջը,
Ամեն ինչ երազ է դառնում,
Տարիները առած շշունջդդ,
Գալիս են, դիմացդ հառնում,
Ասես թե ձյուն են ինքնակոչ,
Մաղում են, թե անգամ գոչես՝ ո՜չ...
Բայց պետք չէ վախենալ դրանից,
Հետ չի գա անցածը երբեք,-
Տարիները գանձերն են քո կյանքի,
Հոգուդ մեջ հնչում են որպես երգ...

***

Օվկիանոսի են նման երգերս,
Նրանք անփույթ են եւ ցողերով թաց,
Քարավանի են նման երգերս,
Ճամփա են գնում նրանք թեւաբաց,
Նրանք աշխարհ են գալիս ինքնակամ,
Հրաբուխի պես՝ լեռներում ծնված,
Որ արթնանում են դարավոր քնից,
Եվ ժայթքում հուր ու կրակից սնված:
Աստղերի պես են ծնվում երգերս,
Նրանք վառվելով առաքում են լույս,
Նրանք բուժելով մարդկանց վերքերը,
Անհույս սրտերին պարգեւում են հույս:

Աջից՝ Հ. Բեգլարյանը, տեր Ավագյանը Ս. Խանյանի ծննդյան 70-ամյա հոբելյանի օրը՝ ԱրՊՀ վարժարանում

ՀԱԿՈԲ ԲԱՂՄԱՆՅԱՆ

Հակոբ Բաղմանյանի բանստեղծությունը անակնկալ էր մեզ համար: Գիտեինք նրան, որպես ժողովրդական անձնուրաց վրիժառու, սակայն չգիտեինք, որ նա ստեղծագործելու շնորհք ունի: Այստեղ մնում է հաստատել այն ճշմարտությունը, որ երգը ծնվում է կարոտից ու տառապանքից, հույսից ու հավատից: Այդպես էլ Հակոբի երգն էր: Նրա մուսան այցելեց ռոստովյան բանտի ժանգոտած ու սառ վանդակներից մեկում: Պարզվում է, որ կարելի է շղթայել մարդու ձեռքերն ու ոտքերը, սակայն հոգին՝ երբեք: Իր սիրելի կնոջը՝ Ռիմային նվիրած մի բանաստեղծության մեջ Հակոբը գրում է, որ պոետական ոգեշնչումի լույսը իրեն ժամանեց բանտում:

Հակոբի սրտի վրա ծլած երգը կարոտաբույր ու հուսավառ է, թախծոտ եւ ըմբոստ է, արցունքոտ է եւ արեւային: Բանաստեղծություն չի հունցում նա, արարում է սրտի ու հոգու թրթիռներից, գրում է իր տեսածի, զգացածի մասին, որի շնորհիվ էլ նրա երգերը անմիջական են, առինքնող, ապրեցնող ու թեւավորող:

Թեմատիկ առումով Հ. Բաղմանյանի բանաստեղծությունները նորություն են նորագույն շրջանի հայ պոեզիայում: Բանտի գորշ ու թաց վանդակում Հ. Բաղմանյանը երբեք չի կորցրել հայրենի Արցախ վերադառնալու իր հույսն ու հավատը: Նրա կարոտը հայրական օջախի հանդեպ շաղախված է ազատագրական պայքարին մասնակցելու երազանքով: Դժվար չէ նկատել, որ Հակոբի հայրենասիրական երգը զինվորյալի երդում է, հայրենիքի սեր:

Հ. Բաղմանյանի բանաստեղծությունները ժողովրդական վրիժառուի ազատաբաղձ երգեր են, որոնցում երեւում են քաջակորով հայ զինվորյալի հայրենասիրությունը, անարդարության դեմ մարտնչելու վճռականությունը, հայրենի Արցախն անկախ ու ազատ տեսնելու բաղձանքը:

Մենք սիրով ու հաճույքով ենք թարգմանել Հ. Բաղմանյանի բանաստեղծությունները, որոնք առաջին անգամ զետեղվել են Արցախի պետհամալսարանի կողմից հրատարակված «Հիշեցեք, մարդիկ» ժողովածուում:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

ԵՐԿՐԻՍ ԶԻՆՎՈՐՆ ԵՄ

ՀՈՐՍ

Բանտ է: Գիշեր է: Քունս չի տանում,
Հիշում եմ հորս՝ տագնապների մեջ,
Մտքիս թևերով ողջույն եմ ցանում
Մեր տան սուրբ շեմին՝ կարոտով անշեջ:

Տան մեջ ջերմություն, ճիչեր կան մանկանց,
Հողին շունչ բերող անձրեւ է դրսում,
Հայր իմ, հոգուս մեջ քո սերն է անանց,
Սրտիս խորքերում՝ քո ձայնն եմ լսում.

«Բարեւ, որդի ջան: Մի թախծիր այդպես,
Գիտեմ, դժվար է, ծանր է կյանքը քո,
Չհիվանդանաս, զգույշ՝ չմրսես,
Քեզ հետ է հայրդ՝ սրտով ու հոգով»:

Ուզում եմ ճչալ. «Անհոգ մնա, հայր,
Հսկում եմ ես ինձ, երեխա չեմ ես,
Դու իմ թիկունքն ես, Տերն ես, վահանը,
Քո զավակները կանգուն են քեզ պես:

Ցավում եմ, հայր իմ՝ տանջվեցիր երկար,
Ինչքա՜ն ծեծեցիր դուռն Ռոստովի,
Ա՜խ, քանի անգամ ծանրոցով եկար
Եվ տառապեցիր վշտի մեջ ծովի:

Գիտեմ զավակիդ չես մոռանում, հայր,
Աչքդ չես կտրում նրա սեւ խուցից,

Եղիր դիմացկուն եւ համբերատար,
Մենք ջերմանում ենք քո սրտի բոցից:

Տառապանքի մեջ, հայրիկ, ինձ ներիր,
Եվ թող ինձ ների տոհմը մեր ամբողջ,
Քո որդին գող չէ, զինվորն է երկրի,
Ղարաբաղցի է՝ պատիվն իր պահող:

***

Ես երդումով եմ կապված երկրիս հետ,
«Հանուն Արցախի մեռնել»- կոչն է իմ,
Բախտս կապված է ժողովրդիս հետ,
Ոգիս չի ջարդի վանդակը բանտի,
Մի անմար մոմ է վառվում կրծքիս տակ,
Դա ազատության երազանքն է տաք:

Դուք ինձ ներեցեք, իմ լավ բալիկներ,
Որ չեմ փաղաքշում գանգուրները ձեր.
Ախր Արցախը կրակի մեջ է,
Եվ սեւ բանտի մեջ կյանքս տանջանք է,
Դեռ տառապում է ժողովուրդը մեր,
Ներեցեք դուք ինձ, իմ լավ բալիկներ:

1991 թ.

***

Լավ ընկերներս ինձ կոչում են՝ Հակոբ,
Իսկ ոսոխներս՝ դագաղս են սարքում,
Ես ընկերներիս պաշտում եմ հոգով,
Թշնամիներիս ատելով-ատում:

Միշտ զրուցում եմ Աստծո հետ մտքով,
Ներում եմ նրան, ում պիտի ներեմ,
Ինձ բանտ են նետել դաժան օրենքով,
Կընդունեմ մահն էլ, թե մի օր բերեն:

Թող դահիճը սեւ ձգանը լարի,
Դատախազը եւ դատավորը թող
«Օրենքի» անվամբ ծառայեն չարին
Եվ խլեն մի օր կյանքս արեւշող,
Մեկ է, չն կարող սպանել ոգիս,
Ես ազատության զինվորն եմ շիտակ,
Իմ սառած մարմնից համբարձված հոգիս
Հանգիստն իր կառնի Աստծո շուքի տակ:

ԲԱՅՑ ՊԻՏԻ ՆՈՐԻՑ ԵՍ ՎԵՐԱԴԱՌՆԱՄ

Մեկուսարանը Ռոստովյան բանտի դեռ կտեսնեմ շատ,
Եվ դեռ կխորհեմ՝ անզգույշ եղա, որ բանտը ընկա,
Երեւի քիչ եմ աղոթքս հղել Աստծուն գթառատ,
Դրա համար էլ նա պատժել է ինձ,տանջանքս վկա,
Ներեցեք դուք ինձ, իմ սիրասուն կին, իմ լավ բալիկներ,
Դուք ինձ ներեցեք, իմ սեգ հայրենիք, Ամենակարող,
Ներեցեք դուք ինձ, բարեկամներ իմ, իմ քաջ ընկերներ,
Որ չկարեցա անել այն, ինչ որ ես էի կարող:
Բայց չեն ժանգոտել հոգիս ու միտքս, մարմինս ամուր,
Եվ պատրաստ եմ ես մարտի նետվելու կամքով իմ արի,
Եվ եթե կյանքը նորից պահանջի, ամեն ինչ կանեմ,
Հանուն մեր երկրի, մեր ժողովրդի, սուրբ Գանձասարի:
Թեկուզ երկաթե վանդակի մեջ եմ, բայց պինդ եմ հոգով,
Իմ երկրի հետ եմ, ձուլված եմ նրան տենչերով իմ վառ,

Եվ թեկուզ պիտի ես թանկ վճարեմ իմ արյամբ, կյանքով,
Թեկուզ մեկ վայրկյան՝ պիտ վերադառնամ ձեզ մոտ
հուսավառ:
Տեր իմ, անսա ինձ, անսա բոլորին՝ ով պաշտում է Քեզ,
Քո բարի սրտի շողերը ցանիր իմ ճանապարհին,
Ինձ կամք պարգեւիր եւ դարձրու միտքս միշտ
պայծառատես,
Ներիր մեղքերս, զինիր քո սիրով՝ հանուն պայքարի:

ԵՂԲՈՐՍ՝ ՄԱՔՍԻՄԻՆ

Կարոտում էիր եղբորդ կրտսեր...
Նրա կորուստը մեծ էր, անմոռաց,
Մանկանց ասելով հրաժեշտի «ցե»-ն,
Ջուլվեցիր երկնին ժպիտներով թաց:

Ուղղաթիռ մտար՝ աչքդ մայր հողին,
Եվ այդ թռիչքը վերջինը դարձավ,
Մահվան չարագույժ արկը ոսոխի,
Խլեց քո կյանքը ու մեզ թողեց ցավ:

Ո՛չ, չես մահացել, ամուր է ոգիդ,
Այցելել ես դու մեր Ռոբիկին...
Գրկիր, փայփայիր հոգուդ հայելում,
Դու առաջինն ես նրան այցելում...
Մաքսիմ, կարոտդ, սերդ հրակեզ,
Կրտսեր եղբորդ վերադարձրին քեզ:

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ

Թեքվել ես. ինչպես լացող ուռենի,
Քո զոհված Սիրո կարոտն ես լալիս,
Ավաղ, դու նրա սառած շուրթերին
Քո ջերմացնող համբույրն ես տալիս:

Քո արցունքներն են շիթ առ շիթ հոսում,
Նրա տանջանքն է՝ փոխված քո լացի,
Դեղին վարդերը սրտեր են խոցում,
Որպես խորհուրդը բաժանման, թախծի:

- Դու իմ ո՞ր մեղքի համար ես, չար բախտ,
Անհուն սիրուս մեջ այսպես տանջում ինձ,
Աստծո պարգեւած իմ սերն այս շռայլ,
Հետ վերցրու, խնդրեմ, հետ վերցրու նորից:

Կամ թող հոգիս էլ նրան միանա,
Որ այն աշխարհում միշտ լինեմ իր հետ,
Որ նորից նրա սիրով լիանամ,
Նորից ալ հագնի վարդս բուրավետ:

Ինչու՞ ես պատժել դու ինձ, դաժան բախտ,
Ատում եմ հոգիդ եւ սիրտդ՝ չարի,
Ինձ պարգեւել ես սիրո ոսկե թախտ
Եվ խլել ինձնից մինչեւ մեկ տարին:

Ինձ պարգեւեցիր դառնության գավաթ,
Քեզ անիծում եմ, նզովում անվերջ,
Իսկ նա ընծայեց ինձ երկու զավակ,
Եվ նրանց հետ էլ՝ ապրում է իմ մեջ:

Սուտ է, իբրեւ թե նա դարձել է հուր,
Որ լոկ մոխիրն է մնացել նրա,
Դա բարբաջանք է՝ անիմաստ ու զուր,
Նա իմ հավերժող սերն է հուրհրան:

ԱՐՑԱԽ

Դու կրկին արյան մեջ ես, իմ Արցախ,
Եվ բզկտում են վերքերդ կրկին,
Կրկին մայրերդ քաշում են ախ-վախ,
Առեւանգվում են դուստրերդ կրկին:

Եվ մանուկներդ, եւ հողդ է տանջվում,
Անգութ թշնամիդ չի խնայում քեզ,
Ով սուրբ Գանձասար, ով Ամարաս սուրբ,
Մեզ ուժ ներարկեք - մեր պապերի պես:

Նժդեհի ուժը եւ ուժը Դավթի
Պարգեւիր դու մեզ՝ վրեժով լեցուն,
Մեկ զոհյալի տեղ թող հինգը ծնվի,
Որ հավերժանա մեր քաղցր լեզուն:

Թող ժողովրդի ձայնը որոտա,
Որ նրա ճիչը լսեն ամենուր,
«Մենք հլու ճորտ չենք, Արցախը չենք տա...
Ազատությունը մեր երազն է հուր»:

Թող ապրի հավերժ Հայրենիքը մեր.
Միացյալ պիտի ապրես, Հայաստան,
Մեր կյանքի գնով պիտի պայքարենք,
Մեր ընտրած ուղին մեր ձեռքից չենք տա:

1992 թ.

ԱՂՈԹՔ

Ցավից , վշտից ես չեմ քաշում այստեղ հառաչ,
Մոմ եմ վառում Քրիստոսված խաչի առաջ,
Ալեծածան իմ ձեռքերն եմ մեկնում խաչին.
Աչքս հառած սուրբ Հիսուսի բարի աչքին.
«Ամենազոր-Ամենատես, ճորտն եմ ես քո,
«Մեղքիս» համար պատժվել եմ դաժան բանտով:
Ծանր է ցավս, օ՜, Տեր, երկրիս ծաղկանց համար,
Կանանց համար ու մայրերի վիշտ ու լացի,
Հին վանքերի, խաչքարերի՝ մեր ցան ու ցիր,
Որ թշնամին դարձրել է հրի ճարակ,
Իր չար ձեռքով, նկրտումով իր անառակ:
Ցավս խորն է, որ երկիրս մուժի մեջ է,
Որ իր պայծառ երազներին մութն է իջել:
Ամենահաղթ մեր Հայր ու Լույս, աջդ եթե
Մեզ չմեկնես, իմացիր՝ չենք փրկվի երբեք»:
Լաց է լինում հոգիս վառվող իմ մոմի հետ,
Եվ աղոթքս հնչում է ոնց փրկության երգ:

ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒՄ

Այս ափերում հեռու,օտար,
Ես թախծալի երգ եմ երգում.
Ա՜խ, իմ երկրում՝ հոգուս սատար,
Առանց ինձ են սեր ու երդում:
Առանց ինձ են սարերը մեր,
Մանուկ ու կին, ընկեր ու մայր,
Առանց ինձ են դարերը մեր,
Երգերը մեր՝ հոգեպարար:

Հալածում է թախիծը ինձ,
Ասես կրծքիս քար է ընկած,
Տառապում է սիրտս խորքից,
Հուշերի մեջ արցունքոտված:
Սրտիս խորքում, գազանի դեմ
Իմ վրեժն է բոցավառվում,
Ազատության կրակը թեժ
Իմ արյան մեջ, չէ, չի մարում:

Չեմ մոռանում ընկերներիս՝
Իմ լեռներին թեւ ու թիկունք,
Չեմ մոռանում բալիկներիս,
Իմ կնոջը՝ թխաչ, թուխունք,
Ինձ հետ են մեր սարերը սեգ՝
Ամպերից վեր, աստղերին մոտ,
Ինձ են կանչում՝ հայրն իմ թիկնեղ,
Մայրն իմ՝ դարձած անհուն կարոտ:

Բախտիս դուռն է այնտեղ բացված,
Կյանքիս հուրն է՝ վշտից թացված,
Ով թշնամի՝ նենգ, անհագուրդ,
Չքվիր հողից մեր հինավուրց:
Հիշողություն իմ, մի քնիր,
Մեր հին լույսով լուսավորվիր,
Նինջը քեզնից հեռու վանիր,
Ազատության սերմեր ցանիր,
Որ այս հեռու, օտար հողում,
Իմ երգերի ամեն տողում,
Ալեկոծվի ինքնավայել,
Ինչ սիրել եմ ու փայփայել:

ԻՆՁ ՄԻ ՏԱՆՋԻՐ, ԱՇՈՒՆ

Աշուն, ինչո՞ւ ես իմ սիրտը տանջում
Եվ ճամփաս փակում տերեւներով ժանտ,
Այն ճամփան, որ ինձ գերում է, կանչում,
Ճամփա, որ ձգել ու տարել է բանտ:

Ինչո՞ւ դաժան ես իմ հանդեպ, աշուն,
Փրկություն չունեմ քեզնից ամենուր,
Իմ ոտն ու ձեռքն ես կապել անմռունչ,
Փրկության կանչս հնչում է իզուր:

Երազիս մեջ էլ ելք եմ որոնում,
Եվ հույսս կապում հզոր Տիրոջ հետ,
Այնտեղ էլ ցավից ճչում եմ, ոռնում
Ու բաղիվներում մոլորվում անհետք:

Իմ հոգնած սիրտը տանջում ես, աշուն,
Չոր տերեւներով փակում իմ ճամփան,
Ճամփա, որ հեռվից կանչում է, շրշում,
Ճամփա, որ ես եմ ընտրել ինքնակամ:

Օնունդ եմ առել քո տերության տակ,
Եվ տիրուհին ես իմ ընտրած կյանքի,
Իմ հոգու խորքում թախիծդ է անտակ,
Որ ապորոշն ես դարձել իմ բախտի:

Աշուն, խնդրում եմ, մի տանջիր դու ինձ,
Քո թախիծներով մի օծիր ճամփաս,
Ճամփաս նվերն է Արդար Տիրոջիս,
Ուրեմն ճամփաս անթեք է, արդար:

ՉԵՄ ԱՊԱՇԽԱՐԻ ԵՍ ԻՄ ԵՐԳԵՐՈՒՄ

Իմ երգերի մեջ չեմ ապաշխարի,
Որ ճերմակ թուղթը պահպանվի մաքուր,
Ախր տնքում է հոգիս մեղքերից,
Թող թուղթը մնա միշտ ճերմակաթույր:

Գրեմ, թե ո՞նց եմ ապրել անցյալում,
Վերածնեմ իմ ցավն ու կսկիծը,
Գրեմ՝ ինչե՞ր եմ արել իմ կյանքում,
Ու նորի՞ց բացեմ մեղքիս կծիկը:

ԵՎ ինչո՞ւ գրեմ, գրեմ ո՞ւմ համար,
Երբ խորթացել է մարդը իր դարին,
Երբ ամեն մեկը՝ մտերիմն անգամ,
Չի զանազանում չարը եւ բարին:

Ո՞ւմ ապաշխարեմ, զղջամ ո՞ւմ առջեւ,
Աստծո փոխարեն, երբ մարդն է գործում,
Երբ արյունարբուն առել է թեւեր՝
«Լինել» - «չլինել» հարցերն է լուծում:

Մեղսակիցներ են գող ու դատավոր,
Դատում են նրան, ով դուր չի գալիս,
Պատժում են իրենց «օրենքներով նոր»,
Բարուն ծաղկում են, չարին թեւ տալիս:

Իմ երգերի մեջ չեմ ապաշխարի,
Ես չեմ փոխանցի մեղքերս թղթին,
Կդիմեմ միայն Տիրոջը բարի,
Որ խաղաղությամբ երազն իմ փրկի:

***

Բանտային դաժան կյանքի ստվերում
Օրերս հաշվելով մատներիս վրա,
Դիմավորում եմ մենակ նոր տարին,
Սեղանիս միայն մոմն է հուրհրան:

Մոմը եւ լացում, եւ ժպտում է ինձ,
Նա իմ ընկերն է՝ առանց երկյուղի,
Մոմի պես հալվող մի անհուն թախիծ
Պատնեշում է իմ բերկրանքի ուղին:

Հոգիս ծարավ է մի խաղաղ պահի,
Սակայն անցյալը ինձ չի ամոքում,
Վերքերով օծված երկու ձիգ տարին
Հանգիստ չեն տալիս իմ բանտված հոգուն:

Բանտախցիկում երկու ձիգ տարին
Սրում եմ ինչպես պողպատե մի սուր,
Թեկուզ իմ «Ես»-ը ասում է՝ «ներիր»,
Սակայն այդ կոչը հնչում է իզուր:

Մարտի թեժ դաշտից ինչպե՞ս հեռանալ,
Բարությամբ ինչպե՞ս վրեժը մաքրել,
Մոմերի լույսով ինչպե՞ս մոռանալ
Դավաճանության քայլը անվայել:

Խորհում եմ մի պահ՝ մոռանում հինը
Եվ դիմավորում հանգիստ նոր տարին,
Գուցե նա ջարդի շղթաները իմ,
Որ հոգնած սիրտս նորից արարի:

Իմ դռան ճեղքից ծիկրակում է նա,
Գուցե կրծքիս տակ նոր հույսեր վառի,
Գուցե ինձ բերի լուրն ազատության
Եվ ներումներով բոլորին փարվի:

ԿՆՈՋՍ՝ ՌԻՄԱՅԻՆ...

Բանտի խուցի մեջ, տանջանքի պահին,
Ոգեշնչումի լույսն ինձ ժամանեց,
Ողջագուրվեցի երգի աշխարհին,
Պուշկինի խոսքն ինձ խռվքից հանեց,
Բայց չթռցրի տողերը նրա,
Իմ երգը ծլեց իմ սրտի վրա,
Գրեցի, ինչպես Աստված ինձ ներեց,
Գիտեմ չեմ եղել երբեք բանաստեղծ:
Ներիր, թող ներեն սիրով անարատ.
Զարինեն՝ դուստրս, տղաս՝ Արարատ:
Թե հնար լիներ հանդիպեի ձեզ՝
Հազիվ ծոնեի իմ այս երգը ես:
Զգում եմ ամբողջ հոգով ու սրտով,
Որ քեզ հետ պիտի հանդիպեմ շուտով:
Աստված կօգնի մեզ, հրեշտակ իմ նուրբ,
Երբ ողջագուրվենք կարոտի հրում,
Թող, որ չթացվեն աչքերդ սիրուն:
Իմ բալիկների սրբացած դու մայր,
Պահը ինչքան էլ լինի անհնար,
Առիթ չստեղծես՝ կասկածի համար՝
Մեր կամքի հանդեպ, քանզի ծնվել ենք
Գայլերի դարում, գազանների մեջ:
Ռիմա սիրելիս, եղիր կենսախինդ,

Մոռացիր թախիծ, կամքով եղիր պինդ,
Եթե դժողքն էլ դռները բացի,
Հույսերիդ փունջը թող որ թեւածի:
Պոետի խոսքը հիշիր, իմ անգին.
«Ժպիտներից է խոցվում թշնամին»:
Ուզում եմ, որ մենք հանդիպման վերջում,
Հիշեցնեմ քեզ՝ լինել անզիջում,
Որ քո հայացքում շողան ժպիտներ,
Աստված կների եւ մեղքերը մեր:
Իմ հարազատներ, բալիկներ իմ թանկ,
Սիրում եմ ես ձեզ՝ իմ կյանքից էլ շատ:
Ով մարդ, ով ընկեր, շնչում եմ ձեզ հետ,
Չեմ մոռանա ձեզ իմ կյանքում երբեք:
Երբ բաժանումը ճնշում է հոգիս,
Ռիմա, երգիս մեջ կանգնում ես կողքիս,
Ինչքան էլ դժվար, ես երգ եմ գրում,
Եվ կոփում սիրտս՝ կարոտի հրում:
Երգս ծնվում է խավարի մեջ ժանտ...
Ինչ արած, բանտը միշտ մնում է բանտ:

ՔՐՈՋՍ

Ժաննա Գալստյանին

Ողջույն, Ժաննա, իմ բարեկամ,
Թե լուրն հասնի, որ ես չկամ,
Որ զոհվել է եղբայրը քո,
Իմացիր, որ ամբողջ հոգով
Հայրենիքն է պաշտել անկեղծ,
Նրա սերը պահել անեղծ:
Քույր իմ անգին, իմացիր դու,
Որ քո անբիծ ու ջերմ հոգում

Հայրենիքի պատկերն է վառ
Եվ ցասումը մեր անսպառ,
Որ շանթի պես ու կայծակի,
Մեզ կոչում է անհաշտ մարտի,
Որ մենք լուծենք մեր իսկ բախտը,
Ու միշտ շահենք դժվար մարտը,
Մեր պապերին լինենք արժան,-
Հաղթանակից միշտ անբաժան:
Ուզում եմ, որ դու իմանաս,
Որ քո երգով իմ սրտում կաս,
Որ կրծքիս տակ վառվում է հար
Մեր Արցախի խարույկն անմար,
Որ իմ տենչն է՝ վառվել, լույս տալ
Մինչեւ ազատ արեւագալ:
Եվ որպեսզի տենչս վառեմ,
Պիտի սիրով երկրիս փարվեմ՝
Թշնամու դեմ պայքարելով,
Թե մեռնել կա՝ ընկերներով:
Սակայն, ավաղ, մնում է ինձ՝
Նորություններ կորզել թերթից,
Կրակն իմ մեջ պահել անմար,
Ենթարկվելով բախտիս՝ համառ,
Վառվել ներքուստ ու խենթանալ,
Ա՜խ, անիծյալ լինես, դու բանտ:
Չեմ ընկճվել, ինձ հավատա,
Կյանքն է փակել ուղիս արդար,
Օտար հողը երախը բաց
Ինձ խժռել է ուզում հանկարծ:
Քույր իմ, սակայն դու իմացիր,
Չեմ սպասի սեւ դագաղում,
Թե տարիքն ինձ երբ է թաղում:

Նման բախտը ինձ պետք չէ, քույր,
Ազատ կյանքին կտամ համբույր,
Եթե մահ կա, թող որ լինի
Պայքարի մեջ մեր հայրենի:
Ձեզնից հեռու, օտար հողում,
Քույր իմ, երկրիս սերն է շողում...
Բանտախցում խավար ու սառ,
Մարտ եմ մղում անհավասար:

***

Արցախ, իմ Արեւ, իմ կապույտ երազ,
Քո զավակն եմ ես՝ սնված քո կաթով,
Քո շունչն է իմ մեջ, քո շուքն է վրաս,
Բայց բաժանված ենք չարագույժ ձեռքով:
Աստված իմ, թեկուզ ինձ դարձրու մի քար,
Բայց աղաչում եմ, շուտ հասցրու Արցախ,
Արցախ, ծառադ եմ, բայց հողում օտար,
Առանց քեզ սիրտս միշտ քաշում է ախ:
Իմ տենչն է՝ մեռնել քո երկնքի տակ,
Քո հրաժեշտի շոյանքը առած,
Մի երազ ունեմ՝ մոր սիրո պես տաք,
Որ գոչեմ, «Արդեն ազատ ես, Արցախ:
Ասեմ՝ ճախրեցեք իմ երազ, իմ երգ՝
Իմ մայր ժողովուրդ, իմ հրաշք եզերք:
Գուցե էլ կյանքում չտեսնեմ ես քեզ,
Եվ գուցե կուլ տա ինձ հողը օտար,
Սակայն իմացիր՝ քո զոհյալի պես
Պիտի կրկնեմ երազն իմ արդար.
Երջանիկ ապրիր, իմ մայր ժողովուրդ,
Եվ մեզ էլ հիշիր լեռներում քո լուրթ»:

ՍՊԱՍԻՐ ԻՆՁ, ՄԱՅՐԻԿ

Նամակ եմ գրում ես իմ մայրիկին
Եվ կարոտում եմ գիշեր ու ցերեկ,
Ինձ հետ է նրա հայացքը անգին,
Համբերություն տուր մայրիկիս, օ՜, Տեր:

Ուժ տուր, որ վիշտը նրան չջարդի,
Որ ների որդուն՝ խենթ ու անհամբեր,
Թող նա հավատա իմ ուժին, կամքին,
Գթառատ սրտիդ վստահում եմ, Տեր:

Առանց մայրիկիս թախիծս ծանր է,
Գոնե երազում տեսնեմ ամեն օր,
Մեր հանդիպմանը կերգենք քաղցրաձայն
Ու քեզ կաղոթենք, ով Ամենազոր:

Աշխարհ են բերում մեզ մայրերը, Տեր,
Մեր սխալները տանում են, ներում,
Շոյում են սիրով մանկությունը մեր,
Մեր բերած վշտին, ցավին համբերում:

Ի՞նչ է կատարվում, ինչու՞ են որդուն
Խլում իր մորից, շղթայում դաժան,
Օրենքի անվամբ զնդան են նետում,
Որ հար տառապեն մայրերից բաժան:

Ես հավատում եմ Աստծուն գթասիրտ,
Նրա մաքրությամբ չարերին ատում,
Մայր իմ, իմացիր, ուժերի դեմ բիրտ,
Քո եւ Աստծո անվամբ եմ դատում:

Քո արյունը իմ երակների մեջ
Հավատ ու հաց է, միշտ պահում է ինձ,
Սպասիր, մայր իմ, կարոտով անշեջ,
Հավատա, գիրկդ կգամ ես նորից:

***

Ազատությունը նպատակն է մեր.
Պիտի մաքառենք եւ առնենք թեւեր...
Որ պայքարի մեջ թրծվի մեր ոգին,
Մեր խղճի վրա ժանգը չչոքի,
Որ չտառապեն մեր Սիրտն ու Հոգին,
Մեզ հաղթանակը միայն կամոքի...
Մնում է լինել միշտ իրար կողքի:

ՈՂՋՈՒՅՆ, ԲԱՆՏ

Բաքվի բանտից կրկին Ռոստովի
բանտ տեղափոխվելու առթիվ

Ողջունում եմ, բանտ, նորից քեզ հետ եմ,
Նորից նստած եմ քո մենախցում,
Նորից թախծի հետ մենամարտում եմ,
Եվ աստղերի հետ անվերջ զրուցում.

Ողջույն, սառ պատեր, ողջույն ցանկապատ,
Դատավճիռը կկարդան շուտով,
Ողջույն ճռճռան բանալի սատար,
Վերջինը լինի իմ այս դասը թող:

Ողջույն դագանակ, պահակներ, ողջույն,
Ողջույն չարամիտ, դաժան դատախազ,

Մնաք բարով կյանք եւ ազատություն,
Մութ միջանցքն է ինձ առել գիրկը խաս:

Սիգար-սիգարից կվառեմ անշեղ
Եվ մնացորդը անփույթ կնետեմ,
Ինչպես որ բախտը ինձ նետեց այստեղ,
Ողջունում եմ բանտ, նորից քեզ հետ եմ:

ԼՌԻՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Այսօր կգրեմ շատ բանի մասին,
Այն մասին, ինչը վաղը չեմ ասի,
Այն մասին, թե ոնց միտքս է ծանձրանում,
Արյունս ոնց է անվերջ թանձրանում,
Թե ոնց է սիրտս համակում մի վախ,
Անողոքաբար ինձ հուշում սեւ մահ:

Վախն այդ իմ մանկանց, երկրիս համար է,
Արցունքս այդ պահին շոյող կամար է,
Բայց իմ մեջ հուրն է բորբոքվում ցասման,
Արցունքս դարձնում վրեժ անսահման:

Այն վարակում է իմ սիրտն ու հոգին,
Այն վարակում է անգամ իմ ոգին,
Հիշողությունս մնում է արթուն,
Երկսայր սրի պես փայլող ու հատու:

Այն խոցում է իմ կուրծքը եւ գոչում.
- Անհուն ցավի մեջ պարտքը չի կորչում,
Վրեժդ պիտի թշնամուց առնես,
«Տարկետումիդ» մեջ նորից վեր հառնես:

- Ով հիշողություն, հանգիստ թող դու ինձ,
Բավ է ինձ տանջես, ես ատում եմ քեզ,
Գիտես, որ ազատ չեմ քայլի նորից,
Երկաթե դուռն ու ճաղերն են այստեղ:

Խավարում այստեղ տրորվում եմ ես,
Բանտն այս անիծյալ եւ ահավոր է,
Այստեղ ապրում եմ, բայց դագաղի մեջ.
Մահն է իմ դիմաց, շնչելս ո՞րն է,
Այստեղ խինդ չունեմ, թախիծս խորն է:

Ես շնչել եմ լոկ մի երազանքով՝
Ազատվի հողս, ապրի բերկրանքով,
Բայց նա արցունքի եւ արյան մեջ է,
Իսկ ես շղթայված՝ ասես իմ վերջն է:

Պապանձվիր հուշ իմ, ապրել եմ ուզում.
Խոր ցավերով ես ինձ անվերջ հուզում,
Մի կում օդ է պետք, որ դարձել է տենչ,
Թող մի քիչ քնեմ մոռացության մեջ:

***

Օտար ափերի ցեխոտված փրփուր,
Տոթակեզ ամառ, շղթաներ սառած,
Ինչպես մահ գուժող հրեշ անհագուրդ,
Ինձ գիրկն է առել Դոնի հողը թաց:

Ինձ ամեն գիշեր տանում են հեռու,
Տանում են հեռու իմ երկրից, տնից,
Հոգնած ձեռքերս կուռ շղթաներում,
Բաժանման ցեցն է ինձ զրկում քնից:

Արեւի շողն է լուսնյակին բեկվում,
Ճեղքում ամպերը, փարվում ճաղերին,
Պատերի վրա նախշեր են ծեփվում,
Լույս ցանում բանտի դաժան խաղերին:

Եվ այդ նախշերը թախծի թեւերով
Հանգիստս են խլում, թողնում անամոք,
Իսկ այգաբացին ազատ թեւերով
Ինձ՝ շղթայվածիս կանչում իրենց մոտ:

Ինձ երբեք կյանքի գիրկը մի կանչեք՝
Ուրիշի լույսով եւ անրջանքով,
Տեսիլքներ անհող, ես առանց այն էլ
Հիվանդ եմ ազատ կյանքի թովչանքով:

Ապրում եմ ես իմ երազով, տենչով,
Դառնության հուրն ինձ չի վառի երբեք,
Ես մարտնչում եմ անմար հավատով՝
Հանուն արեւի՝ ջերմ ու հրաշեկ:

ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Միապաղաղ անձրեւը պատուհաններն է ծեծում,
Խավարում է լուսինը մութ ամպերի փեշի տակ,
Բանտը փտում է դանդաղ խոնավության մեղկ ծոցում,
Ձանձրանում ենք, խենթանում բանտի ներսում դժնդակ:

Եվ այդ մութ ու թացի մեջ, գիշերներում անհանգիստ,
Հիսուսի սուրբ հայացքի ու մոմերի լույսի տակ,
Խոստանալով անդադար մեր մեղքերը բազմանիստ,
Պաղատում ենք Աստծուն՝ «Վերադարձրու մեզ Արցախ»:

Ինչո՞ւ պահել մեզ այստեղ՝ փրկելով թեժ գնդակից,
Խոնավությունն ու ցուրտն են հետապնդում աջ ու ձախ,
Կբորբոսնեն մեր շնչող մարմինները տանջալից,
Ամենազոր մեր Աստված, վերադարձրու մեզ Արցախ:

Միապաղաղ անձրեւը պատուհաններն է ծեծում,
Մեր քունքերին գնդակով մահվան վճիռն է հաստված,
Խոնավության ճիրանում անգամ բանտն է հեծեծում,
Հայրենիքի կարոտից խենթանում ենք, ով Աստված:

ԱՇՈՒՆ

Երբ անցյալ տարի մենք հանդիպեցինք,
Ռոստովյան բանտի ճաղերի հետեւ,
Ոսկե տերեւով հողը ծածկեցիր,
Սակայն իմ հոգին՝ թախիծներով սեւ:

Երբ աշխարհ եկա, ուրիշ էր այնժամ,
Զարդարում էիր ծառեր ու դաշտեր,
Ամեն ինչ հիմա գորշ է ու տարտամ,
Երեսուն տարում ի՞նչ է կատարվել:

Ուրիշ գույն չունե՞ս դեղինի կողքին,
Դեղինն ես հիմա իմ դիմաց վառում,
Կարոտն է հիմա տանջում իմ հոգին,
Առավել ծանր՝ այս երկու տարում:

Իմ երեսնամյա ցավն է ինձ գրկել,
Հոգնած մարմինս մայր հողն է տենչում,
Քեզնով եմ ուզում հանգիստս գտնել,
Ոնց աշնանային տերեւների չուն:
Ա՜խ, ինչպե՞ս հասնեմ իմ Արցախ հողին՝
Մոր քաղցրությամբ ինձ կյանք պարգեւողին:

ՀԻՇԵՑԵՔ, ՄԱՐԴԻԿ

Հիշեցեք մարդիկ, Հայկի սերունդներ,
Որ մեր արյանը ծարավ թշնամին
Ալլահի անվամբ մահն է տենչում մեր...
Միասնություն է մեզ պետք այս ժամին:

Երկիր պաշտողը թող լավ իմանա,
Որ կուսակցական սին կռիվներին
Հող ու ժողովուրդ չեն էլ դիմանա
Ու մեր սխալը երբեք չեն ների:

Վստահող հայեր, հիշեցեք դուք միշտ,
Որ, ցավոք, մեր մեջ դեռ կան Հուդաներ,
Երբ նենգ թշնամին մեզ բերում է վիշտ,
Թույն ենք սրսկում ժողովրդին մեր:

Արթնանանք քնից, հիշենք անդադար՝
Ուժեղ ենք մեկտեղ՝ Աստծո օրհնանքով,
Կջախջախվի մեր ոսոխն անարդար.
Մեր միասնությամբ, մեր զենքի ուժով:

Մենք պետք է ներենք մեկս-մյուսին՝
Մոռացած վեճեր, մանր հաշիվներ,
Եվ չմոռանանք երբեք այս մասին.
- Միասնությունն է հաղթանակը մեր:

ԽՂՃՈՒՄ ԵՄ ԵՍ ՔԵԶ, ԻՄ ԼՔՅԱԼ ԸՆԿԵՐ

Քո մեղմ թուլության ու վախից հետո
Հիմա ապրում ես եւ խեղճ եւ անկամ,
Եվ այնպիսի մի դիրքում ես ստոր,
Որ թշնամուն ես ծառայում անգամ:

Երբեք չես եղել դու դիպուկ գնդակ
Թշնամու ձեռքին, բայց դարձել ես զենք,
Դավաճանությամբ օգնել ես նրանց,
Որ ընկերներիդ հեշտությամբ հնձեն:

Հիմա զոհված են ընկերները քո,
Ննջում են հավերժ սառը դագաղում,
Նրանք ներել են քեզ իրենց մահով,
Իսկ դու ծակ մաղով քո խիղճն ես մաղում:

Այժմ դու ինքդ, ինքդ ես ներում քեզ,
Ոտքի տակ տալով եւ պատիվ, եւ խիղճ,
Եվ կշտամբելով մեղքերդ պես-պես,
Ինքդ ես կարդացել քեզ դատավճիռ:

Եվ հանկարծ քո մեջ խիղճն է արթնացել,
Խիստ պահանջում է պատասխանը քո,
Հոգուդ ճիչը իր դռներն է բացել,
Սակայն ինքդ քեզ ներել չես կարող:

Կյանքդ գնել ես դավաճանությամբ,
Ծախելով ազնիվ քո ընկերներին,
Ինչպես ստրուկն է ապրում շղթայված,
Այդպես էլ դու ես՝ ծովում մեղքերիդ:

ԻՄ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Աշուն, խնդրում եմ, պատասխանիր ինձ,
Ասա, քեզ այստեղ ինչպե՞ս ճանաչեմ,
Տերեւաթափդ վեհ էր, հմայիչ,
Այստեղ ծառ չկա, քեզ ինչպե՞ս կանչեմ:

Թափվող դեղնաթույր տերեւների տեղ,
Գունատ դեմքերն են իմ ընկերների,
Գունատ են փականք, ճաղեր ու պատեր,
Իսկ որոտի տեղ՝ ճռինչ դռների:

Ինձ այցի եկար տխուր ու թախծոտ,
Ծննդյան օրս է կրկին ինձ վառում,
Քսանինն տարիս անցավ զնգոցով,
Իսկ երեսունս սրտիս է փարվում:

Այսօրը ինչպես մի ազդանշան՝
Հրամայում է ելնել նոր վազքի,
Իմ երեսունը թափ է աննշան,
Կյանքս դեմ առավ ժայռոտ փականքի:

Կյանքն ինձ մատուցեց պատնեշներ անթիվ,
Չկարողացա հաղթահարել ես,
Պետք չէ ինձ դատել երբեք այդ առթիվ,
Կեղծիքն ու ցեխը կեղտոտում են մեզ:

Չեմ խաբել, մատնել կյանքում ոչ ոքի,
Տված երդումս չեմ դրժել երբեք,
Նման արարքին խորթ է իմ ոգին,
Ինձ չի աղտոտել ոչ մի ցեխոտ ձեռք:

Մաքուր եմ եղել, կմնամ մաքուր.
Այդպես է կոփել մայր Արցախս ինձ,
Ստորությունն եմ մերժել ամենուր,
Ինձ չի գրավել եւ ոչ մի մատնիչ:

Աշուն, բայց ինչո՞ւ հոգնել եմ այսպես,
Չէ՞ որ իմ ծնված օրն է՝ սեպտեմբեր,
Քսանինն տարիս թռավ լորի պես,
Իսկ երեսունս՝ բոթ է վշտաբեր:

ՄԱՅԻՍԻ ԻՆԸ

Հաղթանակի այս օրը, երբ մայիսն է հուրհրում,
Երբ ծփում է երկիրը՝ յասամանի բույրերով,
Երբ ամառն է մոտենում՝ աշխարհն առած իր հրում,
Այստեղ, այս սառ բանտի մեջ լույս չես գտնի օրերով:
Բայց ինչո՞ւ եմ ես երգում, այս ի՞նչ խինդ է հուզել ինձ,
Այս ինչի՞ց է, որ սիրտս խփում է ջերմ, հրացայտ,
Նրանից է, որ Դեյչը, այս առավոտ, Մոսկվայից,
Բարի լուր է հաղորդել՝ ընդգծված ու բարձրաձայն.
«Գրավել են հայերը քաղաք Շուշին այս գիշեր».
Եվ այդ պահին ցրվեցին մութ ու մշուշ դառնաշունչ,
Բանտը դարձավ վարդագույն, թեւածեցին բյուր հուշեր,
Հպարտությունն իմ հոգում ազդարարեց բարձրահունչ.
«Ով դուք դաժան դատախազ, ով դատավոր մոլագար,
Թքել եմ ես ձեր ծանր դատավճիռ - աճուրդին,
Ազատվել է իմ հոգին շղթաներից մշտասառ,
Ինչպես անգին իմ Շուշին՝ ճիրաններից չար թուրքի:
Արդ, թող խփեն ճակատիս ու թող մահը գրկի ինձ,
Թող հրկիզեն մարմինս կամ էլ դնեն դագաղում,

Բարի լուրը աշխարհում թեւածում է Արցախից,
Այդ լուրի մեջ իմ կյանքն է հավերժորեն շափաղում»:

***

Այն պահին, երբ մեզ ներս տարան՝ դահլիճ,
Ոնց գազանների նետեցին վանդակ,
Ես տեսա նրա աչքերն աստղաջինջ,
Նա դիցուհի էր՝ մի նրբին քանդակ:

Նրա ձեռքերը տեսա մետաքսյա,
Քանի անգամ են մեզ հասցրել բոքոն,
Նրա աչքերը թուխ ու լուսառատ,
Ջերմացրին մեր սրտերը բորբոք:

Մետաքս մազերը՝ իջած ուսերին
Եվ հայացքը ջերմ այնպես գերեցին,
Շողեր ցանեցին մեր վառ հույսերին,
Երբ մեզ կոպտաբար դահլիճ բերեցին:

Երբ նայում էին մեզ վրա խեթ-խեթ
Եվ դատախազը, եւ դատավորը,
Երբ հարյուրավոր խորթ աչքեր բեկ-բեկ,
Խայթում էին մեզ այդ անսիրտ օրը,

Միայն նա էր, որ իր աչքերով թուխ,
Հետեւում էր մեզ եւ տալիս թեւեր,
Հայի բարությամբ անհուն, սրտաբուխ,
Լույս էր առաքում բոլորանվեր:

Նրա հայկական հայացքը թախծոտ,
Հալեցնում էր սառույցներն օտար,
Ինչպես արշալույս, ինչպես առավոտ,
Օրն այդ դարձել էր թիկունք ու սատար:

Մեզ հույս հաղորդեց հայացքը անբիծ,
Ես լուռ կարդացի՝ դարձած մի հայդուկ.
«Դուք մոռացված եք այստեղ բոլորից,
Սակայն իմացեք, որ մենակ չեք դուք»:

Անցել են քանի օրեր այն պահից,
Սակայն աչքերն այն թախծոտ ու բարի,
Ինչպես արեւներ հետեւում են ինձ՝
Գիշեր ու ցերեկ, առանց դադարի:

***

Ինչու եմ կանչում ամբողջ գիշեր քեզ,
Ռուսաստան, Դոնի դուստր ոսկեվարս,
Ամբողջ օրն ինչո՞ւ սպասում եմ ես՝
Գուցե քեզ գտնեմ, ինչպիսին դու կաս:

Սակայն երազս քեզ որտե՞ղ գտնի,
Երբ փակ են բոլոր ճամփեքն իմ առջեւ,
Երբ օրենքներն ու բանտերը մթին
Հառնել են խոժոռ իմ ու քո միջեւ:

Երազում եմ ես, որ փառքդ շենշող
Միշտ ծաղիկ մնա ձյուների մեջ սառ,
Դատական որոշ խլուրդներդ թող
Չաղտոտեն երբեք անունդ պայծառ:

Սպասիր դու ինձ, կգամ գիրկը քո,
Երդվում եմ իմ այս ազնվաշունչ երգով:
Իմ երազի դեմ դռներդ բացիր,
Խոնարվում եմ քեզ՝ սրտով արեւշատ,
Ատելով Չէ-Կա-ն, կեղծիքը զազիր,
Բարեկամն եմ քո, ես՝ բարի «Վիշապ»:

ՍԵՐԸ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ

***

Սիրո ծովի մեջ, ուռկանով սրտիս,
Ընտրեցի իմ Սեր-կնոջը նազուն,
Նա նրբին փարվեց մոլեգնած կրծքիս
Սակայն լուռ տարավ մեղքերն իմ բազում:
Իմ ոսկի-հոգյակ, իմ կյանք, ինձ ներիր,
Որ սիրո ծարավ թողեցի ես քեզ,
Ներիր, որ սրտիդ տառապանք բերի,
Կյանքդ անապատ դարձրի տոթակեզ:
Քո երազների, տենչերի ճամփին
Չկարողացա միշտ լինել քեզ հետ,
Դարձա զինվորը մեր ծանր բախտի
Ու չթողեցի իմ ուղին երբեք:
Վճռեցի, որ ես քոնը չեմ միայն,
Որ նվիրյալն եմ մեր մեծ պայքարի,
Որ թշնամու դեմ՝ անգութ ու դաժան,
Պետք է ծածանեմ դրոշն արդարի:
Եվ խորհել եմ միշտ, որ հաղթանակը
Առանց ինձ չի գա եւ չի կամարվի,
Ներիր, որ անսիրտ մեր ժամանակը
Չթողեց սիրտս միշտ քեզնով վառվի:
Ես մաքառեցի նենգ ուժերի դեմ,

Սակայն ինձ ՊԱԿ-ը նետեց խոնավ բանտ...
Որ քեզ թողել եմ մենակ, տխրադեմ,
Ներիր, իմ հոգյակ, ներիր ինձ, իմ կյանք:

***

Մեր հանդիպումը ես չեմ մոռանա,
Կհիշեմ անվերջ՝ ինչպես սիրած երգ,
Իմ խոհերի մեջ, ուղեղում հոգնած,
Տաք արցունքներդ կմնան հավետ:
Հանդիպման պահին եւ քաղցր, եւ դառ,
Դու էիր իմ դեմ՝ հայացքով լուսե,
Չեմ մոռանա՝ ոնց մատները իմ սառ
Քո արցունքներից տաքացան, իմ սեր:
Ջինջ արցունքներդ ադամանդի պես
Գլորվում էին շրթունքներդ ի վար,
Առանց բժշկի, բալասանի պես
Վերադարձրին ինձ հույսերը իմ վառ:
Ես չեմ մոռանա ձայնդ Հրեշտակի,
Քսանյոթ տարում՝ վարսդ ճերմակող,
Ես չեմ մոռանա աստղերն աչքերիդ,
Մինչեւ քեզ սիրող սիրտս դառնա հող:
Դու իմ հարազատ, ես չեմ մոռանա
Քո թաց ժպիտը արցունքներիդ մեջ,
Որ ինձ պարգեւեց այն ծանր պահին՝
Ե՛վ հույսերի շող, ե՛ւ ապրելու տենչ:

***

Բանտը փայլփլեց լույսի շողերից,
Կապույտ երկինքը փարվեց ճաղերին
Կարոտել էի քո նուրբ բառերին:
Վանդակս քրտնեց սրտիս դողերից,

Ձեռքս մեկնեցի՝ շողը շոյելու,
Ոնց շոյում էի մազերը քո թուխ,
Տեսիլքի նման, որպես այցելու,
Դու ժպտում էիր դեմս սրտաբուխ:
Աստված իմ, ասա այս ի՞նչ կատարվեց,
Ժպիտ ու աչքեր ո՞նց անհետացան,
Դեպի քեզ մեկնած ափիս մեջ այդժամ
Նրա արցունքն էր կաթում հրացայտ:
Սակայն արցունք չէր դա սովորական,
Ցաված սրտիս մեջ իմ Սերն էր՝ խոսող,
Իմ երազների խենթ ամպրոպն էր դա,
Դա իմ խոր վերքից արյունն էր հոսող:

***

Աստվածուհի դու իմ սիրո,
Դիմում եմ քեզ ես հուսավառ,
Դիմում եմ քեզ անհուն սիրով,
Այս մեղսալից երկրի վրա:
Տենչանքներս փշուր-փշուր,
Երազներս՝ ցաք ու ցրիվ,
Ծաղիկներս՝ թոշնած-տխուր,
Ուշքս ու միտքս՝ հուսախռիվ,
Հարց եմ տալիս եւ քեզ, եւ ինձ,
Արժե՞ր սիրել տառապալից...
Ես լսում եմ ձայնն իմ հոգու,
Որ քո սերն է հուրն իմ ոգու,
Թե հարկ լինի՝ սիրուդ համար
Ես Գողգոթա կբարձրանամ,
Կտապալվեմ ոտքերիդ տակ՝
Քեզ հետ ապրած պահերը թանկ

Փայփայելով ոնց սրբություն,
Շշնջալով բառերն իմ տաք՝
«Դու իմ սիրո հավերժություն»:

***

Սիրելիս, խնդրեմ, որ դու ինձ ներե՞ս,
Խնդրեմ, որ միայն ի՞նձ սիրես կյանքում,
Խնդրեմ, որ միայն դո՞ւ սրտիս տիրես...
Խնդրում եմ, հիշիր թե՛ քուն, թե՛ արթուն:
Բայց փոխարենն ինձ ոչինչ մի խնդրիր,
Սեւեր մի հագիր՝ որպես վշտի ելք,
Ինչ էլ պատահի ինձ հետ, սիրելիս,
Քեզ նման Աստղ չեմ գտնի երբեք:
Այս երկրի վրա, ինչպիսին դու ես,
Քո ծով բարությամբ չկա ոչ մի տեղ,
Տիեզերքի մեջ, աստղերում պես-պես,
Արեւս դու ես՝ դու ես ցավիս դեղ:
Թե դժողք ընկնեմ մեղքերիս համար,
Սատանան էլ գա ու պարի իմ դեմ,
Ես չեմ վարանի կամքով իմ համառ,
Հանուն քո սիրո կգնամ եղեմ...
Ինչքան էլ ուղին իմ պատի մուժով,
Ես ելք կգտնեմ քո սիրո ուժով:

***

Մեր հայրենիքից նայող աչքերն ես,
Նրանց խորքերում կարոտ կա, հառաչ,
Մեր հայրենիքից ինձ հասնող ձայնն ես,
Նրա թեւերին նարոտ կա ու կանչ:
Նրանք Արցախից բերում են համբույր,
Հովեր են բերում ու զովեր քնքուշ,

Բերում են նրա երանգները բյուր,
Նրա մայրական շունչը մեղմանուշ:
Իմ սեւ-սպիտակ երազներն անթիվ
Նրանք դարձնում են գունավոր ու նուրբ,
Ու հեվից-հեռու ես գիշեր ու տիվ
Ինձ զգում եմ միշտ նրա գրկում սուրբ:
Իմ օազիսն ես անապատի մեջ,
Ջրհորն ես միակ՝ կենսաջուր բերող,
Իմ փրկությունն ես, կրակը անշեջ,
Եվ իմ այս երգը քո ձայնն է գերող:

***

Իմ թանկագինս, այս լուսնյակ գիշեր,
Տանջանքներիս մեջ հիշում եմ ես քեզ,
Բայց արցունքներդ՝ մի-մի վառ հուշեր,
Սրբել չեմ կարող, ծովումն եմ ասես՝
Դառնության, թախծի անհագուրդ ծովում,
Որ կուրծքն է ծեծում՝ թեժ մրրիկի պես,
Ասես, թե լինեմ տանջանքի բովում,
Ա՜խ, ես ի՞նչ անեմ, ինչպե՞ս օգնեմ քեզ:
Դու իմ հույս, հավատ, դու իմ մայրցամաք,
Խենթ փոթորիկն է մեր միջեւ ոռնում,
Ցավը իմ սրտում ճչում է անհագ,
Հիշիր ինձ, բուժող խոսքդ եմ որոնում:
Ա՜խ, ինչքան խորն է անդունդը մեր մեջ,
Բաժանման թախծից լուսինն է մթնել,
Ճչում է սիրտը իմ ազատատենչ,
Բախտիս լույս ուղին չեմ կարող գտնել:
Ա՜խ, ինչպե՞ս փրկվեմ չար ալիքներից,
Ինչպե՞ս դիմանամ ցավին բաժանման,

Ինչպե՞ս կառուցեմ կամուրջ մեր միջեւ,
Որ քո ջերմ շնչից սիրտս տաքանա:
Մի արագընթաց նավակ կդառնամ,
Խորխորատներով կհասնեմ ես քեզ,
Եթե հարկ լինի եւ կհամբառնամ,
Որ գիրկդ հասնի հոգիս սիրակեզ:
Աստված, օգնիր ինձ, օգնիր, գթասիրտ՝
Դժբախտությունից խույս տալու համար,
Պետք չեն ինձ պարգեւ եւ ծափեր փառքի,
Միայն իմ սերը պահպանիր անմար:
Աստված, իմ փարոս եւ իմ ուղեցույց,
Քեզ հետ վախ չունեմ ոչ մի փոթորկից,
Ոչ նավաստի եմ, ոչ էլ նավապետ,
Միայն ամենուր ոգեւորիր ինձ:
Աստված իմ ոգի, իմ մարմին, իմ սեր,
Երկրպագում ու պաշտում եմ գահիդ,
Քանի ինձ հետ ես, կմաքառեմ ես
Եվ քո շուքի տակ կմերժեմ մահը:
Աստծո հավատով ու քո ջերմ սիրով,
Սեր իմ, կհաղթեմ այս դաժան ցավին,
Թեկուզ բանտի մեջ, թեկուզ վանդակում,
Իմ առագաստը չեմ զիջի դավին:

***

Ինչո՞ւ ես այսօր խոսում հրճվանքով,-
Հարցրեց ընկերս՝ սեղմելով ձեռքս,-
Թեկուզ ուրախ եմ երջանկությամբ քո,
Բայց կասկածում եմ՝ տե՞ղն է քո խելքը:
-Թանկագին ընկեր, ես իմ երազում
Գտնվում էի սիրածիս կողքին,

Ասես երազ չէր, այլ առաջվա պես
Նրա ջերմ շնչից ցնծում էր հոգիս:
Նրա շոյանքից սիրտս էր տրոփում,
Մոռացել էի վանդակում հրեշ,
Քնած եմ ոչ թե քարե տոպրակում,
Այլ արքայական մահճակալի մեջ:

***

Ես կգամ ու դուռը կծեծեմ,
Եվ դու կբացես, կգոչես. «Իմ խենթ,
Վերադարձե՞լ ես, ինչքա՜ն եմ թախծել,
Ուրախ եմ՝ հիմա կլինենք մեկտեղ»:
Քո նուրբ մատները կհպեմ շրթիս,
Կուտակած ամբողջ շոյանքս կտամ,
Մարմինդ ամուր կսեղմեմ կրծքիս
Ու մեղք կգործեմ Ադամի նման:
Թող դրախտ տանող իմ ուղին փակեն,
Քո շոյանքները արժեն ամեն ինչ,
Եթե միասին դժողք էլ ընկնենք,
Կգտնենք բախտի այգաբացը ջինջ:
Գինու գավաթը կառնենք սիրով թեժ,
Կխմենք՝ մինչեւ լուսայգը բացվի,
Իմ առեղծվածը կմնա հավերժ,
Իմ բալասանը՝ ցավի ու թախծի:
Ահա, այդպես եմ հյուսել հեքիաթն իմ,
Եվ հանձնել երգիս վառվող տողերին,
Բայց դա հեքիաթիս վերջը չի, սեր իմ,
Դա նախերգանքն է սրտիս դողերի:
Եղնիկ իմ, եթե Տերը կամենա,
Մեր հեքիաթ-սերը հավերժ կմնա:

ԴՈՒ ՀԱՃԱԽԱԿԻ ՆԱՅԻՐ ԼՈՒՍՆՅԱԿԻՆ

Ինչպես հայելուն, լուսնին եմ նայում,
Փնտրում աչքերիդ լույսը հմայուն,
Միշտ լուսնին նայիր, դու իմ լուսանուն,
Որ մեր գարունը փնտրեմ նրանում,
Որ տարիների հետքերը աննինջ
Շոյեն իմ սիրտը եւ կարոտը ջինջ,
Որ քո հայացքի նշանակետում
Խաչվի հայացքս, ինչպես լույս-երդում,
Որ լուսնի փոքրիկ այդ կտորի մեջ
Քեզ գտնեմ նորից, իմ երազ, իմ տենչ:
Դու հաճախակի նայիր լուսնյակին,
Որ մեր գարունը տեսնեմ թանկագին,
Որտեղ երջանիկ էինք ու քնքուշ,
Ուր վարդեր էին, չկար ամպ-մշուշ,
Դու հաճախակի նայիր լուսնյակին,
Բյուր լույսերի մեջ լույսդ է իմ աչքին,
Քո լույսը սրտիս նոր ուժ կբերի,
Պայքարի լույսն ինձ նորից կգերի,
Քո լույսով ես իմ ուղին կգտնեմ,
Լույսդ չի թողնի բավիղներ մտնեմ,
Քո լույսով, սեր իմ, սրտով հրակեզ,
Ինչ էլ որ լինի, գիրկդ կգամ ես:

❖❖❖

ՍԵՐ ԻՄ

Մարտի ութի առթիվ

Երազներիդ թեւերին նուրբ,
Ժպիտներիդ ծիածանին,
Կյանքը երազ բերի ծուփ-ծուփ,
Ժպիտներիդ ճամփին ցանի:

Աստղ մնաս աստղերի մեջ,
Ծաղկաբույլում՝ մնաս ծաղիկ,
Ինձ նվիրես ոգի ու տենչ,
Սիրո ծարավ, սիրո տաղիկ:

Օրվա վազքում՝ հոգնած ու հեզ,
Գամ ու նետվեմ գիրկդ քնքույշ,
Ինձ նվիրես կրակդ թեժ,
Կրակիդ հետ՝ թռիչք եւ ուժ:

Մեկ համբույրիս տասն ընծայես,
Մեկ ժպտալուս՝ հազարն հոգով,
Ցավ ու կսկիծ հեռու վանես
Եվ նվիրես բույրերը քո:

Իսկ ես, ինչպես հեթանոս հայ,
Քեզ փայփայեմ իմ թեւերին,
Ու շշնջամ. «Իմ միակ Սեր,
Քոնն եմ եղել, քոնն եմ էլի»:

Իսկ թոռները մեր ժրաջան,
Սիրո ծովում նմանվեն մեզ,
Եթե պաշտեն՝ պապի նման,
Եթե սիրեն՝ տատիկի պես:

8.03.2010 թ., Ստեփանակերտ

ԷՔՍՊՐՈՄՏՆԵՐ

Նվիրում եմ Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Հայոց լեզու, գրականություն եւ հոգեբանություն» բաժնի IV կուրսի ուսանողուհիներին

ԲԵԼԼԱՅԻՆ

Ծաղիկների բույր ու թույր է հմայիչ,
Զանգեզուրյան աղբյուրի կանչ ու մուրազ,
Ժպիտների ծիածան է՝ սրտերն իրար հետ կապող,
Բանաստեղծի սիրո երգ է ու երազ:

Գոհար ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Իմ Գոհար, Գոհար ես հիրավի,
Հայկական արեւով հյուսված,
Գոհար ես՝ միջուկն արեւի,
Սիրո ծառ՝ սրտիս մեջ բուսած:

Գոհար ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Շոյող ժպիտ, ջերմին արեւ, նուրբ հայացք,
Մռով սարի ծաղիկների բուրող փունջ,
Երբ խոսում է, ասես աստղերն են կանչում,
Բանաստեղծի երգերի մեջ Աստծո շունչ:

ՀԱՄԵՍՏԻՆ

Երազը թուխ, ժպիտը թուխ, սերը թուխ,
Այդ թուխի մեջ աստղերի շող ու ժպիտ,
Ով տեսնում է՝ առասպելն է իր հյուսում
Եվ այդ լուսե առասպելում՝ սիրո գիրկ:

ՍԱԹԵՆԻԿԻՆ

Ուշ գարնան պես ժլատ ժպիտ, բայց խոր սեր,
Իր ջերմ սիրով դարձած աստղ, դարձած Տեր,
Երբ նստում է, ասես վարդի թուփ է նուրբ,
Երբ կանգնում է՝ նվիրում է հաղթ թեւեր:

ՀՌԻՓՍԻՄԵԻՆ

Թուխ արեգակ, աստղերի բույլ ու կրակ,
Սիրո օվկիան, սիրո երազ, սիրո եռք,
Թուխ արեւի ջերմ շողերով փայփայող,
Բանաստեղծի սրտի խորքում դարձած երգ:

Ձախից՝ Մեսրոպ Մաշտոց համալսարանի բանասիրական-չորրորդ կուրսի ուսանողուհիներ՝ Գոհար Մկրտչյան, Համեստ Գաբրիելյան, Հռիփսիմե Գրիգորյան, Գոհար Խաչատրյան, Բելլա Ավանեսյան

ԻՄ ԾՆՈՒՆԴԸ

Շնորհակալ եմ քեզնից, Աստված,
Ինձ նվիրած ոգու համար,
Նվիրումիդ հրով հաստված
Հոգիս նույնն է՝ ձմեռ, ամառ:
Շնորհակալ եմ՝ քո պարգեւած
Արեւահունց սրտիս համար,
Կյանքի ծովում քեզնով թեւված՝
Գարնանածուփ երգիս համար:
Ջանքիս համար ու եռանդիս,
Երազներիս, հեւքիս համար,
Կյանքիս համար, սիրո խանդիս,
Աստղեր շոյող ձեռքիս համար:
Դու կենսառաք, արեւակամ,
Շնորհակալ եմ, ինչպես որ կամ:

22.01.2004 թ.

***

Հոգուս գույները առատ են ու խիտ,
Ես արեւից եմ գույներն այդ առել,
Լուսնից եմ առել, հեռու աստղերից,
Ծիածաններից՝ արքայավայել...
Սեգ լեռներից եմ առել հայաշունչ,
Մեր անտառներից՝ խիտ ու մեղմօրոր,
Մեր աղբյուրներից՝ ժայռածին ու պաղ,
Տատիս քնքշանքից, տագնապից իմ մոր...
Հորս ձեռքերից՝ հողոտ, հացաբույր,
Քույրերիս թախծից, եղբորս ցավից,
Առաջին սիրուց իմ հեզահամբույր,

Իմ մանուկների ծիծաղի գավից...
Հոգուս գույները ազգիս ցավերն են,
Երազանքներն են՝ չար աշխարհի դեմ,
Հայոց մեծերի երգի լարերն են,
Մտքի թռիչքն են՝ դարձած սյուն ու վեմ:
Հոգուս գույները երգիս մեջ փնտրեք,
Երգիս՝ ցավի ծով եւ հույսի ծփանք,
Ուր էլ որ գնանք, ինչ էլ որ ընտրենք,
Ցավը մեր բախտն է, հույսը՝ մեզ բերկրանք:

16.02.2004

***

Այս աշխարհում՝ մուտք ու ելքի,
Բերկրանքը քիչ, թախիծը շատ,
Ձեռքը դրած սրտի վերքին,
Մարդն իր կյանքն է հյուսում կիսատ:
Իր լուսավոր քայլի համար
Փառք է տալիս Արարիչին,
Աղոթում է խեղճ ու համառ
Եվ առաքում մի իղձ չնչին՝
Խնդրում է, որ երկար ապրի,
Երազելով մի ամբողջ դար,
Տերը հանում է քսան տարին
Եվ հորդորում՝ ապրիր արդար:
Եվ աշխարհում՝ մուտք ու ելքի,
Մարդն ապրում է ձեռքը վերքին:

13.02.2004

ՏԱԳՆԱՊ

Այնպես արա՝ չխենթանամ,
Գործի գնա մեր տան մոտով,-
Վարդաժպիտ, վարդահոտով,
Այնպես արա՝ չխենթանամ:
Ինձ այցելիր երազիս մեջ,
Երազում էլ ծաղիկ մնա,
Դու իմ սիրտն ես, իմ սերն անշեջ,
Այնպես արա՝ չխենթանամ:
Պատկերդ իմ սրտի մեջ է,
Ես առանց քեզ ինչպե՞ս մնամ,
Սերս սեր չէ, հուր է, տենչ է,
Այնպես արա՝ չխենթանամ:
Սերեր շատ կան այս աշխարհում,
Դու ես սերս հոգեհմա,
Քո անվամբ եմ ես արարում,
Այնպես արա՝ չխենթանամ:
Թե ծարավես՝ ջուր կդառնամ,
Քեզ ջերմացնող հուր կդառնամ,
Քեզ պաշտպանող թուր կդառնամ,
Այնպես արա՝ չխենթանամ:

12.02.2004

***

Արեւի պես ժպտում ես,
Ամպի նման մշուշվում,
Մերթ ինձ նայում, տրտմում ես,
Մերթ էլ քո սերն ինձ հուշում:
Մերթ բացվում ես վարդի պես,
Մերթ կոկոնվում քնքշանքով,
Մերթ լացում ես դարդիս պես,
Մերթ ճառագում խենթ հոգով:
Մերթ խոցում ես իմ հոգին,
Մերթ բուժում ես իմ վերքը,
Մերթ կանգնում ես իմ կողքին,
Մերթ ոլորում իմ ձեռքը:
Առեղծված ես ինձ համար,
Դու իմ թախիծ, դու իմ դեղ,
Իմ ջերմ հոգի, իմ համառ,
Իմ քնքշասիրտ, իմ ահեղ:

17.02.2004

***

Քո ձայնը ձուլվել է հոգուս,
Քո ձայնը հնչում է իմ մեջ,
Դարձել ես կանչը իմ ոգու,
Դարձել ես երազանք ու տենչ:
Փափագած իմ սերն ես լուսե՝
Մայիսյան վարդի պես ցողաթաց,
Երգիս մեջ խոհերս հյուսել
Ու քեզ եմ ընծայում սրտաբաց:
Ամենուր երազս դու ես,
Հավատա իմ կարոտ-հառաչին,
Հանգիստս կորցնում եմ առանց քեզ,
Կարոտ եմ հոգեբուխ քո կանչին:

***

Դու խոսելիս՝
Երազում եմ փակ աչքերով,
Դու քայլում ես հրայրքներով,
Ոնց մանկության տարիներին՝
Տատիս պատմած հեքիաթի մեջ...
Դու գալիս ես ինձ փաղաքշում, նստեցնում
Քո զարդարած սիրո գահին,
Ու թվում է՝
Տերն եմ դարձել ողջ աշխարհի...
Տերն եմ դարձել սիրո, փառքի...
Սակայն մի պահ... երբ քայլում եմ
Աչքերս թաց...
Տանջում ես ինձ ու շշնջում.
«Դեհ, դիմացիր
Սիրո քաղցր տառապանքին»:

***

Քո երազով գրիչն առել
Ու դարձել եմ ես գուսան,
Քո անունը հոգուս խորքում
Դառնում է դեղ-բալասան:
Ու հնչում է ու թեւածում
Երգերի մեջ իմ սիրո,
Տանջված սիրտս ջերմանում է
Մաքրամաքուր քո հրով:
Աստղերն առած իմ կրծքի տակ,
Մտած սիրո նոր հունը,
Իմ սրտի մեջ, իմ երգի մեջ
Հնչում է քո անունը...

***

Քո աչքերի գիշերներում
Վառիր, վառիր աստղերդ բյուր,
Արեւիր իմ վառ հուշերում
Որպես սիրո քաղցր քույր:
Քո աչքերի գիշերներում
Մի անթեղիր արեւներդ,
Մշուշապատ իմ հուշերում
Թող ինձ փարվեն թեւերդ:
Քո աստղերով թող օրորեմ
Կորած սերս իմ հուշերում,
Վախենում եմ, որ մոլորվեմ
Քո աչքերի գիշերում...

***

Դու այնքան լավն ես,
Որ քեզ նայելիս
Սիրտս հալվում է...
Դու այնքան լավն ես,
Որ քեզ շոյելիս
Ծունկս ծալվում է...
Ախ, ես ի՞նչ անեմ,
Ասեմ դու լա՞վն ես,
Թե սիրո ցավիս
Իջած նոր ցավն ես...

***

Ով ժխտում է սերը,
Սիրո տունն է քանդում,
Թող ինձ ների Տերը,
Նմանին չեմ խանդում:

Սերն օջախի հիմքն է,
Կյանքի լույսն է, հունը,
Ով ժխտում է սերը,
Քանդում է իր տունը:

***

Սերս վերհուշ չդարձավ,
Սերս մնաց գարնան պես,
Հրաժեշտի պես չանցավ,
Միշտ էլ մնաց հրակեզ:
Ես վառվել եմ սիրո մեջ,
Սիրո կրակն իմ շունչն է,
Սերս արեւ է անշեջ,
Սակայն ափսոս՝ անուրջ է:

***

Սիրո մեջ լինել հերոս,
Սիրո մեջ աստղեր փնջել,
Սիրո մեջ լինել փարոս
Ու սիրո բույրը շնչել:
Չեմ ասում՝ խոսքի համար
Ասում եմ՝ «Լինել այդպես,
Վառվելու թե հարկ լինի,
Հրկիզվել Արեւի պես»:
Չգիտեմ, թե ուր հասա,
Բայց ճամփիս դեռ կա բարձունք,
Իմ երազ, ո՞ւր ես, ասա,
Դարձել ես այրող արցունք:
Առանց քեզ էլ ի՞նչ երազ,
Ի՞նչ համբավ էլ առանց քեզ,
Քեզնով եմ թեւավորված՝
Ի՞նչ ճամփա էլ առանց քեզ...

***

Մատներդ հույսի մոմեր են,
Լույս վառիր հոգուս խորքերում,
Ժպիտդ հույզերի ծով է,
Հույզ ցանիր սիրուս երգերում:
Նազերդ երազի թեւեր են,
Իմ սրտի վրայով քայլիր,
Թախիծս արեւի ծարավ է,
Սիրտ մաշող թախծիս մեջ փայլիր:
Սիրո-վառ կանչերից ծնված,
Իմ երազ-Աստղն ես, որ կաս,
Ես սիրո ծարաված ուխտյալ,
Գիտեի, որ մի օր պիտի գաս,
Պիտի գաս, որ խնդրեմ ծնկաչոք,
Աղոթեմ, որ ապրես իմ սրտում,
Պաղատեմ, որ դառնաս առավոտ,
Քո լույսով հավերժվես իմ գրկում:

***

Կոտրած սիրտս փշուր-փշուր,
Էլ չես կարող հավաքել,
Էլ չես կարող արեւի պես
Իմ հոգու մեջ ճառագել:
Դու ինձ համար եկել էիր
Աստղաժպիտ եզերքից,
Իմ փշրված սրտի խորքում
Հեռացար եւ իմ երգից:

***

Ինձ թվացել է,
Թե սիրո ցավը
Քո սրտի միջով
Անցնել չի կարող...
Ինձ թվացել է,
Թե սիրո հուրը
Քո ցավերի մեջ
Կրակ է մարող:
Ինձ թվացել է,
Թե սրտիդ սերը
Նման է պղտոր
Գարնան սելավի,
Ի՞նչ իմանայի,
Թե սերդ, անգին,
Ժայռերը ճեղքող
Մի աղբյուր է ջինջ...
Հիմա մոլորված
Կանգնել եմ քո դեմ,
Ու մեղանչում եմ,
Որ ես իզուր եմ
Քո սիրտը կոտրել...
Ապաշխարանքս
էլ տեղ չի հասնում,
Սրտիդ դռները՝
Փակվել են արդեն:

ՄԻ ԳՈՐԳԱԳՈՐԾ ԱՂՋԿԱ

Մռովի լանջին
Բուրվառված ծաղիկ,
Դու բանաստեղծի
Սրտաբուխ տաղիկ:

Դու սիրո ճամփին
Անմարում ճրագ,
Գորգագործների
Օջախի կրակ:

Այդ կրակի մեջ
Հրաշք երազներ,
Այդ երազներից
Ծնված երանգներ:

Երանգներ՝ փռված
Հեքիաթի գորգին,
Հեքիաթ՝ միշտ փարված
Մեր հոգու խորքին:

Թող ղարաբաղցու
Երազը բարի
Գորգիդ թեւերով
Հասնի աշխարհին:

05.07.1985 թ.

***

Անցած օրերիս շարանների մեջ
Ծփում են, ծփում գարունները պերճ,
Իմ գարունները՝ ծաղկած ինձանով,
Իմ առուները՝ երգող իմ ձայնով...
Անցած օրերիս շարանների մեջ
Շողում են, շողում աստղերը անշեջ.
Աստղերը՝ ծնված իմ հուր տենչերից,
Աստղերը՝ վառված իմ բյուր կանչերից:
Անցած օրերիս շարանների մեջ
Իմ կարոտներն են ալիքվում անվերջ,
Իմ կարոտները՝ ծուլված արյունիս,
Արյունիս միջով անցած ավյունիս...
Կարոտից ծնված լույս եմ, առավոտ,
Լույսերից ծնված մորմոք ու կարոտ...

ԳԱՐՈՒՆՍ

Ինչպե՞ս եղավ, այսքան շուտ
Գարունս գնաց,
Ասեք, այն մեր այգո՞ւ մեջ,
Թե՞ սարում մնաց:
Ի՞նչ եք հիշում նրանից,
Սիրո ե՞րգ, արցո՞ւնք,
Տխրություն ու վայրէ՞ջք,
Թե՞ լուսե բարձունք:
Գարունս մեր հոգո՞ւ մեջ,
Թե՞ դաշտում թողի,
Այն աստղերի՞ն ծուլեցի,
Թե՞ ծաղկող հողին:

ՀԱՅՈՑ ՏՈՒՆ

Նվիրում եմ Ռիմա եւ Սուրեն Թունյաններին, որոնք հայ ժողովրդին պարգեւել են յոթ զավակ՝ երեք տղա, չորս աղջիկ

Աստղերի պես ժպտացին ու ձուլվեցին իրարու,
Մի Ռիմա, մի Սուրեն, երկու էին, մեկ դարձան,
Հոգսերի մեջ բյուրանուն՝ կյանքը դարձրին մի գարուն,
Ու ծաղիկներ փնջելով հյուսեցին մի ծիածան:
Աշխարհի մեջ հնավանդ արարեցին մի աշխարհ՝
Փոքրիկ Հայաստանի մեջ մի աստղալից Հայաստան,
Նրանց ամեն երազը՝ արցախական մի նշխար,
Նրանց ամեն մուրազը՝ լուսե նախշը իրենց տան:
-Մեր աշխարհը՝ մեր տունը, պիտի արքա ունենա,-
Սուրենն ասաց ու լռեց, եւ Ռիման հաստատեց,
Աշխարհ եկավ այդ արքան ու կոչեցին Մեծ Տիգրան,
Տուն-պետության կուռ հիմքը Մեծ Տիգրանը ցեմենտեց:
-Մեր աշխարհը՝ մեր տունը, պիտ ունենա թագուհի,
Ռիման ասաց... Սուրենը խաղաղ ժպտաց քթի տակ:
Աշխարհ եկավ թագուհին՝ Անուշ անվամբ հայուհին,
Տուն-պետության պատերը փայլփլեցին լույսով տաք:
Սուրենն ասաց... Անուշս պիտի քույրիկ ունենա,
Ռիման ժպտաց ու գրկեց Անուշիկին երազով,
Մինչեւ տարին բոլորեց՝ ոսկեգանգուր ու չքնաղ
Արեւիկին բերին տուն՝ արեւաբույր ու նազով:
-Տուն-պետության հիմքերը զինվորներով են ամուր,-
Մի օր ասաց Սուրենը ու դուրս թռավ պատշգամբ:
Ու հասկացավ Ռիման միտքը իր խենթ ամուսնու,
Կնվիրեմ ինչ ուզես, քեզ կընծայեմ քաջ Վարդան:

Աշխարհ եկավ մանչուկը՝ արեւածին, ժպտադեմ,
Ու կնքեցին սիրալիր քաջ Վարդանի անունով,
Ասես հայոց այրուձին վրնջում էր սիգաճեմ
Նրանց բացած ճամփեքի լեռնագնա նոր հունով:
Ու մի օր էլ Ռիման իրար տալով ունքերը,
Ասաց,- Սուրեն, Վարդանը մի նոր եղբայր է ուզում,
Տեղից թռավ Սուրենը, դեռ թուխ էին քունքերը,
Գիրկն առավ Ռիմային, դարձած ժպիտ ու հուզում:
Մինչեւ տարին բոլորեց, տուն բերին լույս Արամին,
Հայկյան Արամ իսկական, երրորդ քաջը այս սուրբ տան,
Ու պարեցին խենթորեն, ու խնդացին միասին,
Տուն չէր միայն, օջախ չէր, այլ քաջածին Հայաստան:
Ռիման գործից եկավ տուն՝ հոգնած օրվա հոգսերից,
Անուշիկին, Արեւին տեսավ՝ տիկնիկ են խաղում,
-Վայ, քոռանամ,- ասաց նա,- ձեռքը տարավ վարսերին,
Աղջիկներիս սրտերը նոր քույրիկ են պահանջում:
Եվ Ռիման վճիռն այս հաղորդեց իր Սուրենին,
Իսկ հայտնի է, Սուրենը այդ խոսքին էր սպասում,
-Հազար անգամ ասել եմ, մի թաքցրու ինձանից
Քո վճիռը, քո միտքը, իմ սրտի տեր սիրասուն:
Հայոց աշխարհն ի վերուստ աստվածների օջախ էր,
Ունեցել է Անահիտ եւ Աստղիկ է ունեցել,
Սուրենը այս լավ գիտեր ու լավ գիտեր Ռիման,
Կյանքում ախր իրենք էլ երբեք հետ չեն մնացել:
Այդպես ահա ստացվեց Անահիտը իմաստուն,
Որպես արեւ մայրության, որպես բերկրանք պարգեւող,
Եվ օջախն այս շափաղվեց ուրախությամբ մի անհուն,
Եվ օջախին գումարվեց բախտի նոր լույս ոսկեշող:
Այդպես ահա արարվեց եւ Աստղիկը աստղածին,

Աստվածուհին մեծ Սիրո, որ սրտեր է միացնում,
Եվ օջախն այս հասավ իր երազներին լուսածիր,
Հաստատելով իր տեղը որպես մարդկանց հիացում:
Վարդավառն էլ եկավ տուն Աստղիկի հետ մշտապես,
Ու յոթ սյուներ հառնեցին՝ երեք եղբայր ու չորս քույր,
Իսկ ես հայոց մի պոետ եւ՛ եղբոր պես, եւ՛ հոր պես,
Նվիրում եմ իմ երգը ոնց սրտաբուխ մի համբույր:
Թող հար խշշա ու երգի տոհմածառն այս հաստատուն,
Որ սնվել է ու հառնել սրտի սիրով անարատ,
Հավատում եմ, երբ ունենք նման օջախ, նման տուն,
Մի օր քեֆի կնստեն Մռով սար ու Արարատ:

ՔՈ ՀԱՅԱՑՔԻ ԴԵՄ

Քո հայացքի դեմ արեւն անուժ է,
Գարունը դժգույն, իսկ աստղերը թույլ,
Քեզնով, սիրելիս, սիրելն անուշ է,
Քանզի դու սիրտ ես, հոգի ես եւ բույր:
Թող օրհնյալ լինի արարիչը մեծ,
Որ իր պատկերով մի օր քեզ երկնեց:

ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ՝
Մարտի 8-ի առթիվ՝

Մարիներին, Տատյանային, Լիլիին, Քրիստիներին

Երազել եմ ես տարիներ,
Որ ինձ հուզի մի Մարինե,
Թուխ աչք ունքով ու ծով խելքով,
Մի Տատյանա՝
Արվեստի մեջ սուրբ մանանա,
Մի նուրբ Լիլի,
Ոնց ծաղիկը սիրի-սիրի,
Քրիստինե՝ մի նոր հրաշք,
Կյանքի աղբյուր, սիրո ճրագ...
Երազել եմ, որ միասին
Գարնանային մի փունջ դարձած
Հիշեցնեն օրերս անցած,
Իմաստ բերեն իմ սուրբ գործին,
Ուսուցչի իմ մեծ փորձին,
Որ իրենց հետ փարվեմ կյանքին,
Ասեմ նրանց՝ առանց ջանքի
Չեն գրավում ոչ մի բարձունք...
Ասեմ գարնան անուշ բույրն եք,
Բանաստեղծի ջերմ համբույրն եք,
Շնորհավոր Ձեր տոնը մեծ,
Իմ այս երգի տողերի հետ
Ընդունեցեք սիրտս անկեղծ:

08.03.2000 թ.

ԱՅՍ ՀԵՔԻԱԹԸ

Նվիրում եմ հայտնի բժիշկ Արթուր Գրաբսկուն եւ նրա սրտի կեսին՝ Մանանային,- «Ջերմուկ» առողջարանում հանգստանալիս

Այս հեքիաթը, որ պատմում եմ,
Կյանքից է առած,
Առողջարան հին Ջերմուկի
Լույսից է վառած:
Մենք՝ չորս հոգով, սեղանի շուրջ
Ճաշ ենք վայելում,
Ու տեսնում ենք մենք իրարու,
Ինչպես հայելում:
Ջահել տղան՝ անունն Արթուր,
Կինը՝ Մանանա.
Արթուրը ոնց սրբած մի թուր,
Կինն իսկ՝ մանանա:
Ուշանում են միշտ էլ ճաշից,
Ուտում են շտապ,
Ջրուցում են հոգեհմա,
Սրտամոտ ու տաք:
Մեր Արթուրը՝ հայտնի բժիշկ,
Ճաշում է արագ,
Չի ճաշակում պանիր երբեք,
Չի ուտում կարագ:
Նույնն է նաեւ մեր Մանանան,
Երբ ճաշի է գալիս,
Իր ափսեից կոտլետ ու միս
Արթուրին է տալիս:
Դե՜, ի՞նչ անի մեր Արթուրը,

Վերցնում է լռին,
Բայց չի ուտում, իր ափսեում
Թողնում է լրիվ...
Թեյ են խմում-լոկ կես բաժակ,
Այն էլ եփած ուրցով,
Իրենց կյանքը համարում են
Սիրո անհուն մի ծով:
Առեղծված է սերը նրանց,
Կյանք է մի իրական,
Նրանց սերը թեժ ու անանց,
Լույս է նվիրական:
Ահա, այսպես, մեր սեղանի
Բախտը բերել է,
Մեր Արթուրը եւ Մանանան
Մեզ շատ գերել են.
Իրար համար սիրտ ու հոգի,
Սիրող ամուսին,
Միշտ ժպտադեմ, իրար փարված,
Ոնց Արեւ ու Լուսին՝
Հայոց ազգի հրաշք դուստրը,
Աստղածին տղան...
Թող հար շողա նրանց ճամփին
Արեւի ծնծղան:

19.08.05 թ., Ջերմուկ

ԻՄ ՀԱՎԱՏԸ

Իմ հավատը
Որոնել եմ սիրո ծովում՝
Մարդկանց սիրո,
Կյանքի սիրո,
Աստծո սիրո...
Մեկը Սիրուն իր չի հասել,
Դառնացել եմ,
Մեկը Սիրո երգն է հյուսել,
Հիացել եմ,
Սիրողներին իմ մաղթանքի
Խոսքն եմ ասել,
Ով տխրել է,
Նրա ցավն ու վիշտն եմ կիսել
Ու նվիրել լույսն հավատիս,
Պարել նրա հարսանիքում,
Սեղանապետ դառել հմուտ,
Հնչեցրել խոսքը սիրո,
Ու նորածիլ սիրո ճամփան
Զարդարել իմ սրտի հրով:
Իմ հավատը ալիք-ալիք
Փնջել եմ ես մարդկանց սիրուց,
Կյանքի սիրուց,
Սիրուց Աստծո:
Իմ հավատը լույս-օրհնանք է,
Իմ հավատը ծաղկող կյանք է:

20.03.2010 թ.

ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐ

Խաչմերուկների
Աշխարհ է կյանքս,
Խաչմերուկների՝ քարքարոտ, լուսե,
Ինչքան էլ դաժան,
Ինչքան էլ դժվար,
Խաչմերուկներում երազել եմ սեր,
Ձգտել եմ ելնել
Բարձր սարերի արեւոտ կատար,
Եվ ամենուրեք
Դառնալ թեւ-թիկունք ու դառնալ սատար...
Գարունն եմ սիրել
Իմ ճանապարհին,
Ու երազել եմ, որ գարունները
Զարդարեն ուղին մարդկանց, աշխարհի:
Սակայն չեմ եղել միայն երազող,
Որտեղ եղել եմ,
Աճեցրել եմ ընձյուղներ վարդի,
Որ սոխակը իր երգերը երգի,
Որ սիրողները հանդիպեն վարդով
Ու վարդերի մեջ հիանան կյանքով...
Ու հպարտ եմ ես,
Որ բարդ ու դժվար խաչմերուկներում
Ես չեմ մոռացել վարդերը սիրո,
Որ սիրողների ճամփաները նոր
Զարդարել եմ իմ
Աստղերի ծիրով,
Սիրո օրհնանքով,
Վարդերով սիրո:

22.03.2010 թ.

ԵՂԱՆԱԿՆԵՐ

Եղանակներ... Եղանակներ...
Գարուն, ամառ,
Աշուն, ձմեռ...
Տարբեր գույնի ու բնույթի,
Մերթ նրբասիրտ ու մերթ համառ,
Մերթ վարդաբույր,
Մերթ՝ սառնասիրտ,
Մերթ էլ հրաշք երանգների
Ծիածանված երկնակամար...
Պոետական սրտով իմ նուրբ
Ես թերթել եմ էջերը ձեր,
Ու երգել եմ ձեր անունով
Երազները, տենչերը ձեր...
Տարիների բարձունքներից
Իմ զրույցն եմ բացում ձեզ հետ,
Դառն ու ուրախ արցունքներից
Սիրող սիրտս է թացվում ձեզ հետ,
Ու երազկոտ մի սփոփանք
Շոյում է ինձ, եղանակներ,
Որ ձեր հատուկ ծփանքներում
Սիրո երգն եմ իմ հորինել...
Իմ սիրով եմ ձեզ զարդարել,
Ձեզ բերելով սիրո աշխարհ,
Չեմ ձանձրացել ես ոչ մի պահ,
Սիրո աղբյուր եղանակներ...
Սիրո համբույր եղանակներ...

23.03.2010 թ.

***

Սիրո բարդի, սիրո նոճի,
Սիրո այգի...
Թե չեք տեսել, ըմբոշխնեցեք
Երգերը իմ...
Այդ երգերը բողբոջել են
Իմ երազած
Սիրո ծառին,
Որի առողջ արմատները
Սրտիս մեջ են՝
Ապավինած սիրո աղբյուր
Իմ ծիծաղին,
Նրա կապույտ ալիքներով
Գարուն բերող նուրբ ծիծառին...
Սիրո ծառի պահապանն եմ,
Պաշտպանում եմ նրան չարից,
Պահպանում եմ ոչ ինձ համար,
Պահպանում եմ աշխարհ եկող
Սերունդներին ընծայելու,
Ու հանձնելու դասը սիրո.
«Ինչքան էլ որ կյանքը դժվար,
Բախտն էլ լինի ծանր ու դառը,
Կպահպանեք սիրո ծառը,
Սիրո ծառն է
Այս աշխարհում
Երջանկության
Լույսն արարում...

24.03.2010 թ.

ՆՎԻՐՈՒՄ

Էքսպրոմտ՝ աստղաշող Լուսինեին

Գարնան կարոտով
Դուրս եկա տնից,
Ողջ բնությունը
Գրկեց ինձ սիրով.
Վարդը բույր ցանեց,
Յասամանը՝ շող,
Նուրբ մանուշակը
Ժպտաց՝ թերթին ցող,
Նոճին շշնջաց
Իր գարնան երգը,
Ակացին ուսիս
Դրեց իր ծեռքը,
Աղբյուրը երգեց,
Սիրտս շոյելով,
Երազս ներկվեց
Ծաղկանց թույրերով...
Բայց ծարավ էի
Գարնան շոյանքին,
Ճամփան ինձ բերեց
Քո մոտ, իմ անգին,
Դու ինձ ժպտացիր՝
Գարունս գտա,
Գարունս դու ես,
Սեր իմ, ինձ գթա:

02.04.2010 թ.

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ

Հայրենի գյուղ, իմ Ակնաղբյուր,
Քո ծաղկաբույր կյանքին մատաղ,
Ձավակներդ մի աստղաբույլ,
Քո հրահուր ճամփին մատաղ:
Մաքառել ես դար ու դարեր,
Քո քրտնաթոր ջանքին մատաղ,
Բախտիդ խաչն ես փառքով տարել,
Քո լուսավոր փառքին մատաղ:
Թիկն ես տվել սեգ սարերին,
Քո արեւոտ սարին մատաղ,
Ձեռքդ ես մեկնել լույս դարերին,
Քո երազած դարին մատաղ:
Որդիներդ Բեռլին հասան,
Հաղթանակիդ լույսին մատաղ,
Դժվար ուղիդ հույսով անցար,
Քո սրբազան հույսին մատաղ:
Սելջուկների թոռների դեմ
Քո շառաչող թրին մատաղ,
Նահատակված զավակներիդ
Հավերժախոս գրին մատաղ:
Ամեն զոհդ խորին մի վերք,
Քո հին ու նոր վերքին մատաղ,
Ապրիր հավերժ՝ երգը շրթիդ,
Քո թեւավոր երգին մատաղ:

Շնորհավորում ենք Արմենի եւ Նանարի հարսանիքը

Սլավան եւ Արինան շնորհավորում են իրենց դստեր Արմինեի
եւ Արմեն փեսայի հարսանիքը

Արմենը եւ Արմինեն պապիկի եւ տատիկի հետ

Առաջին շարքում՝ Ս. Խանյանը, կինը՝ Մարգոն, Կարինեն, Արինան, Նաիրան: Երկրորդ շարքում՝ Արմենը եւ Նանարը

Արմինեն ուրախանում է հորաքրոջ որդու՝ Էդվարդի հետ

Արմինեն իր կեսրոջ՝ Կարինեի հետ

Աջից՝ Արմինեի հորաքրոջ որդին՝ Արթուրը, շնորհավորելու է եկել Ս. Պետերբուրգից

Նկարում (ձախից) Արմենի քույրը՝ Գայանեն, հայրը՝ Պետյան, Արմենը, Արմինեն, Արմենի մայրը՝ Կարինեն, եղբայրը՝ Աշոտը

Քույր ու եղբայր Արմինեն եւ Արմենը

Նկարում՝ ձախից՝ Արմենի եւ Նանարի քավորակինը՝ Արմինեն, Արմենը, Նանարը, փոքրիկ Աննան, քավոր Մարատը: Կանգնած են Նանարի ծնողները՝ Լեւոնը եւ Բելլան

Աջից՝ Ա. Ղահրամանյանը, Ս. Խանյանը, բանաստեղծի կինը՝ Մարգոն, Ա. Ղահրամանյանի կինը՝ Մարինեն

ՏԱՐԻՆԵՐԻ ԹԵՎԵՐԻՆ



1958



1958



1958

1959

Բանաստեղծը (աջից) պատմաբան եղբոր՝ Արտաշեսի հետ (1960)

Բանաստեղծը կնոջ՝ Սրբուհու հետ (1962)



1964



1965



1981



1990



Բանաստեղծը դստեր՝ Կարինեի հետ մոսկովյան«Օգյոր» առողջարանում (1991)

«Ջերմուկ» առողջարանի բուրումնավետ ծաղիկների աշխարհում (1995)

Սիրելի Անուշը՝ գերազանցիկ ուսանողուհին, հրաշալի ասմունքողը (2003)



Բանաստեղծը իր տասհատորյակի հմուտ խմբագիր, գրականագետ Հովիկ Մուսայելյանի հետ (2009)



Ինչքան արագ ես թռչում,
կյանք, առջեւում դեռ անելիքներ
շատ կան

Պրոֆեսոր Արզիկ Մխիթարյանի
եւ ԱրՊՀ պրոռեկտոր
Վ. Ջավադյանի հետ

Հադրութի շրջանի Տող գյուղի աշակերտները դիմավորում են
բանաստեղծին

Ձախից՝ պրոֆեսորներ Ս. Խանյանը, Գ. Անտոնյանը, Ա. Ներսիսյանը, օտար լեզվի դասախոս, երգչուհի Գյուլչորան

Բանաստեղծուհի Մ. Մարգարյանը Ստեփանակերտում գրչեղբայրների հետ



Դասախոսության ժամին

Արտասանում է բանաստեղծը

ԱրՊՀ դասախոսները Թբիլիսիի հյուրերն են: Առաջին շարքի ծախից չորրորդը Ս. Խանյանն է

Ուսանողական վերջին զանգ (1981)



Կարոտների իմ աշխարհ



Իմ գտած տողեր



Իմ հայոց բերդեր, իմ երկրի թեւեր

Սայաթ-Նովայի քամանչայի ձայնն է հասնում ինձ

Ժյուրիի ծայնը

Ծաղկանվեր

Չարենցյան ոգին

Ունկնդրում



Գետի հետ կյանքն է հոսում



Սիրտը նուրբ է, բարեկամներ

Քննարկվում են արվեստի եւ գիտության հարցեր: Ձախից՝
Ս. Խանյանը, Հ. Մովսիսյանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սոկրատ Խանյան-80.....3
Ողջույնի խոսք.....5
Սերունդների հետ, սերունդների համար.....8
Կյանք՝ համակված երջանկության ու գոհունակության զգացումով.....14
«Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում...».....17
Ներկան՝ տարիների հեռվից.....22
Ձահել տրոփյուն, ներհուն միտք.....24
Մեծարման ցերեկույթ.....27
Իմ Սոկրատ Խանյանը.....31
Սոկրատ Աղալարի Խանյանին.....35
Սոկրատ Խանյանին.....35
Երախտիք.....36
Լեռնածին արցախցին.....37
Խոսք ի խորոց սրտի.....38
Այդ ընտրյալ ներկայությունը մեզ հուսադրում է.....40

ՕՐԵՐԻՍ ՀԵՏ (1960-2010)

Ձրույց գալիքի հետ.....44
Աշնան տերեւ.....44
Կյանքում ուր էլ եղել եմ ես.....45
Էքսպրոմտ.....46
Սրտերն ու հողը.....47
Հաղթանակի տոն է այսօր.....47
Բալլադ.....48
Աչքալուսանք.....50
Իմ Խաչեն.....51
Մայր իմ, մի թախծիր.....52
Արցախն եմ, պիտի հաղթեմ.....52
Աշխարհահռչակ մարզիկ Ալբերտ Ազարյանին.....53
Մեր բախտի դուռը.....54
Անհուն տիեզերք.....55

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոչ....56
Եվ ինձ թվում է....57
Հադրութ....57
Անունդ....58
Հրաշք ընկուզենին....60
Անդրեյ քեռու զրույցը....60
Քո սարերը....62
Մարզասերների խոսքը....63
Ճամփան....63
Գնաք բարով....64
Գորգերն Արցախի....65
Երազում....66
Ազոխ....67
Գնաք բարով....68
Ես սիրում եմ քեզ....69
Հավատ....70
Ծնունդ....71
Զրույց ժամանակի հետ....72
Ո՞վ է ասել, թե թոռը....73
Երբ մայրս չկա....74
Ջերմուկում....74
Եթե մոռացվեմ....75
Մեր այս դարը....75
Երգը ինձ համար....76
Գիշերը անքուն....76
Ես ապրում եմ երազներով....77
Հորս խոսքերից....77
Իմ հոգու մեջ....78
Արեւը նորից ելավ....79
Երբ օրը պարզ է....79
Խոհերիս հետ....80
Իմ մանկության հուշերում....81
Այս թանգարանը....82
Հայրական հեքիաթ....82
Գանձասար....83

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամեն ակնթարթ....84
Ջերմուկի լեռներում....85
Նաիրի....86
Իմ երազը....86
Փոխվել եմ ես....87
Նոր տարվա մաղթանք....88
Անհուն տիեզերք....89
Տենչ....90
Երգեր՝ գրված «Ռուզան» բալետի համար
Երգ միասնության....92
Ռուզանի խելակորույս մոր կանչը....93
Մեր հայրենիքը չենք տա թշնամուն....93
Գովք փեսային եւ հարսին....95
Հայրենիք....95
Այս անցումի խաչմերուկում....96
Երգիս ակունքը....96
Ինձ կանչում են....97
Երբ ամպ է նստում....97
Աշնան թեւերը....98
Խաղողի այգի....98
Տենչերս քեզ տամ....99
Երկիր իմ....100
Եթե նկարեմ....100
Նրանից բացի....100
Կաղնին....101
Գուգարք....102
Հույսի երկիր....102
Հայի խոստովանություն....103
Երազների թեւերով....103
Հրանոթները....104
Ձեզ հետ....105
Ինչպե՞ս....106
Ասացի....107
Ինքնաճանաչում....107
Ընկերություն....107
Խորհուրդ....108

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրավեր....109
Առեղծված....111
Գանգատ....112
Օրս անցավ....114
Իմ խաչապաշտ....114
Աստված է նա....115
Անց են կենում....116
Դալար մնաս....117
Քեզ հետ եմ միշտ....118
Այգում....119
Քայլում եմ ես....120
Օրհներգ կյանքի....120
Տագնապ....121
Ջերմուկում....122
Ջերմուկ....123
Հայի խոսքը....123
Արծագանք....124
Բեյրութում....125
Մայր....126
Ուղեծիր....127
Երբ ամպերը պար բռնեն....128
Անունս չգիտես....129
Խոսք երախտիքի....130
Մաղթանք....131
Սիրտս խոցել են մարդիկ....132
Իմ երազները....133
Ա՜խ, այս գարունը....133
Աչքդ լույս, Շուշի....134
Երբ գնում եմ Հայաստան....135
Հրաշք....135
Հոգուս գույները....136
Մորս ծննդյան օրն է....137
Պիտի գոռայի....138
Այս լույսի մեջ....140
Խոսք ի սրտե....140
Խոհեր տխրության....141

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քառյակներ....142
Ինչո՞ւ խռովեցիր....143
Ղարաբաղ....144
Մեր գյուղը....145

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԶՈՒԳԵՐԳԵՐ

Արմեն եւ Նանար....147
Արմեն եւ Արմինե....149
Դավիթ եւ Ալինե....152
Սամվել եւ Մարինե....153
Թագավորն ու Թագուհին....154
Արտակ եւ Լիլիթ....155
Պավել եւ Էլինա....156
Արմեն եւ Ռուզան....157
Էդվարդ եւ Անուշ....158
Լեռնիկ եւ Արինա....159
Կարո եւ Մարինե....160

ՆՎԱԳՆԵՐ

Ով սիրուն աղջիկ....161
Սրտի խոսք....162
Աշխարհն առած ոտքերիս տակ....162
Վերհուշ....163
Ոչ թողեցիր քեզ լավ սիրեմ....163
Մի թեւավոր թռչուն էիր....164
Իմ խոհերի աշխարհում....164
Մեր սարե՞րը մեզ հուշեցին....165
Սեր իմ....165
Լիլի....167
Կապուտաչյա իմ երազ....168
Սպասում....169
Տխրություն....169
Երգ երգի մասին....170

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեր սերը....171
Սիրո երազ....172
Մի թռչուն անցավ....173
Սիրո ճամփաս....173
Նվեր....175
Աշխարհը նոր չէ, հիրավի....176
Բեմում սիրածը չի հասնում սիրուն....176
Քո նվիրած մի ժպիտը....177
Նստիր իմ դիմաց....177
Իմ երազած ծաղկանց ծաղիկ....177
Կյանքում ուր էլ եղել եմ ես....178
Գարնան մի օր....179
Կարոտի կանչ....180
Դարձյալ ես քեզ պիտի ներե՞մ....182
Դու ինձ համար....183
Քնքշանքի կարոտ....183
Սիրելիս, կանգ առ....184
Դուռդ բաց եմ տեսել....184
Ես շշնջացի....185
Սերս փոթորկված ծովի է նման....185
Արեւսարի ուսին....185
Երազիս մեջ....186
Քո բորբոքուն արեւի դեմ....186
Վայրենին....187
Խոհ....188
Պոետի երազը....189
Հայ աղջիկներին....190
Սրտի խոսք....191
Սիրո մասին՝ սիրով....192
Դրախտի փերին....193
Դու իմ կորած սիրո հուրն ես....194
Խոստովանություն....195
Դիցուհի....196
Բյուր երանի....198
Էքսպրոմտ....201
Սիրո նշխարներ....202

Արմինեին....208
Ինչու....208
Իէվային....209
Պսակ ցավի եւ վշտի....210
Ցավի սփոփանք....212
Կարոտի երգ....213
Կարոտի կանչ....214
Ցաված սիրո կանչ....214

ՄԱՆԿԱԿԱՆ

Տատիկն ու Սաթիկը

Սաթիկի տատիկը....216
Սաթիկի խոստովանությունը....216
Տատիկի գլխացավը....217
Խոսքը կասեն մի անգամ....217
Տատիկի խոսքը....218
Դիմավորում....218
Մի Սաթիկ է, մի տատիկ....219
Մասուրով թեյ....219
Բարի լույսը....220
Վարդի թուփը....220
Ջյունե պապին....221
Ջմեռ պապի....221
Հասմիկը....222
Ողջույն մեր «Լուսայգ»-ին....223
Արցախի հողը....224
Ջյունը դեռ չի անցել....224
Ալիկի սխալը....225
Ամոթ քեզ....226
Մրցույթ....227
Մարիամիկը....228
Մեր Կարենը....229
Ծույլը....230
Արտաշեսի նկարը....230

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արցախ....231
Հայկի բողոքը....231
Արամն ու Նանը....232
Հայկի որոշումը....232
Զրույց....233

ՃԱԽՐՈՂ ԹԵՎԵՐ

Հպարտություն....234
Թուրդ պատյան դու չդնես....235
Խոսք սրտաբուխ....236
Զրույց բանաստեղծի հետ....237
Միսաք Մեծարենցին....238
Հավերժի զուգորդը....239
Մեր Նունեն....242
Արծվասիրտ Սամվել....243
Նոր տարվա բաժակաճառ....244
Խոսք երախտիքի....246
Ծիածան....247
Այն ե՞րբ է եղել....248
Մեր Սաիդան....249
Սիրո թեւեր....250
Երգ բերկրանքի....251
Հայրական....252
Միքայել քեռին....253
Մեր բակում....254
Զրույց....254
Որպես կերոն....255
Նորածին աստղեր....256
Ի խորոց սրտի....257
Քո երգերը....258
Բորիս Դաղամյանին....259
Երգ ընկերական....260
Սարի աղջիկ....262
Խոսք սրտաբուխ եւ արժանի....263

Կարոտի թեւերով....264
Սրտի խոսք....266

ՋԱՀԵՐ ԿՐԹՕՋԱԽԻ

Մայր համալսարան....267
Հրաշք ծնունդը....268
Հրամայիր....270
Ծառերը....271
Հայրական վիշտ....271
Վրձին ու երգ....273
Մաղթանք հոբելյանական....274
Կարո Դավթյանին....276
Երանի նրան....277
Սրտի խոսք....278
Գաղտնիքդ բացիր....279
Մեր կյանքը....280
Այս ե՞րբ դարձար յոթանասուն....281
Բարով ես եկել....282
Ուսուցչի ուղին....283
Ընկերական պսակ....284
Միշտ այդպես մնա....285
Հայրական աղոթք....286
Սրտի խոսք....287
Հիսուն գարուն....288
Արարատված Արարատ....289

ԱՆՄԱՐՈՒՄ ԱՍՏՂԵՐ

Նահատակներին....291
Դավիթ....292
Կորած սեր....293
Վերադարձեք....294
Սամվել....295
Գագիկի երգը....295

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակ խրամատից....296
Գարուն է եկել....297
Անունդ կապրի....298
Դու քայլում ես....299
Մեզ հետ ես միշտ....300
Արաքսի ափին....300
Միեր ջան, արի....301
Երազ....302
Արեւի նման....303
Մոր ցավը....303
Եվ փառք, եւ պատիվ....304

ՍԻՐՈ ԿԱՐՈՏ-ՍԻՐՈ ԵՐԳ

Սիրելի Արաքսյային....305

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վլադիմիր Ֆիրսով
Արեւը ուսերիս վրա....312
Միխայիլ Իսակովսկի
Անցիր ծովեր ու օվկիաններ....314
Սերգեյ Սմիռնով
«Լուսնագնաց - 1»....315
Պավել Կատաեվ
Կովկասյան երգ....316
Պավել Բիկով
Իմ հասակակցին....317
Միխայիլ Դուդին
Արարատ սարը....319
Միխայիլ Սվետլով
Հորս երգը....320
Մարինա Ցվետաեւա
Հայրենիք....322
Աննա Ախմատովա
Վերադարձ հայրենի Լենինգրադ....323

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վլադիմիր Ֆայնբերգ
Թե ոնց էի կոչվում կաղամբ.....324

Խուտա Բերուլավա
Բարեկամներիս.....325
Ալեքսանդր Պրոկոֆեւ
Խաղաղություն եւ երջանկություն.....326
Պետրու Զադնիպրու
Իմ Մոլդովա.....327
Կայսին Կուլիեւ
Մայրը.....329
Նոդիր
Հայրենի եզերք.....330
Մաքս Ցիմերինգ
Հպարտություն.....332
Ռասուլ Համզատով
Հովվի երգը.....333
Աբուլ- Ալա ալ-Մահարի.....334
Աշուղ Վահան.....341
Չեմ կարող.....342
Եկել եմ.....342
Չասեմ՝ կմեռնեմ.....343
Իմ տաղերը.....344
Ման եկա.....344
Ինչ անեմ.....345
Գերայլի.....346
Բայաթիներ.....347
Միսկին - Բուրջի
Միասին.....350
Ա. Ս. Պուշկին
Մի գայթակղվիր.....353

Ծովինար..........354
«Ցավ ծնված երջանկությունից» գրքից.....355
Հակոբ Բաղմանյան..........388

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկրիս զինվերն եմ
Հորս....389
Ես....390
Լավ ընկերներս....390
Բայց պիտի նորից ես վերադառնամ....391
Եղբորս՝ Մաքսիմին....392
Հերոսների կանանց....393
Արցախ....394
Աղոթք....395
Օտար ափերում....395
Ինձ մի տանջիր, աշուն....397
Չեմ ապաշխարի ես իմ երգերում....398
Բանտային դաժան կյանքի ստվերում....399
Կնոջս՝ Ռիմային....400
Քրոջս....401
Արցախ, իմ Արեւ....403
Սպասիր ինձ, մայրիկ....404
Ողջույն, բանտ....405
Լռիր, հիշողություն....406
Օտար ափերի ցախոտված փրփուր....407
Հուսահատություն....408
Աշուն....409
Հիշեցեք, մարդիկ....410
Խղճում եմ ես քեզ, իմ լքյալ ընկեր....411
Իմ ծննդյան օրը....412
Մայիսի ինը....413
Այն պահին, երբ մեզ ներս տարան՝ դահլիճ....414
Ինչու եմ կանչում ամբողջ գիշեր քեզ....415
Սերը բանտարկյալ....416
Դու հաճախակի նայիր լուսնյակին....423

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Սեր իմ....424
Էքսպրոմտներ....425

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմ ծնունդը....427
Հոգուս գույները առատ են ու խիտ....427
Այս աշխարհում....428
Տագնապ....429
Արեւի պես ժպտում ես....430
Քո ձայնը ծուլվում է հոգուս....430
Դու խոսելիս....431
Քո երազով գրիչն առել....431
Քո աչքերի գիշերներում....432
Դու այնքան լավն ես....432
Ով ժխտում է սերը....433
Սերս վերհուշ չդարձավ....433
Սիրո մեջ լինել հերոս....434
Մատներդ հույսի մոմեր են....435
Կոտրած սիրտս....435
Ինձ թվացել է....436
Մի գորգագործ աղջկա....437
Անցած օրերիս շարանների մեջ....438
Գարունս....438
Հայոց տուն....439
Քո հայացքի դեմ....441
Մեր աղջիկներին....442
Այս հեքիաթը....443
Իմ հավատը....445
Խաչմերուկներ....446
Եղանակներ....447
Սիրո բարդի, սիրո նոճի....448
Նվիրում....449
Հայրենի գյուղ....450

ԿՅԱՆՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ....451-466
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....467-479

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Հատոր 4

Բանաստեղծություններ

Խմբագիր՝ *Հովիկ Մուսայելյան*
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սրբագրիչ՝ *Ս. Խանումց*
Համակարգչային շարվածքը եւ էջադրումը՝ *Լ. Բաղդասարյանի*

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 30 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250: Գինը՝ պայմանագրային:

Տպագրվել է «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ-2010